

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ»
ՊԵՏՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
ԴՊՐԱՏՈՒՆ
հրատարակչություն**



ՀՏԴ 811.19:06

ԳՄԴ 81.2(5Հ)

Հ 282

Հոդվածների և ելույթների ժողովածուն տպագրվում է
Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված
համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝
Վ. Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հ. Գ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Ա. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայոց լեզուն անադարտ պահենք: Գիտաժողովի նյութեր.-
Հ 282 Եր.: Արմավ, 2019.- 196 էջ:

ՀՏԴ 811.19:06

ԳՄԴ 81.2(5Հ)

ISBN 978-9939-78-059-7

© Գրքում զետեղված հեղինակներ, 2019

© Արմավ հրատարակչություն, 2019

© Դպրատուն հրատարակչություն, 2019

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Հայոց լեզուն անաղարտ պահենք» թեմայով՝ ամերիկահայ անվանի բանաստեղծ, հրապարագիր, բառարանագետ ու սրտաբան, ազգային մեծ բարերար Յակոբ Այնթապլեանի և Տիկին Լուսովիկա Այնթապլեանի հովանու ներքո (Մաշտոցի անվան Մատենադարանի Գանձասարի մասնաճյուղ, մայիսի 27-ին, 2019թ.)

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի Արեւմտահայերէնի, հայագիտութեան գիտահետազոտական Լուսովիկա եւ Յակոբ Այնթապլեան կեդրոնի և ԳԼՀ Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ տեղի ունեցավ Միջազգային գիտաժողով՝ նվիրված հայոց լեզվի արդի հիմնախնդիրներին:

Գիտաժողովի բացման խոսքում **Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պոֆեսոր, ԱԳՄ նախագահ Վարդան Հակոբյանը** նշեց, որ «Հայոց լեզուն անաղարտ պահենք» կարգախոսով գիտաժողովն՝ արծարծած համազգային խնդիրներով ու հարցադրումներով, եզակի է թե՛ Արցախում, թե՛ մայր Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Գիտաժողովը նման սուրբ վայրում անցկացնելն ունի խորհրդանշական բնույթ, որովհետև Գանձասարն այն վայրն է, որտեղ վճռվել են ազգի համար կարևոր և ճակատագրական շատ հարցեր: Հակոբյանն ասաց, որ արդեն մի քանի տարի է, ամերիկահայ անվանի բանաստեղծ, հրապարակագիր, բառարանագետ, սրտաբան ու մեծ բարերար Յակոբ Այնթապլեանի և Տիկին Այնթապլեանի հետ «Գրիգոր Նարեկացի» համալսարանը համագործակցություն է ծավալել, որի ընթացքում իրականացվել են մի շարք կարևոր նախագծեր: Եվ այսօրվա գիտաժողովը դրանցից մեկն է: Նա «Գրիգոր Նարեկացի» համալսարանի տնօրենության անունից խորին երախտագիտություն հայտնեց Տեր և Տիկին Այնթապլեաններին, որոնց բարերարական գործունեության արդյունքում բուհում արդեն գործում է նրանց անունը կրող Արեւմտահայերէնի, հայագիտության գիտահետազոտական կենտրոն (տնօ-

րեն՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ամայա Գրիգորյան), որի շնորհիվ բուհի կրթագիտական աշխատանքները նոր մակարդակի վրա են բարձրացվել: Ավելին՝ բուհը, ելնելով անհրաժեշտությունից, ստեղծեց նաև Հեռավար ուսուցման լսարան, որը լայն հնարավորություն է տալիս, որպեսզի այս կամ այն ոլորտի լավագույն մասնագետները՝ աշխարհի տարբեր ծագերից, դասախոսություններով հանդես գան նարեկցիների առաջ: Վ. Հակոբյանը մեջբերեց Յա. Այնթապլեանի խոսքը. **«Մեր լեզուն եղեռնվել է»: «Այո՛, մեր լեզվի համար կան մի շարք մարտահրավերներ: Մեր լեզուն երկփեղկված է, և մենք պետք է առավել ամրապնդենք Հայաստան-Արցախ և Սփյուռք կապը, ունենանք ընդհանուր ուղղագրություն, մեկ միասնական լեզու և ազգային զարգացման միասնական ծրագիր»:**

Գիտաժողովում ողջույնի խոսքով հանդես եկավ **ԱՀ ԿԳՍ փոխնախարար Միքայել Համբարձումյանը: «Հայոց լեզուն անաղարտ պահենք»** կարգախոսով գիտաժողովն արդեն հուշում է, թե ինչպիսի կենսական խնդրի քննարկման շուրջ ենք հավաքվել այսօր: Կոմունիզմի 70-ամյա լուծը թոթափելուց հետո մեր առջև ծառացան նոր մարտահրավերներ և, անշուշտ, մենք կհաղթահարենք նաև այս մեկը՝ ի նշան մեր սուրբ հավատի առ ապագան: Երբ ասում ենք՝ հայոց լեզու, հասկանում ենք հայ ընտանիքի հարատևում, հայ դպրոցի բարգավաճում, հայ հավատքի ամրապնդում: Ասում ենք՝ հայոց լեզու, հասկանում ենք աշխարհով մեկ իր հաղթարշավը տանող համահարթեցման դեմ գլխավոր զենք: Կա հայոց լեզու՝ կա հայ ժողովուրդ», - հավելեց Միքայել Համբարձումյանը:

ԱՀ ՄԵԶՀ փոխնախարար Մելանյա Բալայանն իր ուղերձում կարևորեց պետականության և ընտանիքի ամրապնդման կարևոր կռվան հանդիսացող հայոց լեզվի մաքրության պահպանման դերը մեր կյանքում: Եվ հայեցի սերունդներ դաստիարակելու միակ միջոցը մայրենի լեզվի մաքրությունն ու անաղարտությունն է:

Գիտաժողովին իր ողջույնի խոսքն է հղել նաև Արցախի գիտական կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Ստեփան Դադայանը:

«Հայաստան-Սփյուռքի միասնականությունն ու հայերեն

լեզուի հարցերը» զեկուցումով հանդես եկավ **բանաստեղծ, հրապարակագիր, բառարանագետ, սրտաբան և մեծ բարերար Յակոբ Այնթապլեանը**, որը կարևորեց միասնական ուղղագրության անհրաժեշտությունը. **«Մենք ունենք մայրենի լեզու, հարուստ բառապաշար և պետք է գերծ մնանք օտարաբանություններեն, մենք պետք է ստեղծենք օտար բառերու համարժեքները և մեր բառապաշարը մաքրենք: Անհրաժեշտ է Հայաստան-Արցախ-Սփյիռք լեզուաուղղագրական միասնությունը, որպեսզի ունենանք ազգային համախմբուածություն»:**

ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջիսյանն իր «Հայաստանի Հանրապետության պետական լեզվական քաղաքականության հիմնական ուղղությունները» զեկուցման մեջ նշեց, որ այսօրվա հրատապ հարցերից մեկը հայոց լեզվի պահպանումն է, այն զարգացնելը և հաջորդ սերունդներին փոխանցելը: **«Հայերենի միասնականության հարցը միշտ էլ եղել է հայությանը հուզող հարցերից մեկը: Մենք պետք է համատեղ ջանքերի միջոցով, փոքր քայլերով փորձենք այն դարձնել իրական: Լեզվի տեսչությունը հետևում է լեզվի զարգացման յուրաքանչյուր քայլին»**, - ավելացրեց Դավիթ Գյուրջիսյանը:

Զեկուցումներով հանդես եկան **Ստեփանակերտի ԳՆՀ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱԳՄ նախագահ Վարդան Հակոբյանը** («Մտածողական ներքին համակարգ, կամ բառի կենսադաշտը»), **ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Դևրիկյանը** («Արցախյան բարբառը և հայ գրականությունը»), **Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրագիտության և «Մայր ցուցակի» բաժնի վարիչ, գլխավոր ավանդապահ, պատմական գիտությունների դոկտոր Գևորգ Տեր-Վարդանյանը** («Անդրադառնանք մեր դասական լեզվին»), **ՀՀ ԱԳՆ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բաժնի պատասխանատու աշխատող Արթուր Հակոբյանը** («Մշակութային դիվանագիտությունը և լեզվական առկա խնդիրները»), **Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի և**

ԳԼՀ դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդվարդ Մկրտչյանը («Թարգմանչական արվեստ և լեզվական անադարտություն»), ՀՀ ԿԳՆ Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարատ Յավրումյանը («Հայերենի քերականության ձեւայնացումը տիպաբանական մոտեցմամբ. ՍԾ ծառադարանների փորձը»), ՀՊՏՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Չոխրաբովյանը («Մայրենին՝ ազգային մտածելակերպի գործոն»), Գորիսի ՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիեր Զումունցը («Բարբառային եւ գրական բառերի համադրումը Ա. Բակունցի արձակում»), ԱրՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիլվա Մինասյանը («Լեզվաոճական արտահայտչականությունը հայոց լեզվին նվիրված չափածո գործերում»), Ստեփանակերտի ԳԼՀ դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, աստվածաբան Վահրամ Լալայանը («Մեր լեզուն՝ որպես մեր ինքնության դրսևորում»), ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչ Արման Մելքումյանը («Հայերենի անադարտության կարևորությունը հանրային դիվանագիտության մեջ»), Ստեփանակերտի ԳԼՀ ուսանողուհի Անգելինա Առստամյանը («Հայոց լեզուն՝ համացանցային հաղորդակցություններում»):

Գիտաժողովին զեկուցումներ են ներկայացրել նաև Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Յակոբ և Լուստովիկա Այնթապլեան կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ամալյա Գրիգորյանը («Օտարաբանությունները Արցախի ՉԼՄ-ներում»), ԳԼՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռենա Մովսիսյանը («Բարբառների ուսումնասիրությունը և հայերենի անադարտության խնդիրը»), ԳԼՀ ՈԼԳԸ նախագահ, տեխնոլոգիական գիտությունների թեկնածու Գեղամ Միքայելյանը (Տեխնիկական եզրույթների հայեցի օգտագործումը հայերենում»), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատակից, բանա-

սիրական գիտությունների թեկնածու Կարինե Առաքելյանը («Հատուկ անունների ուղղագրական բառարան կազմելու սկզբունքների շուրջ») և ուրիշներ: Բոլոր գեկուցումներն ու ելույթները կտպագրվեն առանձին գրքով: (Ինչ-ինչ պատճառներով առանձին հոդվածներ դուրս են մնացել այս գրքից խմբագրական)

Լեզվի տարբեր խնդիրներին ու զարգացման հեռանկարներին վերաբերող մի շարք հարցերի շուրջ հնչեցին կարծիքներ ու առաջարկներ:

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց **ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ (ԵՊՀ), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը**: Նա խոսեց գրաբարի գեղեցկության ու ճոխության մասին և մեջբերեց Խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպի Հառաջաբանի հետևյալ հատվածը. **«Ո՞վ չի՝ ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ի՞նչ զատ են, բայց մեր լեզվումը թե էսպես բաներ ըլին, թո՞ղ աչքս հանեն: Էլ ընչո՞վ Էրեխին քո լեզուն սիրիլ տաս: Գեղըցու վրա ջավահիր ծախիր, հա՛, շատ լավ բան ա, ամա որ կարողություն չունի, մեկ կտոր ճաթի հետ էլ չի՝ փոխիլ քո տված անգին քարը»**: Լեզվի միասնականության հարցը եղել և մնում է մեր ժողովրդի վիճելի դրույթներից մեկը: Կարևոր չէ, թե հայերենի որ տարբերակով է խոսում հայ մարդը, այլ կարևոր է այն, որ նա խոսում է հայերեն, մտածում է հայերեն և ապրում է հայերեն....

Այնուհետև հրապարակվեց գիտաժողովի կողմից պատրաստված հայտարարությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայոց լեզուն անաղարտ պահենք» գիտաժողովը, հիմք ընդունելով բանախոսների գեկուցումներում ու ելույթներում առաջադրված կարեւոր առաջարկություններն ու պահանջները, ելնելով խնդրի հրատապությունից, մայր Հայաստանի, Արցախի եւ աշխարհասփյուռ հայությանն անքակտելի միաբանության տանելու, հայրենիքի հզորությունն ու հայոց պետականությունն առավել ամրապնդելու, մեր ազգային անվտանգությունն ապահովելու, նոր ժամանակ-

ների մարտահրավերները հաղթահարելու անհրաժեշտությունից, հանդես է գալիս հայտարարությամբ, որի գլխավոր դրույթներն են.

1. Մայր Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում գործողության մեջ դնել «Առանց արևմտահայերենի չկա ամբողջական հայերեն» ելակետային հիմնավոր սկզբունքը:

2. Արևմտահայերեն թեքումով դպրոցներ ստեղծել Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում:

3. Մայրենին անաղարտ պահել՝ հրաժարվելով օտարամոլության ամեն տեսակի դրսեւորումներից: Պետականորեն միջոցներ ձեռնարկել լատինատառ հայերեն գրառումները Հայաստանում եւ Արցախում արգելելու համար:

4. Լեզվի մաքրությունը պարտադիր ձևով պահպանել զանգվածային լրատվական բոլոր միջոցներում:

5. Արևմտահայերենի, ինչպես նաեւ մեր ոսկեդենիկ գրաբարի ու բարբառների ուսուցմանը լայն տեղ տալ թե դպրոցական, թե բուհական ծրագրերի մեջ:

6. Ձեւավորել մասնագիտական հատուկ հանձնաժողով՝ պահանջվող պետական լիազորություններով, որը եւ հնարավորություն կունենա համակարգելու թարգմանական աշխատանքներում հայոց լեզվի անաղարտության պահպանման աշխատանքները:

7. Կիրառության մեջ դնել դպրոցական եւ բուհական նոր դասագրքեր, հայերենի մատչելի եւ ընդգրկուն նոր բառարաններ, հայերենացնել մանավանդ բարձրագույն ուսումնական հաստատություններում օգտագործվող գիտական մասնագիտական գրականությունը, նպաստել ոչ հայերեն եզրաբառերի փոխարեն նրանց հայերեն համարժեքը ներկայացնող բառապաշարի հարստացմանը:

8. Ուշադրության կենտրոնում պահել համերգային, թատերական եւ համանման այլ գեղարվեստական խմբերի երկացանկերը հայեցի կազմելու, զանգվածային լրատվական միջոցների լեզուն անաղարտ պահելու, պետական եւ ոչ պետական հաստատություններում գործավարությունը հայերեն կազմակերպելու հույժ կարեւոր գործընթացները:

9. Պետական պաշտոնյաներն ու այրերը պարտավոր են

մաքուր հայերեն բառապաշար գործածել եւ հարգել ՀՀ լեզվի մասին օրենքի հանձնարարականները:

10.Ստեղծել Լեզվի բարձրագույն խորհուրդ՝ հայոց լեզվի ընդհանուր հարցերը կանոնակարգելու նպատակով:

11.Մշակել զարգացման համազգային ծրագիր, որի մեջ կարևոր տեղ կտրվի հայոց լեզվին ու նրա անաղարտության պահպանմանը:

Գիտաժողովի առաջադրած խնդիրները, որոնց կենսագործումով է պայմանավորվում, անկասկած, մեր ազգային իղձերի ու երազանքների իրագործումը, մեր ազգի լինելութունն ու ապագան, պետք է ոգեշնչի, գործնական ու արդյունավետ քայլերի մղի ոչ միայն մայր Հայաստանի, Արցախի իշխանություններին, Սփյուռքի հայկական կազմակերպություններին ու միավորումներին, այլև յուրաքանչյուր հայի, աշխարհի որ ծագում էլ նա լինի:

Գիտաժողովի վերջում Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտորը գեկուցողներին համապատասխան հավաստագրեր հանձնեց:

ԱՆԱՀԻՏ ՄԱՃԿԱԼՅԱՆ

Ստեփանակերտի ԳՀՀ Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության բաժնի հատուկ թղթակից

Արցախ, Գանձասար

ՅԱԿՈՐ ԱՅՆԹԱԴՆԵԱՆ

**Սրտաբան, բանաստեղծ, հրապարակագիր,
բառարանագետ**

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՁՈՒԻ ՀԱՐՑԵՐԸ

Հոդվածագիրը քննության է առնում Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնությունն ու Հայերեն լեզուի հարցերը:

Նա իրավացիորեն ընդգծում է, որ անհրաժեշտ է Հայաստան-Արցախ-Սփիւռք Լեզուա-Ուղղագրական Միասնություն, որպեսզի Ազգային Միասնությունն ունենանք: Դոկտոր Այնթապյանն առաջարկում է մաքրագտել հայերեն բառապաշարը, վերացնել օտար բառերը, արեւմտահայերենը բնակեցնել Հայաստան-Արցախի մէջ, դասական ուղղագրությունը բնակեցնել Հայաստան-Արցախի մէջ, աստիճանաբար վերացնել Աբեղեանական ուղղագրությունը, ունենալ միասնական Տառադարձություն օտար բառերու, ազգանուններու, երկիրներու, քաղաքներու եւ այլն, յօրինել նորակերտ բառեր՝ գիտա-արուեստագիտական, գեղարուեստա-նորարարական, ունենալ բոլոր Հայութեան համար, մէկ հնչիւնաբանական համակարգ, վերացնել Լատինատառ եւ Ռուսատառ Հայերեն գրառումները դիմատետրի- օգտատետրի (Facebook) մէջ, կետադրութեան օրէնքները վերթարմացնել, աստիճանաբար միաձուլել Արեւմտահայերենն ու Արեւելահայերենը մէկ միասնական լեզուի՝ հիմնուած գրաբարի սկզբունքներու վրայ:

Հայ մտաւորականությունը տեղ պետք է կանգնի իր մայրենի լեզուին:

Բանալի բառեր: Լեզուական եւ ուղղագրական երկփեղկում, միասնական բառապաշար, անյարկի օտարաբանություն, արեւմտահայերեն, հայագետներ, լեզուական որոշումներ, թեքումով դպրոցներ, գրաբար, հայրենիք, լեզու, կրօն:

Մեծարգոյ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեան պետական ներկայացուցիչներ, Հայաստանի Եռնեսկոյի ներկայացուցիչներ, Հայաստանի եւ Արցախի Համալսարանի ամպիոնի վարիչներ եւ դասախօսներ, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Տնօրէն եւ դասախօսներ, Սիրելի ուսանողներ եւ հիւրեր:

Այսօրուան նիւթս, «Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնութիւնն ու Հայերէն լեզուի հարցերն» է:

Ազգային միասնութեան գլխաւոր խոչընդոտներէն կարեւորագոյնները Հայոց լեզուի հարցերն են:

Ազգ մը, որ քաղաքական եւ վարչարարական տարբեր միջավայրի ենթակայ, առանց իր պետականութիւնը ունենալու, անցեալի մէջ ունեցած է լեզուական եւ ուղղագրական երկփեղկում, որ առաջնորդած է Տառադարձական եւ արտայայտչական տարբեր կերպերու, տարբեր հնչիւնանաբանութեան եւ ուղղագրութեան:

Ի՞նչ է նպատակը այս երկուութեան:

Ի՞նչու պիտի ունենանք երկու ուղղագրութիւն:

Ի՞նչու պիտի չունենանք միասնական բառապաշար:

Ի՞նչ է նպատակը Անհարկի օտարաբանութեան շարունակականութեան, Ազատ, Անկախ Հայաստանի եւ Արցախի մէջ:

Ի՞նչու Հայաստանի եւ Արցախի պետական բարձր պաշտօնեաներ եւ քաղաքացիներ պիտի չյարգեն ՀՀ Սահմանադրութեան Լեզուի մասին օրէնքները: Ո՞վ պիտի պարտադրէ հայութեան Լեզու-Ուղղագրութեան միասնականութիւնը: Հայաստանի վարչակարգը իսկապէս, անկեղծօրէն լեզուական միասնութիւն կ' ուզէ՞...

Անհրաժեշտ է Հայաստան-Արցախ-Սփիւռք Լեզու-Ուղղագրական Միասնութիւն, որպէսզի Ազգային Միասնութիւն ունենանք:

Ի՞նչ պէտք է ընել:

Նախ նշեմ հարցերը:

Հայոց լեզուի հարցերն ու լուծումը...

1 - Մաքրագտել Հայերէն բառապաշարը, վերացնել օտար բառերը,

2 - Արեւմտահայերէնը բնակեցնել Հայաստան-Արցախի մէջ,

3 - Դասական Ուղղագրութիւնը բնակեցնել Հայաստան - Արցախի մէջ,

4 - Աստիճանաբար վերացնել Աբեղեանական ուղղագրութիւնը,

5 - Ունենալ միասնական Տառադարձութիւն օտար բառերու, ազգանուններու, երկիրներու, քաղաքներու եւ այլն,

6 - Յօրինել Նորակերտ բառեր, գիտա-արուեստագիտական, գեղարուեստա-նորարարարական եւ այլ մարգերու վերաբերեալ,

7 - Ունենալ բոլոր Հայութեան համար մէկ հնչիւնաբանական համակարգ,

8 - Արեւմտահայերէնին որոշ յղկումներ կատարել (վերջնատառ «յ»,»կ» տառին, «ւ» ա գրութեան եւ այլն),

9 - Վերացնել Լատինատառ եւ Ռուսատառ Հայերէն գրառումները դիմատետրի- օգտատետրի (Facebook) մէջ,

10 - Կետադրութեան օրէնքները վերթարմացնել,

11 - Աստիճանաբար միաձուլել Արեւմտահայերէնն ու Արեւելահայերէնը մէկ միասնական լեզուի, հիմնուած գրաբարի սկզբունքներու վրայ:

Ո՞վ պիտի կանոնակարգէ Հայոց Լեզուի հարցերը...

Ա-Վերահաստատել Լեզուի Բարձրագոյն խորհուրդը, բաղկացած համահաւասար Սփիւռքի եւ Հայաստան-Սրբախի ներկայացուցիչներէ: Զսանմէկ անդամներէ կազմուած, Եօթական հայագետներ Հայաստան-Արցախէ, եւ Սփիւռքէ եւ եօթը ոչ հայագետ, բայց հայերէնագիտակ մասնագետներէ:

Այս մարմինը ենթակայ ըլլայ Հայաստանի Նախագահին կամ Վարչապետին, որուն լեզուական որոշումները օրէնքով հաստատուին:

Բ-Սկսիլ Գրաբար դասաւանդել միջնակարգ դպրոցներու բարձրագոյն դասարաններուն:

Գ-Արեւմտահայերէն Թեքումով 15-20 դպրոցներ հաստատել, Երեւան, Գիւմրի, Արցախ:

Դ-Այս տարբեր գործընթացները հսկուին Լեզուի Բարձրագոյն խորհուրդի եւ այլ ենթայանձնախումբերու կողմէ, եւ ծրագիրը աւարտին հասցնել յաջորդ 5-6 տարիներու ընթացքին:

Ազգի մը գոյութիւնը պաշտպանող գլխաւոր ազդակներն են՝ Հայրենիքը, Լեզուն եւ կրօնը, եւ անկէ սերած ու համալրող միւս յատկանիշները՝ մշակոյթը, ասանդութիւններն ու կենցաղավարութիւնը:

Աշխարհացրիւ Հայութեան ազգապահպանման վէմը իր լեզուն է. ներկայիս այդ լեզուն աղիտալի վիճակի մէջ է թէ Հայաստանի եւ թէ սփիւռքի մէջ: Պետականօրէն հոգաճութիւն չի տարուիր Հայոց Լեզուին Հայաստանի մէջ:

Ուստի Հայ մտաւորականութիւնը տեր պէտք է կանգնի իր մայրենի լեզուին, բառապաշարին եւ ասանդական -Մեսրոպեան ուղղագրութեան վերահաստատման, որպէսզի ունենանք,

Մէկ Ազգ,

Մէկ Հայրենիք,

Մէկ Լեզու,եւ

Մէկ Ուղղագրութիւն:

ВОПРОСЫ ЕДИНСТВА АРМЕНИИ -СПЮРК И АРМЯНСКИЙ ЯЗЫК - АКОП АЙНТАПЛЕАН - В статье исследуются вопросы единства Армении-Арцах-Спюрк и армянский язык.

Автор подчеркиваем, что необходимо языково-правописное единство Армении-Спюрк, чтобы иметь национальное единство. Доктор Айнтаплеан предлагает очистить армянский словарный запас, уничтожить чужеродные слова, распространить западно-армянский в Армении-Арцах, классическое правописание распространить в Армении-Арцах, постепенно уничтожить абебяновскую орфографию, иметь единую транскрипцию в чужеродных словах, фамилиях, странах, городах и т.д., придумать новые слова: научно-искусствоведческие, эстетико-новые, иметь для всего армянства одну фонетическую структуру, уничтожить латинские и русские названия (Facebook), усовершенствовать законы пунктуации, постепенно соединить западно-армянский и восточно-армянский в один единый язык, основанный на принципах грабара.

Армянская интеллигенция должна быть в ответе за свой родной язык.

Ключевые слова: языковые и правописные деления, единый словарный запас, неуместные отчуждения, западно-армянский, арменоведы, языковые решения, школы с уклоном, грабар, родина, религия.

ARMENIA-DIASPORA UNITY AND THE ARMENIAN LANGUAGE ISSUES - HAKOB AYNTAPLIAN - The author examines the Armenia-Artsakh-Diaspora unity and the issues of the Armenian language.

He rightly emphasizes the necessity of a single linguistic unity for Armenia-

Artsakh-Diaspora in order to have a national unity. Dr. Ayntaplian suggests cleansing the Armenian vocabulary, eliminating foreign words, populating Western Armenian in Armenia-Artsakh; populating classical spelling in Armenia-Artsakh; gradually abolishing Abeghyan spelling; having a single Transcript for foreign words, surnames, countries, cities, etc., inventing new words: science-art, artistic-innovative; having a single phonetic system for all the Armenians, eliminating Latin and Russian Armenian posts for users in Facebook, updating the rules of punctuation, gradually merging the Western Armenian and Eastern Armenian languages into a single language based on the principles of grabar.

Armenian intellectuals must stand up for their mother tongue.

Key words: *Linguistic and spelling split, unified vocabulary, unnecessary alienation, Western Armenian, armenologists, linguistic decisions, tilt schools, Grabar, homeland, language, religion.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության պետական լեզվաքաղաքականությունը խարսխվում է 1993 թ. մարտի 30-ին ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած «Լեզվի մասին» օրենքի վրա: Պետական լեզվական քաղաքականության առանցքը հայոց լեզուն է, հարգվում են նաև ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքները:

Հայաստանի պետական լեզվական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ կրթություն, մշակույթ, գանգվածային լրատվության միջոցներ, իրավական-օրենսդրական դաշտ, թվային տիրույթ, տնտեսություն, գովազդ և այլն:

Բանալի բառեր: Պետական լեզու, լեզվաքաղաքականություն, պետական լեզվական քաղաքականություն, հայերեն, արևելահայերեն, արևմտահայերեն, ազգային փոքրամասնության լեզու, լեզվակրթական քաղաքականություն, «Լեզվի մասին օրենք», կրթության լեզու:

Հայաստանը 1918 թվականի մայիսի 28-ին անկախություն ձեռք բերեց ծանրագույն պայմաններում: Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունից հետո բնօրրանում բնաջնջվել էր Արևմտյան Հայաստանի հայությունը, ողջ մնացածներն արտաքսվել էին հայրենի երկրից, սփռվել աշխարհով մեկ, Արևելյան Հայաստանը լցված էր հարյուր հազարավոր գաղթականներով, տնտեսությունը քայքայված էր, մոլեգնում էին սովը, համաճարակը... Երկիրն օրհասական վիճակում էր: Մարդկության դեմ ուղղված այդ ոճիրը՝ հայասպանությունը¹, կործանարար հարված հասցրեց նաև հայոց լեզվին, քանի որ կոտորվեց հայերեն (արևմտահայերեն) խոսողների զգալի մասը, պատմական հողերում հայերենն այլևս չէր գործառնում որպես հաղորդակցության միջոց. չկային լեզվակիրները (կամ էլ նրանք լռեցին՝ հայերենը դարձնելով միայն առանձնաբար՝ գաղտնի խոսելու լեզու):

¹ Տե՛ս **Դ. Գյուրջինյան**, *Հայասպանություն* բառի պատմալեզվաբանական քննությունը, «Էջմիածին» հանդես, 2016, Դ, էջ 99-113:

Լեզվական իրավիճակը մտահոգիչ էր Հայաստանի արևելյան հատվածում՝ Նորանկախ հանրապետությունում: 1828-ից Ռուսական կայսրությանը միացված Արևելյան Հայաստանում պետական մարմինների, դատարանի և բանակի լեզուն ռուսերենն էր, պաշտոնյաների զգալի մասը հայերեն չգիտեր կամ ուղղակի չէր ուզում գրել կամ խոսել երկրի լեզվով¹:

1918-1920 թթ. հայաստանյան մամուլը հաճախ է անդրադարձել ինչպես հայերենի, այնպես էլ հայերենի և երկրի այլ լեզուների գործառնության և իրավունքների հարցերին: Անդրադարձներ եղել են Հայաստանի խորհրդարանի և կառավարության նիստերին: Այդ շրջանի ամենակարևոր իրադարձություններից մեկը հայերենը պետական լեզու հռչակելու փաստն էր: Երկրի և ազգի համար պատմական նշանակալից այդ իրադարձությունը տեղի է ունեցել խորհրդարանի 52-րդ նիստում, որը գումարվել է 1919 թ. դեկտեմբերի 24-ին: Նիստը վարում էր խորհրդարանի փոխնախագահ Լևոն Շանթը: Երկարատև և բուռն քննարկումից հետո² (նիստի աշխատանքն ավարտվել է գիշերվա ժամը 11-ին) ընդամենը երկու հոդվածից բաղկացած օրենքն ընդունվում է: Հայերենը հռչակվում է Հայաստանի Հանրապետության պետական լեզու և պարտադիր դառնում պետական ու հասարակական հաստատություններում ու բանակում: Հիմնարկությունները պարտավոր էին վեց ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկել հայերենը պետական գործառնության պաշտոնական լեզու դարձնելու ուղղությամբ (ի դեպ, հայերենի որևէ տարբերակում արված չէր, արևելահայերենի և արևմտահայերենի մասին ողջ քննարկման ժամանակ խոսք գրեթե չի եղել): Հանրապետությունում այլ լեզուների գործածությունը պիտի սահմանվեր հատուկ օրենքով³:

Ազգային-պետական վիթխարի նշանակություն ունեցող որոշում էր ընդունվել: Հարկավոր է նկատի ունենալ, որ հայերենը հայության կյանքում պետական լեզվի գործառնույթ չէր ունեցել Կիլիկ-

1 Տե՛ս **Դ. Ս. Գյուրջինյան**, Հայոց լեզվի նկատմամբ պետական վերաբերմունքի դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ., «ՎԷՄ» համահայկական հանդես, թ. 4, 2018, էջ 247-248:

2 Հանգամանորեն տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, 1918-1920 / Գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Կիրաբյան, Երևան, 2014, էջ 403-407:

3 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, Երևան, 1998, էջ 209:

յան հայկական թագավորության շրջանից¹ ի վեր, հինգ հարյուր տարուց ավելի (բուն հայրենիքում ավելի երկար, Բագրատունիների հարստության անկումից հետո):

Աշխարհաբարը կամ Նոր հայերենն իր երեքհարյուրամյա պատմության ընթացքում պետական լեզվի կարգավիճակ էր ստանում առաջին անգամ, հայրենիքի մի հատվածում հաստատված հանրապետության սահմաններում: Օրենքը, դժբախտաբար, երկար չգործեց, քանի որ շուտով՝ 1920 թ. Նոյեմբերի վերջին, Հայաստանը խորհրդայնացվեց:

Խորհրդային շրջանում ևս հայերենը պետական լեզվի կարգավիճակ ուներ: Պետական լեզու լինելու փաստն ամրագրված է եղել Խորհրդային (Սովետական) Հայաստանի Սահմանադրության մեջ (1922, 1936, 1978 թթ.): Հարկ է նշել, սակայն, որ այդ հաստատագրումները, թե հայերենը հանրապետության պետական լեզուն է, ըստ էության հայտարարության արժեք ունեին, լեզվական հարցերը կարգավորված չեն եղել առանձին օրենքով. Հայաստանն ինքնուրույն պետական լեզվական քաղաքականություն չէր վարում: Փաստացի հայերենը խիստ նկատելիորեն դուրս էր մղված պետական ու հասարակական կյանքից, զգալապես՝ նաև գիտության շատ ճյուղերից: Ռուսական դպրոցների խիտ ցանցը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ռուսական բաժինները, կենտրոնական ենթակայություն ունեցող արտադրական ձեռնարկություններն ու հիմնարկները, կուսակցական և այլ մարմիններ ռուսերեն գործավարությամբ և ռուսախոսությամբ բառացիորեն խեղդում էին Հայաստանը, ոտնահարում հայերենի և հայախոսների իրավունքները: Մյուս կողմից էլ, իհարկե, անդադար չեղջվում էր ռուսերենի բարերար ազդեցությունը հայերենի վրա (այդ մասին Նույնիսկ աշխատություններ են գրվել):

Հայաստանը 20-րդ դարի վերջին՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին, կրկին անկախ հռչակվեց: Եվ, ինչպես առաջին հանրապետության շրջանում, այս անգամ ևս պետությունն անդրադարձավ պետական լեզվի խնդրին: Կիրառվեցին հատկապես առաջին հանրապետության շրջանի պետական լեզվաքաղաքականության դասերը: Խորհրդային կարգի փլուզումից հետո Նորանկախ Հայաստանի

¹ Հայոց բնօրրանից դուրս՝ Կիլիկյան Հայաստանում, պետական-պաշտոնական լեզու էր գորաբարին հաջորդող միջին հայերենը (տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 235, **Ս. Ղ. Ղազարյան**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, 2-րդ հրատ., Երևան, 1981, էջ 285-286):

առջև ծառացան 1918-1920-ականներին շատ նման հիմնահարցեր՝ պաշտոնական գրագրության հայերենացում, հայերեն չիմացող պաշտոնյաների պաշտոնավարման նպատակահարմարության քննարկում¹, ռուսական դպրոցների ցանցի վերացում, հայկական բանակի ստեղծմանը զուգահեռ հայերենը բանակի լեզու դարձնելը և այլն:

Հայոց լեզվի նկատմամբ իրապե՛ս պետական վերաբերմունքի լավագույն վկայությունը ՀՀ Գերագույն խորհրդում «Լեզվի մասին» ՀՀ օրենքի ընդունումն էր 1993 թ. մարտի 30-ին (հաստատվել է ապրիլի 17-ին): «Լեզվի մասին» օրենքը սահմանում է Հայաստանի լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների լեզվական հարաբերությունները: Օրենքը մեծապես պիտի նպաստեր լեզվավիճակի կարգավորմանը²:

Հայաստանի ներկայիս լեզվական քաղաքականությունը խարսխվում է ՀՀ «Լեզվի մասին» օրենքի և Սահմանադրության վրա: 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրության 1-ին՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի 12-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»³ (ի դեպ, 2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով այդ հոդվածը 20-րդն է³, սակայն հոդվածի կարևորության առումով դա որևէ նշանակություն չունի): Պետական լեզվի փաստի արձանագրումը և ըստ այդմ նրա գերակայության ապահովումը յուրաքանչյուր պետության կարևոր խնդիրներից է: Պետության գործունեության մեջ լեզվի հարցը (նրա պահպանումը, պաշտպանությունը, զարգացումը և տարածումը) երկրի սահմանների անձեռնմխելիությանը հավասարազոր խնդիր է:

1 Հմմտ. Ժամանակին Ալ. Մյասնիկյանի ասած հետևյալ միտքը. «Նա, ով չի ցանկանում այդ ըմբռնել, ով դիտավորությամբ խուսափում է գործածել հայերենը պետական հիմնարկությունների մեջ, իրապես վարում է հակահեղափոխական մի գործ: Նա, ով չի կարող համակերպվել մեր պետության այս պահանջին, կարող է հեռանալ երկրից» (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1 հուլիսի 1921 թ.):

2 Հանգամանորեն տե՛ս **Վ. Միրզոյան**, Լեզվական օրենսդրության տասը տարին, Երևան, 2003:

3 Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 06.12.2015: Համեմատության համար ասենք, որ հարևան Վրաստանում երկրի Սահմանադրության 8-րդ հոդվածն է վրացերենը հռչակում պետական լեզու, Իրանում՝ 15-րդը, Թուրքիայում՝ 3-րդը, Ադրբեջանում՝ 21-րդը: Ի դեպ, Ֆրանսիայի Սահմանադրության 2-րդ հոդվածն է ֆրանսերենը հռչակում Հանրապետության լեզու:

Գործող Սահմանադրության 15-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետական հոգածության և պաշտպանության ներքո են»: Հաշվի առնելով մեծաթիվ սփյուռքի գոյության փաստը և այն, որ հայոց լեզուն կրողների զգալի մասը բնակվում է հայրենիքի սահմաններից դուրս, 19-րդ հոդվածում (2-րդ կետ) տեղ է գտել հետևյալ դրույթը. «Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»:

Ներկայումս Հայաստանում կիրառվող քաղաքականությունը առաջին հանրապետության շրջանի, մասամբ նաև Խորհրդային Հայաստանի (գործնական լուծումների և հասարակական ընկալման առումով) լեզվաքաղաքականության շարունակությունն ու զարգացումն է: Բայց և ակնհայտ է, որ առ այսօր որդեգրված շատ սկզբունքներ և կիրառվող մոտեցումներ ձևավորվել են հենց «Լեզվի մասին» ՀՀ օրենքի թելադրանքով: «Լեզվի մասին» օրենքն ուղենշային դեր ունի, և այսօր էլ՝ օրենքի ընդունումից քսանվեց տարի անց, նա է լեզվական հարաբերությունները կարգավորող իրավական հիմնական փաստաթուղթը:

Անշուշտ, հարկավոր է հաշվի առնել, որ որոշակիորեն տարբեր են 1993-ի և 2019-ի պատմական իրադրությունները, աշխարհաքաղաքական հանգամանքները, ինչպես նաև արտալեզվական այլ գործոններ: Առհասարակ տարբեր են երկրի լեզվական իրավիճակը և միջազգային (լայն ընդգրկմամբ՝ համաշխարհային) զարգացումները:

1993-ին Նորանկախ Հայաստանն իր առաջին քայլերն էր անում ինքնուրույն լեզվաքաղաքականությունն մշակելու ուղղությամբ: Ռուսերենի գերիշխանության դեմ հայերենի իրավունքները վերահաստատելու առումով լեզվի մասին օրենքը հսկայական նշանակություն ուներ: Ուշագրավ է օրենքի 5-րդ՝ «Պետական լեզվաքաղաքականության իրականացումը» հոդվածի այս դրույթը. «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում է պատասխանատվություն սույն օրենքի պահանջները խախտելու համար» (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189²-189⁶ հոդվածներն այդ մասին են):

Կարճ ժամանակ անց «Լեզվի մասին» ՀՀ օրենքի հիման վրա 1996 թ. մարտի 20-ին ընդունվեց «Լեզվի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը»: Հայաստանի և Արցախի Հանրապետության լեզվի մասին օրենքները վկայում են, որ կիրառվում է գրեթե նույն լեզվական քաղաքականությունը, որի գլխավոր նպատակը հայերենի իրավունքների պաշտպանությունն է, նրա գերակա դիրքի ապահովումը պետության կյանքում:

Հայաստանի պետական լեզվաքաղաքականության հիմնական խնդիրները բխում են «Լեզվի մասին» օրենքից: Կարելի է նշել մոտ երկու տասնյակ կարևոր խնդիրներ:

1. Պահպանել հայերենի՝ իբրև ՀՀ պետական լեզվի գերակա վիճակը՝ ապահովելով նրա լիարժեք գործածությունը երկրի կյանքի բոլոր բնագավառներում:

2. Ապահովել Հայաստանում հայերենով կրթության և դաստիարակության իրականացումը:

3. Ապահովել գրական հայերենի լիարժեք գործածությանը պետական և հասարակական կյանքում:

4. Կանոնարկել ժամանակակից գրական հայերենը:

5. Հնարավորություն ընձեռել ազգային փոքրամասնությունների լեզուների գործառնության և զարգացման համար:

6. Հայերենի համար համակարգչային տեխնոլոգիական արդիական գործիքներ ստեղծել:

7. Նպաստել հայերենի համակողմանի ներկայությանը թվային տիրույթում:

8. Հայերենի, գրական հայերենի պատշաճ ներկայությունն ապահովել հեռուստատեսությունում, ռադիոյում, այլ լրատվամիջոցներում, այդ թվում առցանց:

9. Բարձրացնել հանրապետության բնակչության գրագիտական մակարդակը:

10. Հայերեն սովորեցնել ներգաղթող օտարախոս հայրենակիցներին:

11. Հայրենիքից դուրս ապրող հայրենակիցների շրջանում պահպանել և տարածել հայոց լեզուն:

12. Նպաստել Հայաստանում արևմտահայերենի անարգել գործածությանը հանրային կյանքի տարբեր ոլորտներում:

13. Հայերեն ձևավորել Հայաստանի բնակավայրերի լեզվա-

կան արտաքին հարդարանքը (ցուցանակներ, վահանակներ և հրապարակային այլ գրվածքներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են զուգակցվել այլ լեզուներով):

14. ՀՀ տարածքում գովազդի բոլոր միջոցները ձևավորել հայերեն:

15. Պետական մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում գործադարությունը կատարել հայերեն (արտասահմանյան/ միջազգային կառույցների դեպքում զուգակցել հայերենը):

16. Պահպանել Հայաստանի լեզվավիճակի կայունությունը:

Հայտնի փաստ է, որ Հայաստանի բնակչության ազգային կազմը միատարր է (98 տոկոսը հայ է), Հայաստանում չկա ո՛չ բազմալեզվություն, ո՛չ երկլեզվություն, ուստի լեզվաքաղաքական այն խնդիրները, որոնք ծառացած են բազմազգ պետությունների (Ռուսաստան, Հնդկաստան, Շվեյցարիա¹ և այլն) առջև, մեր երկրին բնորոշ չեն: 2011 թ. մարդահամարի տվյալներով՝ հայ չէ Հայաստանում ապրող 57053 ՀՀ քաղաքացի, որոնցից՝ եզդի (35308), ռուս (11911), ասորի (2769), հույն (900) և այլ ազգերի ներկայացուցիչներ²: Ազգային փոքրամասնություններն ունեն լեզվական իրավունքներ և պարտականություններ, ինչպես որ պետությունն ունի որոշակի պարտավորություններ նրանց նկատմամբ³: «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» համաձայն (ՀՀ-ում խարտիան ուժի մեջ է մտել 2002 թ. մայիսի 1-ից)՝ Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներ են ճանաչվել ասորերենը, եզդիերենը, հուևերենը, ռուսերենը և քրդերենը⁴: Այժմ այդ լեզուներով (ռուսերենից բացի) համակարգված ուսումնական ծրագրեր անհնար է իրականացնել թե՛ լեզվակիրների փոքրաթիվության և թե՛ Հայաստանի տարածքում նրանց ոչ հավաք ապրելու հետևանքով, ինչպես նաև

1 Այս մասին տե՛ս, օրինակ, հետևյալ խմբային աշխատանքը՝ Решение национально-языковых вопросов в современном мире, под ред. акад. РАН Е. П. Чельшева, Санкт-Петербург, 2003:

2 Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարդահամար-2011, Աղյուսակ 5.1 Բնակչությունը (քաղաքային, գյուղական)՝ ըստ ազգության, սեռի և տարիքի (<https://www.armstat.am/file/doc/99478353.pdf>):

3 Հանգամանորեն տե՛ս «Ազգային փոքրամասնությունները Հայաստանում. Պարտավորություններ, հնարավորություններ», Երևան, 2004:

4 Եզդիերենի և քրդերենի տարբերակման հարցն առանձին խոսակցության կյոթ է:

անձնական դրդապատճառներով (անձը չի կամենում սովորել իր մայրենի լեզուն)¹:

Կարևոր խնդիր է ՀՀ պետական լեզվի, ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուների և օտար լեզուների հարաբերությունների, նրանց գործառության ոլորտների կարգավորումը: Լեզուն ինքնություն ձևավորող հզոր միջոց է, ուստի մեծ դեր ունի երկրի լեզվակրթական քաղաքականությունը², որը պետական լեզվաքաղաքականության էական նշանակություն ունեցող բաղադրիչ է:

Լեզվակիրների վրա մեծապես ազդող ոլորտ է տեղեկատվական դաշտը: Չանգվածային լրատվության միջոցների, հատկապես հեռուստատեսության և ռադիոյի (այդ թվում՝ առցանց) լեզուն ամռչվում է հարյուր հազարավոր դիտողների և ունկնդիրների, ուստի այնտեղ գործածվող լեզվի կանոնարկումն ու պատշաճեցումը առաջնահերթ խնդիրներ են: Եթերից հնչող խոսքի միջոցով հայերենի աղարտումն անցանկալի բառապաշարով, դարձվածքներով և արտահայտություններով (օտարաբանություն, գեղեցկաբանություն, հայիոյաբառ, ժարգոն) և գողական լեզվի դրսևորումներով լեզվական կայունության առումով խիստ բացասական դեր է կատարում, ընդ որում ոչ միայն Հայաստանում, այլև բոլոր այն վայրերում, որտեղ հայաստանյան լրատվամիջոցներին հետևող հայություն կա:

Եթերի լեզվի ցածր որակը ազդում է հատկապես աճող սերնդի խոսքի վրա, առհասարակ իջեցնում հասարակության լեզվական մշակույթը: Հեռուստատեսային եթերից հնչող խառնիճաղանջ լեզուն մշակութային, ինչպես և գրական հայերենի դիտանկյուններից վնասակար դեր է կատարում: Այստեղ թե՛ հասարակությունը և թե՛ պետությունը հսկայական անելիք ունեն:

Հասարակության լեզվական գրագիտության բարձրացման խնդիրը պետական լեզվական քաղաքականության առաջնահերթություններից է: Սրան հասնելու ուղիներից են հայոց լեզվի և գրականության ուսուցման նոր՝ արդյունավետ մոտեցումների որդեգրումը, ուսուցման արդիական միջոցների և հնարների կիրառումը, կրթական տարբեր աստիճանների և լեզվի իմացության տարբեր

1 Արցախյան շարժման ընթացքում Հայաստանից արդիեջանցիների զանգվածաբար հեռանալուց հետո երկրի ազգային-ժողովրդագրական (սակ լեզվական) ամենասուր խնդիրը լուծվել է:

2 Տե՛ս «Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ. Ազգային գեկույց», Երևան, 2008:

մակարդակների համար նոր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծումը: Անհրաժեշտ է տեսական գիտելիքների հաղորդումից անցում կատարել հայոց լեզվի գործնական ուսուցման, խթանել ընթերցանությունը (ընթերցասիրությունը), զարկ տալ հայոց լեզվի աշխույժ և հիմնավոր ուսուցմանն այնպես, որ հայերենի դպրոցական դասընթացն ավարտողն ունենա տարբեր իրավիճակներում գրական հայերենով ազատ հաղորդակցվելու հմտություն, կարողանա անկաշկանդ գրել տարբեր ոճերի գրություններ: Հարկ է սովորողներին սեր ներարկել իրական, կենդանի հայոց լեզվի, հայ գրականության և առհասարակ մշակույթի նկատմամբ, այլ ոչ թե տեսական-քերականական գիտելիքների հեղեղով և անգիր անելու հանձնարարություններով նրանց վանել մայրենի լեզվից, գրից ու գրականությունից և մշակույթից:

Վերջին տարիներին ավելի շատ օտարերկրացիներ (ուսանողներ, գործարարներ, աշխատողներ և այլն) են հաստատվում Հայաստանում, ինչպես նաև հայրենիք են վերադառնում (տեղափոխվում) հայերեն չիմացող կամ վատ իմացող հայեր: Երկրում ապրելու և գործունեություն ծավալելու համար այդ մարդիկ լեզվի իմացության գոնե տարրական մակարդակին համապատասխանող հայերեն պետք է իմանան: Այդ նպատակով հարկավոր է մշակել հայոց լեզվի իմացության մակարդակները ներկայացնող փաստաթուղթ, ուսուցման մեթոդիկա, ստեղծել հայերենի իմացությունն ստուգող հարցարաններ: Ցավոք, առ այսօր չունենք հայերենի իմացությունն ըստ մակարդակների սահմանող ընդունելի մի փաստաթուղթ: Ժամանակն է վերականգնելու հայ և օտարազգի ոչ հայախոսների համար նախատեսված պետական անվճար դասընթացները՝ նախապես մշակելով դրանց մեթոդական փաթեթները:

Հայախոս և հայերեն սովորել ցանկացող հանրությունը կարիք ունի հայերեն մի շարք արդիական գործիքների՝ էլեկտրոնային բառարաններ և շտեմարաններ, տարատեսակ տեղեկատուներ (էլեկտրոնային, թղթային, հեռախոսային և այլն):

Հայաստանը պետք է հաշվի առնի նաև Սփրիայից, Ռուսաստանից և այլ երկրներից Հայաստան եկած աշակերտների արևելությունը երկրում, նրանց լեզվական և ուսումնական խնդիրները: Դպրոցական ավարտական և համալսարանական միասնական քննությունների տարբերակված հարցարաններ պետք է ստեղծել

այդ շրջանավարտների համար: Հարկ է այդտեղ ապահովել նաև գրական արևմտահայերենի առկայությունը, որ կարող է լինել ամբողջական կամ մասնակի դրսևորմամբ:

Լեզվական քաղաքականությունը սերտ աղերսներ ունի արտաքին քաղաքականության հետ, քանի որ բազմաթիվ երկրներում (Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Վրաստան, Ֆրանսիա, Կանադա, Լիբանան, Իրան և այլն) հայկական մեծաթիվ և ստվար համայնքներ գոյություն ունեն, և հայրենի պետությունն այդտեղ անելիք ունի: Այդ երկրների հետ Հայաստանի հարաբերությունների մեջ դեր ունի լեզվական-մշակութային բաղադրիչը, որն առնչվում է համազգային շահերին՝ կրթական գործ, լրատվամիջոցներ և այլն:

Հայաստանի անկախությունը հռչակվելուց ի վեր Հայաստանում դասական (մաշտոցյան) ուղղագրության վերականգնման հարցին հետամուտ են ավանդական սփյուռքի և հայաստանյան մտավորականության որոշ շրջանակներ: Քննարկումների ժամանակ հաճախ է վկայակոչվում «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի հետևյալ դրույթը. «Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը»: Ուղղագրության խնդիրը պարբերաբար օրակարգային է դառնում:

Լեզվական քաղաքականության փիլիսոփայությունը կարող է տարբեր ժամանակներում փոփոխությունների ենթարկվել՝ ելնելով պետության ներքին և արտաքին քաղաքականության որոշեցրած մոտեցումներից: Ըստ այդմ էլ լեզվաքաղաքականությունը կարող է լինել «ծավալապաշտական», «հարձակողական» կամ «պաշտպանական», «վերահսկողական», «հրամայական-պարտադրական» կամ «հանդուրժողական», «միասնականացնող», «մշակութային-լուսավորական» և այլն:

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը համակշռված, ազատական, ազգային և ժողովրդավարական, հանդուրժողական բնույթ ունի: Այդ քաղաքականության առանցքը հայերենն է, որը հայ մշակույթի հիմքն է, հայ ինքնության ամենաեական տարբերակիչ հատկանիշը, Հայաստանի կառավարման լեզուն:

**ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ЯЗЫКОВОЙ ПОЛИТИКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ - ДАВИД ГЮРДЖИНЯН** - Государственная

языковая политика Республики Армения опирается на “Закон о языке”, принятый 30 марта 1993г. Верховным советом РА. Стержень государственной языковой политики - армянский язык, уважаются языковые права национальных меньшинств.

Основными направлениями государственной языковой политики Армении являются образование, культура, средства массовой информации, законодательно-правовое поле, цифровая сфера, экономика, реклама и др.

Ключевые слова: государственный язык, языковая политика, государственная языковая политика, закон о языке, армянский язык, восточноармянский, западноармянский язык, язык национального меньшинства, лингвообразовательная политика, язык образования.

MAIN DIRECTIONS OF THE LANGUAGE POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA - DAVIT GYURJINYAN - The state language policy of the Republic of Armenia is based on the “Law on Language”, adopted on March 30, 1993 by the RA Supreme Council. The axis of the state language policy is the Armenian language, the language rights of national minorities are respected.

The main directions of the state language policy of Armenia are education, culture, means of mass media, legislative and legal field, digital sphere, economy, advertising, etc.

Key words: state language, language policy, state language policy, law on language, Armenian language, Eastern Armenian, Western Armenian language, language of national minority, linguistic education policy, language of education.

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԿԱԹՅԱ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԸ ԵՏ ԶԱՇԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Հոդվածում վեր են հանվում մի շարք լեզվական խնդիրներ: Գիտական հիմնավորումներով հոդվածագիրը ցույց է տալիս, որ գրաբարից հրաժարվելը մեր լեզվի զարգացման ճանապարհին մեր մեծագույն վրիպումներից էր: Երկրորդ Մեծագույն աղետն էին խորհրդային շրջանի ուղղագրական «բարեփոխումները»:

Երբ «**բարեփոխություն**» կատարվեց արևելյանում՝ կուսակցական գաղափարախոսների ճշման ներքո, զոհասեղանին դրվեց և Էրզրի լեզուն, պառակտվեց երկիրը: Բոլշևիկյան բերած մեծագույն ողբերգություններից մեկը մարդու մեջ մարդուն պառակտելն էր, նրա եսի երկատելը՝ ոչնչացնելու նպատակով: Այն մեզ հանեց մեր դեմ, Աբեղյանին հանեց Աբեղյանի դեմ: Սա ժամանակի դրաման էր: Խորհրդայնացումը մեր անհեռատես գործիչների ձեռքով միանգամից հոդս ցնդեցրեց նաեւ վիլսոնյան ծրագիրը, մեր շատ երազանքներ ու նպատակներ:

Փաստերն ու փաստարկումները հանրահայտ են: Այժմ «բաժանումը» երկու ճյուղերի միջև խորացնելով՝ ոչնչի չենք հասնի, ոչ էլ, իհարկե՝ սոսկ դատապարտելով կատարվածը:

Մենք, որ տեսել ենք գրաբարի, աշխարհաբարի արևելյան և արևմտյան զարգացումները, այսօր միայն մի խնդիր ունենք այդ ասպարեզում. **մայրենին անաղարտ պահել, խուսափել օտարամոլությունից՝ լինի «համակարգվածության պահանջ» ունեցող թարգմանական աշխատանքներում, թերթերում, գիտական հրապարակումներում, թե բանավոր խոսքի մեջ:**

Բանալի բառեր: Լեզու, դպրություն, երկաթյա վարագույր, երկու գրական լեզուներ, մարտահրավերներ, հայագիտական կենտրոններ, ազգային ծրագիր, մտածողություն, գրաբար, արևելահայերեն, արևմտահայերեն, արքայական:

Հայ եւ համաշխարհային պատմագրության մեջ վաղուց ամրագրված ճշմարտությունը՝ **հայերն աշխարհի հնագույն քաղաքակրթությունն ունեցող ազգերից են**, այսօր ոչ մի կասկած չի հարուցում, առավել եւս՝ ապացուցման կարիք չունի: Բացար-

ձակ իրողությունն է և այն, որ յուրաքանչյուր քաղաքակրթության հիմքում ազգային լեզուն է: Ի՞նչ լեզվով է խոսել Նոյ Նահապետը: Անշուշտ, նա խոսում էր հայերեն: Եվ սա բանաստեղծական գեղում է, բազմաթիվ բանահյուսական բանավոր գործեր, մանավանդ՝ ասացվածքներ կան, որոնք անմիջական կապ ունեն Նոյի ու ջրհեղեղի հետ, հաստատում են այս իրողությունը: Ժողովրդի մեջ վաղնջական ժամանակներից մինչև հիմա շրջանառվում են «Գինին Նոյի ձեռքով է քաշված», «Նոյեն վրիստան խոսե», «Նոյի աղավան», «Մեր ախպերությունը Նոյի ծերքավա կնքվալ» և այլն: Եվ անվիճելի է, որ ազգերի ձևավորման խնդրում որոշիչ դեր է խաղացել լեզուն՝ սկսած այն պահից, երբ դեռ հնչյունը գիր չէր դառել:

Իմ դիտարկումներն, իհարկե, լեզվագիտական չեն: Բայց ո՞վ է ասել, որ ես, առհասարակ հայ մարդը, ամեն անգամ մի տառ գրելիս, Մաշտոցի հետ չի մասնակցում այբուբենի ստեղծմանը: Հիրավի, որպես ազգ ու ժողովուրդ, դեռևս մեր թվարկությունից շատ առաջ, մեր մշակույթը ստեղծեցինք՝ քարերն ու մագաղաթները վերածելով գրքերի, առաջինն աշխարհում քրիստոնեությունն ընդունեցինք որպես պետական կրոն, արարեցինք հայերեն մեր գիրը, ասորական Պեշիթոյից թարգմանեցինք Աստվածաշունչը (ի դեպ, մեր լեզուն, ինչպես գրում են հավաստի աղբյուրները,¹ միակն է նաև այն առումով, որ Աստվածաշնչի անվանման մեջ պահպանվում է Աստված բառը), ստեղծեցիք մեր «Սասնա Ծռեր» դյուցազներգությունը, մեր Հայաստանն ու Հոգեւոր Հայաստանը, մեր ազգայինը: Եվ արարչությունը շարունակվում է: Մեր լեզուն ի սկզբանե հաղորդակցությունն էր Աստծո հետ, և միայն շատ հետո պիտի աշխարհահռչակ բանաստեղծ Բայրոնը խոստովաներ,² որ հայերենը Աստծո հետ խոսելու լեզու է: Այո, հպարտանում ենք մեր ազգային հարստությամբ, նրանով, որ մեր ոսկեղենիկ լեզվով կերտվել են մեծարժեք ու մնայուն հուշարձաններ, որ մենք եզակի Մատենադարան ունենք, որ... Բայց... Թող ներվի, հայ ժամանակակից երիտասարդը լիարժեք տե՞րն է այս ամենի: Մեկ բառով ասենք՝ ոչ: Ինչո՞ւ: Պարզեմ միտքս: Վերջին հարյուրամյակից բացի, մեր դպրությունը հազարամյակներ շարունակ ստեղծվել է դասական ուղղագրությամբ: Մենք այսօր այն մերը դարձնելու համար թարգմանության

1 <http://www.matenadaran.am/ftp/data/Banber-25.pdf>

2 <http://life.mediamall.am/?id=63709>

ենք դիմում, ինչպես, ասենք, Շեքսպիրի, Ուլիթմենի կամ Ջոյսի հետ հաղորդակցվելիս:

Հոգևոր պաշարը, որ կուտակվել է դարերի ընթացքում, մեզ համար հիմնականում մնում է անհասանելի, կամ՝ եթե մեզ հասնում է, ապա միայն ու միայն միջնորդավորված: Կարողում ենք Նարեկացի, գրաբարով ուրիշ Նարեկացի է, աշխարհաբարով՝ ուրիշ. այստեղ արդեն թարգմանության լավի ու վատի հարցը չէ, այլ Նարեկացու Նարեկացի լինելու խնդիրը: Իմ սերունդը և, ընդհանրապես՝ Հայաստանում ծնվող-մեծացող սերունդները, ամբողջապես զրկված են այն վիթխարի գրական-գեղարվեստական, գիտական ու մշակութային շտեմարանից, որն ունի դասական ուղղագրություն: Ասենք, ինչո՞ւ բոլորը չկարողանան բնագրով կարդալ Պարոնյան, Չոիրապ, Օտյան, Վարուժան, Սիամանթո, Պեշիկթաշլյան, Դուրյան, Մեծարենց...: Նրանց գրականության պակասը մեր արյան մեջ անպայման ինչ-որ կարևոր բաղադրատարրի կարիք է առաջացնում, որոշակիորեն խաթարում հայ լինելու մեր ընդհանրական կերպարը:

Տարիներ առաջ բարեբախտություն եմ ունեցել ջերմ մտերմություն ունենալու տաղանդավոր բանաստեղծ Վահե Օջականի հետ: Մի օր նա, երբ մեր տանն էինք, ասաց. «Հորս՝ Հակոբ Օջականի գրական ժառանգությունը հսկայական տպաքանակով լույս ենք ընծայել, բայց սփյուռքում բոլոր հայերը չէ, որ հայերեն կկարդան... Ուզում եմ այդ տպաքանակի որոշ մասը բերել Արցախե... Եվ ուրախացա, և անակնկալի եկա: Հիշեցինք Պարույր Սևակի բարձր գնահատականն Օջականի ստեղծագործության մասին, կարևորեցինք նրա երկերի հրատարակությունը, բայց ավելին չկարողացա խոստանալ, որովհետև Արցախում դասական ուղղագրությամբ երկերը չեն ընթերցում, քանի որ դպրոցում չեն սովորում արևմտահայերեն: Իսկ հայերենը, իմ խորին համոզմամբ, հայերեն չէ, եթե նրանից առանձնացվում է արևմտահայերենը, մեր լեզվի երկու ճյուղը միասին են հայերեն: Ճշմարիտ հայերեն: Իհարկե, Վահեն նրբորեն խուսափեց խնդիրը երկրորդ անգամ արծարծելուց: Մենք լուռ իրար հասկացանք: Եվ մինչև հիմա զգում եմ այն պարապն Արցախում, որ Հակոբ Օջականի ստեղծագործության բացակայությամբ է բացատրվում: Եվ՝ ոչ միայն:

Ես ընդամենը մեկ փաստ հիշեցի, որն ուղիղ գծով կապված է

արևմտահայերեն լեզվի «անհաղթահարելիության» հետ: Բայց չէ՞ որ Մաշտոցը հայոց առաջին դպրոցներից մեկը բացել է հենց Արցախում: Բայց չէ՞ որ շուշեցի ածխագործ-ուսուցիչ Ավետիք Բահատրյանն է, որ իր «Հին հայոց տաղաչափական արուեստը»¹ գրքում, առաջիններից մեկը, անդրադարձել է Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի տաղաչափությանը, նրա լեզվին ու արժանացել Եղիշե Չարենցի բացառիկ բարձր գնահատականին. **«Գիրք հանճարեղ և զարմանալի»**:² Իսկ Էդ. Ջրբաշյանը, խոսելով այդ գրքի մասին, գրել է. **«Տաղաչափական ձևերը Բահատրյանն աշխատում է մեկնաբանել սեփական ազգային հիմքով՝ հայոց լեզվի արտասանական և շեշտադրական առանձնահատկություններով: Դա նրա գիտական մտածողության ուժեղ կողմերից մեկն է»**: Հենց այդ աշխատության մեջ է, որ Ա. Բահատրյանը բարձր գնահատանքով է անդրադառնում հայ գրչությանը. **«Հայոց քերթողական արուեստը դեռ Վահագնի ժամանակին հասած ենք նկատում իւր բարձր կատարելութեանը»**:³

Այստեղ՝ Գանձասարի վանքում, ուր գտնվում ենք հիմա, ստեղծվել են ոչ քիչ արժեքավոր երկեր, որոնց նմուշներն արդեն քանի-քանի սերունդների անհասանելի են մնում դարձյալ լեզվական պատճառներով: Ինքնաստարվում ենք, հետո սկսում «հերոսաբար» մեր լեզվով թարգմանվել՝ հաղթահարելով մեր հեղինակած արհեստական խոչընդոտները: Այս երևույթը որքան ծիծաղելի, այնքան էլ ցավալի է և դառնում է «հայկական» բնավորության ոչ ընդունելի գիծ, թեև նման վայրիվերումներն, ինչ խոսք, հաճախ բացատրվում են սոցիալ-քաղաքական պայմաններով, մեզ պարտադրված այս կամ այն ողբերգական իրադրության առկայությամբ:

Գրաբարից հրաժարվելը մեր լեզվի զարգացման ճանապարհին մեր մեծագույն վրիպումներից էր: Երկրորդ մեծագույն աղետն էին խորհրդային շրջանի ուղղագրական «բարեփոխումները», ինչպես ասում են: Սակայն այստեղ ես կուզեի մի փոքր կանգ առնել «աբեղյանական ուղղագրության» հետ առնչվող խնդիրների վրա:

¹ Ավ. Բահաթրեան, Հին հայոց տաղաչափական արուեստը, Շուշի, 1891, էջ 43:

² <http://www.irates.am/hy/C3%AF%C2%BF%C2%BD%C3%AF%C2%BF%C2%BD/VowXv4q1R1KjAX1SUwvYnaB7k>

³ Հին հայոց տաղաչափական արուեստը, Քննական տեսութիւն, Ավետիք Բահաթրեան, Միղգաջան Մահտեսի Յակոբեանցի տպարանում, Շուշի, 1891, էջ 127:

Իմ ուսումնասիրությունների արդյունքում ես հանգել եմ այն եզրակացության, որ Աբեդյանը՝ քննության առարկա խնդրում «քավության նոխագ» է: Հիշենք լենինյան հայտնի ասույթը. **«Հայաստանը մենք գոհեցինք հանուն համաշխարհային հեղափոխության»:**¹ Չոհ եզրույթի մեջ չեն մտնում միայն եղեռնված ժողովուրդը, աշխարհագրական տարածքները. այստեղ ասվածին հետևում է նաև բուշևիկյան նոր շեշտադրումը լեզվի հարցում՝ **խորհրդային երկրի մեջ մտնող բոլոր փոքր ազգերի լեզուները պիտի դարձնել լատինատառ:** Այնպես որ, իբրև արևելահայերիս և արևմտահայերիս բաժանող երկաթյա վարագույր, լեզվական «նոր ուղղագրությունը» ընտրվեց: Մանուկ Աբեդյանն իր գիտական դրույթներն ուղղագրության վերաբերյալ՝ սկսած 1890, ապա՝ 1913 թվականներից, շարադրել է տարբեր պարբերականներում և միշտ էլ ընդգծել. **«Եթե որևէ փոփոխություն պիտի վերացնի մեր ուղղագրության միությունը և մեր երկու գրական լեզուները իրարից ավելի հեռացնի, ավելի լավ է, որ չլինի»:**² Աբեդյանը մշտապես շեշտել է **«ընդհանուր ուղղագրություն ունենալու անհրաժեշտությունը արևելյան և արևմտյան հայերի մեջ»:** Ավելին, նա իր եզրահանգումներում հեռուն է գնացել. **«Եթե չլինե՞ր գրաբարի ուղղագրությունը, մենք դժվար թե ունենայինք մեր արդի գրական լեզուն»:**³ Խոստովանենք, որ սա խիստ սկզբունքային ու նաև ելակետային դիտարկում է: Այս մասին քիչ չի գրվել և դեռ էլի կգրվի:

Մեզ համար պարզ է մի իրողություն. գիտականորեն, թե գեղարվեստորեն՝ գրաբարյան լեզուն հազար անգամ ավելի ամբողջական է վերարտադրում իր մեջ ազգային մեր նկարագիրը: Տեղն է հիշելու Ֆ. Գ. Յունգերի խոսքը. **«Լեզուն առանց գիտության կարելի է պատկերացնել, գիտությունը հնարավոր չէ պատկերացնել առանց լեզվի: Իսկ քանի որ լեզուն ինչ-որ որոշակի լեզու է, ուրեմն գիտությունն անհնար է պատկերացնել առանց որևէ որոշակի լեզվի: Եթե լեզուների բազմազանությունից դժգոհ՝ մեր մեջ ծնվում է լեզուները մեկ-միակ՝ ինչ-որ lingua universalis-ով կամ համաշխարհային լեզվով փոխարինելու պլան, նման դեպքում նույնպես այդ լեզուն**

1 <https://hy.wikipedia.org/wiki/>

2 <https://www.aravot.am/2010/05/19/348209/>

3 <https://www.azg.am/AM/culture/2014032102>

ինչ-որ որոշակի լեզու է, այնպիսի կառուցվածքի լեզու, որը հենվում է բնական լեզուների վրա»:¹

Ես այստեղ կարևոր եմ համարում մի հիշեցում, որն անմիջապես կապ ունի «աբեդյանական ուղղագրության» հետ: Ուրեմն՝ չափոսի մոռանանք, որ գիտնականը ուղղագրության դյուրացման և լեզվական մի շարք (հատկապես՝ ձայնավորների հարցում, ինչպես «Մի հնչյուն՝ մի գիր» սկզբունքի կիրառման դեպքում), գիտական դրույթների դիմել է դեռևս այն ժամանակ, երբ օդում անգամ, ինչպես ասում են, աննշմարելի էր «կոմունիզմի ուրվականը», այսինքն՝ լեզվական բարենորոգումը, ըստ գիտնականի, ընդունվելու պարագայում պետք է վերաբերեր մեր լեզվի թե արևելյան, թե արևմտյան ճյուղերին, ավելին, այն ժամանակ լեզվական ճյուղերի նման տարբերակում գրեթե չկար: Երբ **«բարեփոխություն»** կատարվեց արևելյանում՝ կուսակցական գաղափարախոսների ճնշման ներքո, զոհասեղանին դրվեց և Էրզրի լեզուն, պառակտվեց երկիրը: Բոլշևիզմի բերած մեծագույն ողբերգություններից մեկը մարդու մեջ մարդուն պառակտելն էր, նրա եսի երկատելը՝ ղչնչացնելու նպատակով: Այն մեզ հանեց մեր դեմ, Աբեդյանին հանեց Աբեդյանի դեմ: Սա ժամանակի դրաման էր: Խորհրդայնացումը մեր անհեռատես գործիչների ձեռքով միանգամից հոգս ցնդեցրեց նաև վիլսոնյան ծրագիրը, մեր շատ երագանքներն ու նպատակներ:

Ապագայնացման խորհրդային այդ արշավի դեմ պայքարում ազգային շատ ու շատ գործիչներ հայտնվեցին 30-ական թվականների ճիրաններում: Որքան էլ լեզվական բարեփոխումների նման կիրառմանը դեմ լինեին ժամանակի հայ լեզվաբանները, (իսկ դա այդպես էլ կար) այդ թվում Աբեդյանը, այնուամենայնիվ, Մոսկվայից երևան «իջած» հրամանը՝ լեզվական փոփոխության վերաբերյալ, կատարվեց Պողոս Մակինցյանի² և, ինչպես Չարենցը կասեր՝ **«լենինյան չստեր հագած ֆիլիստերների»** կողմից: Հայ լեզվաբանների ձեռքբերումը, եթե կարելի է այսպես ասել, մնաց այն, որ, այդուհանդերձ, **լատինատառ այբուբենին անցնելու գաղափարը մերժվեց մեզանում:**

Ավելորդ չեմ համարում հիշեցնել Ամենայն հայոց բանաստեղծի նամակի հանրահայտ տողերը՝ Թիֆլիսից հղված նույն Պ. Մակ-

¹ <https://gtmarket.ru/laboratory/basis/3157/3159>

² Պողոս Մակինցյանին, նամակ, Յովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 414:

ինցյանին. «Ոչ թե պետք է հին հնչյունները վերականգնել, այլ մաշվածները դեն գցել, ինչպես ռուսներն արեցին: Ոչ թե պետք է դժվարացնել, այլ պետք է հեշտացնել: Եվ չպետք է եղ խնդրին եղ կերպարանքը տալ- պատմախնդրություն չեմ իմանում ինչ բան կապել հետքե»:¹

Փաստերն ու փաստարկումները հանրահայտ են: Այժմ «բաժանումը» երկու ճյուղերի միջև խորացնելով՝ ոչնչի չենք հասնի, ոչ էլ, իհարկե՝ սոսկ դատապարտելով կատարվածը: Ծայրահեղությունների չափտի գնալ, քանի որ հենց այդ մոտեցումներն են մեզ կանգնեցրել լեզվական աղետի, ես կասեի՝ երկրաշարժի առաջ, որից մեր տունը (**«Հայ լեզուն տունն է հայուն»**,²Մ. Իշխան) անընդհատ ցնցումներ է ապրում: Ինչ էլ որ կատարվի, լեզուն երկրի, ազգի գոյության առաջին, անփոխարինելի պայմանն է, մեր արյան վարքագրությունը, հետևապես մենք պարտավոր ենք ազգովի լծվել նրա բնականոն զարգացմանն ու աճին: Ինչպե՞ս կարող են մի լեզվի բարբառային ճյուղերը, դրանք կրող քաղաքներն ու գյուղերը վերանալ, ու լեզվի վրա վերքեր չառաջացնել: Ես նկատի ունեմ (Ավնի, Մեբաստիայի, Վանի, Գարահիսարի, Երզնկայի, Տիգրանակերտի) բարբառները:

Այսօր Արցախում, մանավանդ՝ քաղաքային պայմաններում աճող սերունդները, լիարժեք չեն տիրապետում արցախյան բարբառին: Օտարամոլությունը մեզ ոչնչացնում է: Ներեցեք ինձ: Բայց մտնենք Ստեփանակերտի գերեզմանոցները և կոտեսենք, որ անգամ քարերի վրա տոհմիկ հայ մարդկանց՝ մեծ ու փոքր, անունները մեծամասամբ գրված են ռուսերեն տառերով: Բայց չէ՞ որ այդ գրերը մեր պատմությունն են վաղը ներկայացնելու: Չէ՞ որ հայր քարի վրա միշտ գրել է հայերեն: Դեռ չեմ խոսում շատ երիտասարդների թւերին կամ կրծքներին դաջված գրությունների մասին, որոնք նույնպես հիմնականում օտարալեզու են: Սա նշանակում է, մեր լեզվի զարգացումը լուրջ դիմադրության առաջ է:

Օտարամոլության ծայրահեղությունը, մի կողմից էլ՝ մաքրամոլության չարդարացվող ճիգերը մեզ կանգնեցնում են մեծ մարտահրավերների առաջ: Մենք չէ միայն, որ այս մասին բարձրաձայնում ենք: Մեզանից առաջ էլ մեր նախնիներն ունեցել են նման խնդիրներ և տվել են իրենց բացատրությունները: Կրկին պիտի

1 Հովհ. Թումանյան, հ. 4, «Հայաստան» հրատ., Երևան, 1969, էջ 428:

2 <http://asbarez.com/arm>

Թումանյանին դիմեմ: Նա լեզվի հարստացման հիմնական աղբյուր էր համարում ժողովրդական բանահյուսությունը, բարբառները, բայց միաժամանակ չէր բացառում նաև լեզվի զարգացման գործընթացներում փոխառությունների դերը: Փոխառությունների, ոչ թե՝ կրկնակման: Բանաստեղծը գրում է. **«Խնդրեմ, ասեք, եթե մեր լեզվից հանեք ձեր հալածած «շանը», որ չինական է, թե մոնղոլական-թաթարական, ինչո՞վ կփոխարինեք: ... Դրա նման նաև շատ ուրիշ բառեր, որ մաքուր հայերեն չեն:**¹ Խոսելով ծայրահեղ մոտեցումների վնասակարությունների մասին, գեղագետը եզրահանգում է. **«Ոչ. թե ժողովրդական, թե գրական խոսքի մեջ լեզվական փոփոխությունները եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ է գեղեցիկ, որ էդպես է. միայն թե պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել, ահա խնդիրը: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներից օգտվելուն, դա ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ, կենդանի լեզու ստեղծելու: Բավական է.մեր երեխաներն այլևս չպետք է սարսափեն «հա» ասելիս, և մայրերն այլևս չպետք է մատներն սպառնալի թափ տան նրանց վրա. «հա» ասացի՞ր, ինչպե՞ս կարելի է, ասա «այո: Բավական է, նզովքը պետք է վեր կենա «հաե-ի վրից, իբրև թե նա գռեհիկ է, դրա մեջ ոչ առողջ միտք կա և ոչ էլ ճաշակե՞:»**

Սակայն վայ այն լեզուներին, որոնք իրենց հույսը դնում են հիմնականում փոխառությունների վրա: Պարզվում է՝ շատ ու շատ բառեր, որոնք մենք օգտագործում ենք մեր գրույցներում կամ գիտական հոդվածներում ու այլուր, արևմտահայերենում հստակ պահպանել են իրենց հայկական անխաթար ձևերը. մենք գրում ենք՝ **օբյեկտիվ**, մինչդեռ ունենք **առարկայական** համարժեքը, **սուբյեկտիվ**, այն դեպքում, երբ **ենթակայականն** առավել խորն է արտահայտում հասկացության էությունը: Օրինակները շատ ու շատ են:

Լեզվի զարգացման այն ուղին, որ Թումանյանը բնական է համարում, արդի պահանջների ենթապատկերում ևս պահանջում է իր թարմացումը: Մեր բնավորությունը մեր բանահյուսությունից, ազգայնից է ակունքվում: Արցախցին ասում է՝ **սովից կմեննեմ**,

¹ <http://grakanpr.blogspot.com/p/1.html>

² Նույն տեղում:

ուրիշի պատառին աչք չեմ գցի: Սա ելակետ է: Հակադրության համար չեմ մեջբերում, բայց ուզում եմ հիշեցնել նաև ագերական ասացվածքը. **«Հարյուր տարի է՝ գողություն եմ անում, բայց դեռ հարամ թիքա չեմ կերել» («Յուզ իլ օղուռուռու էլամիշամ, ամմա հարամ թիքյա յեմամիշամ»):**

Ինչպես տեսնում ենք՝ լեզուն ավելին է, քան՝ բնավորությունը: Լեզուն մարդն է՝ իր տեսակի ու թրծվածքի մեջ: Մյուս դրույթը, որ Թումանյանը շեշտում է, դա «միտքն ու ճաշակն» են, որ ունենում է ճշմարիտ բառը: Մենք դրան գումարենք աշխարհագրություն, պատմություն, բնավորություն, իմաստասիրություն..., այսինքն, կարողանանք լեզվի մեջ տեսնել ազգային ճակատագիր, ոգի, նկարագիր, արցախյան բարբառով ասած, երբ խոսում ենք մայրենի լեզվով, **«բառը չոփով չբարձրացնենք»**, առավել նրբորեն մոտենանք մեր լեզվի զարգացմանը, պահպանենք այն և առաջնորդվենք արմատների կանչով:

Մեր ամենօրյա կիրառելի բառերից է և **«ազգե-ը**, բայց երբ դիմում ենք նրա ծագումնաբանության գիտական աղբյուրներին, տեսնում ենք, որ այն **«փոխառություն է պահլավերեն «azg» (ճյուղ) բառից, որը ծագում է հնդեվրոպական նախալեզվի azgho «ճյուղ» ձևից»**¹ Փաստը շրջանցել չենք կարող, և այդ բառը (հարյուրավորների նման) այնպես է սերտաճել մեր մեջ, ձուլվել մեր մտածողությանը, որ դարձել է անփոխարինելի: Իմ ասելիքն ամբողջացնեմ այսպիսի մի բանաձևի մեջ՝ **լեզուն զարգանում է նախ լեզվով**: Ամենևին էլ, ինչպես բխում է ասվածից, երկրորդական չէ լեզվի կիրառելիության աստիճանը. աշխարհում քանի՞ հայ կա, քանի՞ հայ է խոսում հայերեն: Սա բոլոր հարցերի հարցն է լեզվի զարգացման խնդրում, որովհետև, ինչպես վկայում են և իրենք՝ լեզվաբանները, լեզուն ժողովուրդն է ստեղծում, ոչ թե՝ գիտնականները: Այո, լեզուն ժողովուրդն է ստեղծում, բայց չմոռանանք, որ ժողովուրդին էլ, ինչպես ասում են, ստեղծում է լեզուն՝ նրան պահողը՝ հոգեկերտվածքի բոլոր առանձնահատկություններով:

Մի քանի տարի առաջ մտավորականների հեղինակավոր մի պատվիրակության կազմում եղա Վարշավայում, և իմ գործընկերներն ինձ տարան Ադամ Միցկևիչի անվան համալսարան: Ցավոք, ինչ տեսա այնտեղ, շատ տխուր էր. այդ նշանավոր

¹ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%A9%D5%B6%D5%B8%D5%BD>

ու մեծ ուսումնական հաստատության հայագիտության բաժինը դրանից մեկ տարի առաջ փակվել էր: Հարցն ինձ ստիպեց կատարել որոշակի ուսումնասիրություններ՝ կապված հայերենի կարգավիճակի հետ: Եվ ի՞նչ պարզվեց. այնտեղ, ուր վերանում են հայագիտական կենտրոնները՝ հիմնականում կապված նյութական անբավարարվածության հետ, բացվում են ագերական լեզվի բաժիններ: Ես կարծում եմ՝ նման իրավիճակը բացատրվում է հայերիս՝ **Ազգային զարգացման ընդհանուր ծրագրի բացակայությամբ**: Ծրագիր, որով միշտ առաջնորդվել և այժմ էլ առաջնորդվում են հրեաները: Իսկ մենք... Տորենը պիտի աճեցնել և խնամել, մոլախոտն ինքն իրեն էլ աճում ու անընդհատ տարածքներ է վերցնում: Ի դեպ, վերջերս մի նյութ կարդացի, ուր նշվում է, որ Իսրայելում հայերենի ուսումնասիրության բաժին կա, որը նյութական աջակցություն է ստանում հենց այդ պետության կողմից:

Շարունակեմ: Թեթև է ասելը, թե, կորցնելով մայր լեզուն, մենք մեզ ենք կորցնում: Խնդրի ամբողջ ծանրությունը ձեռնարկումների դժվարության մեջ է, որին պիտի գնալ ամեն գնով: ԶԵ՞ որ համառությունը ևս մեր ազգային գծերից է և պիտի այն արդյունավորվի:

Իմ շարադրած մտքերն ու մեջբերումները մի նպատակի են հղված՝ չպետք է ճեղք լինի արևելահայերենի և արևմտահայերենի միջև, առանց մեկի մյուսը չկա, չպիտի անջրպետ ստեղծենք ու կանգնենք մեր ու մեր միջև: Լեզուն եթե խաթարվում է, ուրեմն՝ խաթարված է մտածողությունը, եթե մտածողությունն է խաթարված, ուրեմն մարդն է ոչնչանում մարդու մեջ:

Ամենևին էլ պատահական չէ Վահան Տերյանի սքանչացումը. **«Գրաբարը... ոսկի է, դա լեզու չէ, այլ երկնային երաժշտություն, պերճություն, ուժ, ճկունություն, այդ ամենը նոր եմ սկսում զգալ: Եվ ինչպիսի ձախորդությունների էլ հանդիպեմ, և որքան էլ ինձ համար դժվար լինի, ես պատրաստ եմ ամեն ինչի, միայն թե իրագործեմ երազանքս՝ կատարելապես ուսումնասիրեմ այդ արքայական լեզունե»**¹ Իսկ մենք տարիներ առաջ որքան հեշտ ենք հրաժարվել գրաբարից:

Տերյանի յուրաքանչյուր բառն իր մեջ պարունակում է հոգևոր մի քարտեզ, որտեղ, ինչպես տեսնում ենք, նրա լեզվի վրա չկա **Էրզրի բացակայություն**... Ավելի պարզ լինելու համար ուզում եմ

¹ <https://blognews.am/arm/news/29220/mer-metsery-hayoc-lezvi-masin.htm>

տերյանական ծնակերպմանը (**«արքայական լեզուն»**) որոշակի մեկնություն տալ, մի քանի խոսքով անդրադառնալ **լեզու-բանաստեղծություն** և **բանաստեղծություն-լեզու** հարաբերակցությանը: **«Արքայական լեզու»** (ո՛չ գրական-գեղարվեստական) պատկերն ինձ ուղեկցում է դեպի բանաստեղծի **«Երկիր Նաիրի»** շարքը: Եվ իմ մեջ կրկին արձագանք է գտնում **«Մի՞թե վերջին պոետն եմ ես»** քերթվածը՝ իր հակիրճության ու եղեռնականության մեջ:

**Վտարանդի երկրում աղոտ,
Լուսեղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:**¹

Սակայն և անմիջապես հաջորդող տողերում **«խոր ու պայծառ»** հնչող լեզուն **«և՛ խոցում է, և՛ այրում»**: Տերյանը միանգամից բացում է հոգու տագնապն ու կսկիծը. **«Արդյոք, բոցե վարդե՞րդ են վառ, Թե՞ վերքերն իմ հրահիրուն»**: Կորսված երկիրը՝ Նաիրին, ամբողջական է, դեռևս չբզկտված ու ծվեն-ծվեն չարված: Հայրենիքի, նրա **«արքայական լեզվի»** կորստյան ցավն ու մրմունն են տանջում բանաստեղծին: Եվ նա **«սհով** է կանչում. **«Ցուլա, ցնորք Նաիրի»**:²

Ահի մեջ սարսուռ կա. **«Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր եվ արքայական դնեմ գերեզմանե»**:³ Տառապանքի իմաստությունը բանաստեղծին դարձնում է աննկուն. **«...խաչվածին մահ չկա»**:

**Թող գուժկան գիշերն անհաստատ դավե-
Որքան մուրք սև՝ այնքան ես համառ,
Երկնիր, իմ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակդ՝ վեհ:**⁴

«Երկնիր», «ցուլա», «արքայական», «մոխիր ու ավեր»... Իրարամերժ ապրումներն ու տրամադրությունները բառավորվում են, և բանաստեղծը երբեք չի կորցնում հավատն ու հոգու կորովը: Բնութագրական է, որ պոետի լեզվի վրա բառերը հնչում են նաիրյան ոգու անընդգրկելի նկարագրով՝ իրենց հետ բերելով ազգային ճակատագիր, պատմություն և, իհարկե, ապագայի

1 Վահան Տերյան, Բանաստեղծություններ, Լիակատար ժողովածու, «Սով. գրող», Իրատ., Երևան, 1985, էջ՝ 289:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ՝ 296:

4 Նույն տեղում, էջ՝ 281:

տեսլականը: Այս առումով հատկանշական է Տերյանի **«Մեզ մի խառնեք»** բանաստեղծությունը՝ մշտապես մերժված կոմունիզմի գաղափարակիրների կողմից:

**Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ:¹**

Դարձյալ, ինչպես տեսնում ենք, գրողը դիմում է **արքայական** եզրույթին: Սա բոլորովին կրկնություն չէ, այլ լեզվի, խոսքի ու երկրի նոր մեկնություն: Տերյանը արքայական է համարում և լեզուն՝ գրաբարը, և խոսքը, և՛ երկիրը... Այդ ամբողջը նա անխաթար է ներկայացնում հոգևոր հայրենիքի ենթապատկերում:

Լեզուն ինքնության հասցե է, որ մարդուն ի ծնե տրվում է Աստծո կողմից՝ որպես նրա երակներում շրջանառվող խորհուրդ: Գրավոր աղբյուրներում պահպանվել է մի փոքրիկ զրույց, որը տեղի է ունեցել Տերյանի և Մաքսիմ Գորկու միջև, այն անթերի ձևով է ներկայացնում պոետի լեզվական եությունը: Այսպես. **«Երեկոյան, երբ բոլորը հավաքվել էին հյուրասենյակում և Վահանի բանաստեղծություններից մեկի թարգմանության մասին էին խոսում, Գորկին անսպասելիորեն հարցրեց.**

-Վահան՝ Սուքիասովիչ, ինչո՞ւ ռուսերեն չեք գրում, անթերի տիրապետում եք լեզվին, հրաշալի զգում ռուսերենի նրբերանգները:

Վահանն անակնկալի եկավ և մի պահ չհասկացավ՝ Գորկին կատակո՞ւմ է, թե՞ լուրջ է ասում. նա երբեմն սիրում էր դիմացինի հոգու հետ խաղալ:

-Լեզուն լավ իմանալը դեռ քիչ է, պետք է նաև այդ լեզվով մտածել կարողանաս,- ասաց Վահանը:

-Դուք ռուսերեն չե՞ք մտածում,- հարցրեց Գորկին:

- Երբեմն, բայց ոչ բանաստեղծություն գրելիս: Ես կարող եմ քերականորեն ճիշտ խոսք կառուցել, բայց ռուսերեն բանաստեղծական խոսք ստեղծել չեմ կարող:

-Ես Ձեզ հասկացա... ուզում էի ասել, որ եթե ռուսերեն գրեիք, Ձեր լսարանը հարյուրապատիկ կմեծանար, Ռուսաստանը մեծ երկիր է,- ասաց Գորկին»:²

Տերյանի մասին խոսքս եզրափակեմ մի դիտարկմամբ. եթե լեզուն ուրվագծում է (իսկ դա անվիճելի իրողություն է) հայրենիքի

¹ Նույն տեղում, էջ՝ 297:

² <http://blog.mediamall.am/?id=44060>

քարտեզը և հավաքական կերպարը՝ ներքին ու արտաքին նկարագրով, ապա դժվար չէ տեսնել, թե Տերյանի լեզուն ինչպես է իր մեջ ներկայացնում երկիր Նաիրին: Մի հանգամանք ևս, որ ասվածի կրկնակի հավաստումը կարող է լինել: Գրաբարյան լեզվի պերճությունը, գեղեցկությունն ու բովանդակային ընդգրկումները՝ Տերյանի ընկալումներով, միանգամայն հստակորեն դրսևորվել են պոետի բանաստեղծություններում: Առաջին հերթին՝ **«Մթնշաղի անուրջներ»** ու **«Երկիր Նաիրի»** շարքերում:

Մոխիրներից Փյունիկի նման հառնող երկրի լեզուն են բերում Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, ազգային ցավն իրենց մեջ կրող մեր նվիրական երգի մյուս վարպետները: Եվ դա բացատրվում է հայ ժողովրդի եղեռնական ցավով. **«Լաց է այնտեղ ամեն երգ և ողբ՝ ամեն գիրք»¹ (Տերյան):**

Մեր դասական լեզվի անուրանալի հմայքն ու նկարագիրը լավագույն ձևով է ներկայանում Դանիել Վարուժանի «Ձոնե»² բանաստեղծության մեջ, որը մի յուրօրինակ գլուխգործոց է ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության մեջ՝ թե բովանդակությամբ, թե պատկերներով, կառուցվածքի ճարտարապետական նորությամբ ու առավել ևս՝ լեզվական մշակույթով: Ես կանգ կառնեմ այս վերջին կողմի վրա, որովհետև մյուս բոլոր առանձնահատկությունները պայմանավորվում են լեզվականով:

Զերթվածը բաղկացած է հինգ վեցյակից: Գրողի լեզվական ճկունությունը վերածվում է ինքնատիպ պատկերավորության: Նրա բառը՝ մտածողության և ասելիքի արտահայտման առումով, թող զարմանալի չթվա, շատ մոտ է աշխարհահռչակ գեղանկարիչ Խուան Միրոյի գծին. վերջինս կարող է ամբողջական կտավի վրա (իհարկե, համապատասխան ենթապատկերում) տեղադրել ընդամենը մի գիծ ու կետ և ստեղծել հաղորդակցություն, կերպար, հասնել նպատակին («Կատալոնացի կինը»):

«Ձոն» քերթվածում գրողը մի քանի բառերի ճկուն «խաղարկումներով» գեղարվեստական պատկեր է ստեղծում, որտեղ յուրաքանչյուր բառ ամեն մի նոր «պտույտի» մեջ միանգամայն այլ միտք է արտահայտում, ավելի հստակ՝ Վարուժանի բառերը

¹ Վահան Տերյան, Բանաստեղծություններ, Լիակատար ժողովածու, «Սով. գրող», հրատ., Երևան, 1985, էջ՝ 297:

² Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, հ. 1, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ՝ 69:

Ներկայանում են որպես ծածկագրություն: Բանաստեղծի գրիչը **եղեգևյա** է, բառ, որ հայոց դարերի մեջ խորը արմատներ ունի և մեզ հարազատ է «Վահագնի ծնունդը» երգից: Մեջբերեմ գրաբարյան օրինակը.

**Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ և ծով ծիրանի,
Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ.**

**Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.**

**Նա հուր հեր ուներ,
Բոց ուներ մօրուս,
Եւ աչքունքն էին արեգակունք:¹**

Երբ Վարուժանն իր **եղեգևյա գրչով** երգում է **փառքեր՝ հայրենիքին ընծայելու** համար, նրա գրիչը **սոսյաց անտառի** շուրջներն է բերում, երբ եղեգևյա գրչով երգում է ցավը **պանդուխտների**, նրա գրիչը **«տարաշխարհիկ բույսի մեր ծղոտ»**, երբ եղեգևյա գրիչը երգում է **«սուրի զոհերին»**, գրիչը ծլում է **«մոխրի մեջ իբրև կնյուն»**, երբ եղեգևյա գրչով **որք տուն** է երգում որպես **ընծա հորն ալեհեր**, ցույց է տալիս այլ վիճակ. **«ցամքած աղբյուրեն մեր գայն հոտեցիե**: Վերջին վեցյակի առաջին տողերում Վարուժանն արդեն շեշտադրությունը փոխում է, երգում է **պայքար՝ հայ մարտիկներին որպես ընծա**, և գրիչն այստեղ արդեն դառնում է **«անթըրոց սրտերու հնոցիե...**

Լեզվաոճական նույն հնարանքն է կիրառում բանաստեղծը նաև յուրաքանչյուր վեցյակի երկրորդ եռատողերի «ճարտարապետական» կառույցի մեջ՝ առավել ընդգծվածության և ասեղիքի շեշտադրության առումով, ընդհանրական դարձնելով իր խոսքը: Սկսելն առաջին վեցյակի երկրորդ եռատողից: Վարուժանի **ընծան՝ հին-հայրենիքին**. եղեգևյա գրչով նա երգում է **քուրմեր**. **«Ընդ եղեգան փող լույս ելանել»**: Երբ գրողը ընծա է բերում **հեգ պանդուխտներին** ու եղեգևյա գրչով երգում **հարսեր**, **«Ընդ**

¹ <https://hy.wikipedia.org>

եղեգան փող ողբ ելաներ», «կրակի զոհերին ընծա է բերում» ու եղեգնյա գրչով երգում **վերքեր**, արդեն՝ **«Ընդ եղեգան փող սիրտս ելաներ»**: Չի մոռանում պոետը ընծա տանել և **մորը**՝ եղեգնյա գրչով երգելով **«օճախ»**. **«Ընդ եղեգան փող ծուխ ելաներ»**: Իսկ ահա վերջին եռյակում ասելիքն ամփոփվում է մտքի ու զգացումի կիզակետին հասցված բացառիկ ուժգնությամբ՝ դասական մայրենիի անզուգական վայելչանքով.

- Ձեզի ընծա՝ քաջ մարտիկներ-

եղեգնյա գրչով վրոժ երգեցի.

Ընդ եղեգան փող բոց ելաներ:¹

Եվ Տերյանի, և Վարուժանի ստեղծագործություններին դիմելով՝ նպատակ ունեմ մի անգամ ևս շեշտելու, թե որքան «ճկուն է ու բարբարոս» (Ե. Չարենց) մեր լեզուն: Այդ լեզվին են և Տերյանը, և Վարուժանը, և մեր մյուս երևելի գրիչները: Նախընտրություն տալ որևէ մեկին, նշանակում է՝ մեկով ոչմէացնել մյուսը, այսինքն՝ բոլորիս: Ազգը:

Երբ խոսք է բացվում այն մասին, որ մեր գրական լեզուն «թորած» է, բնականաբար, մենք օրինակ ենք բերում հայ գրականության մեծերի անունները, նրանց ստեղծած գրականությունը, նրանց մեջ առաջիններից մեկը՝ Տերյանին: Սակայն, որպես Տերյանի ժառանգներ, պիտի արձանագրենք. իսկ որքա՞ն ավելի հզոր կլինեինք, եթե չհեռանայինք լեզվի գրաբարյան ակունքներից, որքա՞ն բեղուն կլինեք մեր **«ոսկե հունձքը»**:

Մեր բարբառները հարուստ են: Անսպառ շերտեր ունեն նաև արցախյան բառերը, որոնց կարելի է հանդիպել անգամ ոչ հայերեն գրականում: Այսպես, մեր արցախյան **ռոք, կարպետ, բոթուկ, դոնգի** արտահայտությունները համարյա նույն կիրառությունն են գտել նաև գրական անգլերենում՝ առանց փոփոխություն: Անշուշտ, այստեղ **«Ով՛ ումից»** հարցը չէ կարևորը, մանավանդ, մենք գիտենք, որ մեր արմատները «ջուր են առել» նաև Նոյան ջրհեղեղից: Հետևությունը մեկն է՝ բարբառները կենդանի մնունդ են ցանկացած լեզվի համար:

Ժողովրդական մտածողության ու լեզվական պարզության մեր «մերանը» եղել են և կրկին ու կրկին մնում են բարբառներ-

¹ Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, հ. 1, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 70:

ը, որտեղ ամեն բառ ունի իր ժամանակի նկարագիրը, շունչը և ոգին: Նկատելի է, որ գրչի մեր գրեթե բոլոր վարպետները գրական լեզուն զգալիորեն տարել են դեպի բարբառայինը, **ոչ թե այն բարբառային դարձնելու, այլ բարբառը գրականացնելու ու հարստացնելու**, ինչպես, ասենք, Հովհաննես Թումանյանը, Վարուժանը, Մեծարենցը, Բակունցը, Մնձուրին, Համո Սահյանը, Հրանտ Մաթևոսյանը, Չաիրատը և այլոք, որոնցից յուրաքանչյուն ստեղծել է իր լեզուն, իր հայերենը, իր ազգայինը: **«Ժողովրդի մեջ սիալ պատկերացում է նկատվում նաև բարբառների նկատմամբ: Կարծում են,- գրում է լեզվաբան Վիկտոր Կատվայանը,- թե խոսքի այս ձևերը գոեհիկ երևույթներ են, անգրագիտության հետևանք են, և որ մարդիկ պետք է ձգտեն խոսել միայն ու միայն գրական լեզվով: Մեր մտավորականներից շատերը խորշում են բարբառներից, մինչդեռ այն մեր լեզվի բնական, կենդանի վիճակն է, գրական լեզուն մշակված է: Բարբառը «կաթն» է, գրական լեզուն «սերը», առանց կաթի սեր չի լինում»:**¹

Ժողովրդական լեզվի բաղադրույթներն իր մեջ պարունակող գրական հայերենը մեծապես շահում է թե ազգային արտահայտման, թե համամարդկային խնդիրների արծարծման առումով, որովհետև նշածս եզրույթները չափազանց հարաբերական են: Կարևորը սեփական արյան, հող ու ջրի կանչին հոգեունկնդիր լինելն է, ոչ մտացածին, բնականոն ձև ու բովանդակության մեջ: Եվ հենց լեզվական այս բազմազանությունից մեր մտածողությունն ու գիրը մեծապես շահում են: Իսկ մենք բոլորս մեր գրի (**ընդգծենք՝ գրի, ոչ թե ուղղագրության**) որդիներն ենք, կամ, ինչպես Համո Սահյանն է ասում, **«հայոց լեզվի զավակները»:**

Ժամանակակից հայոց լեզվի ամենաինքնատիպ մոգպետներից է Թումանյանի, Տերյանի և Վարուժանի ժառանգ Համո Սահյանը, որի գրչի տակ կենդանություն են առնում հայրենի գրեթե բոլոր բարբառները: Ես նկատի ունեմ այն ժողովրդականությունը, որը հատուկ է Սահյանի քնարերգությանը: Ո՞րն է դրա գաղտնիքը: Իմ խորին համոզմամբ՝ բառն արմատներով ու մազարմատներով, տիեզերական ընդգրկումներով, նախնականության մեջ գրականությունն բերելը:

¹ <http://language.sci.am>

Սահյանը ստեղծում է բառի իր կենսադաշտը:

***Օրը մթնեց, ժամն է արդեն իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց փոխվում է լացի:¹***

Առաջին հայացքից պարզ ու սովորական տողեր են, բայց երբ խորանում ես բառերի պատմական աշխարհագրության, նրանց հոգեբանական պատկերների ու բերած տրամադրությունների մեջ, զգում ես, որ գործ ունես մի գրողի հետ, որի ամեն բառը մայրենի լեզվի գաղտնարանները բացող կախարդական մի բանալի ունի:

Լինելով Տերյանի ու Վարուժանի գործի իսկական շարունակողն ու նաև մեր ժամանակի մեծ նորարարը, Համո Սահյանն ընդարձակում է ոչ միայն բառի, այլև ոսկեղենիկ լեզվի սահմաններն ու ներքին տարածքները: Այս մասին կարող է հավաստի վկայություն լինել նրա ցանկացած ստեղծագործություն, սակայն պիտի կանգ առնեմ «Հայաստան» բանաստեղծության վրա, որը զգացմունքների ու լեզվական հարստության դրսևորման աղերսներ ունի Տերյանի «Մի՞թե վերջին պոետն եմ ես» և Վարուժանի «Ձոն» քերթվածքների հետ: Ահավասիկ.

***Հիշում եմ լքված մի թոնիր,
Բերանին մամռոտած մի խուփ,
Մամռոտած որմի խոռոչում
Մասրենու վարսաթափ մի թուփ,
Աշխարհի քարերին մաշված,
Աշխարհից խռոված մի ցուպ,-
Եվ հեռվում ինչ-որ ուշացած
Ձիերի դոփյունն եմ հիշում:²***

Ոսկեբերան Սահյանի բառերը քանդակում են հայոց տունը՝ մայրենի լեզուն ու նրա մտքի վայելչագեղությունը: Եթե Տերյանի հարցականված («Մի՞թե վերջին») տագնապը հորդորներ ունի ներսում, եթե Վարուժանի ցավը դառնում է եղեգան փողից դուրս թռչող բոց ու վրեժի ցասում, ապա Սահյանը, իր երգում միավորելով այդ ամենի խորհուրդը, զինված սթափության ու զգոնության է կոչում, որպեսզի փրկության ***ձիերի դոփյուններն այլևս չուշանան***, իսկ հողն ու հիշողությունը շեն ներկայի գեղեցիկ ու շքեղ պատկերներով միայն ամրագրվեն: Այլ խոսքով՝յո-

1 Համո Սահյան, Քարե պատարագ, Հատընտիր Ա, «Նաիրի» հրատ., Երևան, 1999, էջ 127:

2 Նույն տեղում, էջ 164:

լրաքանչյուր միտք ու զգացում դառնում են **հայկյան լեզվի մաքառում**¹ հարստացնելով բառի կենսադաշտը: Ի վերջո, բառը մարդն է: Բառի մեկնությունը պահանջում է վերլուծել մարդուն, նրա հատկանիշներն ու ամբողջական արժեհամակարգը, հոգեկերտվածքի առանձնահատկությունները՝ արյան ներքնատար շարժմանն ու ընթացքին համընթաց:

Այստեղ հարկ կա անդրադառնալ մի կարեւոր խնդրի, որը, կարծում եմ, ըստ էության չի լուսաբանվել մեր բանարվեստի մեջ, և որն, անշուշտ, ուղիղ կապ ունի լեզվի հետ: Խոսքը ծածկագրության /բառի կողավորման/ մասին է, այն պետք է դիտարկել գեղարվեստական պատկերավորության միջոցների շրջանակներում: Բառարանային սովորական բառն արդեն ճշմարիտ գրողի գրչի տակ անհատականացվում է, ձեռք բերում ազգային բնավորություն ու նկարագիր:

Ծածկագրությունը բաժանվում է երկու հիմնական մասերի՝ փակ և բաց: Տերյանի «Եվ հնչում է որպես աղորձ Արքայական քո լեզուն»,¹ Վարուժանի «Հայր, ես կերթամ այն ճամբայեն՝ որ ճերմակ Մագերուդ գիս կը տանի»,² կամ Սեւակի «Ես ատում եմ քո անունը: Եթե աղջիկ ես ունենամ, Նա կկոչվի քո անունով»³ պատկերները փակ ծածկագրություններ են, իսկ ահա Պեշիկթաշյանի «Թուրքաց մայրեր թող լան, ու դուն Ուրախ լուրեր տար ի Չեյթուն»,⁴ Մեծարենցի «Գիշերն անուշ է, գիշերն հեշտագինէ»⁵ տողերը բաց ծածկագրություններ են, մեծարենցյան տողը շարունակության մեջ դառնում է փակ. «Հաշիշով օծուն ու բալասանով»:⁶ Բաց է նաև սահյանական այս ծածկագրությունը. «Հայաստան ասելիս պռոշս ճաքում է»:⁷

Ինչպես նկատում ենք, գեղարվեստական ծածկագրությունը լեզվամտածողություն է և իր մեջ, մեր պարագայում, կրում է գրաբարյան, այսինքն՝ հոգեկերտվածքային մեր աստվածատուր

1 Վահան Տերյան, Բանաստեղծություններ, Լիակատար ժողովածու, «Սով. գրող», հրատ., Երևան, 1985, էջ 289:

2 Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, հ. 1, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 17:

3 Պ. Սևակ, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 1, Բանաստեղծություններ, «Հայաստան» հրատ., Երևան, 1972, էջ 274:

4 <http://books.panarm.info>

5 Մ. Մեծարենց, Երկեր, «Սով. գրող», հրատ., Երևան, 1986, էջ 28:

6 Նույն տեղում:

7 Հ. Սահյան, Տոհմի կանչը, «Սով. գրող» հրատ., Երևան, 1981, էջ 96:

հայերենի մտածողությանը հատուկ տարրեր ու բարեմասնություններ, որոնք շատ այլ ոճական ու մտածողական առանձնահատկությունների հետ, բարեբախտաբար, պահպանվում են հայոց հին ու նոր գեղարվեստում:

Բառը, առանձին վերցրած, լեզու չէ: Որպեսզի լեզու լինի, անհրաժեշտ է մի շարք էական տարրերի՝ մտածողական ներքին համակարգ, ոճ, բնավորություն, ենթատեքստ, լույս, ստվեր և այլն: Երբեմն ընթերցում ենք մեսրոպյան լեզվով անսխալ շարադրված այս կամ այն միտքը, բայց տեսնում ենք, որ ճիշտ չէ, խոսքն աշխարհն ու երևույթներն ընկալելու-մեկնաբանելու սոցիալ-հոգեբանական, պատմափիլիսոփայական վերարտադրության մասին է, որն անմիջական կապ ունի հայրենի բնության, արյան բջիջների ու հոգեկերտվածքի հետ: Գրում են անսխալ հայերենով՝ բառը հայերեն, օտարաբանություն չկա, բայց մտածողությունը և լեզուն հայկական չեն, ինչպես, օրինակ, **«Ճնորհակալ եմ թեյի համար»** արտահայտությունը... Դա ռուսական **«Սպասիբո զա չայ»** արտահայտության ոչ ճիշտ **«հայերենացված»** ձևն է... Հայերս սիրում ենք ընդհանրացնել երևույթը՝ մաղթելով. «Ձեռքդ միշտ բաց լինի» կամ «Տունդ լիքը հաց լինի» և այլն... Այս առումով անփոխարինելի են ժողովրդական ասացվածքները, որոնք ազգային իմաստասիրության և բնավորության լավագույն նմուշներ են:

Վերցնում եմ մորս բառերից մի քանիսը... Օրինակ, «Ա երե կյապուտ, տու աշխարքը խաղաղ պահիս»... Սովորաբար ցանկացած բառ երբ թարգմանվում է, այլ հարթության մեջ է հայտնվում, թեկուզ՝ ոչ այնքան հեռու, բայց մեկ է, կենսադաշտը փոխվում է: Բառերն ընդամենն ինքներս մեզ ներկայացնելու փորձեր են, ահա թե ինչու ոչ մի բառ ոչ մեկին չի բավարարում, որքան էլ նա մի լեզվից մյուսին անցնի, կամ, թեկուզ, բոլոր լեզուները միավորի: Եվ այստեղ է, որ առաջնության դափնին իր վրա է վերցնում (այն ոչ ազգային լինել չի կարող, անգամ եթե փորձում է ներկայանալ այդպիսին) մտածողությունը, որը մայրացող լույսի տպավորություն է թողնում՝ աշխարհի բերելով մտքեր ու բառեր՝ մեկ երաժշտության, մեկ քանդակի, մեկ բանաստեղծության, մեկ պատերազմի, մեկ սիրո եւ խաղաղության, մի խոսքով՝ ամենատարբեր ու ամենաանսպասելի, ամենաանգուշակելի դրսևորումների ու ձևերի մեջ:

Բառը, որպես մտածողություն, իհարկե, կարող է արտահայտություն գտնել և քանդակի մեջ, և կտավի վրա, և երաժշտական գործերում: Բոլոր դեպքերում ակունքը ազգայինն է: Հրանտ Մաթևոսյանն ասում է՝ **հայոց լեզուն է ինձ թելադրում:**¹ Իսկ Նարեկացին իր ողբերգությանն այսպիսի լեզու է տալիս. **«Մոռացուած տունն եմ աստուածակերտե:**² Երբ մարդ խոսելիս սկսում են նրա լեզվի վրա «տեղ գտնել» ոչ մայրենի բառեր, ուրեմն՝ նրա մտածողությունն այլասերվել է, և սկսվել են խաթարման գործընթացներ:

Լեզվական խնդիրներն, իհարկե, անսպառ են: Փորձելով որոշակիորեն պարզություն մտցնել մեր առաջ ծառացած հարցերում, անդրադառնալով զանգվածային լրատվական միջոցներում ու պարբերականներում, գրքերում բարձրացված բազմաթիվ արծարծումների, ուզում եմ խոսքս ավարտին տանել այսպիսի մի հետևությունով. ի վերջո, չկա աշխարհում լեզու, որ տարիների ընթացքում զարգացման որոշակի ճանապարհ չանցնի, ընդունելի կամ անընդունելի, հաջողված կամ ոչ հաջողված փոփոխությունների չենթարկվի: Կարևորը լեզվի ինքնամաքառումն է, ինքնակերտումը՝ ժողովրդի շուրթերին, ուղղագրական այս կամ միջամտությունը չէ, որ էական դեր կարող է խաղալ: Թեև դա նույնպես առաջնային է: Մենք, որ տեսել ենք գրաբարի, աշխարհաբարի՝ արևելյան և արևմտյան, զարգացումները, այսօր միայն մի խնդիր ունենք այդ ասպարեզում. **մայրենին անաղարտ պահել, խուսափել օտարամոլությունից՝ լինի «համակարգվածության պահանջ» ունեցող թարգմանական աշխատանքներում, թերթերում, գիտական հրապարակումներում, թե բանավոր խոսքի մեջ:**

Այսօր արդեն նահանջելու տեղ չկա: Դերենիկ Դեմիրճյանն այսպիսի մի դիտարկում ունի հայի մասին. **«...Երբ վրա է հասնում գերագույն վտանգը, հերոսանում է»:**³ Լեզուն մեր հոգեկերտվածքի ամենաբնորոշ արտահայտությունն է, մեր գլխավոր դիմադրությունն ու խրթին ժամանակների վրա հակազդելու գերագույն միջոցը, միասնության տանող այն կամուրջը,

1 <http://chi.am>

2 Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, «Սով. գրող» հրատ., Երևան, 1979, էջ 11:

3 <https://hy.wikiquote.org>

որի կարիքը խիստ զգացվում է մեզանում: Լեզուն ազգային պետականության հիմքերի հիմքն է:

Ժամանակն է ոչ միայն ունենալ արևմտահայերենի թեքումով դպրոց, այլև օրենսդրական դաշտ ստեղծել և արևմտահայերենը մտցնել դպրոցական և բուհական ծրագրերի մեջ, ինչպես Այնթապլեանն է իրավացիորեն նշում. **«Լեզուական միասնականությունը հիմքն է՝ վեմը ազգային միասնականության, հարազատության ամրապնդման և բոլոր Հայերուն Հայաստանին խարսխելու մաքնիսական ուժը»:**¹ Այսինքն, իրար ներսում սերտաճած մեր լեզվի երկու ճյուղերին անհրաժեշտ է տալ ազատ զարգանալու, հարստանալու և հարստացնելու հնարավորություն, որի արդյունքում կունենանք մեկ միասնական և հզոր լեզու, կիրականանա մեր մեծերի պատգամը. **«Հայերենի միասնական ուղղագրությունը պիտի պարտադիր լինի աշխարհում ապրող ամեն մի հայի համար»:**²

Ես, որպես Արցախյան շարժման ակունքում կանգնածներից մեկը, կարող եմ ասել, որ մեր պայքարի առանցքային խնդիրներից մեկը և ամենահիմնականը մեր ազգային ինքնության, այսինքն՝ մեր լեզվի պահպանումն էր: Եվ դա ամրագրված է նաև Արցախի մտավորականության կողմից Կրեմլին հղված (1988թ. հունվար) պատմական նամակում... Եկավ անկախությունը, բայց այսօր ի՞նչ ենք տեսնում... Հսկայական, աններելի անտարբերություն մեր մշակույթի և լեզվի խնդիրներում...

Խորհրդային քաղաքականության ձգած երկաթյա վարագույրը՝ մեր և մեր միջև, դեռ մնում է: Այն, ճիշտ է, իրագործվեց խորհրդային գրեթե բոլոր հանրապետություններում, բայց ամենից շատ տուժեցինք եղեռնված հայերս, որովհետև մենք կտրվեցինք ոչ միայն մեր հայրենիքի զգալի մասից՝ ֆիզիկապես ու աշխարագրականորեն, այլ նաև Էրզրի լեզուն... Եվ մինչև այսօր այդ աղետը շարունակվում է:

Արցախյան համահայկական շարժումն էր, որ առաջինը խորհրդային բռնապետության դեմ ելավ և փլուզման տարավ այն: Պիտի խոստովանեմ, որ, հիրավի, մեր պայքարը մենք սկսել ենք հանուն մեր ոգու, մեր ինքնության, մեր մշակույթի, մեծ երկրի, մեր

1 <https://www.yerepouni-news.com>

2 <https://www.aravot.am/2010/05/19/348209/>

լեզվի: Սակայն տարիներ անց էլ տեսնում ենք, որ կուսակցական-գաղափարական անցյալի տխուր ու անպատվաբեր «բեռն ու պաշարը» դեռ չենք թորափել, դեռ ամբողջովին չկան մեր խոսքն ու լեզուն մաքրագործության տանող բարենորոգչական-արմատական մոտեցումներ, բառարաններ: Եթե կան էլ, ապա՝ շատ քիչ: Լավագույն օրինակներից են Արտեմ Սարգսյանի և Յակոբ Այնթապյանի կողմից կազմված բառարանը, Դավիթ Գյուլքիչյանի հաճախակի հրապարակվող «Հորդորակները», մի քանի այլ գործեր: Թող ներվի, գուցե և կան գործեր, որոնց մասին ես չգիտեմ: Այս ուղղությամբ պետք է ավելի լայն և ընդգրկուն գործունեություն ծավալենք ազգովի:

Խուսափենք լեզվական խաթարումներից, ոչ մի պարագայում չհեռանանք մեր ազգային ակունքներից, բարբառային նախաշերտերից: Միաժամանակ չթորենք մայրենին, այլապես բառը կզրկվի իր պատմական, աշխարհագրական, հոգեբանական, փիլիսոփայական, ծագումնաբանական և բազմաթիվ այլ արժեքներից:

Ժամանակն է, վերջապես, որ մեր և մեր միջև ձգված երկաթյա վարագույրը ետ քաշենք...

ВРЕМЯ ПОДНЯТЬ ЖЕЛЕЗНЫЕ ЗАНАВЕСЫ - ВАРДАН АКОПЯН - В статье выдвигается ряд языковых проблем. Научными доказательствами автор статьи показывает, что отказ от грабара на пути развития нашего языка был одним из величайших промахов. Вторым величайшим бедствием в советское время были орфографические изменения.

Когда на Востоке произошли «изменения» под давлением партийных идей, на алтарь был поставлен язык Эргри; страна разделилась. Одной из величайших трагедий, принесенных большевизмом, было разделение человека от человека, раздвоение личности с целью уничтожения. Это выступило против нас: Абегиан выступил против Абегиана. Это было драмой времени. Руками наших деятелей советизация также уничтожила вилсонвскую программу, многие наши мечты и цели.

Факты очевидны. На данный момент углубление «разделения» между двумя ветвями ни к чему не приведёт и, естественно, осуждение происходящего. Мы, видя развитие грабара, ашхарабара: восточно-армянский и западно-армянский, сегодня имеем только одну проблему в этой области: соблюдать чистоту армянского языка, избегать

отчуждений, будь-то «потребность» в переводческих делах, газетах, научных исследованиях, имеющих последовательную потребность, или в устной речи.

Ключевые слова: язык, обучение, железный занавес, два литературных языка, поединки, армянские научные центры, национальная программа, мышление, грабар, восточно-армянский, западно-армянский, царский.

THE TIME TO PULL BACK THE IRON CURTAINS - VARDAN HAKOBYAN

- The article highlights a number of linguistic issues. Based on scientific evidence, the author shows that giving up from grabar on the way of language development, was one of our biggest mistakes. The second Great disaster was the Soviet-era spelling «reforms». When the «reform» took place in the East, under the pressure of party ideologists, the language of the country was put on the altar, and the country was split. One of the greatest tragedies of Bolshevism was the division of man into man, the bifurcation of his Self in order to destroy. It led us against us, it led Abeghyan against Abeghyan. This was the drama of the time. Sovietization at the hands of our short-sighted politicians also abrogated Wilson's plan, many of our dreams and goals. The facts and arguments are well known. Now by deepening the «division» between two branches, we will achieve nothing, of course, by simply condemning what has happened.

Those of us who have seen eastern and western of ashkharhabar and grabar developments, have only one problem in that sphere today: **to keep the mother tongue pure, to avoid alienation whether in translation works having «coordination requirement», in newspapers, in scientific publications or in spoken language.**

Key words: Language, schooling, iron curtain, two literary languages, challenges, Armenology centers, national programme, meditation, grabar, eastern Armenian, western Armenian, royal.

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ **Բանսիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ ԵՎ ԼԵԶՎԻ ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Թարգմանիչը որևէ լեզվից գրավոր կամ բանավոր թարգմանություն կատարողն է, իսկ թարգմանությունը թարգմանչի արվեստն է՝ զբաղմունքը: Գրաբարից աշխարհաբար թարգմանողը հայերենի երկու լեզուների գիտակ է և կարևոր խնդիր ունի տվյալ դեպքում սրբությամբ պահպանելու աշխարհաբարի անաղարտությունն ու ճոխությունը: Անդրադարձներ են կատարել Երվանդ Տեր-Մինասյանի, Աշոտ Արսենի Աբրահամյանի, Ստեփան Մալխասյանի, Մանուկ Աբեղյանի, Վարազ Առաքելյանի, Արամ Տեր-Ղևոնդյանի, Բագրատ Ուլուբաբյանի, Միսաք Գոչուկյանի, Վազգեն Գևորգյանի, Վազգեն Համբարձումյանի և այլոց թարգմանություններում, որոնք արդի հայերենի անաղարտության ընտիր դրսևորումներ են:

Բանալի բառեր: Թարգմանիչ, անաղարտություն, թարգմանություն, գրաբար, աշխարհաբար, հայ բարբառագիտություն, ընդհանուր լեզվաբանություն, ծանոթագրություններ, գրական լեզու, անվանի լեզվաբաններ:

Թարգմանիչը որևէ լեզվից գրավոր կամ բանավոր թարգմանություն կատարողն է, իսկ թարգմանությունը թարգմանչի արվեստն է՝ զբաղմունքը: Այդ արվեստի հեղինակը պետք է զինված լինի մի քանի էական հատկանիշներով. ունենա հզոր կամք և իմացություն, գիտելիք և նվիրվածություն, համառություն և բծախնդրություն:

Լեզուների խոր իմացությունը հավասարապես պարտադիր հանգամանք է, սակայն նրանց նկատմամբ գործադրվող նպատակներն ու միջոցները տարբեր են: Այսպես՝ անհրաժեշտ է անխաթար պահպանել թարգմանվող լեզվի բնագրային նյութերի կառուցվածքն ու բովանդակությունը, լեզվաոճական առանձնահատկություններն ու պատմականությունը, արտահայտչական միջոցների դրսևորումները, թույլ չտալ զաղափարախմաստային և տրամաբանական շեղումներ, չանել ավելորդ ու անտեղի հավե-

լուսներ, ընդհակառակը, շտկել նկատված վրիպակներն ու աչքից վրիպած սարդուկները, այսինքն՝ նշանակում է բնագիրը թարգմանաբար ներկայացնել առողջ մտածելակերպով ու վարքով և մասնագիտական լուրջ պատասխանատվությամբ:

Ինչ վերաբերում է թարգմանության լեզվին, ապա պետք է ասել, որ նրան պակաս պահանջներ չեն ներկայացվում: Այս դեպքում թարգմանչի համար անհերքելի խնդիրներ են ծառանում.

ա) Ստույգ և բազմակողմանի պատկերացում ունենալ տվյալ լեզվի գործառնությունների վերաբերյալ:

բ) Հստակորեն իմանալ նրա բառապաշարի և քերականական կառուցվածքի խորքային հնարավորությունները:

գ) Երկու լեզուների՝ նման և ընդհանրական իրողությունների համեմատական բնութագրման ու վերլուծության կարողություն ունենալ:

դ) Առավել զգույշ և սկիզբական լուծումներ ու կատարումներ ունենալ լեզվի արդիականության և անադարտության պահպանության հարցում:

Թարգմանությանը վերաբերող սույն պահանջները վերաբերում են ոչ միայն տարբեր լեզուներից կատարվող թարգմանություններին, այլև նույն լեզվի տարբեր փուլերից կամ շրջաններից կատարվող թարգմանություններին ու նրանց թարգմանիչներին:

Այստեղ նպատակ ունենք անդրադարձումներ անել հայերենի գրական լեզուների միջավայրում կատարված և կատարվող թարգմանությունների վերաբերյալ՝ հատկապես նկատի ունենալով գրաբարից աշխարհաբար, տվյալ դեպքում՝ արևելահայերեն կատարվող թարգմանական գործառնությունները:

Թարգմանչական գրականությունը, որը թարգմանչի արվեստի՝ զբաղմունքի արգասիքն է, սերտ կապերի մեջ է լեզվի անադարտության հետ. դա նշանակում է, որ բոլոր ժամանակներում մեր լեզվի մաքրության, անադարտության հարցը առաջնային խնդիր է եղել, և պատահական չէ, որ այսօր ևս այն ուշադրության և հոգածության է արժանացել Արցախի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի (ռեկտոր, Վարդան Հակոբյան) և ՀՀ ԿԳ նախարարության Հայոց լեզվի կոմիտեի (նախագահ՝ Դավիթ Գյուրջիսյան) կողմից:

Գրաբարից աշխարհաբար թարգմանությունները դարերի պատմություն ունեն և անսահման շատ են: Աստվածաշնչի, 5-րդ

և հաջորդ դարերի պատմիչների և այլոց երկերի թարգմանիչները մեծ թիվ են կազմում: Ականավոր և անվանի թարգմանիչներ են՝ Ստ. Մալխասյան, Մ. Աբեղյան, Ե. Տեր - Մինասյան, Ա. Տեր - Ղևոնդյան, Միսաք Ա. Գոչումյան, Վ. Գևորգյան, Ա. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Բ. Ուլուբաբյան և այլք:

Մեզ հետաքրքրում է, թե գրաբարի թարգմանիչներն ինչպես են որոշ բառեր ու բառաձևեր, շարահյուսական կառույցներ, կապակցություններ, նախադասության կառուցվածքային առանձնահատկություններ, դարձվածներ ու ոճական կառույցներ, նախադասության անդամների արտահայտություններ փոխադրել արևելահայերենի և որքանով են օգտակար եղել ու նպաստել այդ գրական լեզվի անադարտության օժանդակման ու պահպանության գործին:

Այժմ բնագրային որոշ տվյալներով և նրանց արևելահայերեն համարժեքներով ցույց տանք, թե ինչ է կատարվել, և ինչպիսի արդյունքներ են արձանագրվել:

Գրաբարից կատարված թարգմանությունների նկատմամբ խոր հարգանք ենք տածում՝ որպես մշակութային և ազգային պատմության մնայուն գոհարների, իսկ դրանց կատարողներին համարում ենք բնագրեր ստեղծող աստվածաշնորհի հեղինակներին հավերժացնող նորաստեղծ մշակներ:

Այդ թարգմանություններն իրենց էությամբ երկու փառապանծ կողմ ունեն. առաջինը մեր ժողովրդի անցյալի դրվատանքի արժանի պատմության հավերժացումն է, երկրորդը՝ աշխարհաբար հայերենի մշակման և անադարտ պահելու միտումը:

Թարգմանիչները նպատակի հարցում միասնական են, իսկ կատարման ընթացքում, բնականաբար, ինքնատիպ են. յուրաքանչյուրն աշխատում է իր իմացությամբ ու գիտելիքներով՝ անշուշտ, բացահայտելով նաև անձնական հատկանիշները: Բոլորի ծանոթագրությունները բացատրություններով ու մեկնաբանություններով, բազմաբնյշ հաղորդումներով մեծ բավականություն են պատճառում և անշնչելի հետք թողնում:

Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գիրքը թարգմանել է դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Տեր - Մինասյանը: Նրա առաջին թարգմանությունը լույս է տեսել 1946 թ. Երևանում, իսկ 1950 թ. հին ուղղագրությամբ լույս է տեսել Կահիրեում, 1957-ին՝

Երևանում շատ ճոխ մատենագիտությամբ ու անվանացանկով, 1989-ին՝ բնագիրն ու թարգմանությունը՝ ծանոթագրություններով: Բազմակողմանի հմուտ աշխատանք է կատարված, հեղինակը խորապես տիրապետում է գրաբարին և բազմաթիվ լեզուների, վստահ է ու գիտակ բնագրին առնչվող բոլոր տեսակի մանրուքներին:

Օրինակ՝ «**Իսկ լուեա՞լ է ձեր՝ եթե ո՞յր ուսուցեալ է ձեզ զայդ-պիսի մոլորութիւն**» սեռական հոլովով ենթականերով՝ **ձեր, ո՞յր**, կառույցները ճիշտ են թարգմանված. «Իսկ **դուք** լսե՞լ եք, թե **ո՞վ** է սովորեցրել ձեզ այդպիսի մոլորությունը» (354 - 355):

«**Չի եթե պղնձի մարմինը ունեին նոքա, արդ լուծեալ էր ի գեճ խոնաւոյ անտի**» (292) = «Որովհետև եթե պղնձի մարմիններ էլ ունենային նրանք, այնտեղի խոնավությունից արդեն քայքայված պետք է լինեին» (293):

Ճիշտ է թարգմանված. գլխավոր նախադասության «**լուծեալ էր**» ստորոգյալի սեռական հոլովով **նոքա** ենթական գեղջված է, որի ստորոգյալը պետք է հոգնակի թվով թարգմանվեր: Ճիշտ են նաև՝ **լուծեալ = քայքայված, ի գեճ խոնաւոյ = խոնավությունից**:

Բառերի և ոճի հաջող թարգմանությունն է. «**Կարի գեղջ և ապա-շաւ անկաներ ի միտս նորա, և զամենայն վնասս իրացն զհարբն իւրով արկաներ**» = «Շատ ափսոսաց ու ցավեց իր մտքում, և ամբողջ մեղքն իր հոր վրա էր գցում» (**զհարբն** - պարառական հոլով է) (292 - 293):

«**...ռոճկաւ և ի տաճար մտանել յարքունիս մեծապես առա-տացոյց**» (400) = «Ավելի շատացրեց նրանց **ռոճիկները** և արքունի խնջույքներին մասնակցելու իրավունք տվեց» (401): Պարզեցված է կապակցությունը, միայն **ռոճիկ** պետք է թարգմանվեր **օրվա պարեն**:

«**Ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք**» (110): Ոճական արտահայտությունը ճիշտ է թարգմանված. «Դուք ինչո՞ւ եք նրանց հետ **այրվում - խորովվում**» (111) (Անցյալ դերբայով ոճական արտահայտություն է):

«**Քաջութիւն արութեանցն**», «**օգնականութիւն սատարութեան**» սեռական հոլովով ոճական արտահայտությունները ճիշտ են թարգմանված. «**քաջություններ**», «**օգնություն ու օժանդակություն**» (142-143):

«**Նա և ի բազում շողալ սուսերացն և ի ճոճել բազմախուռն նի-**

զակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային» (236) = «Նաև բազմաթիվ սուներների շողալուց և բազմախուռն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից» (237):

Այստեղ թարգմանությունը ճիշտ է, որովհետև **ի** նախդիրը անորոշ դերբայի հետ ժամանակի իմաստ է արտահայտում¹, մինչդեռ **շողալուց** և **ճոճվելուց** հոլովածները պատճառի իմաստ են արտահայտում կամ ժամանակի իմաստ են արտահայտում բարբառային ձևերով: Ճիշտ թարգմանությունն է. «Երբ սուներները շողշողում էին և նիզակները ճոճվում...»:

Էջ 59-ի «**ինքը տեղ է իրեն համար**» կառույցի **իրեն**-ի փոխարեն պետք է լինի **իր՝ իր համար**:

Ամփոփելով Երվանդ Տեր-Մինասյանի՝ Եղիշեի գրքի աշխարհաբար թարգմանության վերաբերյալ մեր խոսքը՝ նշում ենք, որ այն սահուն շարադրանք ունի և արևելահայ գրական լեզվի անաղարտության դասական օրինակ է:

Նույնպիսի դրվատանքի են արժանի Աշոտ Աբրահամյանի թարգմանությունները: Նա 1970 թ. հրատարակել է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի թարգմանությունը, իսկ 1994 թ. լույս է տեսել Նույն գիրքը՝ միասնաբար՝ բնագրով և թարգմանությամբ, ինչպես նաև ներածությամբ ու ծանոթագրություններով:

1986 թ. լույս է տեսել «Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն. թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի» գիրքը, 614 էջ:

Ա. Աբրահամյանը գրաբարից թարգմանություններ պիտի աներ վստահությամբ, որովհետև դեռևս 40-50-ական թվականներին դրա հիմքերը նետված էին: 1950 թ., երբ ինքս առաջին կուրսի ուսանող էի, նա կարդում էր լեզվաբանության ներածություն և գրաբար առարկաները. ձեռքին թուղթ էր ունենում, ամեն ինչ ասում էր սահուն, վարժ և հաճելի եղանակով: Գրաբարից բնագրեր, տեքստեր էր թելադրում ու թարգմանում, քերականության նյութերը ևս գրել էր տալիս: Հաջորդ ուսումնական տարում՝ 1952 թ., արդեն լույս է տեսնում Աշոտ Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկը» (558 էջ), որի մասին լուսավորության մինիստր Գևորգ Հայրյանն ասել է. «Ընկեր Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկը» մեր օրերի Աստվածաշունչն է»: Իրոք գրաբարի ուսուցման հարցում այդ ձեռնարկը դարձավ բուհական համակարգի եզակի դասագիրք:

1960 թ. Ա. Աբրահամյանն արդեն հայոց լեզվի ամբիոնի վարիչ էր՝ խստապահանջ, ուշադիր և մտերիմ: Հիշում եմ նրա ասածը. «Մենք հայոց լեզվի մշակներ ենք, եկեք նվիրումով ծառայենք և փառքով պահենք նրա հմայքն ու մաքրությունը, անաղարտությունը»: 1963-ին ամբիոնը չորս ասպիրանտ ուներ առկա ուսուցմամբ՝ երկուսը՝ գրաբարի, երկուսը՝ ժամանակակից հայերենի գծով, ընդ որում՝ երեքի ղեկավարն էլ ինքն Աբրահամյանն էր, իմ գիտական ղեկավարը՝ ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը:

1962 թ. լույս է տեսնում Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» հույժ գիտական և սովորածավալ գիրքը (728 էջ), և դրանով էլ Ա. Աբրահամյանը դոկտորանում է:

Ամբիոնի բազմաբնույթ աշխատանքներին զուգընթաց նա սկսում է զբաղվել «Եղծ աղանդոց» երկի թարգմանությամբ:

Նա հավասարապես բացառիկ կերպով տիրապետում էր հայերենի զարգացման բոլոր փուլերին, հայ բարբառագիտությանը և ընդհանուր լեզվաբանությանը: «Եղծ աղանդոցի» թարգմանության հարցում նա, անշուշտ, նախատիպեր ունեցել է: Իր «Գրաբարի ձեռնարկ»-ում 12 հեղինակներից ընտրված բնագրերը բնութագրել է շուրջ 1250 ծանոթագրություններով, որոնք հնչյունական, բառաքերականական և ոճական մեծ արժեք ունեն. վերաբերում են բառերի նրբիմաստների դրսևորմանը, բառակապակցությունների դարձվածային և ոճական կիրառություններին, նախադասության կառուցվածքային և նախադասության անդամների արտահայտության, համաձայնության, շարադասության առանձնահատկություններին:

Արժևորվող գործառույթները նշվում են համապատասխան տերմիններով՝ եզրույթներով ու հասկացություններով: Օրինակ՝ բակառություն, նախդրիվ տրական, սեռական հոլովով ենթակա, տրական հոլովով ենթակա, բայական ավելադրություն, վերացականը թանձրացականի փոխարեն, պատմական բացառական, ընդմիջվում (= ընդմիջարկություն), դերբայական նախադասություն, անցյալ անկատարը անցյալ ապառնու իմաստով, ներկան ապառնու իմաստով, ապառնին ներկայի իմաստով, ստորոգյալը կրավորական սեռի բայով, **h** նախդիրը հայցականի հետ գործիականի իմաստով, **q** նախդիրը գործիականի հետ պարառական՝ **շուրջ** իմաստով, **h լախսն** - լաց լինողների մեջ (սրանից հետա-

գայում առաջացավ **լալիս** անկատար դերբայը), **ի** նախդիրը հայցականի հետ ժամանակի իմաստով, անորոշ դերբայի հայցականը նպատակի պարագա, **բարձցեն զհմայսն՝ բառնալ զհմայսն** – վերացնել հմայքը (= պարզել գաղտնիքը). Անորոշ դերբայի մոտ դրված է ենթակայական սեռական՝ **«քաղաքացն աւերելոյ»**, **«հիմանց տապալելոյ»**. Բայերը կրավորական սեռի են՝ քաղաքների ավերվելու (մասին), հիմքերի տապալվելու (մասին) (407), **լակիշ կամ դակիշ ածել** – բանակ դնել (408): **Ապստամբել** բայը գրաբարում բացառականով է խնդիր ընդունում, ինչպես այստեղ՝ **յուխտե** (409), **«Էր ... Մուշեղի»** նշանակում է **Մուշեղն ուներ** (411), բացարձակ կամ անկախ սեռական (անորոշի սեռականը ժամանակի պարագայի դերում - 418). Դերբայական երկրորդական նախադասություն՝ **լուեալ** անցյալ դերբայով, որը ստորոգյալ է և պետք է թարգմանել դիմավոր ձևով. « ... **Թեպետ և վաղու լուեալ զքօթն...**»՝ Թեպետև բոլոր շուտ էր լսել (418). Դերբայական նախադասություն է. անորոշ դերբայը պետք է թարգմանել դիմավոր ձևով. **«Մինչև դիմել ջուրց գետոյ փորուածն»**՝ Այնպես, որ գետի ջրերը հոսեն դեպի փորվածքը (427) և այլն:

Այս դիտարկումներն ու բացատրությունները ձեռնարկի ծանոթագրությունների միայն մի մասն են ներկայացնում, և եկեք պատկերացնենք, թե դրանց ամբողջությունն ինչպիսի ազդեցություն է թողել լեզվաբան – թարգմանչի գալիք կատարումների հարցում: Անվերապահորեն նշում ենք, որ Աշոտ Աբրահամյանի՝ Եղծի և Սյունիքի պատմության թարգմանությունները թարգմանական արվեստի և գրաբար ու աշխարհաբար լեզուների նրա իմացության պոռթկումներն են և արգասավոր հաստատումները:

Դերբայական նախադասություններին վերաբերող մի օրինակ վկայենք նրա՝ Եղծի թարգմանություններից: Դա բարդ ստորադասական նախադասություն է՝ **մինչև** շաղկապով կապակցված, որտեղ ստորոգում էլկա, և բոլոր կապակցությունները ձևավորված են անցյալ և անորոշ դերբայներով, որոնք պատշաճ թարգմանություն ունեն:

Այսպես. **«Եւ այնչափ յանդգնեալ սատանայութեան ոգւովն, մինչև ի պատգամաց Հոգւոյն սրբոյ քաղ հանել. զկես աւետարանի ընտրել առնուլ՝ և զկեսն իբրև զխոտան ի բաց թողուլ»** (Եզկ., 206)՝ Եվ սատանայական հոգով այնքան հանդուգն էր դարձել, որ մինչև

իսկ սուրբ հոգու պատգամներից ծաղկաքաղ էր անում՝ Ավետարանի մի մասն ընտրելով, իսկ մյուս մասը որպես խոտան մի կողմ թողնելով (Ն. տ., 207):

Մինչև շաղկապով նույնպիսի կառույց կա էջ 216-ում, թարգմ.՝ 217-ում:

Սեռական հոլովով ենթակայի օրինակներ, որոնց ստորոգյալներն արտահայտված են անցյալ դերբայով կամ այդ դերբայով և օժանդակ բայով կազմված վերլուծական (բաղադրյալ) ժամանակով՝

1. **«Արդ՝ մեր թողեալ զնոսա, հարցցուք զսոսա»** (Ն. տ., 96)՝ Այժմ մենք, թողնելով նրանց (մանիքեականներին), հարցնենք սրանց (մոգերին) (Ն. տ., 97):

2. **«Զի եթէ նորա չէր երկուացեալ, որպէս ասենն, Արիմնն չէր լինէր»** (Ն. տ., 96, 98)՝ Որովհետև եթէ նա երկմտած չլիներ, ինչպես ասում են նրանք, չէր լինի Արիմը (97, 99). **ասենն** բայաձևի վերջին **ն**-ն դիմորոշ հոդ է, թարգմանված է **նրանք** 3-րդ դեմքով:

3. **«Յայտ է՝ եթէ ոչ երբեք լեալ է Զրուանայ հայր աստուածոց»** (104)՝ Պարզ է, որ երբեք չի եղել Զրվանը աստվածների հայր (105):

4. **«Նոյնպէս և սողնոցն զխօշիւն միայն զմարդոյն առեալ, է որ ի ծակս, է որ ի սորս, է որ ընդ փապարս երկրի մտեալ դօղեն»** (118)՝ Նույնպես և սողունները, մարդու ոտնաձայնն իսկ զգալով, որոնք ծակերը, որոնք ճեղքերը, որոնք էլ գետնի խոռոչները մտնելով՝ թաքնվում են (119):

Տրական հոլովով ենթակայի օրինակներ: Այսպիսի կառույցների ստորոգյալներն արտահայտվում են **«միադիմի բայ + անորոշ դերբայ»** բաղադրությամբ կամ անորոշ դերբայով:

1. **«Յառաջնումն իսկ պարտ էր նմա յերկուանալ»** (106)՝ Հենց առաջուց նա (Զրվանը) պիտի երկմտեր (107):

2. **«Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն»** (106)՝ Որովհետև հնարավոր չէ, որ մեկը լինելու սկիզբ առնի՝ առանց ուրիշից գոյացում ունենալու (107):

3. **«Եւ չէ հնար լուսնի յերկիր իջանել»** (176)՝ Եվ հնարավոր չէ, որ լուսինն իջնի երկրի վրա (177):

4. **«Եւ դիւացն աղաղակել՝ եթէ դոքա են ծառայք Աստուծոյ բարձրելոյ»** (72)՝ Իսկ դուքն աղաղակում էին, թե՛ «Դրանք բարձրալ աստծու ծառաներն են» (73):

5. «Ապա ոչ այժմ թագաւորել է նմա, և ոչ ի վախճանի» (100)՝ Ապա ոչ այժմ է թագաւորում նա, ոչ էլ հետո (101):

6. «**Գիտաց՝ եթէ անսաստել ումեք Աստուծոյ՝ չար է և ոչ բարի**» (40)՝ Իմացավ, թե աստծուն չհնազանդվելը չար է և ոչ բարի (41). Իմաստային թարգմանություն է, ճիշտը **ումեք** տրականով ենթական ուղղականով թարգմանելն է՝ որ եթե մեկը չի հնազանդվում աստծուն, չար է և ոչ բարի:

Այսպիսի կառույցները կոչվում են «Տրականն անորոշի հետ»՝ *dativus cum infinitivo*¹²:

*Հայցական հոլովով ենթակա*²³:

Սա ևս հանդիպում է անորոշ դերբայի հետ (*accusativus cum infinitivo*): Ա. Աբրահամյանը ձեռնարկում նշում չունի, սակայն «Եղծ»-ում թարգմանություն ունի:

Օրինակ՝ «**Եթէ զամենայն գԱստուած յամենայնի ի հիւղն լինել ասիցեն...**» (20)՝ Եթե կարծում են, որ բովանդակ աստված ամբողջ հյուլեի մեջ էր (21): Կա և այլ օրինակ՝ «**Չի գԱստուած արարիչ ասել այնպիսի իրաց անպատշաճ է**» (18)՝ Որովհետև անհարմար է աստծուն այսպիսի բաների արարիչ համարել (19). Ճիշտ կլինի թարգմանել՝ Որովհետև անհարմար է ասել, թե աստված այդպիսի բաների արարիչ է:

Մեր ուշադրությունը գրավեց նաև հայցական հոլովով ենթակայի թարգմանությունը *խորենացու* երկում, որ կատարել է Ստեփանոս Մալխասյանը:

1. «**Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց**» (խոր., 224)՝ Բայց ասում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայոց աշխարհում անմշակ հող չմնաց (225). **երկիր** հող է նշանակում և հայցականով ենթակա է **ոչ գտանել** անորոշ դերբայի մոտ, որ ստորոգյալի արժեքով է:

2. «**... գոր հին գրոյցքն պատմեն լինել**» (130)՝ ... որոնց գրության մասին պատմում են գրույցները (131). Հայցական ենթակա-ստորոգյալ կառույցն է «**գոր լինել**», որի վերաբերյալ իմաստային թարգմանություն է կատարված:

Ստ. Մալխասյանն ահռելի աշխատանք է կատարել *խորենացու* և *Բուզանդի* երկերի թարգմանությամբ. լեզուների և հմուտ

¹² Հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, նշ. ձեռնարկ, էջ 428:

²³ Էդուարդ Մկրտչյան, Հայցական հոլովով ենթական գրաբարում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» Ե., 1967, N 6, էջ 49 - 56):

բառարանագետի տվյալները նպաստել են դժվարագույն բնագրերի թարգմանության գործին: Ճոխ ու հետաքրքրական են այդ գրքերում մեկնաբանություններն ու ծանոթագրությունները, քերականական թարգմանությունները: Խորենացու գրքում (1981թ.) բազմաթիվ են թեք հոլովներով ենթակաների գործածությունն ու թարգմանությունը: Նշենք էջերով. սեռականով՝ 162-163, 222-223, 424-425, 40-41, տրականով՝ 122-123, 340-341, 402-403, հայցականով՝ 28-29, 130-131, 94-95, 224-225, 234, 270-271, 292-293: Դրանք մեծ մասամբ բառական թարգմանություններ են, կան նաև իմաստայիններ (29, 63, 131, 271):

Հստակ են կատարված դերբայական նախադասությունների թարգմանությունները: **Մինչ(և)** շաղկապով կազմված դերբայական կառույցներ ևս հանդիպում են: Օրինակ՝

1. «**Տրեաց զամենեսեան մորիկն, մինչ ոչ գիտել ընկեր զնկեր՝ ընդ ո՛ր վարեցաւ**» (Խոր., 188)՝ Մորիկը բոլորին ցրեց, այնպես որ ոչ մեկը չգիտեր, թե ընկերն ուր մնաց (189):

2. «**... գտանի երևելի, մինչև ամենայն նախարարացն Հայոց առաջին լինել**» (190)՝ Նշանավոր դարձավ, այնպես որ բոլոր նախարարների մեջ առաջինն եղավ (191):

Ստ. Մալխասյանն անկաշկանդ է գրում, երբեմն գրական լեզվից զատվում և բանավոր խոսակցական լեզվին հարիր բառեր ու դարձվածներ է գործածում, կետադրության կանոնն անտեսում և այլն:

Օրինակ՝ «**... զնոյն նման հրամայէ առնել**»՝ հրամայում է նրանց տեսակ անել (225), «**Որոյ ատեցեալ զայր իւր զՏրդատ**» (236)՝ Կինը չսիրեց իր մարդուն, Տրդատին (237), «**Մի՛ թուեսցի քեզ դժուար**» (270)՝ Զո դժվարը թող չգա... (271), «**ոչ զօրէ ելանել**» (106)՝ չէ իշխում դուրս գալ (107): Էջ 419-ում՝ **Մեսրոպ գալով** (առանց հոդի). **Որովհետև Պարսից. գիտնալով. գա միջամտե. բերե.** կետադրական մեղանշումներ:

Մանուկ Աբեղյանն անվանի բանասեր է, լեզվաբան և թարգմանիչ: Կորյունի «Վարք Մաշտոցի» գիրքը լեզվական ճոխ կառուցվածք ունի, հատկապես առլեցուն է դերբայական կապակցություններով ու նախադասություններով և ընդմիջարկություններով, որոնք ստույգ բնութագրումների են ենթարկվում Աբեղյանի կողմից: Օրինակ՝

1. «**Առն, զոր ի նախակարգ բանից նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, Էր Մաշթոց անուն»** (Կոր., 9) (Պատմ., 1913)՝ Մաշտոց Էր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու (Կոր., թարգմ., 1994, էջ 39). Ընտիր թարգմանություն է, քանի որ «**Առն անուն»** (մարդու անունը) հատկացուցիչ-հատկացյալը տրոհված է երկու նախադասություններով, որ համարում ենք ընդմիջարկություն. հեղինակը թարգմանելիս իրար մոտ է բերել: Ստույգ է նաև, որ **մեր** սեռական հոլովով ենթական թարգմանել է ուղղականով՝ **մենք**, իսկ **փոյթ արարեալ** դերբայ-ստորոգյալը դիմավոր ձևով՝ **հոգ ենք տարել**:

2. «**Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօք օրինապատգամացի, մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն գերծանել»** (Կոր., 2-3)՝ Եվ այնպես հանգամանորեն խորամուխ եղան նրանք օրենքների ու պատգամների մեջ, որ մինչև անգամ բոլորովին դուրս եկան իրենց ազգակցությունից (= այլևս նման չէին իրենց բնիկ ազգակիցներին) (Կոր., 44). Դերբայական նախադասությունները՝ կազմված անցյալ և անորոշ դերբայներով, ստույգ թարգմանություն ունեն:

Հայտնի է, որ Մ. Աբեղյանը մեծ ջանքեր է գործադրել արևելահայ և արևմտահայ լեզուների մերձեցման հարցում՝ ձգտելով ունենալ միասնական՝ մեկ ընդհանուր գրական լեզու, ցավոք, այդ չիաջողվեց: Սակայն նա մնաց որպես հայերենի լավագույն մշակ, նրա անաղարտության համար պայքարի ակտիվ մասնակից՝ պակաս զիջելով հռչակավոր Հրաչյա Աճառյանին:

Ցանկանում ենք, որ առիթից օգտվելով՝ հիշենք նաև գրաբարից թարգմանություններ կատարած այլ հեղինակների, որոնք, բոլոր դեպքերում, հայրենականեր գործ են կատարել անցյալի փառավոր պատմության, անջնջելի իրադարձությունների պահպանության և հայոց լեզվի անաղարտ գործադրման հարցերում:

1. Անվանի լեզվաբան **Վարազ Առաքելյան, «Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի»,** Թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Ե., 1969թ., 321 էջ: **«Առաքել Դավրիժեցի, Պատմություն»,** Թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Ե., 1988թ., 590 էջ:

2. **Արամ Տեր-Ղևոնդյան, «Ագաթանգեղոս, Հայոց պատմութեան**

յուն», Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1988թ., 551 էջ:

3. Բագրատ Ուլուբաբյան, «Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուրք Վահան Մամիկոնյանին», Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, Ե., 1982թ., 537 էջ:

4. Միսաք Ա. Գոչունեան, «Ս. Գրիգոր Նարեկացի, Մատենանոց-բերդուքեան (Նարեկ),» թարգմանությունը Մ. Ա. Գոչունեան: Երկրորդ հրատ., որ պատրաստեցին պրոֆ. Հրաչիկ Միրզոյեանը և Տ. Ա. քահ. Պողոսեանը, Ս. Էջմիածին, 2018թ., 516 էջ:

5. Վազգեն Գևորգյան, «Գ. Նարեկացի, Մատյան ողբերգության»:

6. Վազգեն Համբարձումյան, «Հովհաննես Օճնեցի, Երկեր», Գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, Ե., «Անահիտ» հրատ., 1999թ., 312 էջ: **«Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում ճառեր»,** Թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վազգեն Համբարձումեանի, Թեհրան, 2003թ., 360 էջ: **«Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ»,** Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, Ե., 2003թ., 608 էջ:

7. Գևորգ Թոսունյան, «Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն», Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Ե., 1996թ., 398 էջ:

8. Վրեժ Վարդանյան, «Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան», Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Մ. Վարդանյանի Ե., 1985թ., 557 էջ:

9. Էդուարդ Մկրտչյան, «Եսայի Հասան Զալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի», նախաբանը և ծանոթագրությունները Արտո Մարտիրոսյանի, թարգմանությունը Է. Ս. Մկրտչյանի, Ստեփանակերտ, 2007թ., 71-112 էջ: **Ղևոնդ Ալիշան, «Սիսական».** հատվածներ (գլուխներ)՝ **«Հաբանդ»** (Գորիս, Տաթև), **«Աղա-հեճը»** (Լաչին), **«Արևիք»** (Մեղրի) **«Լորաձոր»** (Սիսիան, Տաթև): Տպագրվել են Սյունիքի մամուլում, «Հայագիտական հանդես»-ում (2011, N 4, 5), ԳՊՀ միջազգային II գիտաժող. ժողովածու, 2011թ., 433-442:

Թարգմանված և հրատարակության պատրաստ՝ Մատենադարանի N 7822 և 7823 ձեռագրերը (Պատմություն Արցախի՝ գրված

Գտիչ վանքի վարդապետ Առաքել Կոստանյանցի կողմից): Բնագրերը՝ 525 էջ, թարգմ.՝ 250:

Ամփոփում: Այժմ բոլորիս մտահոգության և գործառնությունների թիրախում մեր ազգային լեզվի պահպանության և անաղարտության խնդիրն է:

ИСКУССТВО ПЕРЕВОДА И ЧИСТОТА ЯЗЫКА - ЭДУАРД МКРТЧЯН

- Переводчик устно или письменно переводит с одного языка на другой, а сам перевод-искусство переводчика. Переводчик с грабара на ашхарабар-знаток двух армянских языков, и в этом процессе он должен сохранить чистоту и богатство ашхарабара.

В данном исследовании мы ссылаемся на переводы Ерванда Тер-Минасяна, Ашота Абраамяна, Степана Малхасяна, Манука Абегяна, Варага Аракеляна, Арама Тер-Гевондяна, Баграта Улубабяна, Мисака Гочуняна, Вазгена Амбарцумяна и других, кто сохранил чистоту современного армянского языка.

Ключевые слова: *Переводчик, чистота, перевод, грабар, ашхарабар, армянские диалектизмы, общее языкознание, сноски, литературный язык, именитые языковеды.*

TRANSLATING ART AND PURITY OF LANGUAGE - EDUARD MKRTCHYAN

The interpreter is translating verbal or in writing, and the translation is the interpreter is art, an occupation. Interpreter, who translates from the Ancient Armenian to the modern is an expert in both languages and has an important task to maintain the purity and richness of the modern Armenian language in this respect. Reflections have been made by Yervand Ter-Minasyan, Ashot Abrahamyan, Stepan Malkhasyan, Manuk Abegyan, Varag Arakelyan, Aram Ter-Ghevondyan, Bagrat Ulubabyan, Misak A. Gochunian, Vazgen Gevorgyan, Vazgen Hambardzumyan and others, who are modern manifestations of purity of the modern Armenian language.

Key words: *Translator, purity, translation, grabar, ashkharhabar, Armenian dialectology, general linguistics, annotations, literary language, famous linguists.*

ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մաշտոցեան Մատենադարանի
Ձեռագրագիտութեան բաժնի վարիչ եւ
Գլխաւոր աւանդապահ
Պատմական գիտութիւնների դոկտոր

ՄԵՐ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Հանրայայտ է, որ 1922ի մարտի «հռչակաւոր» դեկրետով հայերէնի ուղղագրութիւնը հիմնովին աղաւաղուեց. «նոր»ահաստատ «համակարգը» եւ նրա պատկերն այնքան ահաւոր էին, որ Գուրգէն Սեւակի առաջարկի հիման վրայ 1940 թուականի օգոստոսին մասնակի նահանջ կատարուեց: Դրանով հանդերձ, հիմնականում ձայնաւորների ուղղագրութիւնն այնքան է աղճատուած, որ աւանդականի եւ «նոր»ի միջեւ սարուձորի տարբերութիւնը շարունակում է գոյութիւն ունենալ մինչեւ օրս:

Այսպէս ասած՝ «նոր ուղղագրութիւն»ը սովետական բռնատիրութեան թելադրածն էր. եւ տրամաբանական դարաւոր համակարգն աւերուել էր որոշակի քաղաքական նպատակադրումով, որի մասին կիսօտենք մի փոքր անց: Բայց նաեւ լիովին բնական էր, որ սովետական կայսրութեան փլուզումից ու նրան անմիջապէս յաջորդած՝ Հայաստանի անկախութեան սկզբից եւեթ մեր մամուլում սկսեցին յայտնուել դասական ուղղագրութեան վերահաստատում պահանջող յօդուածներ: Սրանք բաւական բուռն հակառակութիւն առաջացրին. բանավեճը յաճախ անցնում էր պատշաճութեան սահմանները, անձնական վիրաւորանքներն էլ յաճախադէպ դարձան: Եղաւ նաեւ աւելին՝ աւանդականի վերականգնման պահանջն սկսեցին անձնաւորել Ռաֆայել Իշխանեանով, եւ աւելին՝ թոյլատրելի ու անթույլատրելի տարաբնոյթ եղանակներով վարկաբեկում էին թէ՛ նրան, թէ՛ նրա կողմնակիցներին եւ թէ, ցաւօք՝ կարեւորագոյն այս խնդիրը:

Աւանդական ուղղագրութեան հակառակորդները հիմնականում տիտղոսաւոր համալսարանական դասախօսները, այսինքն՝ հայոց լեզուի բարձրակարգ այն ուսուցիչներն էին, որոնց կենսական եկամուտը իրենց պաշտօնական աշխատավարձը չէր, այլ,

ցառով, բայց նաեւ կատարեալ իրաւունքով արձանագրում ենք, որ կրկնուսուցութեան դիմաց ստացուող շատ աւելի բարձր վարձատրութիւնն էր: Ուղղագրութեան փոփոխումը կամ աւանդականի վերականգնումը այս մարդկանց գրկելու էր իրենց բարձր եկամուտներն ապահովող հիմնական գիտելիքից, որովհետեւ շատերը կամ նրանց մեծ մասն ի վիճակի չէր աւանդական ուղղագրութեան համակարգը նախ սովորելու, ապա նաեւ՝ ուրիշներին սովորեցնելու:

Ասուածի լաւագոյն ապացոյցը մի երեւելի «հակադեմիականի»՝ այս խնդրին վերաբերող առաջին հրապարակման վերնագիրն է՝ «Իսկ ես չեմ ուզում անգրագետ դառնալ»: Այսինքն՝ մարդը յայտարարեց, որ ինքն ի վիճակի չէ կամ չի ուզում դպրոցական տարիքում մի անգամ սովորած արհեստականը մի կողմ դնելու եւ սովորելու իր չիմացածը՝ Ե-Ի. դարերի հայերէնի տրամաբանուած ուղղագրութիւնը: Սրան սովորութեային ծովութիւն չենք ասի, որովհետեւ նաեւ քսաներորդ դարի մեր մի շատ նշանաւոր վիպասանի մասին շատ հաւաստի աղբիւրից գիտենք, որ մինչեւ իր կեանքի կամ անցեալ դարի վերջ գրում էր 1922-1940 թուականների՝ դպրոցում իր մանկութեան օրերին սովորած ծռագրութեամբ, ինչ որ մէկը նրա վեպերը վերածում էր 1940 թ. յետոյի ուղղագրութեան տեսքի, նոր միայն ուղարկում էին տպարան:

Աւանդականը մերժողները դիմում էին ամենաանհաւանական ու անթոյլատրելի հնարքների ու կեղծ փաստարկների, ընդհուպ մինչեւ՝ խնդիրը վերածում էին արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի հակադրութեան եւ հռետորաբանում՝ «Ինչո՞ւ պէտք է արեւելահայերէնն ընդունի սփիւռքի ուղղագրութիւնը, աւելի ճիշտ է, որ սփիւռքն ընդունի Հայաստանի հնչիւնական (իբր - Գ. Տ-Վ) ուղղագրութիւնը»: Հասան այնտեղ, որ ուղղագրութեան խնդիրը համարեցին զուտ լեզուաբանական եւ միայն լեզուաբաններին վերապահելի բան, իսկ լեզուաբանի պիտակ չունեցող մտաւորականներին յայտարարում եւ համարում էին «ոչ-մասնագետ», բայց ովքեր իրենց կողմից էին, թէկուզ էլ լեզուաբան չէին, նրանք արդէն «մասնագետ» էին:

Այս մարդկանց համար խնդիրը մի պահ դարձաւ պատուի հարց. ինչ որ մէկին կամ մէկը միւսին հաճոյանալու համար բոլորն աշխատում էին գրել եւ տպել աւանդական ուղղագրութեան դէմ կամ այն հերքող ինչ որ մի բան: Համալսարանական երկու գրա-

կանազետ-դոկտորների ստորագրությամբ «Գրական թերթ»ում տարիներ առաջ տպագրուած մի յօդուածում կար «մտքի այսպիսի հանճարեղ մի փայլատակում»՝ «հայերէնը մինչեւ ուշ միջնադար բառանշատում եւ կետադրութիւն չի ունեցել»: Երբ երկուսից մէկին՝ շարադրանքի հեղինակին պատահաբար հանդիպեցինք եւ յանդիմանեցինք ասելով, որ կարող ենք ցոյց տալ բառանշատում ունեցող տասներորդ դարի ձեռագիր, չքմեղացաւ, ասելով՝ «Թող դա էլ մեր սխալը լինի»: Հարկ եղաւ բացատրել, որ դա սխալ չէ, այլ՝ ծանր մեղք, որ կետադրութիւն ժխտելով անգիտանում է նաեւ առոգանական նշաններից առաջացած մեր երաժշտական ձայնանիշերի՝ խազերի գոյութիւնը, եւ այդպիսով խեղաթիւրում է իր ուսանողների իմացութիւնը:

Անձամբ մենք ուղղագրական բանավեճին մասնակցել ենք առաջին իսկ օրերից. աւանդական ուղղագրութեանը վերադառնալու օգտին 1990ից մինչեւ 2001 թ. առօրեայ մամուլում տպագրել ենք քսանից աւելի յօդուած, մի քանիսն էլ գրել ենք, բայց զանազան պատճառներով անտիպ ենք թողել: Աւելին՝ նոյն 1990 թ. այս կողմ մեր թէ՛ հրապարակախօսական եւ թէ՛ գիտական աշխատութիւնները գրել եւ տպագրել ենք միմիայն աւանդական ուղղագրութեամբ. հրաժարուել ենք տպագրելուց բոլոր այն տեղերում, որտեղ պահանջել են մեր շարադրանքը փոխել եւ վերածել սովետական ուղղագրութեան: Այս կեցուածքի պատճառով բաւական թշնամիներ ու թշնամութիւններ ենք վաստակել. անգամ ինչ որ ստահակներ հեռախօսով հայիոյել եւ սպառնալիքներ են տեղացել: Ի վերջոյ՝ լիովին համոզուած ենք, որ 1998ի նոյեմբերի սկզբին Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէնի պաշտօնից ստիպողաբար մեր հրաժարուելը պայմանաւորուած էր նաեւ ուղղագրական մեր հաւատամքով եւ վաստակած թշնամութիւններով ու թշնամիների խարդաւանքներով: Իսկ 2001ից ի վեր այդ խնդրի մասին գրելը դարձեցրել ենք միայն այն պատճառով, որ տեսել ենք՝ գրելն անօգուտ է, բանավեճը դարձել էր լսողի եւ խուլի խօսակցութիւն, ուստի եւ որեւէ կողմ միւսին որեւէ բան հասկացնել չէր կարողանում:

Ուղղագրական այս հաւատամքի պատճառը ոչ թէ այն է, որ ամբողջ կեանքում աշխատել ենք Մաշտոցեան Մատենադարանում եւ այստեղ վարել Գլխաւոր աւանդապահի՝ ձեռագրերի խնամքի եւ գործածութեան կազմակերպման հիմնական պատասխանատու-

Լի պաշտօնը, մեր գիտական հետազոտություններն էլ վերաբերել են նոյն ձեռագրերին ու հայ պատմագրության գրաբար աղբիւրներին, այլ որովհետեւ համոզուած ենք, որ մեր լեզուն պետք է մի՛ ուղղագրութիւն ունենայ, եւ այդ միակ՝ ճշմարիտ ուղղագրութիւնը աւանդականն է: Եւ սա նաեւ այն պատճառով, որ առաւել քան համոզուած ենք, որ 1922ի «ռեֆորմ» կոչուածի հիմնական նպատակը քաղաքական էր ու հետապնդում էր մեր ժողովրդի համար կործանարար հետեւանքներ, որոնք զգալի չափով իրականացան եւ որոնք տխուր ազդեցութիւնը զգում ենք նաեւ այժմ:

Այս առիթով ընդամենը վերյիշենք, որ 1922ի «ռեֆորմ»ի հեղինակ¹ Պօղոս Մակինցեանը 1919 թուականից ի վեր տառապում էր «պրոլետարիատի համաշխարհային յեղափոխութեան յաղթանակ» ապահովելու նպատակով, ռուսներից սկսելով՝ աշխարհի բոլոր լեզուների համար լատինական այբուբենը յարմարեցնելու մտազարութեամբ: Դեռեւս 1919 թ. օգոստոսին Մոսկուայում կայացել էր Ռուսաստանի ո՛չ ռուսախօս ազգերի կրթութեան գործիչների առաջին համառուսական խորհրդակցութեանը, որտեղ Մակինցեանը ներկայացրել էր մի զեկուցում՝ «Ռուսաստանի բոլոր ազգերի համար միօրինակ լատինական գիր գործածելու մասին» վերնագրով, նոյն ոգով «Заря Востока» թերթում (1924 թ., Հ^տ 740) նոյն Մակինցեանը տպագրել է «О латинском шрифте» անունով ռուսերէն մի յօդուած, որ հայերէն թարգմանուած՝ «Լատինական գրի մասին» վերնագրով տագրուել է «Ռուսաստանի Կոմունիստական կուսակցութեան Անդրկովկասեան երկրային կոմիտէի» պաշտօնաթերթ «Մարտակոչ»ի 1924 թ. դեկտեմբերի 5ի համարում (էջ 2-3): Դեռեւս 1919 թ. Մակինցեանը յայտարարել էր, որ՝ «եթէ ռուսներին որեւէ պատճառով չյաջողուի լատինական գրին անցնել, կամ եթէ նոյնը չկարողանան անել խորհրդային Ռուսաստանի բազմաթիւ ազգեր, որոնք գիր ունեն՝ այնուամենայնիւ եթէ բոլոր լեզուների համար ստեղծուի մի հնչիւնական գրութիւն, սրանից անշուշտ կօգտուեն մի շարք ազգեր, որոնք գիր չունեն»: Ապա յաւելում է. «Մի քանի անգիր ազգեր, ինչպէս՝ չովվաշները, չերեմիսները քիչ ժամանակ առաջ ընդունել էին ռուսերէն այբուբենն ու գիրը: Բայց արդէն յաջորդ հերթին, չերքեզների, ափխազների համար կազմուեց մի այբուբեն, որ հիմնուած է լատինական գրի վրայ: Նոյնպէս

¹ Մանուկ Աբեղեանին այդ չարագործութեան հեղինակ չենք համարում. նրան ընդամենը օգտագործել են:

վարուեցին եւ կիրգիզները: Թիւրքերն եւս իրենց համար ստեղծեցին Նոր այբուբեն, որ դարձեալ հիմնուած է լատինականի վրայ»:

Ըստ այդմ եւ 1924 թուականին ոմն Սերգեյ Բոգդատիւի հետ Մակինցեանը լատինատառ այբուբանը «յարմարեցրել» էր հայերէնին ու 1922ին եղածի մասին յայտարարում էր. «Անձնապէս ես ոչ մի դէպքում ոչ միայն ձայն չէի տայ ի նպաստ այդ ռեֆորմին, այլ եւ չէի առաջարկի ժող. Կոմ. Խորհրդի քննութեան, եթէ Նրան չհամարէի մի աստիճան՝ դէպի լատինական գիրը անցնելու գործը դիւրացնելու համար». ապա շարունակում էր. «Եթէ հայերէնի ուղղագրութեան ռեֆորմին վիճակուած է սառչել մնալ կէս ճանապարհին՝ այս դէպքում անելի լաւ կը լինէր առանց այլեւայլի դառնալ էլի հին ուղղագրութեան, որ Աբեղեանից առաջ առանց աղմուկի մի քանի հայ հեղինակների նախաձեռնութեամբ բաւական կանոնաւորուել էր: Մենք կատարելապէս համոզուեցինք, որ ընդունուած ռեֆորմը մեզ խզեց անջատեց արտասահմանի հայկական տարրերից: Մեր ընկերները հաղորդում են, որ մեր խորհրդային հրատարակութիւնները չեն տարածում ուղղագրութեան պատճառով: Հէնց այս մի հանգամանքը այնքան ծանրակշիռ է, որ հարկադրում է Նոր ուղղագրութիւնը վերացնելու մէջ տեղից: Որովհետեւ պարզուեց, որ յօգուտ այս ուղղագրութեան մեր արած ամբողջ պրոպագանդը վիժեց, եւ պարզ է, որ մենք այլեւս մարդկային եւ նիւթական միջոցներ չենք վատնի այդ պրոպագանդը շարունակելու»:

Աւելին խայտառակը շարունակութիւնն է. «Խորհրդային իշխանութեան Հայաստանում հաստատուելու չորրորդ տարեդարձի օրը, երբ մենք վերոյիշում ենք մեր աջողութիւնները զանազան ճակատներում մեր տօնը ամենեւին մթազնած չենք լինի խոստովանելով պայմանական անաջողութիւնը ուղղագրութեան ռեֆորմի գործում: Պայմանական ենք կոչում այս անաջողութիւնն այն պատճառով, որ լատինական գրին անցնելու ժամանակ՝ այժմեան ուղղագրութիւնը կարող կը լինէնք համարել իբրեւ անցողական աստիճան: Որքան շուտ մենք արիսիւր նետենք «Սահակ-Մեսրոպեան» անկիւնաւոր, տգեղ եւ աչքերի համար վնասակար այբուբենը՝ այնքան շուտ կազատուենք Աբեղեանի ուղղագրութիւնից: Եթէ այս տեղի ունանայ՝ Աբեղեանի ռեֆորմը իր դերը կատարած կը լինի: Իսկ եթէ Աբեղեանի ուղղագրութիւնն ընդունուել է «յաւիտեանս ժամանակաց», սա կլինի բացարձակ յետադիմութիւն: Զիտեսելով

դեռ այն մասին, որ Աբեղեանը մեզ ետ է տանում մինչև 12րդ դարը՝ նրա ուղղագրութիւնն այնքան է այլանդակել հայերէն բառերի պատկերը, որ շատերը, արդէն երկու եւ կէս տարի միմիայն այս նոր ուղղագրութեամբ կարդալով հանդերձ՝ չեն կարողացել նրան ընտելանալ»¹:

Այս վկայակոչումները, կարծում ենք, բաւարար են համոզուելու համար, որ 1922ին կատարուածը զուտ քաղաքական նպատակ ուներ. աւելին՝ բանականութեան տեսանկիւնից կատարելապէս սխալ, ուստի եւ բացարձակապէս անտեղի էր:

Աւելացնենք, որ ռուս-բոլշեւիկեան իշխանութիւնները Նոյնապիսի մի դաւ էլ նկրծում էին 1934 թուականին, եւ այս անգամ հայերէնի վրայով վերածելում էին կիւրեղեան այբուբենը, սակայն բարեբախտաբար սա եւս ձախողուեց: Ռուսական կայսրութեան ոտնձգութիւնները հետագայում շարունակուեցին աւելի զգոյշ քայլերով՝ մեր յայտնի «Տերմինաբանական կոմիտէ»ին յղուող շարունակական հրահանգներով եւ բառագործածութեան «միջազգայնացման», իրականում՝ մեր լեզուի բառապաշարի աստիճանական ռուսերէնացման պարտադրանքով:

Բայց սա մի այլ՝ առանձին եւ շատ ծաւալուն խօսակցութեան ինդիք է: Եւ քանի որ մեր լեզուի բուն ուղղագրութեան վերականգնման անհրաժեշտութիւնը բազմազան եւ բազմատեսակ փաստարկներով վաղուց հաստատուել է, այսինքն՝ նոր բան ասելը գրեթէ անիմաստ է, ուստի այժմ, ձեր թոյլտուութեամբ, երբեմն երկար քաղումներով ներկայացնում ենք հայերէնի ուղղագրութեան մասին անցեալ դարի մեր արժանաւոր գիտուններից մէկի գնահատութիւն-կարծիքները. հեղինակի անունը վերջում ենք ասելու, որպէսզի աւելի ցայտուն երեւայ, որ 127 եւ 106 տարի առաջ նրա բացայայտած եւ արձանագրած իրողութիւններն այսօր Նոյնքան իրաւացի եւ արդիական են:

ԺԹ-Ի. դարերի սահմանագծի ուղղագրական բոլոր վեճերի փորձաքարը, նաեւ՝ խորհրդային դեկրետի սկզբնապատճառը այսպէս ասած հիւնագրութիւն-վեւագրութիւնն էր (բաղաձայնայաջորդ եւ ձայնաւորանախորդ՝ **վեւահնչիւն ու**-ի փոխարէն **հիւն** (վիւն)՝ **ւ** կամ վեւ (**վ**) գրելու որոմը՝ «Աստւած, կատւի, բւի, ձւի»): Կամ Նոյն բառերը՝ **վեւ**-ով. «Աստ**վ**ած, կատ**վ**ի, բ**վ**ի, ձ**վ**ի»: Խնդիրը վերածուել էր

¹ Պ. Մակինցեան, Լատինական գրի մասին.- «Մարտակոչե (Թիֆլիս), 1924, դեկտեմբերի 5, Հ^ա 279 (579), էջ 3:

ուղղագրության միասնական կամ հնչիւնական տարբերակների միջեւ ընտրութիւն կատարելուն. հնչիւնականը նախապատիւ դիտելու դէպքում մեր գիտուն հեղինակի կարծիքով կարելի էր այբուբենը փոփոխել, սակայն առ այդ 1890 թուականին նա գրել է. «Բայց մենք տեսնում ենք, որ իրօք այդպէս չի լինում, որովհետեւ ուղղագրության միութեանն ավելի կարեւորութիւն է տրւում, քան թէ բառերն արտասանութեան համեմատ գրելուն: Այդ հանգամանքից է առաջանում այն, որ մեզկից շատ ու շատ բարձր կանգնած ազգերն իրենց այբբենարանն ու գրութիւնը, որ շատ ավելի հեռու է կենդանի արտասանութիւնից, քան թէ մեր գրութիւնը, դժուարանում են փոփոխութեան ենթարկել եւ իրենց գրութեան եւ այբբենարանի թերին լրացնել, որովհետեւ այդ անել անկարելի է առանց բազմատեսակութեան մէջ ընկնելու եւ առանց ուղղագրութեան միութիւնը խանգարելու... Սոյն հանգամանքն է պատճառ եղել, որ անյաշող են անցել այն փորձերը, որ աշխարհաբարի գրական լեզու դառնալու սկզբներում եղել են աշխարհաբարի ամբողջ ուղղագրութիւնը միմիայն կենդանի արտասանութեան վրայ հիմնելու համար»: Փորձերի անյաշողութեան պատճառներից «գլխաւորն այն է, որ Նոյնիսկ կենդանի արտասանութիւնը միատեսակ չէ, ամենայն բարբառ եւ իւր ճիւղերը միեւնոյն բառը տեսակ-տեսակ են արտասանում. իսկ այդ բազմատեսակութեան մէջ նախապատուութիւնն այս կամ այն բարբառին տալը շատ դժուար է: Թէ որքան ուղղագրական բազմատեսակութեան մէջ կ'ընկնենք, եթէ միայն կենդանի արտասանութեան վրայ հիմնենք ուղղագրութիւնը, յիշենք միայն այն, թէ որքան տարբերում են մեր երկու գրական լեզուների հիմք կազմող Արարատեան եւ Կ. Պոլսի բարբառները: Նոյն տարբերութիւնը, որ կայ... օտարազգի բառերի տառադարձութեան մէջ՝ Պետերբուրգ, Բեդերպուրկ կամ Փեթերպուրկ եւ այլն, միեւնոյն տարբերութիւնը ճշտութեամբ պիտի լինի եւ հայերէն բառերի գրութեան մէջ՝ եթէ միմիայն արտասանութեան վրայ հիմնենք ուղղագրութիւնը. մենք պիտի գրենք **դաս**, իսկ Նրանք՝ **թաս**, մենք՝ **գարի**, Նրանք՝ **քարի** եւ այլն: ...ուղղագրութիւնը միայն արտասանութեան վրայ հիմնելով, մեր լեզուի գրութեան ամբողջ կազմութիւնը կը փոխուի»:

«...Ասենք թէ կը թողնենք Վանայ, Մշոյ, Ղարաբաղի եւ ուրիշ բարբառների արտասանութիւնները, որ բոլորովին նման չեն Արարատեան բարբառի արտասանութեանը, սակայն Նոյնիսկ

այդ բարբառով քի՞չ փոփոխության կ'ենթարկուի մեր բառարանը: Կարծում ենք, այնքան փոփոխություն կը կրի, որ շատ անգամ նոր գրության պատկերը նման չի լինիլ հին գրության պատկերին: Սակայն նոյն իսկ Արարատեան բարբառն իւր մէջ արտասանութեան մի միութիւն չի ներկայացնում. երեւանցու արտասանութիւնը ջոկ է, վաղարշապատցունը՝ ջոկ, աշտարակցունը՝ ջոկ: Կը նշանակի՝ ուղղագրութեան միութեան համար պիտի ընդունենք միայն մի գիւղի արտասանութիւնը, հակառակ դէպքում մենք բազմատեսակութեան մէջ կ'ընկնենք, որովհետեւ մէկն արտասանում է խնդիր՝ դ-ով, միւսը՝ խնթիր՝ թ-ով, մէկն արտասանում է կատուներ, լեզուներ՝ ու-ով, միւսը՝ կատվներ, լեզվներ՝ վ-ով. եւ այս՝ նոյն Արարատեան բարբառի մէջ»:

«Իսկ քանի որ մի գիւղի արտասանութեան վրայ հիմնուած ուղղագրութիւնը հնչիւնական կը լինի միայն այդ գիւղի համար, ուրեմն «գրութիւնն արտասանութեանը կատարելապէս մօտեցնելը անհնարին է...», որ նշանակում է, թէ նախընտրելի է «հին գրութիւնը, որ սրբագործուած է պատմութեամբ եւ մեր ամբողջ գրականութեամբ: ...գրութիւնն արտասանութեանը մօտեցնելը, բառի բուն նշանակութեամբ, անհնարին է», որովհետեւ այդպէս կարող է լինել միայն այն դէպքում, «երբ որ այնքան տեսակ գրութիւն լինի, որքան տեսակ որ արտասանութիւն կայ. գոնէ այնքան տեսակ գրութիւն լինի, որքան տեսակ որ գլխաւոր արտասանութիւն կայ... մեծ չափով առած թէ պակաս չափով առած, մենք միեւնոյն հետեւեալին ենք գալիս, այսինքն՝ միեւնոյն լեզուի, միեւնոյն բառերի գրութիւնը բազմատեսակութեան մէջ ենք դնում: Այս բազմատեսակութիւնը չառաջացնելու համար միակ ելքն այն է, որ աշխարհաբարի մէջ ընդունենք գրաբարի ուղղագրութիւնը...», որ «իւր պատկառելի հնութեամբը եւ մեր հին ու նոր գրականութեան մէջ սրբագործուած լինելովը հեշտութեամբ կարող է լռեցնել բարբառային բազմատեսակութիւնները, եւ հաւասար կերպով ընդունելի է թէ՛ մեզ համար, թէ՛ արեւմտահայերի համար եւ թէ՛ առհասարակ ամենայն տեղի հայերի համար: Մի՞թէ նոյն իսկ այս հանգամանքը չէ եղել պատճառ, որ անյաջող են անցել այն փորձերը, որ... առաջ արել են ուրիշները՝ գրութիւնն արտասանութեանը մօտեցնելու համար: Եթէ... արտասանութեան բազմատեսակութեան հանգամանքը չլիներ, որից եւ ուղղագրութեան միութիւնը խանգարուում է, մի՞թէ յե-

տին մտածողի համար, ոչ միայն մեզ, այլև ուրիշ ազգերի համար, պարզ չի լինիլ, որ շատ բանաւոր է ուղղագրութիւնն արտասանութեանը մօտեցնելը»:

«Բացի արտասանութեան բազմատեսակութիւնից, պիտի նկատի ունենալ եւ այն, որ հեշտ չէ դարաւոր գրականութեան մէջ գործադրուած մի ուղղագրութիւն գրչի մի շարժումով բոլորովին ոչնչացնել եւ նրա տեղը նոր ուղղագրութիւն դնել: Եթէ այդ այդպէս հեշտ լինէր, ինչո՞ւ մեզանից անելի լուսաւորուած ու յառաջադէմ ազգերը չեն կարողանում իրենց լեզուի գրութեան մէջ այդպիսի դիւրութեամբ փոփոխութիւն մտցնել»:

Ծուլութեամբ պայմանաւորուած մերօրեայ սովորութեամբութեամբ ասում էին, թէ անանդական ուղղագրութիւնը գրաբարինն է, իսկ խորհրդայինը՝ աշխարհաբարինը, անգամ կարգախօս էր յօրինուել՝ «դասականը՝ դասականին»: Մեր հեղինակն այս «փաստարկ»ի պատասխանն էլ ունի. «թերեւս մեզ ասեն, թէ մեր գրականութիւնը նոր է, ուստի եւ մեր նոր աշխարհաբար լեզուի ուղղագրութիւնը, քանի դեռ նոր է, պէտք է հիմնենք արտասանութեան վրայ... Բայց այդ կարելի է ասել միայն այն ժամանակ, երբ որ հայոց լեզուի բառերը նոր լինէին գրի առնուելիս, այսինքն՝ հայոց լեզուն նոր սկսում լինէր գրաւոր լեզու դառնալ: ...մեր գրական լեզուն նոր է, բայց այդ նորութիւնը միայն քերականութեան մէջ է եւ ո՛չ բառերի: Եւ հէնց... սխալն էլ նրանում է, որ կարծում» են, «որ եթէ մեր աշխարհիկ լեզուն նոր է, ուրեմն եւ բառերի գրութիւնը նոր է, ուստի եւ, որքան շուտ է, այդ բառերը նոր արտասանութեան համեմատ պէտք է գրենք: Այնինչ մեր աշխարհաբար բառերը, սակաւ բացառութեամբ, նաեւ գրաբար են, իսկ գրաբարի գրեթէ բոլոր բառերը գործ են ածւում աշխարհաբարի մէջ. գրաբար մեռած բառերից շատերը, որոնք մի քանի տարի առաջ հնաբանութիւն էին համարւում, հետզհետէ մեր նոր գրականութեան ծաղկելու համեմատ գործածութեան մէջ են մտնում, եւ գուցէ ժամանակ գայ, որ շատ քիչ բառեր մնան գրաբարի մէջ իբրեւ հնաբանութիւն եւ չկենդանանան մեր նոր գրական լեզուի մէջ»:

«Եթէ... բառերը նոյնն են գրաբարում եւ աշխարհաբարում, ուրեմն եւ այդ բառերի գրութիւնը նոր չէ, որ մենք կարողանանք բառերի գրութեան մէջ փոփոխութիւն մտցնել... մենք... մեր նախնիքների հետնորդներն ենք, մենք ինչպէ՞ս կարող ենք ուղղել մեր

նախնիքների ոչ թե սխալը, այլ ուղիղ գրությունը, որ արդեն հաստատ դիրք է բռնած»:

«Միև կողմից, մենք կարող էինք էլի մեր աշխարհաբարի համար բոլորովին նոր ուղղագրություն հիմնել, եթե... գրաբարի եւ աշխարհաբարի մէջ արտասանութիւնը տարբեր լիներ, այսինքն՝ գրաբարը կարողացուէր Ե. դարու արտասանութեամբ: Բայց որովհետեւ արդէն գրաբարի հին գրութիւնը կարդում ենք արդի արտասանութեամբ, ուստի եւ նոր տեսակ գրութիւնն անելորդ է, որովհետեւ միակ արտասանութեան համար երկու տեսակ գրութիւն է ստեղծուում: Ուր արտասանութեան համար, նուէր գրութիւնն ունենալուց յետոյ, ինչո՞ւ ստեղծել նոր գրութիւն՝ նվեր կամ նւեր, քանի որ հին գրութիւնը կայ, եւ այդ հին գրութիւնը բոլորովին այնպէս ենք արտասանում, ինչպէս եւ նոր գրութիւնը...»:

«Ուղղագրական միութիւնն անհրաժեշտ է, բայց եւ պատմական գրութեան սովորութիւնն անխուսափելի է, եւ հենց այդ պատճառով նախնեաց գրութեան եղանակը փոխելիս կ'առաջանան տարածայնութիւններ եւ խառնաշփոթ ուղղագրութիւն... Այսպէս, տեսնում ենք, որ հին ուղղագրութեան մէջ փոփոխութիւն մտցնելու համար... ո'չ մի փաստ համոզիչ չէ... գրում են լեզւի տիրացւի, ձւի, հեռւից եւ այլն, մոռանալով միանգամայն ուղղագրութեան սկզբունքներից մէկը, որ ի նկատի ունի բառի ծագումը, կազմութիւնը. այդ սկզբունքը, որ կոչւում է ստուգաբանական, եւ հնչիւնական սկզբունքի հետ հաւասար նշանակութիւն ունի թե՛ ուղղագրութեան եւ թե՛ քերականութեան մէջ, ընդունուած է բոլոր լեզուների մէջ... Երեւի... (չեն) մտածել ստուգաբանական ուղղագրութեան վրայ եւ ւ-ի սիրուց եւ ո-երը ջնջելու եռանդից մղուած սկսել (են) գրել լեզւի, կատւի, բւի, ձւի, տիրացւի, տւած, անւանել եւ այլն. այնինչ այդ բառերն իրենց արմատի մէջ ունեն ու եւ ո'չ վ (ւ) հնչիւնը. լեզու, կատու, բու, ձու, հեռու, տիրացու, տու (շնորհատու), անուն եւ այլն: Եթե, ասենք, Նոյնիսկ ստուգաբանական սկզբունքի վրայ էլ ուշադրութիւն չդարձուի... բայց մի՞թե հնչիւնական սկզբունքը... թոյլ է տալիս գրել լեզւի, կատւի, հեռւից, ձւի եւ այլն. չէ՞ որ շատ շատերը՝ արեւմտեան գրական լեզուով խօսողները, արեւելեան գրական լեզուով խօսողներից շատերն էլ արտասանում են լեզուի, կատուի, ձուի, բուի, հեռուից եւ այլն, այսինքն՝ ու-ով...»:

«Պատմական ուղղագրութիւնը, որ հիմնուած է հին արտասա-

նութեան վրայ, արդի ուղղագրութեան մէջ ներկայանում է իբրեւ մի հնացած զգեստ, բայց ո՛չ անելորդ զգեստ, որ հեշտութեամբ կարելի է հանել եւ դուրս ձգել. այդ հեշտ չէ անելը ո՛չ թէ նրա համար, որ մենք վարժուել ենք այդ զգեստին, այլ անելի նրա համար, որ այդ հին ուղղագրութիւնը պահում է միութիւն եւ տեղիք չի տալիս տարածայնութիւնների. իսկ մի լեզուի գրութեան մէջ ԱՄԷՆԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ է ուղղագրութեան միութիւնը: Այսպէս՝ ուղղագրութեան մէջ մի կողմից հնչիւնաբանութիւնն ու ստուգաբանութիւնը, միւս կողմից միութիւնն ի նկատի ունենալով պէտք է առաջնորդուել փոփոխութիւն մտցնելիս: Կարելի չէ մեկովն առաջնորդուել, առանց միւս երկուսն ի նկատի ունենալու»:

Եւ՝ **ու-ւ-վ**-ի գրութեան մէջ առկայ շփոթի առիթով մեր գիտունն ասում է. «փոխանակ սակաւաթիւ տարածայնութիւնները վերացնելու, ընդհակառակն՝ անելի մեծ տարածայնութիւններ» են առաջանում «քանդուում է այն միութիւնը, որ կայ միւս բառերի գրութեան մէջ, որ բոլորը միատեսակ **ու**-ով են գրում: Ինչպէս ասում են, ունքը շինելու տեղ աչքն է հանում: Ի՞նչ է» լինում. «Երեք դէպքի տարածայնութիւնները վերացնելու համար փոխանակ առաջարկելու, որ այդ տարածայնութիւնները գրեն մեր լեզուի գրութեան ընդհանուր եղանակով, որով գրում է ստուար բազմութիւնը, ընդհակառակն՝ ընդհանուր եւ շատ անելի գործածութիւն ունեցող ձեւերը բերուած հաշտեցուած է սակաւաթիւ ձեւերի հետ... Եւ դուրս է եկել մի խառնաշփոթ գրութիւն. եւ բաբելոնեան խառնակութիւնը ոչ թէ առաջ էր, այլ այժմ... որովհետեւ հին մի քանի կրկին ձեւերի վրայ անելացել են նաեւ բազմաթիւ նոր **ւ**-ով գրութիւններ, որ առաջ չկային: Ահա այս խառնաշփոթութիւններին տեղիք չտալու համար, որովհետեւ ուղղագրութեան միութիւնն անհրաժեշտ է, հարկաւոր է պահել գրաբարի ուղղագրութիւնը»:

Հիւնագրութեան առաջացման հիմնական պատճառն արեւելահայերէնի կրաւորածէն էր. բոլոր բայերի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակների վերջաւորութիւնը **-ում** է. կրաւորականում սրան միանում է եղանակիչը՝ եւս մի **ու**: Ինքնին երկու տառով գրուող **ու**-ն ոմանք այդպէս էլ գրում էին (եւ ճիշտը սա է). **-ուում** (աս**ուում**), երկրորդները՝ **վում** (աս**վում**), վերջինները՝ **ւում** (աս**ւում**). այս շփոթը լուծելու համար առաջարկուել է ընդունել **-ւում** ձեւը. «Թեպէտ միատեսակութեան համար անելի յարմար է ընտրել **-ուում** ձե-

ը, բայց չենք կարծում, որ այդ ձեռք վերահաստատուի, քանի որ, ինչպես ասացինք, այս բոլոր տարածայնությունների նախապատճառը հենց այդ միեւնոյն ձեւն է: Այդ -Լ-ում ձեւն ընտրելը ուղղագրութեան սկզբունքին հակառակ չէ»: Եւ իսկապէս, արեւելահայերէնի կրաւորաձեւի համար այս միակ բացառութիւնը հետագայում ընդհանուր ճանաչում ստացաւ, որովհետեւ ուղղագրութեան համակարգը չի խախտում:

«Գուցէ, ո՛վ գիտէ, մեր ընդհանուր ձգտումով, մեր ամենայն ինչ շուտով ընդունելու հակումով շատերն սկսեն **ու**-ի փոխանակ **լ**-ով գրել... այն ժամանակ գուցէ մեր ուղղագրութեան համար արդարաւայ այն առակը, թէ՛ մինչեւ չպղտորուի, չի պարզուի: Բայց դրա համար դեմ մենք եւ մեր ժառանգները խառնաշփոթ ուղղագրութեան դարում կ'ապրենք, իսկ մեր ժառանգների ժառանգների ժամանակ գուցէ պարզուի ուղղագրութեան խնդիրը եւ **ու**-ի փոխանակ **լ** գրուի կամ չգրուի... Մենք նոր տարածայնութիւնների տեղիք չտալու համար հարկաւոր ենք համարում հին ուղղագրութիւնն անփոփոխ թողնել»:

* * *

Նոյն հեղինակը, արդէն 1913 թուականին, գրել է. «Ամենից առաջ, առանց երկար բացատրութիւնների մէջ մտնելու, պիտի շեշտեմ մի սկզբունք, որ ընդհանուր ընդունուած է բոլոր ազգերից. դա այն է, որ ամեն գրական լեզուի համար միակերպ քերականութեան հետ անհրաժեշտ պայման է նաեւ միակերպ ուղղագրութիւնը, որով պահւում է գրական լեզուի միութիւնը, եւ զանազան բարբառների մարդիկ, որոնք խօսելիս յաճախ տարբեր արտասանութեան են հետեւում, իրար գրած՝ հեշտութեամբ հասկանում են: Դրա մէջ է հենց գրական լեզուի եւ գրաւոր խօսքի մեծ նշանակութիւնը:

Հասկանալի է, որ կենդանի խօսքի պատկերներն ընդհանուր ընդունուած պիտի լինին, ուրիշ խօսքով՝ ուղղագրութիւնը միութիւն պիտի ունենայ, որպէս զի նոյն լեզուն խօսող մարդիկ կարողանան, մէկմէկու գրած, հեշտութեամբ վերծանել: Բացի այդ՝ բառերի պատկերները դարեւ դար էլ չպիտի մեծ փոփոխութիւնների ենթակայ լինին, որպէս զի յաջորդ սերունդները չկտրուեն նախորդների հետ՝ գրի միջոցով մտաւոր հաղորդակցութիւն ունենալուց: Եթէ չլինի ուրեմն ուղղագրութեան այս ընդհանուր եւ տեւական

միութիւնը, չի կարող գոյութիւն ունենալ եւ մի ընդհանուր գրական լեզու: Հայերէնի համար՝ աւելի մեծ է այս պայմանի նշանակութիւնը, քանի որ մենք ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նոյնանում են գոնէ միակերպ ուղղագրութեամբ: Ուստի հենց սկզբից պիտի ասեմ, որ եթէ որ եւ է փոփոխութիւն պետք է մեր ուղղագրութեան մէջ աւելի խառն դրութիւն մտցնի եւ մեր գրական լեզուներն իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է, որ չլինի:

Աւելի լաւ է ուղղագրութիւնը լինի սխալ ու դժուար, բայց միակերպ... փոփոխութիւն... պետք է եւ կարելի է անել որոշ չափով. բայց եթէ որ եւ է փոփոխութիւն պիտի վերացնի մեր ուղղագրութեան միութիւնը եւ մեր երկու գրական լեզուներն իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է, որ չլինի: Իսկ մեր ամեն, իրենց մի մի Ակադեմիա կարծող անհատների փոփոխութիւններին ուրիշ բան չի վիճակուած, բայց եթէ մի նոր խառնափնթոր դրութիւն մտցնել մեր ուղղագրութեան մէջ: Միայն հոգեւոր իշխանութիւնների եւ գրագետների միութեան ձեռներեցութեամբ կազմուած բանիբուն մարմնի որոշումը մեզ համար ընդունելի եւ պարտադիր կը լինի: Իսկ մինչ այդ, ձեռք պիտի քաշել ամեն հին ու նոր փոփոխութիւններից եւ դառնալ աւանդական ուղղագրութեանը: Այս է ուղիղ ճանապարհը»¹:

Բացայայտենք. թէ՛ 1890 եւ թէ՛ 1913 թուականներին գրողը մեծավաստակ Մանուկ Աբեղեանն էր. շարադրանքիս սկզբի քաղուածքները 1890ին նրա հրապարակած «Գրաբարի երկբարբառները» փայլուն ուսումնասիրութիւնից² են, իսկ 1913 թուականով բնորոշուածները՝ նոյն թուականին նրա կարդացած՝ «Մեր ուղղագրութեան մասին» խորագրով յայտնի գեկուցումից³:

1 Մ. Աբեղեան, Մեր ուղղագրութեան մասին.- Արարատ, 1913, էջ 1141:

2 Մանուկ Աբեղեան, «Գրաբարի երկբարբառները».- Նոր Դար (Թիֆլիս), 1890, 28 նոյեմբերի - 12 դեկտեմբերի, Հմրք 187-191, 193-194, 196-197 (նոյնը՝ Մանուկ Աբեղեան, Երկեր, հտ. Ը., Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1985, էջ 292-329): Այս ուսումնասիրութեան ուղղագրութեանը վերաբերող մասի վերաշարադրանք-գնահատութիւնն են մեր հետեւեալ յօդուածները. Գեորգ Տեր-Վարդանեան, Աբեղեանը հայերէնի խորհրդային ուղղագրութեան դեմ.- Ազգ, 5 Մարտի 1997 թ., Հմր 41 (1295), էջ 4. եւ՝ Գեորգ Տեր-Վարդանեան, Հայերէնի ուղղագրութեան փոփոխման մէկ-երկու պատճառ.- Ազգ, 11 Մարտի 1997 թ., Հմր 45 (1299), էջ 4 (առ 14 հոկտ. 2019 թ.՝ <http://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azg91/1997/41.pdf> եւ <http://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azg91/1997/45.pdf>):

3 Մանուկ Աբեղեան, Մեր ուղղագրութեան մասին.- «Արարատ» (Էջմիածին), 1913, ԽԷ. տարի, Հ^մ ԺԱ., էջ 1047-1071, Հմր ԺԲ., էջ 1120-1141 (նոյնը՝ Մանուկ Աբեղեան, Երկեր, հտ. Ը., Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1985, էջ 330-366):

* * *

Այժմ որոշ փոքր քաղաքներ անենք աւելի Նոր ժամանակների՝ Նոյնապետ երախտաւոր մի հեղինակի՝ Սիրաք Գիւլբուղաղեանի «Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն» (1973 թ.) շատ արժեքաւոր եւ օգտակար ուսումնասիրութիւնից, որի վերջում կան այսպիսի եզրայանգումներ.

«Հնչիւնային ուղղագրութիւնն այն լաւագոյնն է, որին ձգտում են աշխարհի բոլոր լեզուները, իբրեւ սկզբունք հիմնալի է ու անթերի, բայց այն իրականութեանը հակադիր է եւ դժուար իրականաւորել»:

Ապա՝ «Իսկապէս, եթէ իւրաքանչիւր դարի մտաւորականութիւն իր լեզուի ուղղագրութիւնը փոխի իր դարի արտասանութեան համապատասխան, ի՞նչ կմնայ այդ լեզուի Նախնական վիճակից, ի՞նչ կժառանգեն սերունդները իրենց Նախորդների ստեղծած դարաւոր մշակոյթից: Քսաներորդ դարի անգլիացին չէր հասկանայ Շեքսպիրին... հայը՝ խորենացուն»:

«Անհաշտ պայքար պիտի մղել ուղղագրական կամայականութիւնների դէմ, դրանից է առաջանում գրաւոր խօսքի քաոսը: Աւելի լաւ է ունենալ դժուար, բայց միասնական, ազգի համար պարտադիր ու համընդհանուր ուղղագրութիւն, քան հեշտ, բայց ոչ ընդհանուր, կամայական: Անգլերէնի, ֆրանսերէնի, գերմաներէնի, ռուսերէնի ուղղագրութեան ուժը միասնականութեան մէջ է, ողջ ազգի համար պարտադիր լինելով մէջ: Այս բանը լաւ էր գիտակցում 1913 թ. Մ. Աբեղեանը եւ ընդգծում էր իր գեկուցման մէջ, բայց Նա չհետեւեց իր սկզբունքին եւ 1922 թուականին, իմանալով հանդերձ, որ արտասահմանի հայութիւնը, յատկապէս արեւմտահայ հատուածը, կոփմադրի, չի ընդունի Նոր ուղղագրութիւնը, պետական հրամանով օրէնքի ուժ տուեց իր Նախագծին: Սրանում էր Աբեղեանի վրիպումը, որի հետեւեալքով հայ ժողովրդի համար ստեղծուեց երկու տարբեր ուղղագրութիւն»:

«1922 թ. խախտուեց համահայկական միասնական ուղղագրութիւնը եւ ստացուեց մի ժողովուրդ՝ երկու լեզուով, երկու ուղղագրութեամբ»:

«1922 թուականին ստացուեց երկու լեզու՝ երկու ուղղագրութեամբ: Արտասահմանի հայութիւնը պահպանեց աւանդական

ուղղագրութիւնը, իսկ Հայաստանում եւ Միութեան հայկական օջախներում հաստատուեց հնչիւնային ուղղագրութիւնը՝ բացառութեամբ բաղաձայնների, որոնք մնացին ավանդական գրութեամբ: Ինչից զգուշացնում էր Աբեղեանը 1913 թուականին, տեղի ունեցաւ 1922 թ. իր իսկ միջոցով, իր իսկ նախագծով: Նոր ուղղագրութիւնն ինչ որ չափով կտրեց նոր սերնդին հայ մշակութային անցեալի ժառանգութիւնից՝ անհասկանալի կամ դժուար հասկանալի դարձնելով այն: Նպաստեց մեր ժողովրդի երկու հատուածների բաժանման խորացմանը: Բանաւոր խօսքով իրարից զատուած հատուածները զատուեցին նաեւ գրաւորով»¹:

* * *

Առաջացած կացութիւնը լաւագոյնս պատկերելու նպատակով ժամանակագրական ետդարձով բերենք 1925ի մի մարգարեական գնահատութիւն. «Մենք հայերս տասնուհինգ դարու ճոխ մատենագրութիւն մ'ունինք՝ գրաբար եւ աշխարհաբար լեզուներով, որ մեր մտաւոր սնունդն ու պարծանքը եւ ազգային գոյութեան հիմը կը կազմէ պատմութեան ու մարդկութեան առջեւ, եւ զոր պիտի մօտեցնենք նաեւ մեր ուսանողութեան մատաղ շրթներուն ու մտքին: Քաղաքակիրթ հին ազգերը պետք է կապուած մնան միշտ իրենց մտաւոր անցելոյն հետ, որովհետեւ անով պիտի գիտնան ու գիտցնեն, թէ իսկապէս փայլուն ավանդութեան ժառանգորդներն են իրենք, եւ ոչ անգիր քրդեր կամ գնչուներ, եւ անով պահանջեն իրենց գոյութեան իրաւունքը: Բայց երեւանեան ուղղագրութիւնը պատուար մը կը դնէ անցեալ մատենագրութեան եւ ապագայ սերնդին մէջ: Ինչպէ՞ս պիտի անցնի սա այդ պատուարին վրայէն: Բոլոր նախընթաց ստուար մատենագրութիւնը եւ բոլոր բառարանները վերստին տպագրել նոր ուղղագրութեամբ, այդ անկարելի է. Երեւանի պետութեան ամբողջ հարստութիւնը պիտի չբաւեր. եւ միւս կողմանէ մատենագրաց հոգին պիտի բողոքէր աղոր դեմ՝ իբր սրբապղծութիւն մը: Եթէ չենք կարող ուրանալ մեր անցեալը, եւ ոչ նոր ուղղագրութիւնը հաշտեցնել անոր հետ, ի՞նչ կը մնար ընել ուրեմն: Ուրիշ հնար չկար, բայց ինչ որ արդէն երեւանեան հրահանգը կը սահմանէր. «Հին բնագիրների հրատարակութիւնների մէջ պահել հին ուղղագրութիւնը, իսկ բարբառներով գաւառների մէջ՝

¹ Սիրաք Գիւրուղադեան, Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն, Երեւան, ԵՊՀ հրատ., 1973, էջ 346-348:

հեղինակների գործածած ուղղագրությունը»: Հետեւաբար ուսուցիչները հարկադրուած են նաեւ հայ ուսանողութեան սովորեցնել երկու ուղղագրութիւն միանգամայն, ինչպէս կը տրամադրէ նոյն վճիռը, այսինքն՝ մէկ ուղղագրութեան լուծը թէթեւցնել ջանալու ժամանակ՝ կրկին լուծ դնել անոնց պարանոցին վրայ»¹:

Վերջին մտքի առիթով նկատենք, որ վերջերս հանրակրթական դպրոցներում գրաբարի ուսուցում սկսելու վերաբերեալ «լուրջ առաջարկներ» են արւում. հասկանալի է, որ գրաբարն աւանդուելու է ոչ թէ «սովետական», այլ՝ իր ընտանի աւանդական ուղղագրութեամբ: Այսու՝ ըստ մեր անձնական փորձի վստահաբար յայտատատում ենք, որ միասնական բառապաշարով նոյն լեզուի երկու տարբեր ուղղագրութիւն դպրոցականներին պարտադրելը յանգեցնելու է կատարեալ աղէտի եւ բացարձակ անգրագիտութեան ու բաբելոնեան խառնակութեան: Այսինքն՝ դպրոցում գրաբարի դասաւանդում կարելի է սկսել մի՛միայն աւանդական ուղղագրութիւնը վերականգնելուց յետոյ:

Մեր եզրակացութիւնն էլ հետեւեալն է. քանի դեռ չի վերականգնուել հայերէնի աւանդական ուղղագրութիւնը, որի հիման վրայ էլ կկազմակերպուի նոյն հայերէնի եւ հայկականութեան դպրոցական ուսուցումը, ապա՝ վերջինի հիմքի վրայ էլ մեր դպրոցաւարտն ընդհանուր իմացութիւն կունենայ թէ՛ գրաբարի, թէ՛ միջին հայերէնի, այլեւ՝ մեր գրական լեզուի երկու ճիւղերի եւ հիմնական բարբառների մասին, չենք կարող վստահ լինել, որ մեր ազգային նկարագիրը եւ հայկական գրական մշակոյթի ապագան լիարժէք հայկականութիւն կունենան. այլապէս՝ ներկայիս հայերէնի ռուսաբանութեան փոխարէն վաղուանը պետք է լինի անգլաբանը, որի դրսեւորումներն արդէն յստակ նշմարւում են:

ГЕВОРГ ТЕР-ВАРДАНЫ - ПРОБЛЕМА НАШЕЙ ОРФОГРАФИИ - В

статье во первых утверждается, что «реформа» армянской орфографии в 1922 году был осуществлен в исключительно политических целях - для удоления и отключения армянского народа от своего многовекового литературно-культурного наследия. Далее приводятся выдержки из ценных исследований, опубликованных выдающимся филологом

¹ Վարդան վ. Հացունի, Երեւանեան ուղղագրութեան դէմ, Վենետիկ, Ս. Ղազար, 1925, էջ 16-17:

Мануком Абегианом в 1890 и 1913 годах, а также из вышедшей в свет в 1973 г. книги лингвиста Сирака Гюлбудагяна. С помощью этих выдержек доказывается, что традиционная армянская орфография должна быть восстановлена, лишь после чего стоит начинать обучение древнеармянского языка (грабара) в общеобразовательных школах, далее - целеустремленной и последовательной работой сделать армянскую литературную культуру более живой и энергичной, новое тесно связывая с нашим вековым наследием. Улучшая школьное обучение и повышая уровень использования классической нашей литературы во всех областях, мы должны сохранять наш язык как можно более чистым и безупречным.

GEVORG TER-VARDANYAN - THE PROBLEM OF OUR ORTHOGRAPHY

- The article first of all states that the "reform" of the Armenian orthography of 1922 had purely political purposes to cut and alienate the Armenian people from their centuries-old literary and cultural heritage. Afterwards, excerpts are brought from valuable studies published by the prominent philologist Manouk Abeghian in 1890 and 1913, as well as by the linguist Sirak Gulbudaghian published in 1973. These excerpts prove that the original Armenian orthography should be restored, and then in the secondary schools the classical Armenian (grabar) should be taught, and through consistent efforts make the Armenism of our literary culture more viable and vivid, tightly linking the new with our centuries-old heritage. By improving learning and increasing the level of its use in all areas, we must keep our language as clean and immaculate as possible.

ՄԱՐԱՏ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՅՆԱՑՈՒՄԸ՝ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ. ՍԾ ԾԱՌԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Լեզվաբանական տվյալների համադրելիության սկզբունքն իր հիմքում ունեցող «Universal Dependencies (UD) - Համընդհանուր կախվածություններ» նախագծում 2017-ից մշակվում է արդի գրական արևելահայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերի բանկը (UD_Armenian-ArmTDP, «Հայերենի ծառադարան»): Նախագծի շրջանակում ձևայնացվել է հայերենի քերականությունը:

Բանալի բառեր: Բնական լեզվի մշակում, Համընդհանուր կախվածություններ, ծառադարան, շարահյուսական կախումների ծառեր, կորպուս, բառանշատում, քերականական հատկանիշ, ծանոթագրում, պիտակավորում, տեքստի մեքենական մշակում:

ՍՈՒՏՔ

Բնական լեզուների մշակման հետազոտական ուղղությունը վերջին քսան տարում մեծ առաջընթաց է արձանագրել շարահյուսորեն ծանոթագրված կորպուսների շնորհիվ, որոնք անփոխարինելի են լեզվի կամ լեզվի մի առանձին շրջանի վիճակագրական վերլուծության ու մեքենական ուսուցման ալգորիթմների միջոցով լեզվաբանական հետազոտությունների ավտոմատացման համար: Այսպիսի կորպուսներում քերականությունների ձևայնացման ու տվյալների ծանոթագրման համակարգերը շատ հաճախ տարբերվում են միմյանցից հիմնականում տվյալ լեզվի նկարագրության քերականական որոշակի ավանդույթի կամ էլ հետազոտողների շրջանում ընդունված տեսական այս կամ այն մոտեցման պատճառով: Այս հանգամանքը դժվարացնում է տեքստերի գոյություն ունեցող մեքենական մշակման գործիքների կիրառումը նոր լեզուների մեքենական վերլուծության համար և սահմանափակում արդյունքների համադրելիությունը¹: Խնդիրը հաղթահա-

¹ Sten Joakim Nivre and Beáta Megyesi. 2007. Bootstrapping a Swedish treebank

րելու փորձերն առավելապես ուղղվել են ծանոթագրման միասնական համակարգի միջոցով լեզվաբանական համադրելի տվյալներ ապահովելուն¹ կամ այդպիսիք ծանոթագրման անհրաժեշտ համակարգի փոխարկելուն², կամ էլ երկուսը միասին³: Լեզվաբանական տվյալների համադրելիության սկզբունքն իր հիմքում ունի «Universal Dependencies (UD) – Համընդհանուր կախվածություններ» նախագիծը, որի շրջանակում մշակվել է արդի գրական արևելահայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերի բանկ («Հայերենի ծառադարան») և ձևայնացվել հայերենի քերականությունը:

«ՀԱՅԵՐԵՆԻ ԾԱՌԱԴԱՐԱՆ» ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

«Հայերենի ծառադարան» նախագիծը⁴ մաս է կազմում Universal Dependencies (UD) – «Համընդհանուր կախվածություններ» հարթակի, որը, տիպաբանական և կիրառական հետազոտական նպատակներով, քերականությունների ձևայնացման և տեքստերի լեզվաբանական ծանոթագրման միասնական մեթոդ է առաջարկում բնական լեզուների մեքենական մշակման համար⁵:

using cross-corpus harmonization and annotation projection. In *Proceedings of the 6th Workshop on Treebanks and Linguistic Theories (TLT)*, էջ 97–102.

¹ St'u Daniel Zeman, David Mareček, Martin Popel, Loganathan Ramasamy, Jan Štěpanek, Zdeněk Žabokrtský, and Jan Hajič. 2012. HamleDT: To parse or not to parse? In *Proceedings of the 8th International Conference on Language Resources and Evaluation (LREC)*, էջ 2735–2741:

² St'u Ryan McDonald, Joakim Nivre, Yvonne Quirnbach-Brundage, Yoav Goldberg, Dipanjan Das, Kuzman Ganchev, Keith Hall, Slav Petrov, Hao Zhang, Oscar Täckström, Claudia Bedini, Nuria Bertomeu Castello, and Jungmee Lee. 2013. Universal dependency annotation for multilingual parsing. In *Proceedings of the 51st Annual Meeting of the Association for Computational Linguistics (Volume 2: Short Papers)*, էջ 92–97:

³ St'u Reut Tsarfaty. 2013. A unified morpho-syntactic scheme of Stanford dependencies. In *Proceedings of the 51st Annual Meeting of the Association for Computational Linguistics (Volume 2: Short Papers)*, էջ 578–584:

⁴ Նախագիծն իրականացվել է ՀՀ «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի» (www.ansef.am) Lingu-4595 և Lingu-5008, ինչպես նաև [ISTC Research Grant](http://www.istc-research-grant.am) դրամաշնորհային ծրագրերի շրջանակում, YerevaNN (<http://yerevann.com/>) հետազոտական լաբորատորիայի հետ համագործակցությամբ և ֆ.մ.գ.թ. Հրատո Խաչատրյանի համադրեկավարությամբ: Հայերենի ձևային քերականությունը մշակվել է ԵՊՀ արաբագիտության ամբիոնի աշխատակից Աննա Դանիելյանի համահեղինակությամբ: Ծրագրի մասին հանգամանորեն տե՛ս՝ <http://armtreebank.yerevann.com/>: Համացանցային իղումների հասանելիությունը ստուգվել է 16.05.2019թ.:

⁵ St'u Joakim Nivre, Marie-Catherine de Marneffe, Filip Ginter, Yoav Goldberg, Jan Hajič, Christopher D. Manning, Ryan McDonald, Slav Petrov, Sampo Pyysalo, Natalia Silveira, Reut Tsarfaty, Daniel Zeman. 2016. Universal Dependencies v1: A Multilingual Treebank Collection. In *Proceedings of LREC*. Նախագծի կայքը՝ <http://universaldependencies.org>:

UD համակարգը կախվածությունների բացահայտման մեթոդով շարահյուսական ամբողջական կառույցների (որպես կանոն՝ նախադասությունների) վերլուծություն է: UD-ն հիմնվում է բայ-ստորոգյալի գերադասության և նախադասության բայակենտրոն կառուցվածքի մասին պատկերացումների վրա: Նախադասությունների իմաստաշարահյուսական կառուցվածքի վերլուծության ընթացքում որպես «շարահյուսական նվազագույն միավոր» նախադասության մեջ իրար անմիջականորեն ստորադրվում են բառերը՝ իբրև լրացական հարաբերություններով միմյանց կապակցված անջատ միավորներ, և քերականական կախվածություններն արտապատկերվում են շրջված ծառի տեսքով՝ որպես նախադասության շարահյուսական կախումների ծառ:

Նախագիծը 2019թ. մայիսի դրությամբ ներառում է շարահյուսական ծառերի նույն սկզբունքով ծանոթագրված 146 բանկ¹⁷ աշխարհի 83 լեզուներով²⁸:

UD նախագծի շրջանակում 2017-ից կառուցվում է արդի գրական արևելահայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերի UD_Armenian-ArmTDP բանկը (treebank, ծառադարան), որի 2.4 տարբերակը պարունակում է 1742 նախադասություն և 36.368 բառանիշ (թողարկվել է 2019թ. մայիսին): Այս ընթացքում մշակվել է հայերենի ձևային քերականություն³⁹, որը համարվել է նմուշային և ներառվել UD-ի տիպային քերականությունների շարքում:

Հայերենի ծառադարանի տեքստերը վերցված են հայ գեղարվեստական գրականությունից (բացառապես արձակ) և էլեկտրոնային մամուլից (հարցազրույց, մեկնաբանություն, հաղորդագրություն, լուր): Կան նաև իրավական տեքստեր (կառավարության որոշումներ, օրինագծեր, դատական վճիռներ) և դասագրքային օրինակներ: Ամենավաղ թվագրվող նմուշը 1976 թվականից է:

Ծանոթագրումը կատարվում է հետևյալ կերպ. «Հայերենի ծառադարան» կայքում տեքստի մուտքագրումից ու մատենագիտական նկարագրությունից հետո հատույթավորման կամ բանկային խմբի մեջ բաժանման մոդուլի միջոցով տեքստը տրոհվում

1 Տեսական առումով բանկը դիտարկվում է իբրև լեզվաբանական տվյալների համախումբ:

2 UD ծառադարանները հասանելի են <http://hdl.handle.net/11234/1-2988> կայքում:

3 Հայերենի քերականության ձևալսացման սկզբունքները համառոտագրված են <http://universaldependencies.org/hy> կայքէջում: Ամբողջական նկարագրությունները առանձին հղումների տեսքով հասանելի են նույն էջից:

(tokenization) և պարբերությունների, նախադասությունների և բառանիշերի (token)¹¹⁰: Այս փուլից հետո, կրկին մեքենական մոդուլի միջոցով, հիմնվելով նախապես մշակված բառարանների վրա, կատարվում է բառանիշերի ձևաբանական վերլուծություն: Բառանիշերից յուրաքանչյուրին վերագրվում է համապատասխան բառույթը (lemmatization)¹¹¹՝ հիմնվելով իմաստային և քերականական հատկանիշների վրա, ապա բառանիշերը խմբավորվում են հատուկ դասերում, այլ կերպ ասած՝ սահմանվում է նրանց խոսք-իմասային արժեքը (POS-tagging): Հատուկ պիտակների միջոցով թվարկվում են բառանիշերի իմաստային-քերականական խմբերը և քերականական կարգերը, եթե այդպիսիք առկա են (ձևաբանական պիտակավորում): Ապա ծանոթագրողները ձեռքով ստուգում և անհրաժեշտության դեպքում փոխում են բառանիշերի սահմանները, և եթե նոր բառանիշը չի նույնականացվում բառարանում (այսինքն՝ բառամթերքը նոր է), ապա ձեռքով ավելացվում է համապատասխան բառույթը և ձևաբանորեն պիտակավորվում: Ձևային նկարագրության վերջին փուլում նախադասություն կազմող բառանիշերը գնահատվում են որպես շարահյուսական բառեր, և վեր են հանվում վերջիններիս միջև անմիջական կախումները: Ծանոթագրողները բառանիշերի միջև ձեռքով նշում են շարահյուսական կապերը, և կախումների ծառը պահվում է UD ծառերի բանկերին հարմարեցված CoNLL-U տիպի նիշքում²¹¹, որն էլ բուն ծառադարանն է:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

UD-ում ձևաբանական նկարագրությունը ձևակազմական կամ ձևույթային ավանդական վերլուծությունն է, այն ամբողջական բառանիշի համար քերականական հատկանիշների թվարկում է վերջինիս վերագրվող պիտակների տեսքով: Քերականական կարգերն ու հատկանիշներն արտածվում են բառաձևերից (ըստ կազմության) և քերականական կախվածություններից (ըստ գործառության) ու ներկայացվում երեք մակարդակում.

1 Բառանշատման մեքենական այս մոդուլը, որը հիմնվում է հայերեն տեքստերի հայտնյալվորման կանոնների վրա, հասանելի է <https://armtreebank.yerevan.com/tokenization/process/> հասցեով:

2 Նիշքի կառուցվածքի մասին տե՛ս <http://universaldependencies.org/format.html>: Հայերենի ծառադարանի նիշքում ձախից աջ տրվում է նախադասության վեջ բառանիշի նույնական համարը, ապա բառանիշը, բառույթը, խոսքի մասը, քերականական հատկանիշները, շարահյուսական կապը, կախումը նախադասության մյուս բառանիշից, հավելյալ նշումներ/տառադարձում:

- բառույթի մակարդակ (ներկայացնում է բառիմաստը),
- խոսքիմասային պատկանելության մակարդակ (ներկայացնում է քերականական արժեք ունեցող վերացարկված իմաստը, որը զուգորդվում է տվյալ բառի հետ),
- քերականական բնութագրերի մակարդակ (ներառում է տվյալ բառին բնորոշ իմաստային-քերականական կամ զուտ քերականական հատկանիշները):

UD նախագծում բառանիշերը խմբավորում են վիճակագրական մոտեցմամբ ընդհանրական *բաց (ինքնուրույն կամ լիիմաստ)* և *փակ (ծառայողական)*, ու մնացորդային սկզբունքով՝ այլ դասերում: Առանձնացվում է 17 խոսքի մաս (տե՛ս Աղ. 1), որոնք Google universal part-of-speech tags-ի (UGT)¹¹² վերանայված տարբերակներն են: Խոսքի մասերի դասակարգման հիմքում իմաստագործառական սկզբունքն է, վիճելի դեպքերում առաջնություն է տրվում գործառական (շարահյուսական) սկզբունքին:

«Հայերենի ծառադարանում» կիրառվում են բոլոր 17 խոսքի մասերը, որոնք պարտադիր են UD նախագծում ներառված ծառադարանների համար: Համեմատությամբ ավանդական հայ քերականությունների՝ առանձին խոսքի մաս է հատուկ անունը (PROPN), տարանջատված են համադասական (CCONJ) և ստորադասական (SCONJ) շաղկապները, դերանվանական որոշիչները (DET) և առարկայանիշ (PRON) դերանունները, առանձնացվում է նաև օժանդակ բայը (AUX): Դերանունները հատկանշային-մակբայական կիրառության դեպքում մակբայներ են: Հարակատար դերբայը երբեմն դիտարկվում է ածական: Ածականներ են բոլոր դասական թվականները (գործառական սկզբունքի հիմքով): Տեքստի մեքենական հատույթավորման և ծանոթագրման առանձնահատկություններից ելնելով՝ առանձին խոսքի մասեր են տվյալ լեզվի կետադրական նշանները (PUNCT), տվյալ լեզվի համար կետադրական չհամարվող այլ գրանշանները, պատկերանշանները, հղումները, էլ. փոստի հասցեները (SYM), նաև տառային, տառաթվանշային կամ գրանշանային շարքերը, որոնք հնարավոր չէ խմբավորել խոսքիմասային մյուս դասերում (X)²¹³: Նման մոտեցումը թույլ է տալիս բոլոր բառանիշերի համար ունենալ խոսքիմասային պատկանելության պիտակ:

¹ S¹u Slav Petrov, Dipanjan Das, and Ryan McDonald. A universal POS tagset. In *Proceedings of LREC*. 2012.

² UD նախագծում հայերենի խոսքի մասերի սահմանման առանձնահատկությունները տե՛ս <http://universaldependencies.org/hy/pos/index.html>:

ԲԱՑ ԴԱՍԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ	ՓԱԿ ԴԱՍԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ	ԱՅԼ ՄԻԱՎՈՐՆԵՐ
ADJ - Ածական (Adjective)	ADP - Կապ (Adposition)	PUNCT - Կետադրություն (Punctuation)
ADV - Մակբայ (Adverb)	AUX - Օժանդակ բայ (Auxiliary)	
INTJ - Ձայնարկություն (Interjection)	CCONJ - Համադասական շաղկապ (Coordinating conjunction)	SYM - Նիշեր (Symbol)
	DET - Դերանվանական որոշիչ (Determiner)	X - Այլ (Other)
NOUN - Գոյական (Noun)	NUM - Թվական (Numeral)	
PROPN - Հատուկ անուն (Proper noun)	PART - Վերաբերական (Particle)	
	PRON - Առարկայանիշ դերանուն (Pronoun)	
VERB - Բայ (Verb)	SCONJ - Ստորադասական շաղկապ (Subordinating conjunction)	

Աղ. 1. Խոսքի մասերը և դրանց պիտակավորումը UD նախագծում:

Համակարգը, բացի խոսքիմասային պիտակավորումից, յուրաքանչյուր բառանիշի վերագրում է քերականական բնութագրեր՝ ըստ տվյալ խոսքի մասին բնորոշ քերականական կարգերի (հոլով, դեմք, թիվ, եղանակ և այլն): UD-ում առանձնացվում է 17 համընդհանուր այդպիսի կարգ՝ բայական և անվանական: «Հայերենի ծառադարանում» օգտագործվում է դրանցից 13-ը (չեն օգտագործվել սեռի (Gender), դասի (NounClass) անձներականության (Clusivity) ու բացարձակ ստույգ գործողության (Evident) քերականական կարգերը)¹: Ի տարբերություն խոսքիմասայինի՝ քերականական հատկանիշների պիտակավորումն ավելի ճկուն է և հնարավոր է ավելացնել տվյալ լեզվին բնորոշ հատկանիշներ՝ ընտրելով պիտակների Intersect interlingua for morphosyntactic tagsets ցանկից²: Հայերենի համար առանձնահատուկ են դիտվել ըստ դեմքի (Person[psor]) և ըստ թվի (Number[psor]) դիմաստացականության քերականական կարգերը: Դիմավոր բայերի հաստատական և ժխտական ձևերի նկարագրության զուգաձևությունը պահպանելու համար ժխտական դերբայը դիտվել է որպես ժխտման բուլյան

1 UD նախագծում հայերենի իմաստային քերականական խմբերի ու քերականական կարգերի ամբողջական ցանկը և նկարագրությունը տե՛ս <http://universaldependencies.org/hy/feat/index.html>:

2 Տե՛ս Daniel Zeman, and Philip Resnik. Cross-Language Parser Adaptation between Related Languages. In *Proceedings of IJCNLP 2008 Workshop on NLP for Less Privileged Languages*. 2008.

տիպի հատկանիշ¹ ունեցող պայմանական եղանակի դիմավոր բայաձև (Connegative)²:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԶԵՐԱՎԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ	ԲԱՅԱԿԱՆ ԶԵՐԱՎԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ
Gender – Զերականական սեռ	VerbForm – Դիմավոր և անդեմ ձևեր
Animacy – Անձի և ոչ անձի (իրի) առում	Mood – Եղանակ
NounClass – Անվան դաս	Tense – Ժամանակ
Number – Թվի կարգ	Aspect – Կերպ
Case – Հոլով	Voice – Սեռ
Definite – Անկայացում (որոշյալություն)	Evident – Բացարձակ ստույգ գործողություն
Degree – Համեմատության աստիճաններ	Polarity – Ժխտում
+Person[psor] – Դիմաստացականություն (առկայացում) ըստ դեմքի	+Connegative – Ժխտման բայաձև (ժխտ. դերբայ)
+Number[psor] – Դիմաստացականություն (առկայացում) ըստ թվի	Person – Դեմք
	Polite – Զաղաքավարական (հարգական) հոգնակի
	Clusivity – Անձներականություն

Աղ. 2. Զերականական կարգերի պիտակները և անվանումները UD նախագծում:

Բացի քերականական կարգերից, հայերենի համար առանձնացվել է 15 իմաստային-քերականական խումբ՝ համընդհանուր 6-ի դիմաց:

ԻՄԱՍՏԱՅԻՆ ԶԵՐԱՎԱԿԱՆ ԽՄԲԵՐ	
PronType	Դերանունների տեսակներ
+Distance	Ցուցականության շարքեր
NumType	Թվականների տեսակներ
+NumForm	Թվականների տիպեր (արաբական, հռոմեական, հայկական և այլն)
Poss	Ստացականություն (բուլյան հատկանիշ)
Reflex	Անդրադարձություն (բուլյան հատկանիշ)
+NameType	Հատուկ անվան տեսակներ (տեղանուն, անձնանուն, մականուն և այլն)
+AdpType	Կապերի տեսակներ (նախադրություններ, հետադրություններ, նախդրավորներ)
+ConjType	Շաղկապների տեսակներ (զուգադրական կիրառություններ)
Abbr	Հապավում, համառոտագրություն (բուլյան հատկանիշ)
+Hyph	Հատվածական բաղադրությունների առաջին անավարտ (գծիկավոր) բաղադրիչ
Foreign	Օտարալեզու (օտարազգի) բառեր, ոչ փոխառություններ (բուլյան հատկանիշ)
+Style	Ոճեր (ժողովրդական, խոսակցական, հնացած և այլն)
+Echo	Կրկնավոր հարադրությունների փոփոխված բաղադրիչ
+Typo	Տառասխալներով բաղանիշներ (բուլյան հատկանիշ)

Աղ. 3. Իմաստային քերականական խմբերի պիտակները և անվանումները UD նախագծում:

1 Ֆունկցիա բուլյան հանրահաշվում և մաթեմատիկական տրամաբանության մեջ: UD-ում այն օգտագործվում է միայն չհակադրվող հատկանիշները պիտակավորելու համար:

2 Դիմավոր և անդեմ բայերը UD համակարգում, զուտ փորձարարական օրինաչափություններից ելնելով, տարբերակվում են առավելապես եղանակի քերականական կարգի հատկանիշով:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱԽՈՒՄՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ

Շարահյուսական ծանոթագրումը UD-ում հիմնված է կախվածությունների բացահայտման Ստենֆորդի մոդելի վրա¹¹⁸ և ունի քերականական կախվածության 37 հարաբերություն: Մոդելը շեշտադրում է նյութական իմաստ արտահայտող (լիմաստ) բառերի միջև կախումների բացահայտումը, սպասարկու բառերը դիտվում են անմիջապես կախված վերջիններից և մշտապես ծայրային հանգույցներ են, որոնց վրա ընդհատվում են կախվածության շղթաները: Մոտեցման նպատակը կրկին նկարագրության համադրելիությունը պահպանելն է. նյութական իմաստ արտահայտող բառերի կապակցելիությունը հնարավորինս զուգաձև է տարբեր լեզուներում, մինչդեռ սպասարկու բառերով արտահայտվող լրացական հարաբերությունները կարող են արտահայտվել վերջավորություններով կամ գոյական ձևերով:

Հայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերը կազմելու համար օգտագործվել է հայերենին բնորոշ 15 կախվածության հարաբերություն, բացի համընդհանուր կիրառելի 36-ից (չի օգտագործվել ընդամենը 1 հարաբերություն, cf)²¹⁹: Հայերենի համար ընդունվել են բառերի միջև կախումների հետևյալ կանոնները. ենթական կախյալ է ստորոգյալից (nsubj-), կապերը կախված են խնդրառվող գոյականից (case, case:loc), ածականի իմաստը ճշգրտող մակբայը կախված է ածականից (advmod), ածականի կամ մակբայի իմաստը մասնավորեցնող գոյականները (*վարքով հայտնի*) կախված են դրանցից (obl), գոյականի իմաստը ճշգրտող խոսքի մասերը՝ գոյականից (nmod, amod, advmod:emph): Կախումները դրսևորվում են խնդրառությամբ, համաձայնությամբ և առդրությամբ:

Հայերենի ծառադարանում ուղիղ և հանգման խնդիրները (որպես ուղղական/հայցական և սեռական/տրական հոլովներով բայական լրացումներ) վերլուծվում են որպես անցողական և

1 Stanford Dependencies-ի մասին տե՛ս Marie-Catherine de Marneffe, Bill MacCartney, and Christopher D. Manning. Generating typed dependency parses from phrase structure parses. In *Proceedings of LREC*. 2006. Տե՛ս նաև՝ Marie-Catherine de Marneffe and Christopher D. Manning. The Stanford typed dependencies representation. In *COLING Workshop on Cross-framework and Cross-domain Parser Evaluation*. 2008, և Marie-Catherine de Marneffe, Timothy Dozat, Natalia Silveira, Katri Haverinen, Filip Ginter, Joakim Nivre, and Christopher D. Manning. Universal Stanford Dependencies: A cross-linguistic typology. In *Proceedings of LREC*. 2014.

2 «Հայերենի ծառադարանում» կիրառված շարահյուսական կապերի ամբողջական ցանկը տե՛ս <http://universaldependencies.org/hy/dep/index.html>:

անանցողական բայերի *անմիջական, բուն լրացումներ* (core arguments), ընդ որում, բայի հետ վերջիններիս շարահյուսական կապը՝ կախումը ստորոգյալից, նշվում է որպես obj (խնդիր), իսկ հանգման խնդրի դեպքում մասնավորեցվում որպես անուղղակի խնդիր (obj) միայն այն դեպքում, երբ միաժամանակ առկա են բայի և՛ ուղիղ, և՛ անուղղակի խնդիր լրացումներ: Մյուս հոլովներով և կապերով արտահայտված խնդիրներն ու պարագաները վերլուծվում են որպես «կողմնակի» *խնդիրներ և պարագաներ* (obl - oblique arguments and adjuncts)¹²⁰:

Բայերի՝ միայն մակբայներով արտահայտված պարագայական լրացումները նկարագրվում են advmod, իսկ պարագայական երկրորդական նախադասությունները՝ advcl լրացական հարաբերությամբ: Բայի բուն լրացում է համարվում նաև ենթական (nsubj), որը կարող է արտահայտվել նախադասությամբ (csbj): Բայական լրացումների շարահյուսական դիրքում իրացված երկրորդական նախադասությունների կախվածությունը բացահայտվում է ccomp և xcomp շարահյուսական կապերի միջոցով:

Շարահյուսական ccomp (clausal complement) կապը կիրառվում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները վերլուծելիս: Այս կապով է բացահայտվում նաև հայերենի «դիմավոր բայ + անորոշ դերբայի ուղիղ ձև» կապակցությամբ արտահայտված բարդ ստորոգյալների անորոշ դերբայը, եթե վերջինիս գործողն անհայտ է: Բարդ ստորոգյալների անորոշ դերբայները բուն բային ստորադրվում են նաև xcomp (open clausal complement) կապի միջոցով, երբ դրանց գործողը/ենթական հայտնի կամ վերականգնելի է նախադասության իմաստից: xcomp կապը կիրառվում է չեզոք, նաև վերադրառու (վերացական) բայերի միջոցով ենթակային վերագրվող հատկանիշը ծանոթագրելիս, այլ կերպ՝ անվանաբայական ստորոգյալները վերլուծելիս (*թվալ գեղեցիկ, երևալ խելացի, համարել դավաճան*) ընդունվում է, որ առկա է կրկնակի ստորոգում տրամաբանական ենթականերով:

Կապակցող սպասարկու բառերը, որոնք հայ քերականությունները նախադասության ինքնուրույն անդամ չեն համարում, UD-ում նախադասության կառուցվածքի անմիջական տարրեր

¹ Բուն և օժանդակ լրացումների մասին տե՛ս Ա. Դանիելյան, Մ. Յավրումյան, խնդիրներն ու պարագաները շարահյուսական ծառերի UD_Armenian-ArmTDP բանկում: Չեկուցման թեգեր, Ջահուկյանական ընթերցումներ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 7-8 հունիսի, Երևան, 2018:

են ձայնարկությունների, ներդրյալ միավորների (parataxis, discourse) հետ մեկտեղ: Շարահյուսորեն վերլուծելի են նաև օժանդակ բառերը (օժանդակ բայ, եղանակիչ, ժխտական բառ-մասնիկ, թարմատար), որոնք հայ քերականություններում բառաձևի առանձին գրվող բաղադրիչներ են:

Կայուն բառակապակցությունները (հարադրություններ, բաղադրյալ անվանումներ, դարձվածքներ) դիտվում են «բազմաբառ արտահայտություններ» (multiword expressions), որոնցում կախյալները որպես ծայրային հանգույց ծանոթագրվում են կախվածության, ըստ էության, բառակազմական արժեք ունեցող հարաբերություններով (compound, flat, fixed, goeswith):

ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐ

«Հայերենի ծառադարանը» կիրառելի է ինչպես հայերեն տեքստերի մեքենական վերլուծության գործիքներ, վիճակագրական մոդելներ մշակելու, այնպես էլ տեքստի մեքենական մշակման համակարգերի թեստավորման ու գնահատման համար: Առաջին հնարավորությունն օգտագործվել է տվյալահենք (data-driven) կիսահսկողական ուսուցման (semi-supervised learning) COMBO ներդրումային ցանցի¹²¹ հենքով հայերեն տեքստի մեքենական վերլուծության առցանց մոդուլ ստեղծելու համար²²²:

«Հայերենի ծառադարանի» նախագծում աշխատանքները շարունակվելու են երկու ուղղությամբ. ընդլայնվելու է ծառադարանը մինչև նվազագույնը 100 հազար բառանիշ, հղկվելու է հայերենի ձևայնացված քերականությունը՝ որպես ոլորտային հետազոտություններում կիրառելի ստանդարտ:

СИНТАКСИЧЕСКИ АННОТИРОВАННЫЙ КОРПУС АРМЯНСКОГО ЯЗЫКА И УНИВЕРСАЛЬНЫЕ ЗАВИСИМОСТИ - МАРАТ ЯВРУМЯН

- В последнее время наблюдается значительный интерес к схемам аннотаций, которые могут последовательно применяться ко многим

¹ St' u Piotr Rybak and Alina Wroblewska. Semi-Supervised Neural System for Tagging, Parsing and Lematization. In *Proceedings of the CoNLL 2018 Shared Task: Multilingual Parsing from Raw Text to Universal Dependencies*, էջ 45-54, Brussels, Belgium, October 31 - November 1, ACL, 2018.

² Մանրամասները տե՛ս <https://github.com/Armtreebank/End-to-end-Parser>, գործիքի առցանց փորձական տարբերակը հասանելի է <https://parser.yerevann.com/> կայքում:

языкам. Основываясь на усилиях по унификации морфологических и синтаксических аннотаций, проект «Универсальные зависимости» (Universal Dependencies, UD) ставит целью представить кросс-лингвистически применимый набор тегов частей речи и отношений зависимостей, а также большое количество единообразно размеченных банков синтаксических деревьев. В статье на примере банка синтаксических деревьев армянского языка детализируется схема аннотации по стандарту UD, описываются особенности аннотации. Результаты доступны на сайте <https://armtreebank.yerevann.com/>

Ключевые слова: обработка естественного языка, универсальные зависимости (UD), трибанк, синтаксически аннотированный корпус армянского языка, стандарты UD, схемы аннотаций, POS-метки, отношения зависимостей, морфологические особенности, токенизация.

UNIVERSAL DEPENDENCIES FOR ARMENIAN - MARAT YAVRUMYAN

- There has been substantial recent interest in annotation schemes that can be applied consistently to many languages. Building on several recent efforts to unify morphological and syntactic annotation, the Universal Dependencies (UD) project seeks to introduce a cross-linguistically applicable part-of-speech tagset, feature inventory, and set of dependency relations as well as a large number of uniformly annotated treebanks. I present Universal Dependencies for Armenian and detail the annotation to the UD standard, describing specific challenges and their resolution. The results and some tools and resources are available under open licenses from <https://armtreebank.yerevann.com/> ble under open licenses from <https://armtreebank.yerevann.com/>

Key words: natural language processing, Universal Dependencies, treebank, Armenian Treebank, UD standards, annotation schemes, POS tags, dependency relations, morphological features, tokenization, tokens, multiword expressions.

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՔՐԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՊԱՀԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԿԱՅԻՐ...

Գրողի կողմից: Ժողովրդի բնավորության, մտածելակերպի, կենսափիլիսոփայության գեղարվեստական արտացոլման եղանակներից մեկը բարբառային ու ժողովրդախոսակցական իրողությունների գործածությունն է:

Բարբառային բառերը գեղարվեստական գրականություն կարող են մուտք գործել ակամա՝ լեզվամտածողության թելադրանքով, և կանխամտածված՝ գեղարվեստական երկի ոճավորման նպատակով:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն ունեն ինչպես իմաստային, այնպես էլ ծագումնաբանական բազմազանություն: Հատկանշական է, որ ուսումնասիրվող գրականության մեջ գործածված բարբառային բառերի մի մասն անծանոթ է բարբառախոս միջավայրի սոր սերնդի բոլոր կամ գրեթե բոլոր ներկայացուցիչներին: Ուրեմն՝ գեղարվեստական խոսքը հաճախ դառնում է բարբառային բառերի պահպանման ու գործածության եզակի միջավայր:

Բանալի բառեր: Ժողովրդայնացում, գեղարվեստական գրականություն, ծագումնաբանական բազմազանություն, կենսունակություն, բարբառայնություն, լեզվամտածողություն, ոճավորում, հնդեվրոպական, փոխառություն, իմաստային, բարբառախոս միջավայր:

Գրողի կողմից՝ ժողովրդի բնավորության, մտածելակերպի, կենսափիլիսոփայության գեղարվեստական արտացոլման եղանակներից մեկը լեզվի ժողովրդայնացումն է: Իսկ լեզվի ժողովրդայնացման ուղիներից մեկը բարբառային ու ժողովրդախոսակցական իրողությունների գործածությունն է:

Հայ դասական և ժամանակակից գրողներից շատերն իրենց ստեղծագործությունների լեզվական միջոցների ընտրության շրջանակներն ընդլայնել են՝ ի հաշիվ լեզվի տարածական տարբերակների՝ բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների, որը

հայ լեզվաբանության և գրաքննադատության մեջ տարբեր ժամանակներում տարբեր կերպ է գնահատվել՝ բարբառային իրողությունները դիտվելով կամ գրական նորմայից շեղումներ, «ցածր» ոճի դրսևորումներ, կամ էլ բներանգ ստեղծելու, կերպավորման, ազգային հոգեբանության դրսևորման լավագույն միջոցներ և այլն:

Քննելով բարբառային իրողությունների դրսևորման առանձնահատկություններն ու նպատակադրումը՝ նկատելի է հեղինակի կողմից դրանց կամա և կանխամտածված ընտրությունը: Ակամա ընտրությունը հեղինակի լեզվամտածողության ինքնաբերական և բնական արտահայտությունն է: Բարբառը կամ խոսվածքը լեզվական այն տարբերակն է, որին մարդը (այս դեպքում՝ գրողը) տիրապետում է վաղ մանկությունից, և բարբառով է նրա գիտակցության մեջ ձևավորված քերականական տրամաբանությունը: Այդ մասին Հր. Աճառյանը գրում է. «Ամեն մի անհատ, որ գրում է որևէ մայրենի լեզվով կամ բարբառով, ինչքան էլ լավ իմանա այդ օտար լեզուն կամ բարբառը, այնուամենայնիվ, իր մայրենի լեզվից կամ բարբառից որևէ հետք կթողնի: Երբ մի վանեցի գրում է գրական հայերենով, լինի դա արևելյան թե արևմտյան բարբառով, անշուշտ, մի քանի տեղ որոշյալ բառերի ը հոդը կույ պիտի տա: Երբ Լեոն իր Հայոց Պատմության մեջ (Ա, էջ 609) գրում է. «Տիգրանից մոտ է ապրում», դրանով մատնում է իր դարաբաղի լինելը (Ղարաբաղի բարբառում մօտ նախադրությունը վերցնում է բացառական խնդիր, մինչդեռ ուրիշ բարբառներում սեռական-տրական խնդիր): Կամ երբ Մանանդյանն իր հրատարակած Նոնոսի մեջ (Marburg, 1903, էջ 5, ծան.) գրում է՝ պիտի լինի՛ր, փոխանակ՝ պիտի լիներ, դրանով մատնում է, թե խոսում է կարնեցոց բարբառը» [3-116]:

Բարբառային իրողությունների կանխամտածված ընտրությունը ոճական արժեք ունի, գեղարվեստական ստեղծագործության մեջ այդ միավորներն ունեն տարբեր գործառնություններ. բնութագրում են տվյալ տարածաշրջանի կենցաղը, բարբառը կամ խոսվածքը դարձնում են ավելի ճանաչելի՝ ընդլայնելով ընթերցողի պատկերացումը տվյալ բարբառի առանձնահատկությունների մասին և ստեղծելով համապատասխան բներանգ՝ գրական կերպարները դարձնում են ավելի գործուն, կերպավորումը՝ ավելի համոզիչ: Բարբառային բառերի գործածումով հարստանում են գեղարվեստական լեզվի ոճական և պատկերավորման հնարավոր-

րությունները, ավելի անկեղծ է դրսևորվում հեղինակի վերաբերմունքը, բարբառային իրողությունների միջոցով գեղարվեստական խոսքը դառնում է ավելի բնական, և ընթերցողը ավելի է կապվում հեղինակի՝ որպես ժողովրդի միջից ծագած կերպարի հետ: Բացի դրանից՝ բարբառային իրողությունների գործածությունը նպաստում է նաև բարբառների ու գրական լեզվի մերձեցմանը՝ բարբառների հաշվին բազմապատկելով գրական լեզվի զարգացման հնարավորությունները:

Ուսումնասիրության նյութը Արցախի ժամանակակից գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն են:

Արցախի գրողները Ղարաբաղի բարբառի կրողներն են, և նրանց ստեղծագործություններում դրսևորվող բարբառայնությունները մեծ մասամբ Արցախի տարածքի խոսվածքներին հատուկ իրողություններ են, որոնց մի մասը, բնականաբար, բնորոշ է նաև մյուս բարբառներին ու խոսվածքներին, մյուս մասն ինքնատիպ է, բնորոշ է միայն տարածաշրջանի խոսվածքներին:

Բարբառի հարուստ բառապաշարի հումքը Արցախի ժամանակակից գրողների ստեղծագործություններում դարձել է իրական պատկերների, տիպական կերպարների կերտման լավագույն միջոց: Դրանց գործածությունն ունի տեղական բներանգ ստեղծելու, ժողովրդի լեզվամտածողության և հոգեբանության ինքնատիպությունը ցույց տալու ոճական բեռնվածություն, գեղարվեստական խոսքին հաղորդում է աշխուժություն, կենդանություն, հարազատություն և անմիջականություն:

Ինչպես՝ *Որից վառվող-լույս տվող փիթեյան (պատրույգ) սնունդ է առնում [7-591]: Առհասարակ ամեն շնչավոր նեղ օրին քաշվում է իր սամբը (այստեղ՝ կողմ) [9-190]: Ասեմ, որ նմանների ու մեկ էլ՝ փահլևանի (լարախաղաց) երևալը մեր կողմերում զվարճանալու լավ առիթ էր դառնում [4- 82]: Սառույցը ցեխաջրի երեսը բարակ փառ (թաղանթ) էր կապել [8-376]:*

Գրողի կողմից բառի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն նրա տաղանդով, գեղագիտական ըմբռնումով, այլև երկի թեմատիկ առանձնահատկություններով, այն միջավայրով, որը ներկայացվում է ստեղծագործության մեջ: Եթե փորձենք ընդգծված բարբառային բառերը փոխարինել համապատասխան գրա-

կաններով, ապա կիսամրեն միջավայրի զգացողությունը և խոսքի բնականությունը: Հատկանշելի է մի իրողություն ևս. եթե այս կառույցները մի կողմից՝ սահմանափակում են ստեղծագործության «հանրամատչելիությունը», այսինքն՝ այլ բարբառակիր ընթերցողը հաճախ բառարանային ընթերցմամբ պետք է ընկալի համահեկքը, ապա մյուս կողմից՝ այդօրինակ գործածությունները դառնում են տվյալ հանրության լեզվական առանձնահատկությունների, նաև մշակույթի ճանաչողության իրական փաստեր:

Գեղարվեստական խոսքում կրկնակի արժևորվում են բարբառային այն բառերը, որոնք գրական փոխարինիչներ չունեն: Նման բառերը գրական լեզվին հատուկ նկարագրական միջոցներով փոխարինելը խոսքը ոչ միայն զրկում է վերոնշյալ որակներից, այլև սեղմությունից, դիպուկությունից: Այսպես՝

Մազան էլ ես կբերեմ, հյա որ գինին լավ եղավ, մի երկու բանկա էլ կապած կրմզուկ կբացեմ [8-241]: - Խմիչքի հետ գործածվող ուտելիքն էլ ես կբերեմ, հյա որ գինին լավ եղավ, մի երկու բանկա էլ կապած կրմզուկ կբացեմ:

Շունը իսկույն ետ է դառնում, ցանկանում է աստիճաններով բարձրանալ, բայց աստիճանների վրա խափանգը փակած է [8-401]: - Շունը իսկույն ետ է դառնում, ցանկանում է աստիճաններով բարձրանալ, բայց աստիճանների վրա դեպի ներքևահարկը կամ տանիքը բացված մուտքի վրա դրվող դռնակը փակած է:

Ընդգծված բառերը նշված իմաստներով փոխարինելով՝ կորչում են նկարագրության տիպականությունը, բներանգային առանձնահատկությունները, թուլանում դինամիկությունը, իսկ եթե հեղինակն ընտրել մոտ իմաստ արտահայտող այլ գրական բառեր (ինչպես՝ **մազա-ուտելիք, խափանգ-դռնակ** և այլն), ապա կտուժեր նկարագրության հասցեավորումը, հեղինակի ասելիքը կկորցներ ներգործության ուժը, խոսքի գեղարվեստական հատկանիշները կխամրեին:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն ունեն նաև ծագումնաբանական բազմազանություն: Դրանց մեջ մեծ է և՛ բնիկ բառերի, և՛ փոխառությունների թիվը: Բնիկ հայերեն բառերը կազմում են թե՛ գրական հայերենի, թե՛ նրա բոլոր տարբերակների բառապաշարի միջուկը, հիմնաշերտը:

Հատկանշական է, որ ուսումնասիրվող ստեղծագործություններում իմաստային հետաքրքիր ծավալումներ ունեն հնդեվրոպական ծագման այն միավորները, որոնք վկայված չեն հայերենի գրավոր հուշարձաններում, բայց առկա են հայերենի քիչ թվով բարբառներում, այդ թվում Ղարաբաղի բարբառում: Այդպիսի միավորներ են **հեռ** (հ.ե. ers, գրբ. եռ) – 1.եռալը, 2.ցավ, կսկիծ, **կեփ** (գրբ. գաբ, հ.ե. ghabh) – այստեղ՝ *զիստ, ազդր, Ի՞նչ ես կեփերդ բաց արել, բա դու սկի ամոթ չունե՞ս* [12-306]: **ճիթ** (հ.ե. gei) – ողկույզ-Մի *ճիթ խաղող բարձրացել էր գլխից վեր* [4-22];, **պող** – վառվող, կրակ կտրած ածուխ-Գոնե լուսացույցը, որ մթան մեջ **պողի** էր նման, շուտ կանաչեր [10-75];, **տալ** (հ.ե. dhel)- ծառի ճյուղ 8.*Երկու դյուցազուն ծառեր՝ ճղատարած ու հզոր, ամեն մի տալը մի ծառ* [8-229];, և այլ բառեր:

Պատմական զարգացման ընթացքում Ղարաբաղի բարբառի բառապաշարի հարստացման արտաքին աղբյուր է հանդիսացել հիմնականում արևելյան լեզուների (արաբերեն, պարսկերեն, թյուրքական լեզուներ) և ռուսերենի բառապաշարը: Արցախի գրողների ստեղծագործություններում բառապաշարի այդ շերտը ակտիվ կենսունակությամբ դրսևորվել է: Փոխառողն, անշուշտ, բարբառն է եղել, իսկ գրողների նպատակը ժամանակաշրջանի ժողովրդական խոսքն ու մտածողությունը ընթերցողին ներկայացնելն է: Հատկանշական է Ռ. Իշխանյանի նկատառումը. «Պետք է խստորեն տարբերել նախ իր՝ գրողի կատարած փոխառությունը օտար լեզվից, և այն փոխառությունը, որը ոչ թե գրողը, այլ բարբառն է կատարել» [5 - 91] :

Օրինակ՝ **մագազին/մաղազին** (ռուս. магазин, արաբ. magaz թրք. magaza, ֆր. magazin) – խանութ: *Կարծեցի՞ ոսկու մագազին ես: Աղջի, եղ ինչի՞ ես զուգվել* [12-307]: **Գրադուզ/գըրադուզ** (ռուս. градус, լատ. gradus) – ջերմության, հեղուկի խտության, սպիրտի թնդության աստիճանի չափման միավոր – *Որ ընկեր Սահրադյանը տանի գրադուզը ստուգի* [12-249], **Սարսաղ** (թրք. sarsak) – հիմար, տիմար- *Այ սարսաղ տերտեր, քեզ ո՞վ է իրավունք տվել* [12-42]: **Դայի** (թրք. dayə) – 1. քեռի, մորեղբայր, 2. տարեց տղամարդկանց դիմելու հարցական կոչական բառ -*Բա չգիտե՞ս, Կուքի դայի...*[1-62]: **Ափաշկարա** (թրք. apaşı-kar) – ակնհայտ՝ պարզորոշ՝ բացահայտ կերպով-Վանին քթի տակին նորից խնդմուղաց՝ *հիմա ափաշ-*

կարա [8-113]: **Չովուշ** (թրք. čovuş) – գգիր - Գիշերվա կեսին մեկ էլ տարածվում է չովուշ Թեմուրի ծայնը... [8-145]: **Մեզար** (արաբ. mezar) – մազից՝ բրդից գործած մեծ սփռոց, որի վրա շարում են խմորի գնդերը կամ թոնրից հանած տաք հացերը - Սոնա տատը մեզարը մեկնում էր հատակին, ինքը ծալապատիկ նստում... [8-224]: **Լղար** (պրսկ., թրք. lagar) – նիհար, վտիտ - Լող-լող կերպարանքում, երկար լղար դեմքին ու խռիվ բեղերին իջած լրջությունն էր հիմա ծիծաղելի [9-67] ևն:

Խնդրո առարկա գեղարվեստական ստեղծագործությունների մեջ ռուսական փոխառությունները քանակով գերազանցում են մնացած լեզուներից կատարած փոխառություններին: Հետաքրքրական է, որ Արցախի բանահյուսության լեզվի քննությանը նվիրված աշխատանքի մեջ Լ. Մարգարյանը նշում է, որ բանահյուսության լեզվում արևելյան լեզուներից կատարած փոխառությունները քանակով գերազանցում են ռուսական փոխառություններին: Պատկերն այդպիսին է նույնիսկ նորագիր բանահյուսական նմուշներում, չնայած թվում է՝ նորագիր բանահյուսական նմուշներում պետք է նկատվեր ռուսերեն փոխառությունների կտրուկ աճ՝ պայմանավորված վերջին տասնամյակներում բարբառ ներհոսած ռուսերեն բառերի մեծաքանակությամբ: Սա, ըստ Լ. Մարգարյանի, կարելի է բացատրել նրանով, որ բանասացները ավագ սերնդի ներկայացուցիչներ են, իսկ բանահավաքները բանահյուսական նմուշը փոխադրելիս նախանձախնդիր են նմուշի «բնօրինակային» առանձնահատկությունները պահպանելուն:

Գեղարվեստական գրականության պարագայում գրողի նախանձախնդրությունն ուղղված է տվյալ ժամանակաշրջանի ժողովրդի լեզվամտածողությունը ճիշտ ներկայացնելուն: Մեր կարծիքով՝ դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ, ի տարբերություն բանահյուսական լեզվի, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության լեզվի բառապաշարը հարուստ է ռուսերենից կատարած բարբառային փոխառություններով: Ինչպես՝ **չայնիկ** (ռուս. чайник) - թեյնիկ-Մենակ ձեր կոծկած կուժն ա կոտորվել, մեկ էլ մի չայնիկ [6-131]: **Կառավար** (ռուս. кровать) – մահճակալ - Մի՞տո՞ւ ա, որ քնում էիր էս կառավարին ես էլ՝ տափին [6-80]: **Մասկա** - (ռուս. маска, իտ. maschera, ֆր. masque) – դիմակ - Ինչո՞ւ է ներս մտել ձեռնոցներով ու սպիտակ

մասկայով [7- 218]: **Տելեգրեյկա** (ռուս. телегрейка) – տղամարդու մզդակած հաստ ու կարճ վերնագգեստ - Եկավ սապոգները քարշ տալով, տելեգրեյկան ուսերին ծռված ու գլխարկն աչքերը համարյա ծածկած [9- 82]: **Դոխտուր** (ռուս. доктор, լատ. doctor) – բժիշկ - *Բաղունց Հակոբ ապոր Լվարդը դռխտուր է դարձել, չէ՞* [1- 47]: **Շոփեր** (ռուս. шофер, ֆր. chauffeur) – վարորդ-Մաթևոսի համար քաղաքի հասուն աղջիկները վարժուհիներ են, երիտասարդները՝ վարսավիրներ կամ «շոփերներ» [12-89]:

Ծագումով փոխառյալ մի շարք բառեր բարբառում և մեր օրինակներում գործածվում են փոխատու լեզվում ունեցած բառիմաստից տարբերվող նոր իմաստով, մի շարք բառեր էլ զուգահեռաբար պահում են նաև փոխատու լեզվի իմաստը: Օրինակ՝ **քիլիսկյոշ** (պրսկ. kälīgüş) բառը փոխատու լեզվում ունի «*եռացրած*» իմաստը, իսկ բարբառում բառիմաստը մասնավորվել է և նշանակում է «*կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով և վրան յուղի մեջ խարկած սոխ լցնելով*»: Ինչպես՝ **Քիլիսկյոշ ... Կարո՞ղ ես եփել: Սիրիրում այնքան եմ հիշել մայրիկի եփած կերակուրները** [7- 379]:

Հանչախ (պրսկ. čākāčāk)-ը պարսկերենում ունի «*դրան թակիչ*» իմաստը, Ղարաբաղի բարբառում բառիմաստն ընդլայնվել է և ունի հետևյալ նշանակությունները. 1 ջրաղացի կրիճակին ամրացված ու ծայրով ջրաղացքարի վրա ընկած փայտե շերտիկ, որի ցնցումները հաղորդվում են կրիճակին, և աղուներ դանդաղորեն թափվում է քարի անցքի մեջ 2. փայտե հաստ ցից, որ խրում են գետնի մեջ, 3. փխբ. շատախոս մարդ: Մեր օրինակում էլ բառը գործածված է վերջին՝ փոխաբերական իմաստով: Համապատասխան պայմաններով թելադրված՝ առաջին երկու իմաստները գործածության նվազ հաճախականություն ունեն, մինչդեռ փոխաբերական իմաստով գործածությունը կենսունակ է: Ինչպես՝ **Գլուխը լուրջ-լուրջ տմբտմբացնում է Հանչախ Բենիկը** [12-31]:

փանջաք (պրսկ. fenče) բառը փոխատու լեզվում գործածվում է «*ձեռքի թաթ*» իմաստով, բարբառում բառիմաստի ծավալումով ունի «*մի ձեռքով՝ բռով տանելու Հափով քանակություն (խոտի, հացաբույսի և այլն)*» և «*տասը կամ քսան խուրճից բաղկացած փոքրիկ դեզ*» իմաստները: Ինչպես՝ **Լավ, ի՞նչ անենք, թե օրական վեց փանջաք հունձ ես անում** [12- 232]:

շաբաշ (արսկ. šabaš - կեցցե՛, շա՛տ լավ) բառը բառիմաստի շրջումով բարբառում կիրառվում է «հարսանիքի՝ տոնախմբության և այլնի ժամանակ նվագողներին, պարողներին տրվող դրամական նվեր» նշանակությամբ, ինչպես՝ Ինձ համար «Ջեյրանի» նվագիր, հիսուն ռուբլի շաբաշ եմ տալիս [12-45]:

քավթառ-ը (արսկ. kaթtār) փոխատու պահլավերենի «բորենի» նշանակությամբ բարբառում չի գործածվում: Այն ստացել է «տգեղ, ծեր (ջադու)» իմաստները և ունի ընդգծված բացասական երանգ: Ինչպես՝ Անամոթ, անամոթ քավթառ կին է, բայց այնպես է զուգվում-զարդարվում, կարծես հարսատեսի է պատրաստվում... [8-173]:

խալաթ (արաբ. xəlāt) բառը փոխատու լեզվի «ընծա, նվեր» իմաստին զուգահեռ ունի «տանը կամ աշխատանքի վայրում հագնելու երկար վերնազգեստ» իմաստը, ինչպես՝ Սերիկ, այդ ինչո՞ւ է խալաթդ սևացել [7-506]:

Արցախի և Չանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված որոշ բարբառային բառերի կենսունակությունը փորձել ենք որոշել՝ հարցում կատարելով տարբեր սերունդների ներկայացուցիչների շրջանում: Առանձնացրել ենք 50 բնիկ և փոխառյալ բարբառային բառեր, որոնք գիտեն և գործածում են 70-85 տարեկան բոլոր հարցվողները (12 հոգի) :

Այդ բառերի մոտ կեսը՝ **յուղոնիկ-1**¹¹ (հավերի ընտանիքին պատկանող վայրի կամ ընտանի փոքրիկ թռչուն), **քյափուռ-0** (անխիղճ, անգուր ձարդ), **դալբ-0** (1. կեղծ, խաբիսլված, 2. ծույլ, դանդաղաշարժ), **փանջաք-0** (տասը կամ քսան խուրձից բաղկացած փոքրիկ դեզ), **մազա-3** (խմիչքի հետ գործածվող ուտելիք), **քյոհլան-0** (արագաշարժ), **թամբաքյու-0** (մորմազգիների ընտանիքին պատկանող բույս, որի չորացրած և մանրացրած տերևները գործածում են ծխելու համար), **մաշալլա-3** (գոհունակություն, խրախուսանք, բարեմաղթություն արտահայտող բացականչություն՝ կեցցես), **մազալլու-0** (տեղը տեղին, համով, հոտով, 2. աշխույժ, հետաքրքիր), **քյառա-0** (ականջները կտրած), **դամիշ-3** (եղեգ), **դաբա-0** (կանացի երկար զգեստ), **խափանգ-0** (դեպի ներքնահարկը կամ տանիքը բացված մուտքի վրա դրվող դռնակ), **սարթ-0** (ած., 1. թունդ, բարկ, 2. համառ, 3. խիստ, դաժան, խստաբարո), **կուլփեհ-0** (գորգագործների երկաթե ատամնավոր գործիք, որով գործած ամեն շարքը ծեծում են՝ խիտ նստեցնելու՝ ամրացնելու

¹¹ Թվերով տրվում է համապատասխան բառն իմացողների քանակը:

համար), **ճաթ-0** (գարուց կամ կորեկից թխած հաց), **դիրմա-3** (1. փամփուշտի արճճե մանր գնդակ, 2. ած., փխբ. մանր (պտուղների մասին), **մութրուբ-0** (անճարակ, խեղճ ու կրակ), **չետվեր-0** (տարողության չափ, որ հավասար է 4 լիտրի, 2. այդպիսի տարողությամբ շիշ), **կեփ-2**, (կարթանման երկնյա փայտիկ, որ կապում են թակի՝ պարանի մի ծայրին, իսկ մյուս ծայրն անցկացնելով դրա միջով՝ բեռը պրկում), **դրյաթ-3** (ջանք, եռանդ, ուժ), դաբաղ-0 (խոշոր եղջերավոր անասունների վարաիչ հիվանդություն), **քյառա-0** (ականջները կտրած) անծանոթ է բարբառախոս միջավայրի 15-25 տարեկան բոլոր կամ գրեթե բոլոր հարցվողներին (50հոգի): Գեղարվեստական գրականության մեջ սրանց գործածությունն առավել արժևորվում է. դրանցով ոչ միայն կոլորիտ է ստեղծվում, այլև գրականությունը դառնում է այդպիսի բառային միավորների գործածության ու պահպանման եզակի միջավայր:

Հիմք ընդունելով այդ բառերի անծանոթությունը, ըստ այդմ նաև սակավ գործածությունը նոր սերնդի խոսքում՝ պայմանականորեն դրանք համարում ենք անկենսունակ միավորներ:

Այդ բառերի մի մասի (**կուփենճ, ճաթ, կեփ, թամբաքու, խափանգ, դաբա**) անկենսունակությունը պայմանավորված է նրանով, որ դրանք նշանակող իրերը, երևույթները դուրս են եկել կամ այլևս քիչ են գործածվում կենցաղում, իսկ մնացած բառերը գործածությունից դուրս են մղել դրանց գրական համարժեքները:

Առանձնացված բառերից համեմատաբար կենսունակ են **մուշտարի-48** (հաճախորդ, այցելու), **փառ-48** (թաղանթ), **աբուռ-47** (ամոթի, պատվի, պատկառանքի զգացում), **չոփ-47** (1.չոր ճյուղ, փայտի կտոր, 2. փխբ. շատ նիհար), **ցաք-48** (փշոտ թուփ), **ճկոռ-50** (կքվել), **թագնիլ-45** (ստել՝ շան, գայլի, արջի մասին), **լազաթ-48** (1 հաճույք, բավականություն, 2. ած. հաճելի բավականություն պատճառող), **կռոճ-49** (շաքարի, քարաղի և այլնի ամբողջական կտոր, գուլճ), **դսմաթ-44** (բախտով վիճակված բաժին), **գյուլ-50** (1.լճակ, 2. փոսի մեջ հավաքված ջուր), **դորթ-39** (ճիշտ, ճշմարիտ), **չոլախ-42** (ոտքից կամ ձեռքից հաշմանդամ, կաղ), **յալ-42** (1.սարալանջ, 2.ծիու և այլ կենդանիների վզի մազ), **սատոր-47** (փայտի հաստ կոճղ, որի վրա փայտ կամ միս են ջարդում, կտրտում), **օյին-48** (1.խաղ, խաբեբայություն, 2.մեկ ամբողջություն կազմող խաղի մի մասը, 3. մեկի գլխին բերած փորձանք),

փիալա-48 (վերևը՝ լայն, տակը նեղ հախճապակե բաժակ՝ առանց ունկի) բառերը, դրանց իմաստները գիտեին հարցվածների 80 տոկոսից ավելին: Դրանք հաճախ են հանդիպում խնդրո առարկա ստեղծագործություններում:

Այս բառերը հաճախական գործածություն ունեն նաև այսօր: Ի տարբերություն սրանց՝ ներքոբերյալ բառերը կարելի է համարել միջին կենսունակություն ունեցող բառեր: **Արդո-9** (խոշոր աղացած հացահատիկ, որով կերակում են անասուններին), **դալլաք-9** (վարսավիր), **ռուզի-9** (բարիք, բերք, ապրուստի միջոց), **փիթե-լա-18** (պատրույգ), **սամբ-20** (1.նպատակահարմար եղանակ, 2. կողմ, որոշ ուղղությամբ ընկած բնակավայր), **խախալ-21** (խոշոր անցքերով մաղ՝ ցորենը գարին, ընդեղենը մաքրելու համար), **արսըգ-25** (1.անհոգ, ոչնչով չմտահոգվող, 2. անամոթ, անպատկառ, 3. դիմացկուն (բույսերի մասին), **քիլինկյոշ-25** (կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով և վրան յուղի մեջ խարկած սոխ լցնելով), **դիյամաթ-33** (սաստիկ ցուրտ, սառնամանիք), **չանչախ-27** (շատախոս մարդ), **Նամարդ-24** (տմարդի, ստոր մարդ), **խախալ-21** (խոշոր անցքերով մաղ՝ ցորենը, գարին և այլ ընդեղենները մաքրելու համար), **դուզդուն -35** (ագռավ):

Հարցումների արդյունքները վկայում են, որ բարբառի զարգացման ընթացքն անընդհատական է, և այն արտացոլում է հասարակական կյանքի տեղաշարժերը: Ըստ այդմ բառային մի շարք միավորներ աստիճանաբար արտամղվում են: Այս դեպքում գրավոր հուշարձանը՝ գեղարվեստական ստեղծագործությունը, դառնում է այդ բառերի ճանաչողության տարածք ու պահոց:

Այսպիսով՝ բարբառային բառերը գեղարվեստական գրականություն կարող են մուտք գործել ակամա՝ լեզվամտածողության թելադրանքով, և կամա՝ գեղարվեստական երկի ոճավորման նպատակով:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն ունեն ինչպես իմաստային, այնպես էլ ծագումնաբանական բազմազանություն: Ուսումնասիրվող ստեղծագործություններում իմաստային հետաքրքիր ծավալումներ ունեն ինչպես հնդեվրոպական ծագման և հայերենի գրավոր հուշարձաններում չվկայված միավորները, այնպես էլ բարբառային փոխառությունները: Արցախի ժամանակակից գրողների ստեղծա-

գործություններում մեծ թիվ են կազմում ռուսերենից կատարված բարբառային փոխառությունները, ինչը բացատրվում է նրանով, որ այդ հեղինակները ապրել և ստեղծագործել են խորհրդային և հետխորհրդային տարիներին: Հատկանշական է, որ ուսումնասիրվող գրականության մեջ գործածված բարբառային բառերի մի մասն անձանոթ է բարբառախոս միջավայրի 15-25 տարեկան բոլոր կամ գրեթե բոլոր հարցվողներին: Ուրեմն՝ գեղարվեստական խոսքը հաճախ դառնում է բարբառային բառերի պահպանման ու գործածության եզակի միջավայր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Երևան, «Ամարաս» հրատ., 2008, 595 էջ:
2. Աճառյան Հ.Հ., Հայերեն արմատական բառարան, 1-4, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1971-1979, 697- 688-636-676 էջ:
3. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, Հայպետհրատ, 1951, 608 էջ:
4. Ավետիսյան Ն., Սրտի կայծեր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2013 էջ:
5. Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, «Միտք» հրատ., Երևան, 1965, 237 էջ:
6. Խանզադյան Ս., Երկերի ժողովածու, հ.6, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1983, 606 էջ:
7. Հակոբյան Վ., Չատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պլուս» տպ., Ստեփանակերտ, 2010, 665 էջ:
8. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 468 էջ:
9. Ղահրիբյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, 248 էջ:
10. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Երևան, 2007, 94 էջ:
11. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, «Էդիտ պրինտ» հրատ., Երևան, 2013, 84 էջ:
12. Օվյան Վ., Կապույտ տարիներ, «Դիզակ պլուս» տպ., Ստեփանակերտ, 2007, 527 էջ:

ХУДОЖЕСТВЕННАЯ ЛИТЕРАТУРА КАК СРЕДА ХРАНЕНИЯ И АКТИВНОГО УПОТРЕБЛЕНИЯ ДИАЛЕКТНЫХ СЛОВ - РЕНА МОВСЕСЯН

- Одним из художественных способов отображения характера народа, образа мышления, жизненной философии является применение диалектных и разговорных реалий со стороны писателя. Диалектные слова могут проникнуть в художественную литературу непроизвольно, под влиянием языкового мышления, а также преднамеренно, для стилизации художественного произведения. Диалектные слова, примененные в произведениях арцахских писателей, имеют как смысловое, так и этимологическое многообразие. Примечательно, что в изучаемой нами литературе часть диалектных слов незнакома для всех или почти всех представителей нового поколения диалектной среды. Значит, художественное слово часто становится единственной средой сохранения и применения диалектных слов.

Ключевые слова: *популяризация, художественная литература, этимологическое многообразие, живучесть, диалектизм, языковое мышление, стилизация, индоевропейский, заимствование, смысловой, диалектная среда.*

FICTION AS AN ENVIRONMENT FOR THE STORAGE AND ACTIVE USE OF DIALECTAL WORDS - RENA MOVSESYAN

- One of the artistic ways of the writer's reflection of the character of people, the way of thinking, the philosophy of life is the use of dialectal and colloquial realities. Dialectal words can penetrate into the fiction literature involuntarily, under the influence of linguistic thinking, and intentionally, for stylization of the work of art. Dialectal words used in the works of Artsakh writers have both a semantic and etymological diversity. It is noteworthy that in literature some of the dialectal words are unfamiliar to all or almost all representatives of the new generation of the dialectal environment. Hence, the artistic word often becomes the only environment for the preservation and use of dialectal words.

Key words: *popularization, fiction, etymological diversity, vitality, dialectism, linguistic thinking, stylization, Indo-European, borrowing, semantic, dialectal environment.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՒՄԸ

Բանասիրական գիտությունների թեկնածու ՀԴՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ

ՄԱՅՐԵՆԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ԳՈՐԾՈՆ

Հայ ազգի անկողոպտելի ժառանգությունը նրա ոգու գերերևույթական կենսունակությունն է, որի լինելության գրավականը հայեցի մտածելակերպն անադարտ պահելն է: Ազգային արժեհամակարգային ցուցիչներին ուղղված մարտահրավերներն ընդունելու և տեսակի պահպանմամբ մրցունակ դառնալու, ինչպես և ազգային մտածելակերպը արմատական էափոխումներից պահպանելու գործում առանձնաշնորհյալ դերը պատկանում է մայրենի լեզվին: Էթնիկ հանրության միասնական արժեքային տարածությունը դառնում է խոցելի, հատկապես երբ այդ հանրությունն սկսում է նահանջել իր ազգային լեզվից: Նման դեպքում ակտիվանում են չարժեքների ազդեցությունները, որի արդյունքում նկատելի են դառնում որոշակի փոփոխություններ ազգային մտակառույցում և բնականորեն նաև էթնիկական ինքնության կառուցվածքում: Մեծանում է ապառազեղենացման վտանգը:

Բանալի բառեր: Ինքնօրինակ, առաքելություն, ռազմավարություն, ակունքներ, ինքնություն, ազգագրական, մտածելակերպ, հոգեկերտվածք, վարքածև:

Մարդու խոսքը նրա մտքի և ներաշխարհի նկարագիրն է, մտածելակերպի ինքնօրինակ կենսավորումը: Այն նաև խտացումն է այն բանաձևման, որով հատկորոշվում և գնահատվում են ոչ միայն մարդու հոգեկերտվածքն ու ազգային մտածելակերպը, այլև վերջինիս կողմից կարգավորվող, նրան անհատականացնող բարոյահոգեբանական առանձնագծերը:

Թե՛ անհատները, թե՛ հանրությունները սովորաբար իրենց բարոյահոգեբանական կերպավորումը ժառանգում են ազգային ինքնության հիմքերը կազմող արքետիպերից: Շատ դեպքերում հենց անգիտակցականի մակարդակում հաղորդակցվելով սեփական նախապատմության ու նախաերի հետ՝ նրանք դառնում են

ոչ միայն դարերով փոխանցվող բարոյականների կրողները, այլև դրանց հարընթացության անխաթարությունն ապահովողները: Ինչ խոսք, միշտ չէ, որ, հատկապես էթնիկ մշակույթի կեցավայրից դուրս ապրողներին, հաջողվում է հաղթահարել ժամանակի խութերը և մնալ իր ազգային տեսակին հատուկ բարոյահոգեբանական ցուցիչների կրողը: Դրանում իր հոգեավեր դերակատարությունն են ունենում հատկապես մայրենի լեզվից հեռանալն ու այլևս մայրենիով չմտածելը: Անվերապահ է պնդումը. ազգային հանրության՝ իր էթնիկ անփոփոխականների հետ հաղորդակցական կապը պահպանող ցուցիչների շարքում առանձնաշնորհյալը եղել և մնում է մայրենի լեզուն, քանզի, ինչպես Գրիգոր Գուրզադյանն է ասում. «Ազգ լինելու, ժողովուրդ լինելու, պետություն լինելու առաջին պայմանը լեզուն է»¹:

Մեր ժամանակներում, երբ ցանցային կառավարման անսահման հնարավորությունների օգտագործումով գերիշխող դիրքում է տեղեկատվական հաղորդակցությունը, համաշխարհայնացման օր օրի ծավալվող կեցադաշտում հայտնվող հանրությունները ազգային ինքնությունը կորցնելու տագնապներ են ապրում: Փոխվում են աշխարհաքաղաքական փոխհարաբերությունները: Ինչպես սոցիալ-քաղաքական, այնպես էլ ազգամշակութային կյանքում խորքային խմորումների, արագընթաց փոփոխությունների պայմաններում նշանակալից ազդեցություններ է կրում հանրության էթնիկ ինքնագիտակցությունը: Արդյունքում ազգային կերպարի ամբողջականությունն է խախտվում. կորուստներ են հայտնվում բարոյահոգեբանական դաշտում, աստիճանաբար սկսում են խամրել ազգային տեսակի կոթողայնության ընդգծումները, և բնականորեն, փոխպայմանավորվածության գործող ներքին օրինաչափության համաձայն, հաջորդում է ազգային տեսակի մրցունակության թուլացումը:

Անկասելի են աշխարհում կատարվող բնապահպանական փոփոխությունները. քիչ կամ շատ կանխատեսելի հետևանքներն այնքան էլ մխիթարական չեն ազգային տեսակի պահպանման գոյադաշտում: Այդ փոփոխություններն իրենց հետ բերում են նաև բանականության էափոխ տարրեր, որոնք, քաղաքական արդիականացման համատեքստում առնված, նկատելի ազդում են հան-

¹ Գր. Գուրզադյան, Էսսեներ, հարցազրույցներ, «Չանգակ» հրտ., Ե., 2012, էջ 127:

րության էթնիկ ինքնության վրա: Վերջինս՝ որպես քաղաքակրթական և հոգեբանական երևույթ, բավականին զգայուն է փոփոխությունների նկատմամբ: Եվ քանի որ ինքնությունն առաջին հերթին մտակառույց է, բնական է, որ յուրաքանչյուր նկատելի փոփոխություն արտահայտվում է նաև ազգային մտածելակերպի մեջ կատարվող տեղաշարժերով, որոնց համընթաց փոփոխություններ են կատարվում նաև կեցության դաշտում. ի հայտ են գալիս կենսակերպերի ու վարքաձևերի նոր թելադրականներ: Այս առումով եթե հայոց ինքնության հարացուցային պատկերը հատկապես քրիստոնեականության և լուսավորականության համատեքստում դիտարկենք, ապա կարող ենք շեշտել, որ այն նշանավորվում է ազգային մտակառույցի ինքնօրինակ գոյակերպով:

Հայտնի ճշմարտություն է. վտանգաշատ կենսապայմաններում ապրող էթնիկ հանրության միասնական արժեքային տարածությունը դառնում է խոցելի, հատկապես երբ այդ հանրությունն սկսում է նահանջել առաջին հերթին իր ազգային լեզվից: Նման դեպքում ակտիվանում են չարժեքների ազդեցությունները, որի արդյունքում նկատելի են դառնում որոշակի փոփոխություններ ազգային մտակառույցում և բնականորեն նաև էթնիկական ինքնության կառուցվածքում: Մայրենիից հեռացող, նրան խորթացող անհատի համար հետզհետե թուլանում և ի վերջո կորստյան եզրին է հասնում իր իսկ ինքնության էթնիկական հիմքերի նշանակության գիտակցումը: Նման հետևանքների ամենացավոտ հետևանքներից մեկն էլ այն է, որ անհատի մոտ խեղաթյուրվելու չափ նվազագույնի է հասնում գիտակցումը նաև այնպիսի կարևոր գործոնների, ինչպիսիք են իր՝ էթնիկական որոշակի տարածքի պատկանելու փաստն ու զուտ էթնիկ ակունքներից սկիզբ առնող և դրանով սնուցվող մշակույթի կրողը լինելու իրողությունը:

Ուստի և, ինչպես ազգային ինքնության գիտակցման դաշտում կատարվող փոփոխություններն ընտրովի ընդունելու, այնպես էլ ազգային մտածելակերպը արմատական էափոխումներից պաշտպանելու համար հարկ է իրատեսորեն գնահատել արժեհամակարգային ցուցիչներին ուղղված մարտահրավերները և չկորցնել տեսակի պահպանման մրցունակությունն ապահովելու նվազագույն հնարավորությունն անգամ:

Առկա և սպասվելիք բոլոր արժեհամակարգային խաթարում-

ների դեմն առնելու և ծագող դժվարությունները հաղթահարելու գործում առանձնաշնորհյալ դերը դարձյալ պատկանում է մայրենի լեզվին, հայոց պարագայում ոսկեդենիկ հայերենին: «Մեր լինելության, գոյության անժխտելի պայմանն է լեզուն: Աշխարհի քարտեզի վրա ու երկրի հսկա տարածքում գրաված իրենց մի պստիկ տեղը, դարերի ճակատին գրած հայ ու Հայաստան անունը այս փոքրիկ հողն ու ժողովուրդը նվաճել են լեզվով: Լեզուն ապրելու ձև է, լեզուն աշխարհ է, սնունդ ու պայքարի միջոց, ինքնարտահայտման ու ինքնադրսևորման եղանակ...», - հարցազրույցներից մեկում ասել է Հրանտ Մաթևոսյանը, վարողի հարցին՝ ի՞նչ է լեզուն Ձեզ համար, պատասխանել է. «Լեզուն հայրենիք է»¹²: Ամեն ինչ է ասված:

Գիտենք, որ հայ ժողովրդի համար արժեհամակարգային գերակայություն ունեցող գործոններից են ազգապահպան միջոցների և պետականաշինության արդիականացման մշակույթի ձևավորումն ու պատմական արդարության վերականգնման համահայկական ձգտումը: Աշխարհաքաղաքական նոր պայմաններում հայկականության մրցունակության ապահովման համար կարևորվող այս երկու գործոնները կարող են նշանակալից դերակատարություն ունենալ ազգային ինքնության հարացույցների վերաարժևորման ու արդիականացման պարագայում: Իսկ դա հարընթաց, հարաճուն գործընթաց է, որը ենթադրում է ոչ միայն հայկականության մրցունակությունն ապահովող գործողությունների համալիր ամբողջականության պահպանում, այլև ազգային անվտանգությանն ու ֆիզիկական լինելիությանը սպառնացող արհավիրքներին համազգային դիմակայության միջոցների ապահովում: Այդ միջոցների շարքում իր հիմնային տեղն ունի ազգային ոգին, որի զորության պատվարներն են հայրենի հողը, լեզուն, արքեպիսկոպոսը, կրոնական ինքնագիտակցությունը, պատմագրությունը, ավանդապատումներն ու առասպելները և այլն:

Յուրաքանչյուր էթնիկ հանրություն ունի կեցության և կենսական արժեքների ըմբռնման ու իմաստավորման իրեն տրված կերպերը: Դրանց գոյակերտման գործում կարևոր դեր է հատկացվում մայրենի լեզվին՝ որպես ազգային մտածելակերպի և հոգեկերտվածքի հիմնարար գործոնի: Լեզուն նաև բարոյազգացական ու կենսական արժեքների հանդեպ հանրության ունեցած վերաբերմունքն արտահայտող ցուցիչ է: Ի դեպ, որպես այդպիսին, այն

1 «Հայություն», թիվ 6, 1996 թ.:

առանձնանում է նաև այնպիսի գործառնություններով, ինչպիսիք են վարքագծային կարգավորումները:

Հայի այսօրյա տեսակը հատկորոշվում է վարքագծային որոշակի դրսևորումներով, որոնք հետևանք են ազգային հիշողության խորաշերտերում պահվող, այդպես էլ երբեք անցյալ չդարձող բազմաթիվ ցավոտ կետերի գոյության. և ոչ միայն, քանզի, ինչպես Գարեգին Նժդեհն է ասում. «Հայը հաւասարապէս տառապում է ինչպէս իր գոյութեան ծանրածանր պայքարի առթած ցաւից, այնպէս էլ աշխարհի եւ մարդկային ազգի անկատարելութեան գիտակցութիւնից: Նրա համար աշխարհը դեռ այն չէ, ինչպիսին կարող է լինել, եւ պէտք է որ լինի: Միերը՝ հայկական Էպոսի հերոսը - իմա՛ ինքը հայ ժողովուրդը - մերժում է գոյութիւն ունեցող աշխարհակարգը՝ լաւագոյնի պահանջ զգալով եւ առաջադրելով»¹³:

Ավանդական և արդիական արժեքների զուգորդում-ներձուլումով և վերաարժեւորումով է հնարավոր մասամբ ձերբագատվել ցավոտ հիշողություններից և ապագա աշխարհի պատմության մեջ հայության արժանապատիվ կեցության էջը բացելով՝ փորձել կերտել հզոր Հայաստանի տեսլականը:

Ստակառուցողական տեղաշարժերի պայմաններում ապրող ժամանակակից հանրությունը, բնականաբար, ուղղակի թե անուղղակի ճանապարհներով զգում է այդ տեղաշարժերի հետ կապված ինչպես բարոյահոգեբանական, այնպես էլ ինքնակարգավորման գործընթացը ղեկավարող գործոնների ազդեցությունների թե՛ դրական, թե՛ բացասական հետևանքները: Նրա վրա հավասարապես են ազդում թե՛ ազգային, թե՛ համաշխարհային նյութական և հոգևոր այն տարաբնույթ արժեքները, որոնք կոչված են հանրային կյանքը կարգավորող կազմակերպական գործոնների դեր կատարելու: Դրանք սովորաբար կազմում են ազգային մշակույթի հիմնաշերտերը և իրենց նշանակությամբ անգնահատելի են տվյալ մշակութակիր հանրության կյանքում:

Երբ վերազգայնացող մտածելակերպը սկսում է խաթարել ազգային ինքնության պահպանման հարընթացությունը, և մեծանում է ապագեղենացման վտանգը, առաջանում է մայրենի լեզվի, մայրենիով ստեղծվող գրականության դերն առավելագույնս արժևորելու անհրաժեշտությունը, քանի որ հենց ազգային լեզվով ստեղծված ազգային գրականությունն արդեն իսկ ինքնության

1 Գ. Նժդեհ, Հատընտիր, «Հայաստան» հրատ., Եր., 2001, էջ 252:

արթնացումը, կենսունակությունը պահպանող ոգի ու գաղափար է, մտածելու կերպ ու ոճ, ապրելու ձև: Հիշենք մեր մտածելակերպը գաղտնագրած առաջին խտամիտքը՝ «Ճանաչել զիմաստությունն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Սա ինքնության հաստատման ու պահպանման գաղտնիքների դռները բացող պատգամ-բանալին է՝ հայատառ փոխանցված բոլոր սերունդներին:

Գրականությունը այն առանձնակի հոգևոր արժեքներից է, որոնք ակտիվորեն մասնակցում են «մարդու ներքին, հոգևոր մաքրագործությանը, ներքին ծեսին»¹⁴. այն մարդկային մտքի թռիչքների, հոգու տեսանելի ու անտեսանելի խորքերի, ոգու զորության ու ամենակարողության մասին պատմող, մարդու մտքից ծնվող, ապրում-գզացմունքներից հյուսվող գերերևույթական իրողություն է: Գերերևույթական այդ իրողությունը իրապատումների և հրաշապատումների այն լուսավոր աշխարհն է, որտեղ մարդը գտնում է իր ինքնությունը կազմող ազնիվ ու գեղեցիկ հույզերի, կրքերի, անկոտրում պայքարի, հաղթանակների և պարտությունների մարմնավորումն ու արտացոլումը:

Ցավոք, համաշխարհայնացման և մարդկությանը սպառնացող իրական ու հավանական վտանգների պայմաններում թուլանում է գրականության ոգեկերտիչ դերը, որոշակիորեն փոփոխվում են սոցիալական կեցության հիմնական բնութագրիչները. կատարվում են էթնիկ արժեքների վերաարժևորումներ, տեղի է ունենում միջանձնային հարաբերությունների ու փոխհաղորդակցումների ապաիրականացում (*վիրտուալացում*). իր տեղն ավելի ու ավելի է կայունացնում աշխարհաքաղաքացիական մտածելակերպը:

Վտանգաշատ ապառգեղենացման այս արագընթացությունը, անխնա ոչնչացնելով ավանդական շատ հատկանիշներ, վերացնում է նաև ազգային անգնահատելի արժեքներ: Իշխող է դառնում օգտապաշտությունը. մերկ շահը աստիճանաբար դիմազրկում ու բարոյազրկում է մարդուն. դժվարանում է «մարդուն մարդ պահելու» գործը:

Ինչ խոսք, չենք կարող աշխարհից մեկուսանալ, չենք կարող ապրել առանց համաշխարհայնացման հորձանուտների մեջ թաթախվելու: Ազգերն իրենց կամքով չէ, որ հայտնվում են արժեկործան խառնարաններում: Այնուամենայնիվ, նրանց վերապահված

¹⁴ Հ. Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և Նորալատոնականությունը, Եր., 2004, էջ 17:

Ե ընտրության հնարավորությունը. կարող են գնալ իրենց ճանապարհով (թող որ լինի դժվար ու փշոտ), կարող են աշխարհի համացանցը մտնել՝ պահպանելով իրենց հոգեկերտվածքը, դարերով ձևավորված իրենց ազգային ենթագիտակցական հիշողությունը, իրենց մշակույթը, ծնվելու, ապրելու, պայքարելու իրենց կերպը, իրենց ձևը: Մեր դեպքում պետք է կարողանանք պահպանել հայի այն տեսակը, որ հազարամյակներ շարունակ աստղերի հետ խոսել է և՛ Զարահունչի քարեղեն լեզվով, և՛ բանաստեղծի քանքարաշատ խոսքով, որ այդպես հանճարեղորեն կարողացել է բացահայտել տիեզերագիտության խորախոր գաղտնիքները՝ մեկտեղ արարելով առ Աստված հղված ամենաբանաստեղծական աղոթքները: Հայը այն տեսակն է, որ կարող է և՛ *տեխնակրատացվել*՝ աշխարհին համավազ, և՛ մնալ ոչ միայն «երագի մեջ երագող ու անցնող», այլև քարը տառ ու խաչքար դարձնող, քարին լեզու տվող...ու երագային նրբամտությամբ բանաստեղծորեն միշտ մնալ բանաստեղծական:

Անկասելի, անխուսափելի իրողություն է: Կա և լինելու է համաշխարհային տեխնացանցի գերիշխանությունը: Եվ հայը համաքայլ է լինելու այդ հարընթացին՝ աշխարհին ու երևույթներին նայելով հայի աչքերով, շարունակելու է մտածողության ու զգացմունքային աշխարհում նոր ոլորտներ հայտնագործել հայկականության դիտանկյունով:

Եվ ի լրումն. հայը չպետք է շփոթի օտարահանդուրժողականությունը օտարամոլության ու օտարամետության հետ: Ժխտող չկա, որ առանց օտար լեզուների, առանց օտար մշակույթների իմացության և առանց համաշխարհային տեխնացանցին միանալու չենք կարող առաջանալ միջազգային զարգացմանը համաքայլ: Հայ իրականության մեջ բոլոր ժամանակներում արժևորվել է օտար լեզուների իմացությամբ աշխարհի քաղաքրթական մշակույթին մոտ լինելու, սովորելու, դրականը ներմուծելու գաղափարը: Հայոց մեծերը միշտ էլ խրախուսել են համամարդկային առաջադեմ գաղափարների, բարոյական արժեքների թափանցումները մեր արժեհամակարգ. փայլուն վկայությունը, եթե պատմության շատ ավելի խորքերին չդիմենք, կլինի հենց ոսկեդարյան ժամանակաշրջանի մեր որդեգրած մշակութային քաղաքականությունը: Սակայն պատմությունը նաև դասեր քաղելու էջեր է թողել, որոնք պատգամում են չկորցնել ազգային բարոյահոգեբանական զգո-

նությունը. չմոռանալ՝ հայը օտարը սովորել, յուրացրել է ոչ թե ազգայինի հաշվին, այլ ազգայինը հարստացնելու համար. ի դեպ, և ոչ միայն. այլ նաև իր ունեցածով ուրիշին հարստացնելու համար (փաստեր՝ ինչքան ուզեք):

Հայն ունի հոգեմտավոր հզոր սեփականություն հանդիսացող ազգային մշակույթ, որն աշխարհին օտար լեզուներով ներկայացնելն օրապահանջ է, օրախնդիր հրամայական, և այդ իրականացնողն առաջին հերթին հայեցի մտածողությամբ հայ մարդը պետք է լինի: Իսկ ինչ վերաբերում է ազգի ներքին կյանքին, ապա անվերապահ է պահանջը. էթնիկ արժեհամակարգը պահող-պահպանող փոքր թե մեծ արժեք ներկայացնող ցանկացած իրողություն սերունդներին փոխանցելու գործառնություն իրականացնել մեր ոսկեդենիկ մայրենիով, քանի որ այդ ճանապարհով է հնարավոր կարգավորել անհատի ինքնավերադարձի ընթացքը՝ այդպիսով ապահովելով նրա՝ ազգային ինքնության ակունքների գիտակցումն ու ճանաչումը:

Մայրենիով ավելի հաղթահարելի են դառնում դեպի այն աշխարհը տանող ուղիները, որտեղ անհատը կարող է գտնել իր ինքնությունը կազմող առանձնագծերի մարմնավորումները: Իսկ սեփական ինքնության արժեւորումը նրան անվերապահորեն կտանի դեպի ազգային ինքնության գիտակցումը, առանց որի յուրաքանչյուրի կյանքում ինչ-որ բան անպայման պակաս կլինի: Այս առումով հիշատակելու արժանի է Վիլյամ Սարոյանի խոստովանությունը՝ «Ես չեմ կարող իմ ինքնության մասին մտածել հայությունից դուրս: Սա ինձ համար այնքան հիմնական է, որքան կյանքի առաջին կայծը: Ես պարտական եմ ամեն բանի համար այն անպատմելիին, որ մեր յուրաքանչյուրի ներսում է, և որը գալիս է յուրաքանչյուրի արմատից, հողի մի մասից և մշակույթի մի մասից»¹:

Մայրենին հետզհետե կորցնող, օտար արժեքներով սնուցվող և անխուսափելիորեն ապագայնացվող անհատի հոգու բնապահպանական անխաթարությունն ապահովելը դժվար գործ է: Այլևս մայրենիով չմտածող, լավագույն դեպքում այն կենցաղային մակարդակում գործածող մարդու ազգային մտածելակերպի և հոգեկերտվածքի որակափոխումներն անխուսափելի են, քանի որ փոփոխվում են ոչ միայն արժեքային ըմբռնումներն ու ընկալումները, այլև ազգային կողմնորոշիչների ազդեցություններն են թուլանում,

¹ Ն. Վիրաբյան, Հայ դասական գրողներ, Վիլյամ Սարոյան, «Էդիթ պրինտ» հրտ., Ե. 2011, էջ 12:

և հետզհետե խամրում է նաև դրանց նշանակության գիտակցումը: Արդյունքում խաթարվում է իր ազգային ինքնությունը գիտակցող անհատի մտակառույցի, հուզաշխարհի ու կամակառույցի ներդաշնակությունն ապահովող եթնիկ նկարագրի բնածին տարրը:

Մայրենիով ինքնաճանաչման ուղիներին վերադարձող ժողովուրդը միշտ գտնում է պարտվողականության կորստաբեր զգացողությանը չտրվելու կենսապահական միջոցը: *«Դառնանք ցեղաճանաչ,- պատգամում է Նժդեհը,- քանզի միայն նմանն է դառնում ակտիվ ուժ, քանզի ժողովուրդները միայն ինքնաճանաչությամբ են դառնում որոշ աշխարհայեցողութեան տեր, իսկ նմանը դառնում է ավելի ստեղծագործ: Ցեղաճանաչութիւնից զուրկ ժողովուրդը իր նորաբոյս սերունդին կուտայ սխալ դաստիարակութիւն, կ'ունենայ սխալ քաղաքականութիւն եւ սխալ ռազմավարութիւն»*¹:

Ազգի համար բոլոր բախտորոշ պատմական պահերին հայոց քաղաքական վերնախավը մտածել է լեզվի և ինքնության հետ կապված հարցերի նկատմամբ նոր մոտեցումներ մշակելու մասին: Վահան Տերյանը գրում է, որ որպես ազգ գոյատևելու *«ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդն անդադար պիտի ստեղծե այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատչյալներ են»*²: Ազգի ինքնության առհավատչյալ արժեքների շարքում անվերապահ գերակա տեղ միշտ հատկացվել է մայրենի լեզվին, քանի որ լեզուն ինքը հենց կարևոր դեր է կատարում որպես անհատի և ազգային հանրության ինքնությունը կերտող գործոն:

Տերյանից առաջ Խաչատուր Աբովյանն արդեն շեշտել-կարևորել էր լեզվի և հավատի՝ որպես ազգապահական գործոնների դերը ազգային ինքնության գոյակերտման գործընթացում:

Յուրաքանչյուր ժողովրդի յուրօրինակ դիմագծի, ինքնության և լինելիության հաստատում հանդիսացող հատկորոշիչները նրա էության մասն են ու հավերժ ուղեկիցը: Հայերի ազգային կյանքին հավերժորեն ուղեկցող հատկանիշների մեծ մասը ձևավորվել է դարերի ու հազարամյակների ընթացքում և արտացոլվել ու պահպանվել է, ինչպես արդեն նշել ենք, նրա լեզվի, այդ լեզվով ստեղծված գրականության էջերում: Այդ հարուստ ու հակասական դարաշրջաններում հոգևոր վերելքի հզոր գործոններից մեկն էլ եղել է գիտական միտքը. այն սերունդներին փոխանցել է գիտականորեն

¹ Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 375:

² Վ. Տերյան, Երկեր, Բանաստեղծություններ, գրականագիտ. հոդվածներ, Նամակներ, Ե., 1989, էջ 346:

մտածելու, վերլուծելու, դիտարկել-քննելու մտակառուցողական հզոր ժառանգականություն, օժտել իմաստնությամբ, նրանց մղել ամենակարող բանականության ոլորտը, դարձրել խոհական, մաքառող ու արարող: Ահա ինչ է գրում Հայկ Ասատրյանը. «Հայն այն ժողովուրդներից է, որոնք դեռևս հնագույն ժամանակներից օժտուած են պատճառախուզական իմացականությամբ: Նախաքրիստոնեական շրջանի տիեզերածնական նրա դիցաբանությանից մնացած փշրանքները հաստատում են, որ դա իմաստապաշտ ժողովուրդ է»¹:

Իմաստապաշտ ժողովուրդը չէր կարող չպատկերացնել այն արհավիրքը, որ կարող էր սպառնալ ինքնության ցուցիչները կորցրած ազգային հանրությանը:

Հայոց ազգային կյանքին հավերժորեն ուղեկցել են պատերազմներն ու թշնամիները: Թերևս պատճառներից մեկն էլ այն ցավալի իրողությունն է, որ հայի ինքնության հատկանիշների մեծ մասը ձևավորվել է նրա պատմության ամենաողբերգական և ամենահերոսական դարերից մեկում՝ 5-րդ դարում: Այդ դարաշրջանում հոգևոր վերելքի հզոր գործոնը հայերենի գրավորացումն է, որի շնորհիվ անսախադեպ մեծանում են ազգային ինքնության գիտակցման, ինքնաճանաչման հնարավորությունները: Գրավոր լեզուն դառնում է անփոխարինելի այն միջոցը, որով սերունդներին են փոխանցվում հոգեկերտվածքի, մտածելակերպի և զգայակերպի այն բոլոր ցուցիչները, որոնք էթնիկ ինքնության գոյակերտման ու պահպանման հիմնական գործոններն են:

Արժանվույսն գնահատելով լեզվի և էթնիկ ինքնության նշանակությունը ժողովրդի կյանքում, նշենք, որ այդ նշանակության դերի հնարավոր նվազեցումը լի է տեսակի լինելությանը սպառնացող վտանգներով, քանի որ այն ենթադրում է երկրի մշակութային և ազգագրական պատկերի, ազգապահպան և պետականաստեղծ բնութագրիչների (լեզու, հավատք, ազգային դպրոց, ազգային հերոսապատումներ և այլն) մասնակի կամ, որ վատագույն դեպքում կարող է լինել, ամբողջական արժեզրկում և կորուստ: Բարեբախտաբար, ինչպես Հայկ Ասատրյանն է գրում. «Հայը իր ոգին շարժման մեջ է դնում, երբ կորցնում է իրականության հողը»²⁹: Շարունակենք Նժդեհի խոսքով՝ «Ցեղը կոսմիքական սկզբունք է - դա նշանակում է,

1 Հ. Ասատրյան, Ուժեղ և ճշմարտություն // Հ. Ասատրյան, Հատընտիր, «Ամարաս» հրտ., Ե., 2004, էջ 19:

2 Հ. Ասատրյան, Հատընտիր, Ե., 2004, էջ 121:

որ ժողովուրդների պատմության սաղմերը պիտի փնտրել իրենց արեան եւ երկրի բնության մէջ: ...Մեր արեան մէջ դրուած է մեր ցեղի գաղափարը - հայկականը, բնագանցութիւնը, նպատակաբանութիւնը, ինչպէս եւ այդ վերջինների իրականացման համար անհրաժեշտ զօրութեանականութիւնը, կարողական ոյժերը»¹:

Մայրենին օգնում, հուշում է կերպերն ու միջոցները, որոնցով հնարավոր է դառնում «մեր արեան մէջ դրուած մեր ցեղի գաղափարը» զգոն պահել, ապահովել վերադարձը ցեղի ակունքներին, ավանդական արժեքներին: Մանավանդ որ, բարեբախտաբար, արդի ժամանակաշրջանի հասարակություններում գործում է արմատավորված հետաքրքրությունների մի մեծ շրջանակ, որի կիզակենտրոնում էթնիկության բազմատարր դրսևորումներն են՝ կրոնական, քաղաքական, ազգագրական, բարոյահոգեբանական, կրթական, մշակութային և այլն: Թերևս ճանապարհ է՝ այդ շրջանակի ընձեռած հնարավորություններից օգտվելով՝ ինքնավերադարձի միջոցով ապահովել ազգային ինքնության անխաթարությունը: Թե չէ՝ կարող ենք նաև կորսվել աշխարհի ապագայնացնող խաղերի հորձանուտում: Չնայած լավատեսության պարագայում կարող ենք նկատել, որ հայոց մտածելակերպի և հոգեկերտվածքի հիմնային գծերից մեկը ինքնության պահպանման էթնիկ ձգտումն է. դիտարկման վկայություններն իրենց բազմաթիվ դրսևորումներն ունեն առասպելներում, էպոսում, վարքագրական և պատմագեղարվեստական բազմաթիվ երկերում:

Լեզուն՝ որպէս ազգային ինքնության ճանաչողությունն ընդլայնող և խորացնող միջոց, անփոխարինելի դերակատարություն ունի նաև կրթության ազգային բովանդակության ռազմավարությունն իրականացնելու գործում: Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի տված հարցազրույցներից մեկում կարդում ենք. «Մասնավորապէս ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչների համար լեզուն ոչ միայն հաղորդակցության, այլև մտածելու, հայտնագործելու շատ կարևոր միջոց է:Լեզվի ճշգրտության, դիպուկության, խորության և այլ առանձնահատկությունները բացառիկ դեր են կատարում գիտական աշխարհում:Լեզուն ինքնին մտածողություն է:Կատարյալ լեզուն ծնում է կատարյալ մտածող»²: (Ի դեպ, աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Գրիգոր Գուրզադյանն անթաքույց գոհունակությամբ է իր մի խոհագրությունում պատ-

1 Գ. Նժդեհ, Հատընտիր, Ե., 2006, էջ 617:

2 Գարուն, թիվ 2, 1985, էջ 30:

մում գիտությունների ակադեմիայի այն ժամանակվա նախագահ Վիկտոր Համբարձումյանի խստության ու պահանջկոտության մասին, որ նա ցուցաբերում էր ակադեմիայի ասպիրանտուրան ընդունվողների հանդեպ՝ հայերենից քննություն հանձնելիս՝ որպես պարտադիր պահանջ բոլոր մասնագիտությունների համար: Նա գրում է. «Չի կարելի ասել, որ արդյունքները երևելի են, բայց գոնե կա ծգտում, որոշակի դրվածք՝ հասցնել ամեն մի երիտասարդի գիտակցությանը, որ մտնել հանրապետության գիտությունների ակադեմիա՝ առանց իմանալու մայրենի լեզուն, անբնական է: Այո՛, պետք է փակել ակադեմիայի դռներն այն մարդու առջև, որը չունի հարգանք իր մայրենի լեզվի հանդեպ»¹):

Թե ինչ դեր է հատկացվում հասարակության հոգեկերտվածքում լեզվին, պայմանավորվում է ազգային նվաճումներով հարստացած կրթական մշակույթ ունեցող դպրոցական համակարգով:

Կարևորելով ազգային լինելության ամենահզոր պատվարներից մեկի՝ լեզվի դերը մեր ժողովրդի կյանքում՝ հարկ է ելակետային դարձնել այդ անփոխարինելի արժեքի ոգեկերտման առաքելությունը՝ նկատի առնելով, որ այն, իր մեջ ամփոփելով ժողովրդի դարավոր պատմության, հոգեկերտվածքի, կենսափիլիսոփայության ու պատմության, դավանած արժեհամակարգի ու բարոյականության առանձնահատկությունները, սերունդներին սովորեցնում է ժողովրդի հավաքական իմաստության դասերը և պատգամում պահպանել հայրենասիրության և ազգային արժանապատվության գիտակցման՝ դարերով մաքրագործված սկզբունքները:

Այն քանիցս Գողգոթա բարձրացած ժողովրդին սովորեցնում է նաև, որ «Վաղվա օրը այսօրվա սխալներն է ուղղում»² (Ներսես Ավինյան):

Հայ ազգի անկողոպտելի ժառանգությունը նրա ոգու գերերևույթական կենսունակությունն է, որի լինելիության գրավականը հայեցի մտածելակերպն անխաթար ու անաղարտ պահելն է: Եվ այդ է այսօրվա սխալներն ուղղելու հոգսը վաղվա օրվա ուսերին չծանրացնելու միջոցը:

1 Գրիգոր Գուրզադյան, Էսսեներ, հարցազրույցներ, էջ 42-43:

2 <https://ladyblog.am> > haykakan-xratner

РОДНОЙ ЯЗЫК, КАК ФАКТОР НАЦИОНАЛЬНОГО МЫШЛЕНИЯ

- ЗУХРА ЕРВАНДЯН - Неотъемлемым наследием армянской нации является его сверхъестественная жизнестойкость духа, залог существования которого есть сохранение чистоты армянского мышления. Привилегированная роль в деле сохранения национального мышления от коренных существенных изменений, а также принятие вызовов, направленных на показатели системы ценностей и становление конкурентоспособности в сохранении вида, принадлежит родному языку. Область распространения единой системы ценностей этнической общности становится уязвимой, особенно когда эта общность начинает отступать от национального языка. В таком случае активизируются влияния неценностей(лжеценностей), в результате которого становятся видны некоторые изменения в национальной структуре мышления, и, естественно, в структуре этнической сущности возрастает опасность упадка духа.

Ключевые слова: *своеобразный, миссия, стратегия, истоки, самостоятельность, этнографический, менталитет, духовный уклад, форма поведения.*

NATIVE LANGUAGE, AS A FACTOR OF NATIONAL MENTALITY -

ZOUKHRA YERVANDYAN - Inherent heritage of Armenian nation is his exceptional vitality of spirit, and the preservation of purity of Armenian mentality is the guarantee for its existence. Privileged role in preservation of national mentality from radical essential changes, as well as acceptance of challenges directed against system of values and establishment of competitiveness in preserving the type, belongs to native language. Range of united values of ethnic community becomes vulnerable, especially when that community starts to step back from native language. In that case the influence of non-values is being activated, as a result can be seen some changes in the structure of national mentality, and, naturally, the danger of despondency is increasing in the tructure of ethnic essence.

Key words: *distinctive, mission, strategy, origins, self-reliance, ethnographical, mentality, moral lifestyle, form of behavior.*

ՄՀԵՐ ԲՈՒՄՈՒՆՑ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԸ ԵՎ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ

(ըստ «Կարմրաքար» վեպի)

Ա. Բակունցի բառապաշարում բազմաթիվ բառեր կան, որ, կարծում ենք, նոր գրական հայերենի մեջ տարածվել են հենց մեծ գրողի երկերի միջոցով: Դրանցից հաճախականությամբ աչքի է ընկնում **կածան** բառը, որի առաջին բացատրությունը ներկայացնում է Գրիգոր Տաթևացին: **Կածան** բառով բարբառախոսներն ունի բազմաթիվ կազմություններ՝ **սըռնըկածան, վըռնըկածան, կըծըռնահար, կըծըռնաթակ, կըծըռնալուս, կըծըռնալիծոր||կէծանալծոր, կէծանհիլծոր, ծըլկածան||ծալկածան** և այլն:

Բնագրային բազմաթիվ օրինակներից էլ նկատելի է դառնում, որ Ա. Բակունցը տուրք է տվել ոչ թե գրական լեզվում տարածված **արահետ** բառին, որ «Կարմրաքարում» օգտագործվել է ընդամենը 4 անգամ, կամ **շավիղ** հոմանիշին, որ ավելի քնարական է, այլ բարբառում հնուց պահպանված **կածան** բառին, որի միջոցով բարբառախոսներն կազմված շատ արտահայտություններ և հասկացություններ վեպում դրսևորվել են հիմնականում բառակապակցական միջոցներով:

Ա. Բակունցի «Կարմրաքար» վեպից առանձնացրել ենք **գլուխ** բազմիմաստ բառը և քննել ոչ միայն նրա իմաստային բազմազանությունը, նրանով կազմված նոր բառերի ու կապակցությունների բարբառային կամ գրաբարյան զուգահեռները, այլև այն հարցը, թե լեզվական ինչ նոր ձևեր են փախանցվել գրական լեզվին:

Նոր գրական հայերենի ձևավորման գործում, անշուշտ, Ա. Բակունցի դերը հատկանշվում է նոր բառերի և ոճերի կիրառությամբ:

Բանալի բառեր: Գրական հայերեն, մեծ գրող, կածան, գլուխ, բարբառախոսներ, բազմիմաստ բառ, բառապաշար, Կարմրաքար, նոր բառեր, ոճեր:

Ա. Բակունցի բառապաշարում բազմաթիվ բառեր կան, որ, կարծում ենք, նոր գրական հայերենի մեջ տարածվել են հենց մեծ գրողի երկերի միջոցով: Դրանցից հաճախականությամբ աչքի է ընկնում **կածան** բառը՝ **ուղի, ճանապարհ, արահետ, նրբու-**

դի, նրբակաճան/|նրբածական, շավիղ, կոպար||կոպառ, իգ, հղէ և այլն: Իհարկե, գեղարվեստական խոսքում որևէ բառի հաճախական գործածությունը թելադրում է նաև նյութը՝ թեման, բովանդակությունը և այլն: Եթե ուշադրություն դարձնենք Ա. Բակունցի մտապատկերում ձևավորված Կարմրաքարի նկարագրությանը, կնկատենք, որ **կաճան** այդ գյուղը արտաքին աշխարհի հետ կապող միակ միջոցն է. «Երևի այդ ակնարկ էր այն մասին, որ Կարմրաքարը շրջապատված էր անտառով, զուրկ էր հաղորդակցության համար միջոցներից և միայն երկու բարակ **կաճանով** էր կապվում արտաքին աշխարհի հետ» (424)¹: «Կարմրաքար» վեպում **կաճան** բառը գործածվում է 14 անգամ: Կարծում ենք, որ հեղինակի համար այն ունի ոչ միայն նկարագրական, խորհրդապաշտական նշանակություն, այլ նաև բառի գրականացման նպատակադրում:

Բառի առաջին բացատրությունը ներկայացնում է Գրիգոր Տաթևացին. «Տես զի ոչ միայն ճանապարհ կոչէ՝ որ ամենեցուն է գնալի. այլեւ շաւիղ նուրբ եւ նուազկաճան. որ ոչ ամենեցուն է գիտելի»²: **Կաճան** բառը ՆՀԲ-ում տրվում է «նուրբ և նեղ անցք»՝ որպէս **կաճ** բառից ծագած բարբառային բառ³, ինչպէս՝ «Եւ նուրբ եւ կաճան ճանապարհ է՝ որպէս կապանք, որ է դժուարինք եւ ահագինք»⁴: Հ. Աճառյանը նշում է բնիկ բառերի շարքում *g^wāg⁵, որ հանդիպում է հնդեվրոպական ծագմամբ որոշ լեզուներում «ճանապարհ, ուղի, արահետ, անցահուն, ծյան մեջ բացվող արահետ» և այլ իմաստներով⁶, ապա վկայում գործածությունը բարբառներում՝ հիշատակելով Սյունիք-Արցախը՝ Արցախում **կաճան**, և Գորիսում **կէճան**: Բարբառագիտական աշխատանքներում նույնպէս **կաճան** բառը հիմնականում արձանագրում են Սյունիք-Արցախ բարբառային տարածքում⁷:

1 Օրինակները քաղված են՝ **Բակունց Ա.**, Երկեր, Եր., 2009:

2 Գրիգոր Տաթևացի, *Գիրք քարոզութեան, որ կոչի ծմեռան հատոր, [ԾԴ]: Գրաբարի օրինակների մի մասը քաղել ենք «Հայ Մատենագրութեան Թուանշային Գրադարան»՝ <http://www.digilib.am> կայքէջից /այսուհետև՝ Հ.Մ.Գ.՝:*

3 **Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, Նոր բառգիրք հայկագէտն լեզուի, Հատոր I, Վենետիկ, 1836-1837, էջ 1035:

4 Հ.Մ.Գ., *Յակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատութիւններ* [36]:

5 **Աճառեան Հ.**, Հայերէն արմատական բառարան, Հատոր 2, Եր., 1926, էջ 487:

6 Այս մասին առանձին բառահոդվածը կարելի է տեսնել՝ **Lidéń E.**, *Armenische Studien*, Wald. Zachrissons, Göteborg, 1906, s. 73.

7 Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի

Չնայած միջնադարյան երկերում այն հանդիպում է՝ «**կածան անձուկ**»¹, «Սաստիկ զառիվեր, խիստ վտանգաւոր եւ միշտ **ահարկու կածան** ժեռքարի վրայով», «դժուարատար եւ միանգամայն սոսկալի [է] **նեղ կածանն**», «**վերելակ կածան**»², «Եւ Լիպարիտն իւրոցովքն գտեալ **կածան** մի գնայ»³, այնուամենայնիվ, լեզվաբանական աշխատանքներում իրավացիորեն նշվում է «միայն արևելահայերենին հատուկ»⁴ բառերի շարքում: Չնայած մինչև Ա. Բակունցը գրականության մեջ հանդիպում է Բաֆֆու⁵, Սուրաքանի⁶, Ա. Իսահակյանի⁷, Հ. Թումանյանի⁸ և հետագայում Ե. Չարենցի, Հ. Մաթևոսյանի, Հ. Սահյանի և այլոց երկերում, բայցևայնպես կարծում ենք, որ այն տարածում է ստացել Ա. Բակունցի միջոցով ոչ միայն արևելահայ, այլև արևմտահայ⁹ հեղինակների շրջանում՝ բարբառային ձևից և տարածքից հասնելով գրական հայերենին (**կածան** բառը նաև շատ է հանդիպում Հ. Սահյանի բանաստեղծությունների մեջ: Միայն «Սեզամ բացվիր» ժողովածուում կածան բառը գործածվել է 26 անգամ)¹⁰:

անվան լեզվի ինստիտուտ, Հատոր 3, Եր., 2004, էջ 20, Աճառեան Հ., Հայերէն զաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 540, Սարգսյան Ա., Դարաբաղի բարբառի բառարան, Եր., 2013, էջ 328:

1 Հ.Ա.թ.գ., Ալիշան Դեռնոյ, Սիսուան [34]:

2 Հ.Ա.թ.գ., Բարխուդարեանց Մակար եպիս., Արցախ [ԺԳ.]:

3 **Օրբելեան Ստեփաննոս**, Պատմութիւն Նահանգին Սիսական, Հատոր Բ., Փարիզ, 1859, էջ 145 (այսուհետեւ՝ Օրբելյան, 1859): Սեն Մարտենի թարգմանության մեջ նշվում է որպես հատուկ անուն՝ «**Կածանմիզնա**». «Liparid, qui e'tait avec les siens, le trouva a' **Gadzanmikna**»: Ճանոթագրության մեջ Կ. Շահնագարյանը ուղղում է՝ նշելով **կածան (նեղ ճանապարհ)**. այս մասին տես **Օրբելյան, 1859**, 335:

4 **Պապիկյան Ա.**, Արևմտահայերենի կրոնական բնույթի որոշ բառերի մասին, Գիտական նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 2016, էջ 289:

5 «Ճանապարհը, եթե կարելի է նեղ **գեծանը** ճանապարհ կոչել, տարածվում էր Գեղվա գետի աջ եզերքի վրայով» (**Բաֆֆի**, ԵԺ, «Ղավիթ Բեկ», Հատոր 6, Հայպետհրատ, Եր., 1963 էջ 440):

6 «Ապա իջանք ձորի եզերքը, ուր մի նեղ **կածան** գնալով հակվում էր դեպի անդունդը» (**Մուրացյան**, «Խորհրդավոր միանձնուհի»):

7 «Ձյունն եկավ, ծածկեց / Ուղի ու **կածան**» (**Իսահակյան Ա.**, «Ցաված սիրտս երգեր հյուսեց»):

8 «Կարմիր շորով մի խիզան / Ընկավ ձորը, մի **կածան**» (**Հ. Թումանյան**, «Մարո»):

9 «Ու դարձեալ, **կածան - կածան**, ամէն մէկ գեղի կռնակէն, ուրիշ անցքեր դէպի լեռն՝ իջնելու համար միւս երեսը, դէպիեալովայի ծովախորշը, ուրկէ ամէն օր բեռնաբարձ առագաստանաւեր աւազ, պտուղ կը փոխադր էին Պոլիս» (**Հ. Օջակյան**, «Մնացորդաց»):

10 **Սահյան Հ.**, «Սեզամ բացվիր», Եր., 1972:

Որպես ասվածի հավաստում՝ գանջ բարբառախմբում բառին հետ կապված հարցերի քննությանը: Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում գործուն բառերից է **կածան**-ը, որով բազմաթիվ կազմություններ ու կապակցություններ են ստեղծվել: **Կածանները** կարևոր նշանակություն ունեն տարածքի ճանաչողության համար. վերջիվերջո դրանք ուղղորդում են դեպի ճանապարհ, որ ավելի մեծ է կածանից. «**Շատ կածաններ կան**, բայց մի լայն ճանապարհ կա, և բոլոր կածաններն էլ վերջ ի վերջո գալիս են միախառնվում այդ ճանապարհին, ինչպես Այրումի առուն Մարցա ջրին- Մարցա ջուրն էլ ով գիտե որ մեծ գետին» (435): Մի գրույց է պահպանվել Սյունիքում, ըստ որի՝ «Եթե ուզում ես հարմար ճանապարհ կառուցել, բաց թող Էշին, և նա իր բացած կածանով ճիշտ ու ապահով ճանապարհը կգտնի»¹: Մի այլ գրույցից իմանում ենք՝ «Էջը իր կածանը երբեք չի փոխում»: Կամ ասում են՝ «բոլոր կածաններով չէ, որ կարելի է անցնել»: Կան նաև չարքի կածաններ, որ դառնում են աներթևեկելի (բարբառախմբում՝ **քոռ կա/ե/ծան**), որոնց եթե ծանոթ չես, չպետք է անցնես նրանցով. «Մասունկները գնում են ծանոթ արահետով, **մյուս կածանները նրանց անծանոթ են և երկյուղալի**» (167): Կածաններով տեղորոշվում են անցանելի վայրերը հատկապես լեռնային շրջաններում: Հենց այդ առումով, հավանաբար, **կածան** բառը շրջանառություն է ունեցել Սյունիք-Արցախում: Այսօր էլ կան մարդիկ, որ կարողանում են որոշել, թե որ կածանը ո՞ր կենդանին է բացել, իսկ տեղի որսորդների համար կածանները թակարդ դնելու վայրեր են: Ուստի՝ կենդանիների անուններով և **կածան** բառով բազմաթիվ բաղադրություններ կան, ինչպես՝ **ըղվեսկածան** «աղվեսի արահետ», որի հարադրական ձևն ունի այլ իմաստ ևս՝ **ըղվեսի կածան**՝ «նեղ ճանապարհ»: Այս վերջին իմաստին հոմանիշ է **մօկնուկեծան** բառը, հակառակ՝ **կյու-մըշկածան** «լայն ճանապարհ» («Առաջ **նեղ կածան** էր, բայց քա՛նի-քանի մարդ ծեծեցին, ու **կածանը մի քիչ լայնացավ**, ճանապարհ չինվեց մինչև քաղաք» (438)): **Մըրթըկածան** բառը մատնանշում է այն ճանապարհը, որը ապահով և անցանելի է. հմմտ.՝ արահետ՝ **այր-հետ(ք)**² (հմմտ.՝ «Նրանք իրար ականջի փսփսում էին այն **կածանները, որոնցով կարելի էր ավարն անցկացնել ձիավո-**

¹ Այս և մյուս գրույցները անձամբ եմ լսել ծննդավայրում:

² **Մարդակածան** և **արահետ** բառերի գուգահեռները տե՛ս՝ Martirosyan H., Etymological dictionary of the Armenian inherited lexicon, Leiden, Boston, 2010, 126:

րների օղակից» (541), «Շաղաթաթախ, տրեխներն ու գուլպաները թրջված, չուխայի ծայրերը գոտկում խրած, այդ մարդը այգիների **ծանոթ կածաններով** գնում էր, վեր նայում ծաղիկների փնջերին ու կեռասի կանաչ գնդիկներին, գետնին նայում, որ տեղ-տեղ ծածկված էր կանաչ տերևներով, ձեռքով տնտղում, շտկում նոր ընկած շիվը, ստուգում չի՞ ջարդվել պատվաստը» (491): **Մըրթըկածան** կարելի է հանդիպել վարած դաշտերում՝ արտի մեջ բացված ճանապարհի՝ **վըրըկեծան, ծըմըկեծան**՝ անտառներում՝ կտրած ծառերից ու ճյուղերից բացված արահետը («Նրա աչքերը ծանր ու միևնույն բերանը ճոթ ու կտորով լցված խուրջիների վրա էր, որ տերերը կապում էին սարի կանաչից կայտառացած ձիերի գավակին և **անտառի կածանով** գնում հարսների ու մանուկներին ուրախացնելու «Հիբան քիրվայի» որդիների պարզևած փոքր թաշկինակներով, մեջը լի մրգեղեն, կամ գունավոր ու կլոր սապոններով, որ հատկապես նրանք պահում էին նվերների համար» (454)), լեռներում ու ձորերում՝ քար ու թփից ազատված կածանը կոչվում է **սըրըկածան** և **քըրըկածան**: Եթե այս վերջինը գործածվում է ժայռոտ մասերում քարերի վրայով անցնելու տեղ-կածան նշանակությամբ, ապա **քարավազ** բառը գետի վրայով անցնելու համար հարմարեցված քարերի շարք-կածանն է: Այս վերջինին համանիշ է **քըրըկապան** (այլև **քարկապ**՝ «քարհանգույց»): Նկատում ենք, թե Սյունիք-Արցախը որքան անվանումներ ունի ճանապարհ-կածան-արահետ բառախմբի շրջանակում:

Վերոնշյալներից բացի՝ **կածան** բառով բարբառախումբն ունի նաև այլ կազմություններ՝ **սըռնըկածան** «ծյունի մեջ բացված կածանը, որ երթևեկից սառչում է, սառած կածան», **վըռնըկեծան, կըծըռնահար, կըծըռնաթակ** «բանուկ կածան» («Եվ հենց հասնում էին լեռնաշղթայի փեշերին, ամեն «օյմաղ» ցրվում էր իր պապերի **ոտքերով ծեծած կածանով** և նորից վրան զարկում սարում թողած նախահայրերի գերեզմանների մոտ» (453)), **կըծըռնալուս** «գիշերով երևացող այն լույսը, որով արահետն է նշմարվում»¹, **կըծըռնախիլծր|կեծանալծր, կեծանհիլծր** «1. կածանի շրջադարձը, 2. զիգզագ», որին բարբառախմբում անվանում են նաև **կըռըպատեր, ծըկածան|ծակածան՝ ծըվըծալ կածան** («Տնից խանութ գնացող

¹ «**Լուսակածան**» բառը նշվում է հայերենի նորաբանությունների մեջ (թարգմ.): Այս մասին տե՛ս՝ Նոր բառեր, պրակ, ԳՎԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 2016, էջ 56:

կածանը կեռմաններով իշնում էր, անցնում բարակ ծորակն ու մի-անում փողոցին» (440)), **կուճիր կեծան** (Արց.՝ **կօտըր կածան**) «1. կարճ արահետ»:

Բնագրային բազմաթիվ օրինակներից էլ նկատելի է դառնում, որ Ա. Բակունցը տուրք է տվել ոչ թե գրական լեզվում տարածված **արահետ** բառին, որ «Կարմրաքարում» օգտագործվել է ընդամենը 4 անգամ, կամ **շավիղ** հոմանիշին, որ ավելի քնարական է, այլ բարբառում հնուց պահպանված **կածան** բառին, որի միջոցով բարբառախմբում կազմված շատ արտահայտություններ և հասկացություններ վեպում դրսևորվել են հիմնականում բառակապակցական միջոցներով:

Ա. Բակունցի ավանդը նոր գրական հայերենի ձևավորման գործում մեծապես կապված է ստեղծագործական լեզվի ընտրության, մասնավորապես բարբառային բառապաշարի տեղին գործածության հետ: Սա գրական ստեղծագործության ժողովրդականացման լավագույն միջոցներից է, որ գալիս է դեռևս Խ. Աբովյանից և փոխանցաբար հասնում մինչև Ս. Խանզադյան, Հ. Մաթևոսյան և ուրիշներ: Մենք դա կարող ենք համարել ազգային լեզվի և գրականության համար մի յուրահատուկ ուղղություն, որով ժողովրդական լեզվամտածողությամբ գրողի խոհերը դառնում են բարձրարժեք գրականության ատաղձ՝ շաղախված բանահյուսական բազմաթիվ տարրերով: Հենց այս կերպ է ձևավորվում, մշակվում, չափորոշվում, արժևորվում գրական լեզուն: Լեզվական նյութի և գրականության թեմայի համաձուլվածքում հարթվում է նաև ազգային գրականության զարգացման ուղին, որ տարվում է լեզվի մեջ եղած և իր հետ ավանդ-սովորույթներ բերած յուրաքանչյուր բառի «կշռումով», ապա համընդհանուր գործածության և ճանաչման դնելով: Այսպես ոչ միայն փրկվում են բառահասկացությունը, նրա պատմական նկարագիրը, այլև ազգայինից եկող դրական հատկանիշներն ու համամարդկային արժեքները, որ կարևորվում են մարդկության պատմության և փիլիսոփայության հարցերը քննելիս: Այսօր, ցավոք, լեզվի և գրականության այս համաձուլյ մեթոդ-ուղղությունը «մոդայից» դուրս է մնում, այդպես կարող է ամլանալ նաև բարձրարժեք գրականությունը ազգային պետականության օրոք: Բայց, կարծում ենք, մտահոգիչ չէ. լեզուն և գրականությունն էլ իրենց կյանքում հանդիպում են նոր ճաշակների,

արդիական խնդիրների, որոնք կարող են ազդել զարգացման ուղու վրա, բայց չեն կարող հասել այն արմատը, որով սնվում են այդ մեծ ու ազգային դիմագիծը ծիրող գեղարվեստական գրականությունը և նրա ժողովրդական լեզուն:

Ակսել Բակունցի գրականությունը, կարծում ենք, արվեստի այն առանձնահատուկ միջոցն է, որով շարունակվում են ազգային լեզվի ավանդույթները, կենդանությունն են առնում ժողովրդական մտածողությամբ ստեղծված բառերն ու ասույթները՝ նեղ, բարբառային վիճակից դուրս գալով դեպի համազգային լեզու: Ա. Բակունցը բառագործածության յուրահատուկ մոտեցում ունի: Ամենասովորական թվացող բառով բազմաթիվ նրբիմաստներ է փոխանցում նոր գրական լեզվին, արդեն պատրաստի բառը և նրանով կազմված ձևերը նորից են շրջանառվում, գործածության անընդհատ հոսքի մեջ դրվում, ամրացվում ոչ միայն բառարանային համակարգում, այլև բառապաշարի գործունե շերտերում: Եվ դա ստեղծագործական մեթոդ է, որ ուսումնասիրության լուրջ կարիք ունի:

Հենց այդ նպատակադրումով Ա. Բակունցի «Կարմրաքար» վեպից առանձնացրել ենք գլուխ բազմիմաստ բառը և քննել ոչ միայն նրա իմաստային բազմազանությունը, նրանով կազմված նոր բառերի ու կապակցությունների բարբառային կամ գրաբարյան գուլգահեռները, այլև այն հարցը, թե լեզվական ինչ նոր ձևեր են փախանցվել գրական լեզվին: Մինչ բուն ուսումնասիրության հասնելը նշենք, որ քննվող վեպում գլուխ բառը գործածվել է մոտ 200 անգամ: Գլուխ բառով Սյունիք-Արցախում կան 500-ից անցնող բառեր ու կայուն կապակցություններ, որոնց մի մասն առանձնանում է իմաստներով և նրբիմաստներով¹: Նշենք, որ Ա. Սուքիասյանը գլուխ բառի համար առանձնացնում է 16 իմաստ², Ս. Մալխասյանը՝ 19 իմաստ և բազմաթիվ դարձվածք-կապակցություններ³, իսկ Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանում» գլուխ բառով կազմությունների թիվը 500-ից անցնում է⁴: Այս հարցին մանրամասն անդրադա-

¹ Այս մասին կարելի է տեսնել Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարին վերաբերող բառարաններում, մասնավորապես՝ **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բառարան, ԱրՊՀ, Եր., 2013:

² **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 1982, էջ 137-138:

³ **Մալխասյան Ս.**, Հայերեն բացատրական բառարան, Պետհրատ., Եր., 1944-1945:

⁴ **Բեդիրյանի Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական

րծել է **Խ. Բաղիկյանը**¹ նշելով, որ հայերենում կազմախոսական դարձվածքներից գլուխ գերադաս բառով 700-ից ավելի կազմություններ կան, իսկ եթե հաշվի առնենք նաև դրանց իմաստային բազմազանությունը, ապա գլուխ բառով դարձվածների թիվը կարող է հազարից ավելի լինել²:

Տարբեր հեղինակների լեզվի և ոճի հարցերին մասին շատ ուսումնասիրություններ կան, քիչ չեն նաև Ա. Բակունցին վերաբերող աշխատանքները: Մեզ առավելապես հետաքրքրում է, թե որքանով է օգտվել Ա. Բակունցը բարբառում և լեզվի մյուս տարբերակներում առկա հարուստ պաշարից և գրականություն բերել նոր կազմություններ ու հասկացություններ, ինչ չափով է փորձել գրական տեսք ու ձև տալ, կենդանություն ներշնչել այդ կազմություններին և վերջապես, որ ամենակարևորն է, հարստացնել նոր գրական հայերենի բառապաշարը: Այսպես՝ փորձենք քննել միայն «Կարմրաքար» վեպում օգտագործված գլուխ բառով բոլոր ձևերը՝ ըստ կազմության և գործածության տարբեր հատկանիշների:

Հայերենի պատմական զարգացման ընթացքում **գլուխ** բառից առաջ եկած բազմիմաստ ձևերի մեծ մասը հանդիպում է «Կարմրաքար» վեպում, և հեղինակը, փաստորեն, մեկ բառի օգնությամբ կարողացել է արտահայտել բազմաթիվ իմաստներ, այսինքն՝ «մեկ բառն օգտագործել բազմաթիվ առարկաների, երևույթների և հատկանիշների, հասկացությունների անվան համար, ինքնին ոչ այլ ինչ է, եթե ոչ բառապաշարի հարստացում ու համալրում»³: Վեպում հանդիպում են **գլուխ** բառի՝

Ա) **Հայերենում ձևավորված բազմիմաստության դեպքեր**՝ «... Էնպես փաստնով է խոսում, ծանրացնում, կասես գեներալ գուլերնատոր է իմ **գլխին**» (459)³, «Դու էլ ուստա դառար մեր գլխին էլի... » (478) † «**պետ, առաջնորդ**»⁴, «...գրքի մի այլ գլխում...» (424) † «**ստեղծագործության, աշխատանքի առանձին բաժին**», «Մի **գլուխ** ունեմ, կառնեմ, որտեղ քեփա տա, Էստեղ բառարան, Եղ՛ Հիրատարակչություն, Եր., 2011:

1 **Բաղիկյան Խ. Գ.**, Ժողովրդախոսակցական և բարբառային դարձվածային միավորներ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2 (86), Եր., 1995, 95-97 /այսուհետև՝ Բաղիկյան, Ժ.Բ.Պ.Մ., 1995/:

2 **Աղայան Է.**, Ընդհանուր և հաճախական բառագիտություն, Եղ՛ Հիրատարակչություն, Եր., 1984, էջ 198 /այսուհետև՝ Ա.Է., Ը.հ.բ., 1984/:

3 Օրինակները բերված են՝ **Ակսել Բակունց**, Երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Եր., 1986:

4 «Առաջնորդ» իմաստը դարձվածքից դուրս չէ:

Էլ կապրեմ» (474) † **«մարդ, անձ»**, «...գլուխ խուզելու մեքենան հետը տանում էր» (530) † **«գլխի մազերը»**, «Չետանց Ունանի գլխում մի հարց պտույտը էր անում, ինչպես կամը կալում» (518) † **«միտք, գիտակցություն»**, «...Էս Արզումանը հո Էս գլխից էր շաշ ...» (469) † **«սիգը, ժամանակ»**, «բզի գլուխ» (511) † **«առարկայի վերին մասը»**, «թմբի գլուխ» (471), «քարի գլուխ» (477) † **«կատար, գագաթ»**, «կամրջի գլուխ» (493), **«պատի գլուխ»** (492), «գլուխ շաքար» (450) † **«հատ, հաշվի միավոր»**, «գմբեթի գլուխ» (518), «սամովարի գլուխ» (441), «սանդուղքի գլխին» (464), «շահանոցի գլխին» (443), «սենյակի գլուխ » (489),† **«որևէ բանի կամ տարածության ծայրի մասը»**:

Բ) Սյունիք-Արցախ բարբառախմբի տարածքում ձևավորված իմաստներ, որ չկան կամ տարածված չեն հայերենի մյուս տարբերակներում, ինչպես՝ «...մի գլուխ կազատվենք, մեր հոգին էլ կդինջանա, մեր ջանն էլ...» (484) † **«միանգամից»**, «-Էս սաղ նրա գլխին չէ՞ր... » (510) † **«փորձություն»**, «Տեսնես Վասիլն Էսօր քանի փարչ է խմել, պրիստավի հրամանին գլխու չի... » (514) † **«տեղակ, իրազեկ»**, «Չէ՛, Էստեղ մի հնարք կա, ասենք գլխու չենք» (514) † **«հասկանալ»**: Նկատում ենք, որ ձևավորված իմաստների մեծ մասը համապատասխանում է բառապաշարի իմաստաբանական զարգացման ընդհանուր օրինաչափություններին, որոնք հիմնականում առկայանում են խոսքի մեջ բառերի տարբեր փոխաբերական գործածություններով¹:

Գլուխ բառի գործածության գերակշիռ մասը հանդիպում է դարձվածքներում, որոնք, ըստ վեպում ունեցած հատկանիշների, բաժանվում են հետևյալ խմբերի՝

Գրաբարից անցած և բարբառախմբում չհանդիպող՝ «Իբր թե լեզգիների երկրում խառնակություն է սկսվում, այնտեղ «խաչապաշտ ազգաբնակությունը» գլուխ է առնում և ցրիվ գալիս չորս կողմի վրա» (425): Բարբառախմբում այս դարձվածքին համանիշ է **կըլօխը ըզադէլ** «1. փրկվել, 2. փախչել, հոգսերից թթերևանալ, 3. ազատվել»: Վեպում այս դարձվածքը արտաբերվում է հոգևորականի միջոցով, որի բառապաշարը տարբերվում է կարմրաքարցիների բառապաշարից:

Դարձվածքներ, որ ծագմամբ բարբառային են և վեպում էլ գործածվելով՝ պահպանում են Սյունիք-Արցախ բարբառային

¹ Ա.Է., Ը.հ.թ., 1984, էջ 198:

բառապաշարին բնորոշ հատկանիշները, ինչպես՝ «Տուն է դառնում և **գլուխը քաշ** ապրում, տիրություն անում հորից ժառանգություն մնացած ջաղացին» (434)¹, «Ա՛յ Անդրի, **գլխիդ ձի չի քացի տվել**, կրակը թեժ արա...» (433), «Ծառերը՝ էն ցաքի փուշը քեզ օրինակ, **իրար գլխով են դառել...** » (470), «...կգա, հոր ավերակները կտեսնի, **գլուխը կառնի** ու կանհայտանա» (475), «Ծերունու հազը նորից բռնեց, ու **գլուխը տմբտմբացնելով** ձեռքը կրծքին սեղմեց, որ ներսում մի բան պոկվեր ու հանգստանար» (515), «Արզումանի **գլուխը քարի տակին չի մնա...**» (535), «...մուշտակը նորից **քաշեց գլուխը**» (540), «Թե չէ ինչ ես **տակից և գլխից խոսում**» (428), «Ջաղացական իզուր չէր ասում, թե **տարին գլխակեր է...** » (518): Սովորաբար ավելի տարածված է այն երևույթը, երբ հեղինակներն իրենք են լայնորեն օգտագործում ժողովրդախոսակցական ու բարբառային դարձվածներ՝ բնական տեսքով կամ վերամշակելով ու գրական տեսքի բերելով կամ էլ դրանց նորանոր իմաստներ հաղորդելով: Այդպես բազմաթիվ օրինակներ կարելի է բերել մեր դասական (և ոչ միայն դասական) գրողներից²: Հենց այս առումով «Կարմրաքարում» առանձնանում են **գլուխ** բառով փոփոխված ձևեր, որոնց զուգահեռները նույն իմաստով հայտնի են գրական լեզվին, ինչպես՝ «-Անտոն... Օրինյալ, էս ի՞նչ **փորձանք հասավ** ժողովրդի **գլխին...**» (482), «...որոնցից մեկը երբեմն **գլուխը վեր էր հանում...**» (499), «Մարդը որ էս ոսկորի տերն է, նա սոված էլ կմնա, նրա **գլխին կբամփեն** էլ, նրա արյունն էլ կխմեն» (430), «Ինչ որ **գալիս է**, քյասիբի **գլխին է**» (458), «Մեծ եղբայրը կանգնել էր անկյունում, **գլուխը կռացրել** և ունքերի տակից աչքը գցել է փրեմին» (460):

Քերականական իմաստով ձևավորված դարձվածքներ նույնպես հանդիպում են՝ «Քեզ եմ ասում... **Գլխի չե՛ս...**» (469), «-Արինը **գլխիս է**, հա՛, Մկրտում... Մարդդ ճանաչի » (510):

Հայերենի տարբերակներում տարածված դարձվածքները «Կարմրաքար» վեպում ամենաշատն են գործածվել: Լեզվի հարափոփոխության ընթացքում շատ բառեր ու կազմություններ կարող են դուրս մնալ, փոխարինվել նորերով և այլն: Բայց չափազանց կարևոր է ուշադրություն դարձնել բառապաշարի որակական զարգացմանը. «Բառապաշարի կատարելագործումը ենթադրում

¹ Ա. Բակունցի երկերում այս դարձվածքը տարածված է՝ «Պետին **գլուխը քաշ** իր գործին էր» (60) և այլն:

² Բաղիկյան, Ժ.բ.դ.մ., 1995, էջ 94:

Ե ոչ այնքան նոր բառերի մուտքը տվյալ լեզվի բառային կազմի մեջ, որքան արդեն գոյություն ունեցող բառերի և կայուն բառակապակցությունների զանազան կարգերի փոփոխությունները, բառափոխարինումները և այլն, որոնք, ամբողջությամբ վերցրած, ուղղված են լեզվի համակարգայնության ու միօրինակության ծավալմանը, բառագործածությունների և բառիմաստների ճշգրտմանը, բառակազմական կաղապարների ու տիպերի միասնականացմանը, լեզվի մաքրության ապահովմանը, բառապաշարի որակական արդիականացմանը և այլն»¹: Կարծում ենք՝ այս սահմանումով գնահատելի է Ա. Բակունցի ներդրումը հայ գրականության և լեզվի զարգացման գործում, որ հավաստվում է ներքոնշյալ օրինակներով՝ «**Գլուխդ կախ արա**, քո ակոսդ ծրի...» (475), «Աղջիկը նրան տեսավ թե չէ, կարմրեց, **գլուխը խոնարհեց...**» (477), «Բա մեր բանը ե՞րբ պիտի **գլուխ բերես**» (503), «...խաչանը **գլուխն օրորելով** ասել էր...» (529), «Տեսնում ես էի՜, **գլուխս** ինչքան **է խառնված**» (530), «...ոմանք թողնում էին շալակը և մտածում **գլուխն ազատելու**» (542), «...կարծես ուզում էր **գլուխը ջարդել**» (546), «**Խեղը գլխին** մարդը չի գա ես քար ու քոլի մեջ տուն շինի...» (426), «-Նրանց էլ պատիժ է ուղարկել, որ միշտ **գլխիդ վայ տաս...**» (431), «...ինչե՛ր **չեն անցել** նրանց **գլխով**» (433), «Մկրտումը **գլխով արեց**» (446), «...քունը **գլխին** վազում է հիվանդի սենյակը...» (449), «Ամեն մարդ իր **գլխի տերը**, ուտողն ուտողի:» (470), «Ձեռաց **գլխի ընկավ**, որ Կարմրաքարում գուր հաց ուտող շատ կա:» (528), «Քառասունքը թամամելուց վախենում է գյուղի **գլխին փորձանք գա**» (517), «...եկուզ **գլխավերևը կանգնած** Աստունը թելադրում էր նրան...» (524), «Սակայն այդ նույն օրից էլ Սիմոնը հանդիպած յուրաքանչյուր մարդու **պատմում էր իր գլխով անցածը...**» (514), «Երբ Վասիլը գրությունը կարդաց ու թարգմանեց, պամոշնիկ Աստունի **գլխին** ասես **տունը փուլ եկավ...**» (525): Սրանց մեջ կան այնպիսիք, որոնք, ունենալով բարբառային ծագում, անցել են գրական հայերենին և ընդգրկվել բառապաշարի գործունե շերտում: Տեղին է նկատված, որ «դարձվածքներն ամենից առաջ ժողովրդական ծագում ունեն. դրանց մի մասը նախ առաջանում է ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում, ապա մշակվելով ու կատարելագործվելով գրողների և անհատների կողմից, անցնում է գրական լեզվին»²,

¹ Ա.Է., Ը.հ.թ., 1984, էջ 177:

² Բաղիկյան, Ժ.թ.դ.մ., 1995, էջ 93:

ինչպես՝ «-Քո ի՞նչ բա նն է ես ջահելի հետ **գլուխ ես դնում**» (43-1), «Էդ օրը բերանը երկու կտոր չէր անի, **գլուխը կախ**, ես ծառի տակ կնստեր, էն քարը շուռ կտար...» (433), «Կռվում էին, **գլուխ ջարդում**, պատահում էր, որ մարդ էին սպանում» (438):

Ա. Բակունցի բառապաշարի հարստությունը չի սահմանափակվում **գլուխ** բառի բազմիմաստությամբ և դարձվածքների առատ կիրառությամբ: Կան նաև բարդ և ածանցավորներ բառեր՝«**գլխատառերը...** » (438), «**գլխավոր**» (440), «**Գլխաբաց**» (464), «**գլխաշորով**» (493), «**գլխիվայր**» (488) և այլն, որոնք լայն տարածում ունեն հայերենում:

Հետաքրքրական է Ա. Բակունցի լեզվական զգացողությունը. «գյուղական կենցաղի արտակարգ վառ գունանկարներով, գյուղի մարդկանց հոգեբանության, նրանց բնավորությունների բազմազանության խորաթափանց բարձրարժեք պատկերումներով¹» ստեղծված «Կարմրաքարը» բարձրարժեք է նաև հայեցի, բնօրրանում ստեղծված ու իմաստավորված բառերի առատությամբ: Անհնար է, որ Ա. Բակունցը կարդացած ուսումնասիրած չլինի հայերենին և նրա բառապաշարին վերաբերող հոգված-աշխատությունները: Այս հարցը բովանդակող կենսագրական որևէ փաստ կամ տեղեկություն անհրաժեշտ չէ, քանի որ ինչպես «Կարմրաքարում», այնպես էլ մյուս երկերում հանդիպում է այսպես կոչված բնիկ բառաշերտ, որի մի մասն էլ տակավին ուսումնասիրության կարիք ունի: Նշենք, որ «Կարմրաքարում» գործածված բարբառային բառերը պատկանում են Սյունիք-Արցախ բարբառախմբի Գորիսի բարբառին:

Նոր գրական հայերենի ձևավորման գործում, անշուշտ, Ա. Բակունցի դերը հատկանշվում է նոր բառերի և ոճերի կիրառությամբ: Այսպես՝ հայերենում տարածված, գրական լեզվում հաճախականություն ունեցող բառերի փոխարեն գործածում է նորերը, որ, հնարավոր է, ծագմամբ ավելի հին են, բայց մնացել են գյուղական կենցաղի առօրյայում: Այսպես՝ **գետին, հարթություն հարթավայր** և այլ բառերի փոխարեն վեպում մեծ մասամբ գործածվում է **տափ** (434) բառը: «Կարմրաքարում» այն կիրառվում է տարբեր կերպ (ահա բնագրային օրինակները)՝ **1. տեղանվան մեջ**՝ «Մեր Ցաքուտը, **Երկայն տափերը**, Զառասնաջուրը... Մի առ

¹ **Իշխանյան Ռ.**, Մեր ինքնության գլխավոր նշանը, Նաիրի, Եր., 1991, էջ 196:

մի գրված և Կովկասու փոխարքայից հաստատված...» (428), «Ինքը **Ծիրանի տափն** էր վարում, երբ տեսավ իր փոքր աղջկանը բլուրն ի վեր բարձրանալիս», **2. «հարթություն, հարթ տարածություն, տափարակ, տափաստան» իմաստով**՝ «Ինչքան էլ քարոտ և կոշտ լինեի հողը, ինչքան էլ **տափը** սարալանջ լինեի, Ունանը և ոչ մի ակոս ծուռ չէր տանի» (426), «Ամեն ձմեռ Ունանը պարկերը շալակին գնում էր **տափարակի** թուրք գյուղերը...» (426), «Ամեն գարնան ամառ ու փոշու մեջ կորած հազարավոր բազմություն հեռավոր **տափաստաններից** ոչխարը, ուղտը, եզն ու ձիու երամակներն առաջ արած բարձրանում էին այն լեռնաշղթան...» (453), «Քոչն իրար էր խառնվում, հետև մնացողները նեղվում էին **տափարակի** տորթից...» (453), **3. «հարթ» իմաստով**՝ «Ամառվա շոգին գյուղում մնացած մի կաղ ոչխար... Հիբանի **տափարակ** գերեզմանի վրա նստում և ննջում...» (449), **4. «գետին, հող» իմաստով**՝ «...ոտդ **տափից** կտրում ես թե չէ, պոկ է գալիս...» (497), « – Դի՛ր **տափին**...» (543), **5. «1. ծեծել, հարթեցնել, 2. շոշափել, խարխափել իմաստներով**՝ «Թոռան ուսից բռնած, մահակը գետնին **տափտափելով** երեկոյան դեմ եկավ և կույր Սային» (500), «...ասաց Չանեն ծուռ Ունանը, մթնում **տափտափելով**» (522):

Գրաբարում **տափ** բառը (տափք, տափեր)՝ «տափարակ՝ որպես գետին տափեալ և դաշտաձև. տափակ տեղ, տփկած, դուրան»¹³⁵ նշանակությամբ, տարածված է եղել, և նրանով բավականին նոր բառեր և բառաձևեր են կազմվել՝ **տափակես, տափակողմն, տափան, տափանեմ, տափարակ, տափարակաձեւ, տափարակեմ, տափարակութիւն, տափափուշ, տափաքիթ, տափեմ, տափեր, տափերական, տափնչություն, տափողն, տափր**՝ «...սահմանովն մինչ ի Գանձակայն որ հայրեացն **տափ** կոչի»², «...յայս թե քիթ նոցա էր **տափարակ**...»³, «...եւ հատանելով զմեծ **տափն** ի յերկայն խաչն եւ ջրաթափովն ի մեծ խոռոչն և ճանապարհն...»⁴, «...յորոյ **տափ արակ** միջոցս աճեն թթենիք, եւարտօք են անդեոց»⁵ և այլն: Ս. Օրբելյանի պատմությունից իմանում ենք, որ այն Սյունի-

¹ **ՆՀԲ**, էջ 860:

² **Օրբելյան**, Բ, 1859, էջ 102:

³ **Օրբելյան**, Բ, 1859, էջ 341:

⁴ **Օրբելյան**, Ա, 1859, էջ 378:

⁵ **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1898, էջ 34:

քում տարածված է եղել նաև տեղանուններում **«Ուռեաց տափ»**¹, **«Դարատափ»**², **«Տանձատափ»**³ և այլն:

Հայերենի բարբառների մեծ մասում տարածված է ձևիմաստային որոշակի տարբերակներով⁴: Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում **տափ>տափի-տափան-տափավ**, թեքված ձևերում **<տըփ**, ունի **«1. հարթ, կոկիկ, 2. հարթ տարածություն, 3. հատակ, 4. գետին, 5. արտավայր, 6. վարելահող, 7. տափաստան, դաշտավայր, 8. որևէ մեկի պատկանող հողակտոր, 9. որևէ բանի հենք, հիմք»** իմաստները: Կարծում ենք՝ **տափ** բառն ունի նաև բայական նշանակություն և որոշ իմաստներ արտահայտելու համար զրկված է ինքնուրույն գործածությունից, օրինակ՝ **տափ տալ**՝ **«ընթացք առ ընթացք գլորվող հանած ձայնը և երևույթը»**, **տափավ** || **տափը կյան, տըփանել** և այլն: Եվ եթե նման կազմություններն էլ գումարենք, ապա **տափ** բառի արտահայտած իմաստները մի քանի անգամ կշատանան:

Սյունիք-Արցախ բարբառային տարածքում բազմաթիվ բառեր կան, որոնցով կազմությունների առատությունը, կարծում ենք, պայմանավորված է նույն նշանակությամբ բառերի բացակայությամբ, օրինակ՝ **տափ** բառին համանիշ **գետին, հատակ** բառերը չեն արտահայտում այն բոլոր հասկացությունները, ինչպես **տափ** բառը⁵, որով՝ ա. **բարբառային բազմաթիվ բաղադրյալ ձևեր և դարձվածքներ** կան՝ **տըփանել, տըփըվել, տափան անել** և այլն, բ. **կան նաև զուգահեռները**, այսինքն՝ նման կամ մոտ իմաստներ կարող են արտահայտվել, ասենք, գետին բառով՝ **տափան կըցած**՝ **«1. ցածրահասակ, 2. վախվորած, աչքի չընկած»**, **տափին հըվ-ըսըրեցնել**՝ **«1. գետինն հավասարեցնել, 2. քանդելով հավասարեցնել, տափան կենալ, «1. ընկնել, 2. գետինն պառկել, 2. Մեռնել, 3. անեծք»**, **տափան կըտրել**՝ **« ծանր բան գետնից բարձրացնել»**, **տափան յերկըլած**՝ **«1. անարժեք, 2. գտած, 3. հավելյալ շահ»**, **տափան տո՛ւս յեկած**՝ **«1. բերք ու բարիք, 2. ընդհանրապես ուտելի բույսեր, 3. փոխ. գունատ»**, **տափերը ճըպըռօտել/չընգըռօտել/**, **պուրք տալ**՝ **«1. ցավից տառապել, 2. տընել»**, **տափերը տըփտըփել**

1 Օրբելյան, Ա, 1859, էջ 218:

2 Օրբելյան, Ա, 1859, էջ 269:

3 Օրբելյան, Ա, 1859, էջ 274:

4 Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հատոր 1, Եր., 2010, էջ 149, Աճառյան Հ., Հայերեն գալատական բառարան, Լազարեան ճեմարան, Թիֆլիս, 1913, էջ 1019:

5 Տափ բառին բնորոշ բազմիմաստությամբ հնարավոր է **տըփ-ել, տոփ-ել:**

«1. ցավից, անորոշությունից գետինը ծեծել, 2. անորոշության մեջ հայտնվել, մոլորվել, 3. խարխափել, 4. որպես անեծք» և այլն, գ. մի մասն էլ տարբերվում է նրբիմաստներով՝ **տափերը տըփտըփել**, դ. կամ *կազմությամբ՝ տափ ու տըհա՛ր տալ* «ցավից կամ վշտից գետինը ծեծել» և այլն»: **Տափ** բառով ածանցավոր և համադրական կազմություններ են՝ **տափ-ան**¹ «սերմած հողերը ծածկող գործիք», այստեղից՝ **տափան անել** | **տըփանել** «ծածկել և հարթեցնել», **տափ-լակ** «հարթ», **տըփա-թթ** «մորի», **տըփա-ծետ**, **տըփա-կօրծ**, **տըփա-հախ** «հանդամասի հարկ», **տըփա-տեր** «հողատեր», **տըփա-տեզ** «գետնի վրա դարսվածխոտի դեզը», **տըփա-տօն** «գետնի տակ փորված կացարան», **տըփլկանալ**, **տըփլիկօթուն**, **տըփըլօթի**, **տըփը-գյաբա**, **տըփը-կարպետ**, **տըփը-կըլօնծ** «բույսի տեսակ», **տըփը-մօկուն**, **տըփը-քանդի** «գործիք», **տըփը-քշերի** «խլուրդ», **տըփ-տըփել** «ծեծել»: Ընդհանուր առմամբ Սյունիք-Արցախում **տափ** բառով հանդիպում է մոտ 250 կազմություն: Մեր նպատակը չէ մանրամասն նշել բարբառում առկա **տափ** բառի հնչյունական, բառային, քերականական և ոճական առանձնահատկությունները: Ոչ գրական համարվող այս բառը, որ Ա. Բակունցը բազմիցս գործածել է իր երկերում, փաստորեն, բարբառախմբում նույնպես գործուն է և հարստացրել է բարբառային բառապաշարի կազմը:

Տափ բառին վերաբերող մեզ հանդիպած ստուգաբանական փորձերը շատ չեն: Առավել հանգամանալից ստուգաբանական փորձ կատարել է Է. Աղայանը²: ՀԱԲ-ում այս մասին արժեքավոր տեղեկություն հանդիպում է «Փոխառություն» բաժնում: Այստեղ գուգահեռվում է արաբ. **taff** բառին՝ «1. կողմ, 2. գետի ափ, 3. շեն տեղ, հող» իմաստներով, ապա նշվում որ «Հայերենը չի կարող

¹ **Գարեգին Սրվանձտյանցը** նշում է **տափի**, **տափան** կամ **ցազան**՝ «Մացառներ կամ փուշեր խիտ կապած գերանի մը վրայ, սերմն ցանելէն զկնի՝ այսու հարթեն զհողն եւ ծածկեն զտերմն» (Սրուանձտեան Գ., Մանանայ, տպ. Ե. Մ. Տնտեսեան, Կ. Դոլիս, 1876, էջ 456), Մ. Միրախորյանը բացատրում է. «Նախ եւ առաջ ցանելի հողն կը վարեն երկու անգամ խաչածել, յետոյ վրան տափ կը տան (կըհաւասարցնեն) կռթներ (հողի կոշ), հողն այսպէս իւր վիճակաւ կը մնայ մինչեւ ցորեան ցանելոյ ժամանակն» (Հ.մ.թ.գ., Միրախորեան Մ., Նկարագրական ուղեւորութիւնի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի: Տեղագրութիւնը սարէն եւ ձորէն, հնէն եւ նորէն պիտանի գիտնոց, Մասն Ա,Բ,Գ, տպ. Մ. Կ. Սարգեան, Կ. Դոլիս 1885, Գլ.Գ):

² **Աղայան, Է. Բ.**, Նոր ստուգաբանություններ, Պատմա-բանասիրական հանդես, № 4, Եր., 1967, էջ 25-38 /այսուհետև՝ Ա. Է., 1967/:

սրանից փոխառած լինել, որովհետև գործածված է Ե դարում. ուստի արաբ. բառը կամ պատահական է և կամ փոխառեալ հայերենից»¹: Գ. Ջահուկյանը կարծում է, որ բնիկ հնդեվրոպական ***doph-** ***deph-** «ծեծել, տրորել» արմատից է, որտեղից նաև **տոփել**²: Ե. Աղայանը **տափ**, **տափել**, **տափան**, **տոփել**, **տոփան** բառերի հիմքում դնում է ***doph-** նախածնը³: Պրսկ. ***daf-** || ***dab-** || ***dap** - «1. հարվածել, 2. փչվել, ուռչել» արմատից⁴ հայերենն ունի **դափ**՝ Սյունիք-Արցախում **տափ** «նվագարան»։ **Տափ** բառի պարսկերենից հայերենին անցած լինելը քիչ հավանական է. կլիներ **տափ** (որպես կանոն՝ բարբառախմբում բառասկզբի **դ>տ** փոփոխությամբ պայմանավորված՝ հաջորդ **ա** (նաև **ու**, մասամբ էլ՝ **օ**) ձայնավորը հիմնականում քմայնանում է, հմմտ.՝ **դանակ-տանակ**, **դառնալ-տաննալ** և այլն։

Կարծում ենք՝ այն հայերենի բնածայնական բառերից է, որ տարբեր բարբառներում համապատասխան հնչողությամբ և իմաստով են դրսևորվել և լայնորեն տարածվել մեր լեզվում։ «Հարվածել-ու, գետնին ընկնելու, գետնին խփելու» ձայնն է **տափ**-ը, որից, մեր կարծիքով, նախ ձևավորվել են ձայնը հանելու և նրա հետևանքով առաջացած հասկացությունների անվանումներ՝ **տափ > տափել** || **տըփել** || **տըփտըփել**, ապա երևույթի հետ կապված այլ անվանումներ՝ **տափ**, **տափարակ**, **տափան**, **տափլակ** և այլն։

Եթե ուշադրություն դարձնենք **տափ** բառի նշանակությանը՝ «հատակ, գետին, հարված, հարթ, տարածություն, հենք» և այլն և սրանցից լծորդված բազմաթիվ այլ իմաստների, դժվար չի լինի նկատելը, որ առնչվում ենք «խփելու, հարվածելու» գործողությունն ու արդյունքն արտահայտող հասկացություններին։ Կարծում ենք, որպես բնածայնական ծագմամբ բառ՝ շատ հավանական է զուգահեռներ ունենա հնդեվրոպերենում ***doph-**, ***deph-** «ծեծել, տրորել»⁵, բարբառներում **տըփել** «ծեծել», որից էլ հայերենում ունենք **դոփել**, Արց.՝ **դօփան** «ծին վարժեցնելու տեղ»։

1 ՀԱԲ, Հատոր 4, էջ 391։

2 Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ», Եր., 2016, էջ 726։

3 Ա. Է., 1967, էջ 25-38։

4 Расторгуева В. С., Эдильман Д. И., Этимологический словарь иранских языков, Том 1, «Восточная литература», Москва, 2000, с. 278-279.

5 Այս մասին կարելի է տեսնել Ջահուկյան Գ., Հայեց լեզվի ատմություն, Նախագրային ժամանակաշրջան, ԳԱ հրատարակչություն, Եր., 1987, էջ 119, 213։

Ա. Բակունցի «Կարմրաքարը» չի սահմանափակվում նշված բառերի և, ընդհանրապես, լեզվի և ոճի գործածության բազմապիսի յուրահատկություններով: Վեպը հարուստ բառապաշար ունի, որտեղ ընդգրկված են տարբեր շերտերի բառեր: Առանձնահատուկ ուշադրության են արժանի ոչ միայն «Կարմրաքար» վեպի, այլև ընդհանրապես Ա. Բակունցի երկերի բառապաշարի ծագումնաբանական դասակարգման հարցերը, որ անմիջական առնչություններ կարող են ունենալ և օգտակար լինել Նոր գրական հայերենի զարգացման միտումներն ուսումնասիրելիս:

АКСЕЛ БАКУНЦ И НОВЫЙ ЛИТЕРАТУРНЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК (ПО ПОВЕСТИ «КАРМРАКАР») - МГЕР КУМУНЦ - В словарном запасе

А. Бакунца есть огромное количество слов, которые, казалось бы, распространились в новом литературном армянском языке посредством произведений великого писателя. Среди них часто попадает на глаза слово «кацан», первое значение которого даёт Григор Татеваци. Словом «кацан» группа диалектизмов имеет многочисленные строения: срккацан, внкецан, кыцынаар, кыцынатак, кыцыналу, кциплер, кецанплор, кецанылор, цылкацан, цалкацан и другие.

Из многочисленных примеров становится ясно, что А.Бакунц отдал дань не слову, распространённому в литературном языке, которое в «Кармракаре» использовалось всего четыре раза, или синониму «шавих», которое наиболее критичнее, а слову «кацан», сохранённому издревле в диалектах, посредством которого в группе диалектов много высказываний и понятий оформились в поэме, в основном, посредством словосочетаний.

Из поэмы «Кармракар» Бакунца мы выделили многозначное слово «глух» и исследовали не только его смысловое разнообразие, диалектные и грабарские параллели слов и словосочетаний, но и тот вопрос, какие новые языковые формы передались литературному языку.

В деле формирования нового литературного армянского языка, несомненно, роль А.Бакунца отмечается использованием новых слов и стилей.

Ключевые слова: литературный армянский язык, великий писатель, кацан, глух, группа диалектизмов, многозначное слово, словарный запас, Кармракар, новые слова, стили.

AKSEL BAKUNTS AND THE NEW LITERARY ARMENIAN (According to "Karmaqar" novel) - MHER KUMUNTS - There are many words in Bakunts vocabulary that we think were spread in the new literary Armenian through the works of the great writer. The word **katsan** is used more frequently, the first explanation of which is presented by Grigor Tatevatsi. The dialect group with the word of **katsan** has multiple formations: **syrynkatsan, vyndykatsan, kytsynahar, kytsynatak, kytsynalus, kytsynpilor, ketsanplor, ketsanhilor, tsylkatsan, tsalkatsan**, etc.

From multiple original examples, it becomes obvious that A. Bakunst maintained not to the word **path** spread in literary language which had been used only four times in «Karmraqar» or to the synonym **track** which is more lyrical but to the word **pathway** preserved from ancient times in dialect through which many expressions and concepts in dialect group were mainly expressed using word-combination.

From A. Bakun's «Karmraqar» novel we have separated the polysemantic word **head** and examined not only its semantic variety, its dialectal or grabaric parallels of new words and conjunctions, but also the question of what new linguistic forms were transmitted to the literary language.

In the formation of the new literary Armenian language, of course, the role of Bakunts is characterized by the use of new words and styles.

Key words: *Literary Armenian, great writer, pathway, dialect group, polysemantic word, vocabulary, Karmraqar, new words, styles.*

ՍԻԼՎԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԼԵԶԻԿԱԿԱՆ ԶԱՓԱԾՈՅՈՒՄ (XIX-XXI դդ.)

Լեզվաոճական արտահայտչականությունը հայոց լեզվին նվիրված չափաժողովում իրացվել է բարեհնչունության, հնչերանգների, հակադրության, աստիճանավորման, կրկնաբերության, շարադասության բանադարձումային բազմազանությամբ: Կրկնաբերության ենթատեսակները՝ հարակրկնություններ (անաֆոր), տարբեր են՝ տողասկիզբ// նույնասկիզբ, տողամիջյան, կրկնավերջույթ: Դրանք բառային, բառակապակցական և ասույթային միջոցներով են արտահայտվել: Հայոց լեզվին նվիրված չափաժողովում իրացված լեզվաոճական արտահայտչականությունը հոգեկանի արբշիռ ապրումների նուրբ ու հուզիչ շարահյուսական կառուցվածքի գեղագիտական խոսքեր են:

Բանալի բառեր: Պատկերավորման միջոցներ, այլաբերություն// դարձույթ, արտահայտչականություն// բարեհնչունություն, հնչերանգ, հակադրություն, աստիճանավորում, կրկնաբերություն (հարակրկնություն (անաֆոր)՝ տողասկիզբ// նույնասկիզբ, տողամիջյան, կրկնավերջույթ), նախադասության՝ ասույթի անդամների շարադասություն, բաց, փակ շարահյուսական կառուցվածք, նուրբ, հուզիչ գեղագիտական չափածո խոսք:

**Ով Արարատ ունի սրտում՝ իր հայոց լեզուն չի՝ մոռանա,
Ում բերանում է հայ լեզուն՝ Մասիսն անտուն չի՝ մոռանա (Հ. Շիրազ)**

Մայրենիին նվիրված չափածո գործեր ցանկացած առաջադեմ ազգության գրականությունում շատ կան: Երբեմն ժողովածուներ են կազմվում (օրինակ, Նույնիսկ Արցախում Ս. Ա. Մինասյան¹, Յու. Ա. Սարգսյան²։ մեր գործածած սկզբնաղբյուրները հիմնականում

¹ Մինասյան Ս. Ա., «Աստվածաշունչ հայոց լեզու», «Դիզակ» տպ., Ստ., 2011 թ., 152 էջ:

² Սարգսյան Յու. Ա., «Մեծերը հայոց լեզվի մասին», «Դիզակ» տպ., Ստ., 2008 թ., 64 էջ:

դրանցում եղածներն են): Պարույր Սևակն¹ ունի չափածոյի այդպիսի թեմայով գիրք, որը ևս գործածվել է մեր կողմից: Մայրենիին նվիրված չափածո գործերը հարուստ են գեղարվեստական ոճին յուրահատուկ պատկերավորման² միջոցներով, որի տեսակներն են *այլաբերություն*³ // դարձույթ⁴ և *արտահայտչականություն* // շարահյուսական բանադարձում: Մեր նպատակն է անդրադառնալ դրանցից II-ին՝ *արտահայտչականի* ենթատեսակներին (շարահյուսական բանադարձումներ՝ բարեհնչունություն, հնչերանգ, հակադրություն, աստիճանավորում, կրկնաբերություն և նախադասության՝ ասույթի⁵ անդամների շարադասություն):

1. ԲԱՐԵՀՆՉՈՒՄԵՆՈՒԹՅՈՒՆ - Բարեհնչունության *արտահայտչական* հնարավորությունները մայրենիին նվիրված գեղարվեստական չափածոյում առավել շատ գործադրվել են հնչյունների հատկանիշների նպատակային օգտագործմամբ, որն ընկալվում է լսելիքով: Դրանք մեծ մասամբ հնչյունական համակարգի բարեհունչ կապակցումներն են, որը յուրահատուկ է հայերենին: Այստեղ մեծ դեր ունեն հնչյունների տարբերակիչ հատկանիշներից *ծայնի* և *աղմուկի* համադրման յուրահատկությունները (բարեհունչ ոճում իշխում են *ծայնավորները, ծայնորդները և խուլ հնչյունները*): Սրանք հայերենի արտասանվածքի յուրահատկություններն են, որոնք գեղագիտական խոսքում հատկապես չափածոյում, ոճական *արտահայտչական* արժևորումներ ունեն: Հայոց լեզվին նվիրված չափածոյում սրանց *արտահայտչականությունն* ու հուզականությունը կատարյալ են: Հնչյունական համակարգի *ծայնավորների ու բաղաձայնների* կապակցումները 36 հնչույթներում մեկի հարաբերությունն է վեցին (1:6. այս կապակցությամբ մեր լեզուն բարեհունչ է և երբեմն $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$ հարաբերություն է լինում խոսքում): Հր. Աճառյանը համաշխարհային մակարդակով «Հայր մեր» աղոթքի հնչյունների հաշվարկումներով դա միջին⁶ է համարել: Մեր

1 Սևակ Պարույր, «Եվ այդ մի Մաշտոց անուն», «Ե., Լույս» տպ., 1991 թ., 80 էջ:

2 Եգեկյան Լ. Կ., էջ 333, «Ոճագիտություն», ԵՊՀ հրտկչ., Ե., 2003 թ., 376 էջ:

3 Դեոտրոյան Հ. Չ., էջ 28, «Հայերենագիտական բառարան», Հայաստան հրտկչ., Ե., 1987 թ., 686 էջ:

4 Խլղաթյան Ֆ. Հ., էջ 108, «Ոճաբանական բառարան» (II հրտկչ.), Չանգակ հրտկչ., Ե., 2000 թ., 176 էջ:

5 Չահուկյան Գ. Բ., «Շարահյուսական ուսումնասիրություններ», էջ 12 և այլն՝ *ասույթ*-պարզ նախադասություն, *լիասույթ*-բարդ նախադասություն, Ասողիկ հրտրկչ., Ե., 2003 թ., 165 էջ:

6 Եգեկյան Լ. Կ., էջ 108, «Ոճագիտություն», ԵՊՀ հրտկչ., Ե., 2003 թ., 376 էջ:

քննարկելիք չափածոյում հաճախակի գործադրված *հայոց լեզու, մայրենի* բառային միավորներում 16 հնչյուններից 9-ը բաղաձայն է, 7-ը՝ ձայնավոր, որը մեր լսելիքի համար *բարեհնչունություն* է ապահովում և համընկնում է մեր փաստարկումներին:

Բանաստեղծական խոսքի *չափն ու հանգը* մեր վարժվածության ավանդական ախորժալուր ձևեր են, որոնք հավաստում են *հայոց լեզուն՝ հայերեն*, թեմատիկայի հնչյունական համակարգում եղած *բառախմաստային ոճական* և *հոգեբանական* դրդապատճառները¹ հայրենասիրություն, ազգասիրություն, սեր, հարգանք, գիտակցական պաշտամունք, համամարդկային վերաբերմունք մայրենիի նկատմամբ և այլն:

2. ՀԵՃԵՐՄԵՆԻ: *Կոչ* (')-Հայոց լեզու, մայրենի լեզու և այլ բառային միավորներ պարունակող մայրենիին նվիրված գեղարվեստական չափածոյում հնչերանգային ձևերից *իշխում* են *կոչի* ճարտասանական արտահայտությունները՝ *կոչականները*, այսինքն՝ հոգեկան ապրումների լավագույն արտահայտություն՝ *շեշտի* հաճախակի գործադրմամբ, որը երբեմն առանձին նշանով չի լինում, բայց ձայնային փոփոխությունը միշտ ակնբախ է: Վերհատույթային՝ վերգծային կառույցի այս միավորն առանձնացնում է ձայնի բարձրությունը, ուժգնությունը²: Դա բնական է: Յուրաքանչյուր ստեղծագործող արտահայտում է հոգեկան տարաբնույթ տվայտանքները (ազգային ինքնություն, սեր, քնքշագին և ուշադիր կոչային դիմելու պահանջներ և այլն): Շեշտ կրում են անգամ նյութական իմաստից զուրկ խոսքի մասերը: Օրինակ՝ հզոր *մայրենիի* տարբեր հատկանիշները հավելյալ *թե՛* կրկնավոր համադասական շաղկապը Պատվական Խաչատրյանի՝ հակադրություն պարունակող գործում կրում է մեղմ շեշտվածություն՝ *Թե՛ մեղմանուշ, // Թե՛ շառաչող* (հայոց լեզուն, 1³. 24): Ահա հնչերանգային այսպիսի կիրառություններով աշխատանքների օրինակներ, որոնք տարաբնույթ դրական վերաբերմունքներ են բովանդակում (*դիմումից* սկսած՝ *խնդրանք-աղերսանքով* ավարտած, և վերնագրերը մեծ մասամբ համընկնում են գործադրված բառերին, բառակապակցություններ-

¹ Խղաթյան Ֆ. Հ., «Հնչյունական ոճաբանություն», էջ 82, «Լեզվի և ոճի հարցեր», հ. VI, ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., Ե., 1982 թ., 274 էջ:

² Պետրոսյան Հ. 2., էջ 495, «Հայերենագիտական բառարան», Հայաստանի հրտկչ., Ե., 1987 թ., 686 էջ:

³ Մեկ՝ 1, թիվը նշում է հիշատակված I գրականությունը՝ Մինասյան Ս. Ա., «Աստվածաշունչ հայոց լեզու»:

րին՝ Ալիքյան Աբրահամ, «Հայ լեզու»՝ Շնորհակալ եմ, լեզու// հայ լեզու (բավականություն արտահայտող հնչերանգը կրկնաբերված է վեց անգամ, 1, 11), Բաբայան Նարեկ, «Ոսկեդենիկ հայոց լեզու» ...Մեր հայ լեզու (հպարտություն, 1, 12), Դև՝ (Ղարաբեկյան Մարգար), «Իմ անգին լեզու»՝ Իմ անգին լեզու// լեզու մտերիմ (մեղմություն, քնքշություն, անսահման սեր, 1, 17) և այլն: Երբեմն հուզառատ չափածո խոսքում մայրենին կամ հայոց լեզուն փոխարինվում է դու, իմ, ինձ, քո և այլ անձնական դերանուններով՝ խուսափելով վերնագրային կրկնությունից: Օրինակ՝ Պարույր Սևակ (Պարույր Ղազարյան), «Հայոց լեզու»՝ Դու ես, այդ դու ես ինձ տիրապետում (21¹), Զե՛ճ՝ մեր հայկական և արամական,// Չկարողացան քեզ խլել մեզից (ն. տ., էջ 15) և այլն: Երբեմն շեշտվող, կենտրոնացող դերանունը համադրվում է լեզվի հետ, վերջինս արժևորելով բացահայտչային դերով, որով առավել է ընդգծվում քննարկվողի կարևորությունը. օրինակ՝ Սիլվա Կապուտիկյանի «Հայ պատանու երդումը մայրենի լեզվին»՝ ...դու՝ իմ հայ լեզու (1, 25) կամ «Հայոց լեզու»՝ Այս ի՛նչ հրաշք աղբյուր ես դու՝ իմ անսպառ հայոց լեզու (1, 24), «Արարատյան դաշտ»՝ Զեզնով աշխարհում կանգնած եմ հստակ,// Իմ տո՛ւն, իմ որդի՛, իմ երգերի գիրք,// Դու՛ իմ մայր լեզո՛ւ՝ Արարատյան դաշտ... և այլն:

-Բացականչական (՝) ճարտասանական հնչերանգ-Այս հնչերանգով դրսևորվում են լեզվի նկատմամբ հուզառատ պաշտամունքային արտահայտության, զգացմունքային դիմելու կոչերի, հույզերի, ապրումների բազմազանությունները, որոնք նաև գրաբարից եկող բարձր ոճի ո՛վ արտահայտության ուղեկցությամբ են: Դրանք հոգեկան բավականության արտահայտություններ են: Օրինակ՝ Մեզպուրյան Ներսես, «Մեր լեզուն»՝ Ո՛վ մեծասքանչ դու լեզու,// Ո՛վ հեշտ բարբառ մայրական (1, 32), Պարույր Սևակ (Պարույր Ղազարյան), «Հայոց լեզու»՝ Դու՛ իմ մայրենի՛ (21²), Վեսպեր Մարտիրոս (Դաբադյան Մարտիրոս), «Աչքի լույսի պես...»՝ Մայրենի՛ լեզու, դու հնչուն իմ խո՛սք,// Երգի պես անուշ, և սրտապարար,// Գողթան քնարի բարբառ՝ ոսկեխոս (1, 52) և այլն: Շեշտվածի և բացականչականի համատեղված կիրառություններ առկա են Սիպիլի (Չապել Ասատուր) «Հայ լեզվին» բանաստեղծությունում (հոգեկան զգացումների պաշտամունք և դիմելու

1 Պարույր Սևակ, «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն», Լույս հրտկչ., Ե., 1991 թ., 80 էջ:

2 Պարույր Սևակ, «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն», Լույս հրտկչ., Ե., 1991 թ., 80 էջ:

մեծարման ծն)՝...Ո՛րվ վեհ բարբառ իմ հայերուն, պատի՛վ քեզ://
...Ո՛րվ հայ լեզուն՝ ի՛մ պաշտելի, ողջո՛ւյն քեզ (1, 52):

-Հարցական (°) հնչերանգ-Այս հնչերանգով կիրառված *հայոց լեզու, մայրենի լեզու* և այլ բառային բուն միավորներ չկան: Գեղագիտական զարմացականն արտահայտելու, անհայտը բացահայտելու միտումը հազվագյուտ է: Թեև հարցական դերանվան հետ է գործածվել, բայց հնչերանգը կրում է ամբողջ նախադասությունը: Օրինակ՝ Նաիրի Չարյանի «Ինչո՞ւ չես խոսում *հայերեն*» (1, 19):

-Պատմողական հնչերանգ-Դա քերականական հնչերանգային նշան չպարունակող խոսք է: Այստեղ գործում է բառային հույզի խտացվածքը: Ահա Համո Սահյանի հրաշք «Հայոց լեզուն»՝ Դու (լեզուն-ՍՍ) ոգին ես եղել մեր եղեգան փողի, // Ոգու կանչն ես եղել մեր պայքարող... // *Կարող էինք ապրել անգամ առանց հողի, // Բայց առանց քեզ ապրել չէինք կարող* (1, 47): Այդպես կառուցվել են շատ գործեր:

3. ՀԱՎԱԴԻՐՈՒԹՅՈՒՆ-Արտահայտչական միջոց *հակադրությունը* մայրենիին նվիրված գեղագիտական չափածոյում գործածված է *հականիշ* բառերով և *հակադրվող շարահյուսական միավորներով* (կապակցություն, նախադասություն՝ ասույթ¹): Ոճական այդպիսի հնարանքով առավել է ընդգծվում մտքի կենտրոն դարձածը, ուշադրություն է բևեռվում էականի վրա: Օրինակ, *բառային հականիշներ՝ մեղմանուշ-շառաչող՝* (Սահյան Համո, «Հայոց լեզու»՝ *Հինավուրց ու նորոգ դու իմ հայոց լեզո՛ւ* (1, 47), Խաչիկ Դաշտենցի «Հայերեն»՝ *Մեր շուրջը լեզուներ նոր ու հին*, (1. 15). Մուշեղ Իշխանը եռանիշ հակադրությամբ հայ մարդու կյանքի էությունն է խտացրել *լեզվի մեջ (լեզվի փոխարեն գործադրելով նաև հոն արևմտահայերեն ցուցական այնտեղ դերանունը)*՝ Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն... // *Հոն* է (լեզվում) միայն, որ կրնա գտնել ամեն հայ կրկին // Խաժամուժի մեջ օտար կորսնուցուցած իր հոգին, // *Անցյալն* ասիուն և *ներկան*, նույնիսկ *ապագան* (1, 22) և այլն: Ռոբերտ Եսայանն այլաբերված հակադրությունը *լիասույթում* է տվել, որտեղ բառակապակցությամբ արտահայտված *լեզու* հասկացությունն աստիճանավորված ասույթներով հակադրել է հետևությանը՝ *գահն ամենավեհին*՝ Մեր

1 Ջահուկյան Գ. Բ., «Շարահյուսական ուսումնասիրություններ», էջ 12 և այլն՝ *ասույթ*-պարզ նախադասություն, *լիասույթ*-բարդ նախադասություն, Ասողիկ հրատվչ., Ե., 2003 թ., 165 էջ:

բարբառի գուռից ջուր է խմել Աստված, // *Լեզվի հրով* հղկել դարձվածքներ քարե, // Ու դարձրել *բառը* // Ոչ թե հոգու պատյան // Կամ արևի ծնծղա, // Այլ՝ *գահն ամենավեհ* (1, 18): Յուրահատուկ է Պարույր Սևակի «Մայրենի լեզու» բանաստեղծությունում *լեզու* բառի մեծարումը հիևույթով¹ (*մասունք* է կոչելը և կարծես սթափվելով, գեղագիտական շտկում կատարել՝ *լեզվի* նկատմամբ ստեղծելով ոճական հնչեղ ու ծավալուն մեծարման արտահայտչական *հակադրություն*)՝ ԶԵ՞ որ դու հիմա ո՛չ միայն լեզու, // Այլև մասո՛ւնք ես, // Մասո՛ւնք ես մի սուրբ, // Անկողոպտելի մասո՛ւնք սրբազան // Դարերի խորքից դարերին հասած: // *Մասո՛ւնք*: Ինչպե՞ս թե: *Մասո՛ւնքս* ո՛րն է: // Մասունքի տեղը տուփն է կամ հորն է: // Իսկ դու՝ դարավոր, բայց և առույգ ես, // Գիսավոր ծուխ ես, բայց և խարույկ ես, // Ինչքան պարզ՝ նույնքան ասպետական ես, // Շատերի մեջ ես, բայց պետական ես, // Եվ դրանով իսկ դու պետքական ես (ՊՍ, 16):

4. ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄ-Մայրենիին նվիրված չափածոյում գործածված ոճական *աստիճանավորման* ժամանակ հաջորդական նկարագրվող երևույթները, առարկաները, գործողություններն աստիճանական զարգացում են ունենում իմաստային սաստկացման կամ թուլացման ձևով, երբեմն նաև հավասարարական եղանակով: Ըստ այդմ էլ՝ աստիճանավորումը *բարձրացող, հավասարարական, իջնող* կամ *խառը* տեսակներ է ունենում: Դրանց արտահայտության միջոցները բառային (հոմանիշներ), բառակապակցական և նախադասությունների միջոցով են լինում: Մայրենիին նվիրված չափածոյում աստիճանավորման արտահայտչական միջոցը տարածված երևույթ է, որովհետև մեծ մասամբ ոգու, զգացումների հուզաթաթալ ու արբշիռ գեղագիտական անմիջական գեղումներ են: Դրանք հիմնականում մեծ միավորներով կառույցներ են:

ա) *Բառակապակցությամբ* արտահայտված *աստիճանավորում*՝ Լուսենց Աշոտ, «Մայրենի լեզու»՝ Մայրենի լեզու՝ մոր նման անուշ... // ...սուրբ լեզուն... // Օ՛, հայրենաշունչ, հոգեշահ լեզու // ... Ո՛վ իմ մայրենի հիասքանչ լեզու (1, 23-24), Կապուտիկյան Սիլվա՝ «Հայոց լեզու»՝ Հայերեն իմ ե՛րգ, հայերեն հնչո՛ւն (1, 25), «Իմ հայ լեզու»՝ Իմ հայ լեզո՛ւ, իմ մայր լեզո՛ւ..., Կարենց Վահագն՝ Հայերեն իմ երգ, հայերեն հնչյուն (1, 25), Հարությունյան Միքայել, «Միակ

¹ Ն, տ., *հիևույթ*-պարբերություն:

մայրենին»՝ Քանգի չգիտես *միակ մայրենին* // Քո հայոց լեզուն (1, 31) և այլն:

բ) *Նախադասությամբ* արտահայտված *աստիճանավորում*՝ Սահակյան Արամայիս, «Ձոն հայոց լեզվին»՝ Հայեր կան՝ չգիտեն հայ լեզուն: // ...որ լեզվով հայկազեան // Անձամբ Հայկ Նահապետն է խոսել: // Մեր լեզուն լեցուն է գանձերով: // ...Աստծո հետ խոսել ենք մեր լեզվով: // ...որ խորունկ այդ լեզվով // Գրիգոր Նարեկացին է խոսել (1, 46) և այլն:

գ) *խառը՝ բառ, բառակապակցություն, նախադասություն*՝ Հակոբյան Վարդան, «Հայոց լեզու»՝ Որն է ահա մեր սուրբ լեզուն, // մեսրոպատառ իմ մայրենին, // հայերենը // Խորտակվողի մեկնած ձեռքին // ձեռք ես մեկնել, // հայերեն է և այլն (1, 30), *բառակապակցություն, նախադասություն*՝ Իսկանդարյան Չոյա, «Մայրենի լեզու»՝ Քեզ եմ հղում իմ սրտինը, // Այն, որ ունեմ լոկ քեզ համար: // Իմ մայր լեզու՛, իմ մայրենի՛, // Դու ուղեկից՝ հազարամյա, // Արամական ու հայկական իմ մեծ հոգի՛ // Իմ բիրյիական ժողովրդի (1, 23) և այլն:

5. ԿՐԿՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ-Մայրենիին նվիրված չափածոյում կիրառված գեղագիտական *կրկնաբերություններն* ամենատարածված *արտահայտչական* միավորներ են, որոնք խոսքին հաղորդում են հուզականություն, հնչեղ երանգ՝ ուշադրություն բևեռել տալով կարևորի վրա (կրկնաբերությունը հայերենում լավ ուսումնասիրված թեմա է¹ և ընդհանուր անվանվում են *հարակրկնություններ* (անաֆոր))։ Մայրենիին նվիրված չափածոյում առավել հաճախակի են բառային, բառակապակցական միավորներն են *կրկնաբերվել* և երեք դիրքում են՝ *տողասկիզբ* կամ *նույնասկիզբ*, *տողամիջյան*, *կրկնավերջույթ*։ Այսպիսի *կրկնաբերությունները* կամ նրանց մի մասը եթե մեկտեղվում են, կազմում են *խառը* տեսակ։ Կրկնաբերված *հայոց լեզու* // *մայրենի լեզու* // *մայրենի* կամ *հայերեն* կառույցները (կամ դրանց փոխարինած դերանունները) մեր ուսումնասիրած չափածոյում մեծ մասամբ երկտող, քառատող չափածոյում են (իշխողը քառատողայինն է)։ Եռատող, հնգատող և ավելին սակավ դեպքերում են (ազատ կառույցները ևս քիչ են)։ Հազվագյուտ դեպքերում նաև խառը թվային կառույցներով վերջակետված *նախադասություններ* կան, որտեղ *կրկնաբերությունը* տարաբնույթ է։

¹ Ամբողջական վերջին գիրքն Ա. Ս. Կարապետյանի «Կրկնությունը և գեղումը ժամանակակից հայերենում», ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատչ., Ե., 2016 թ., 608 էջ։

Նույնասկիզբ-Աթմաճյան Մառի, «Հայ լեզվին»՝ Ո՛վ հայ լեզու (կրկնաբերվել է երկու անգամ, 1, 10), Դավթյան Վահագն, «Հայոց լեզու»՝ Իմ մայրենի՛, իմ բարբա՛ռ (չորս անգամ, 1, 15-16) և այլն: Տողամիջյան-Ալիքյան Աբրահամ, «Հայ լեզվին»՝ լեզուս (հինգ անգամ, 1, 11), Բահարյան Անդրանիկ, «Լեզուները»՝ լեզու (հինգ անգամ, 1, 13), Ալիքյան Աբրահամ, «Հայ լեզու»՝ լեզու (հինգ անգամ կրկնաբերվել է, 1, 11) և այլն:

Կրկնավերջույթ-Կրկնավերջույթներն առավել հաճախակի կիրառվածներն են՝ Բագեն Երվանդ, «Հայոց լեզուն»՝ հայոց լեզուն, (հինգ անգամ, 1, 13), Գրաշի Աշոտ, «Հայոց լեզուն»՝ հայոց լեզուն (վեց անգամ, 1, 13), Հովհաննես Շիրազ, «Հայերեն»՝ հայերեն (տասնվեց անգամ, 1, 40-41) և այլն:

Հայոց լեզու// մայրենի լեզու//մայրենի կամ հայերեն կրկնաբերվողները (կամ դրանց փոխարինող դերանունները) սակավ են երկտողյան տներում կրկնաբերվել: Չարյան Նաիրի, «Հայոց լեզուն» (սկիզբում յուրքանչյուր տողում է կրկնաբերությունը)։

Արի՛, եղբա՛յր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն՝

Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն:

Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,

Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ հայոց լեզուն... և այլն: (1, 18-19)

Երրորդ տողում կրկնաբերություն՝ Խաչիկ Դաշտենցի «Հայերեն» բանաստեղծության նույն վերնագրային բառը:

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,

Մեր շուրջը խոսում են այլորեն,

Ե՛կ խոսենք, եղբա՛յր իմ, հայերեն:

Կու՛լ չերթանք այս ահեղ լափումին,

Թույլ չտանք՝ մեր լեզուն ավերեն,,

Ե՛կ խոսենք, միշտ խոսենք հայերեն:

Մենք ունենք աշխարհում Մասիս սար,

Այդ սարը գալիս է դարերեն,

Նա անվերջ խոսում է հայերեն...(և այլն, 1, 15)

Չորրորդ տողում Միքայելյան Նանսեն, «Հայոց լեզուն».

Արագածի շաղոտ լանջով,

Հրազդանի շող ու շնչով,

Մեր երգերի ոսկե փնջով

Ճանաչում են *հայոց լեզուն*:
 Հովի շուրթին զվարթ ու զով,
 Բարդինների կանաչ նազով
 Եվ խաղողի ծաղկած վազով
 Սոսափում է *հայոց լեզուն*:
 Կռունկների թևապարով,
 Կռունկավար իր նոր բառով,
 Նոր շենքերի սյունաշարով
 Խոյանում է *հայոց լեզուն*: և այլն: (1, 34-35)

Երկրորդ և չորրորդ տողերում *կրկնաբերվողները* սակավ են՝
 Բազեն երվանդ, «Հայոց լեզու» (I տան IV տողը կրկնաբերություն
 չունի)։

Իմ հայրենի արտերի պես
 Հայոց լեզուն հասկ է հասուն,
 Հագարակունք աղբյուրի պես,
 Ամմահական ջուր է հոսուն:
 Երգ է խոսուն, ջուր է հոսուն,
 Ոսկեդարյան *հայոց լեզուն*.
 Ամմահ մնա ջինջ ու խոսուն,
 Մեր մեծասքանչ *հայոց լեզուն*...
 ...Պաշտպանում եմ ես իմ մայրենի,
 Հրաշափառ *հայոց լեզուն*,
 Մեր ու սրտեր միաձուլող,
 Լուսապայծառ *հայոց լեզուն*... և այլն: (1, 13)

Տողային կրկնաբերություն (կարճ կամ երկար)-Չարյան Նաիրի,
 «Հայերեն»՝ *Ինչո՞ւ է ես խոսում հայերեն* (չորս անգամ կրկնաբերվել
 է, 1, 18-19), Իսկանդարյան Չոյա, «Մայրենի լեզու»՝ *Իմ մայր լեզու*,
իմ մայրենի՝ (երկու անգամ, 1, 23), Կապուտիկյան Սիլվա, «Իմ հայ
 լեզու»՝ *Իմ հայ լեզո՞ւ, իմ մայր լեզո՞ւ* (երկու անգամ, 1, 26), Հակոբյան
 Վարդան, «Հայոց լեզու»՝ *հայերեն է* (տասներկու անգամ, 1, 30),
 Մկրտչյան Սողոմոն, «Մայրենի լեզու»՝ *Իմ լուսաբարբա՛ռ մայրենի
 լեզու* (երկու անգամ, 1, 35-36), Մուրադյան Սուրեն, «Մայրենի լեզու»՝
Մայրենի լեզու (ուրժ անգամ, 1, 37), Սահակյան Արամայիս, «Որտեղ
 լեզուն է քո մայրենի»՝ *Որտեղ լեզուն է քո մայրենի* (2 անգամ, 1,
 45), Սարգսյան Վարդգես, «Մայրենի լեզուն մեր մեքրոպատառ»՝
Մայրենի լեզուն մեր մեքրոպատառ (երեք անգամ, 1, 49-50) ևն։

Շարադասությամբ ԽԱՌԸ դիրքերով *կրկնաբերություն* (իշխող է)-*Մայրենիին* վերաբերող նույն բառը կամ բառակապակցությունը տարբեր տողերում զանազան դիրքային ձևերով են նաև *կրկնաբերվել*, ինչպես՝ Աթմաճյան Մառի, «Հայ լեզվին»՝ Ո՛վ հայ լեզու// *հայ լեզու* (սկիզբ, մեջ (1, 10), Բազեն Երվանդ, «Հայոց լեզուն»՝ *հայոց լեզուն*, (սկիզբ, վերջ, 1, 13), Բաղդասարյան Խորեն, «Մեր լեզուն»՝ *Լեզուն մեր հայոց* (սկիզբ, վերջ, 1, 12), Բահարյան Անդրանիկ, «Լեզուները», տողամեջ, մի անգամ սկիզբ (1, 13) ևն:

Մայրենիին նվիրված չափածոյի հայահունչ *կրկնաբերությունները*, ինչպես նշել ենք, իրացվում են բառերով, բառակապակցություններով և նախադասություններով (արմատական կրկնություններին չենք անդրադարձել): Այստեղ սահմանափակ են *նախադասությունների կրկնաբերությունները*: Դրանք հիմնականում ծավալուն բարդ նախադասությունների բաղադրիչ ասույթներն¹ են (պարզ նախադասություն): Օրինակ՝ Չարյան Նաիրիի «Հայերեն» բանաստեղծության առաջին տան տողերը *կրկնաբերվում* են հաջորդ տներում՝ դառնալով դրանց յուրատիպ կառույցի միավոր ասույթներ, ինչպես՝ *Ինչո՞ւ էես խոսում հայերեն* (չորս անգամ *կրկնաբերվում* է, որպես առաջին տան *կրկնաբերված* վերջին տող, այն հիմք է դառնում վեջին տանը ևս երկու անգամ գործածվելուն, մյուսները երեքական են *կրկնաբերվել* (բանաստեղծության 25 տողից 13-ը *կրկնաբերվածներ* են.

*Ինչո՞ւ էես խոսում հայերեն...
Ես երգ եմ հյուսում քեզ համար,
Հոնքերդ հպարտ ու կամար,
Իջնում ես հայոց լեռներեն,-
Ինչո՞ւ էես խոսում հայերեն:*

*Հոնքերդ հպարտ ու կամար,
Հանց վեհ տաճարները հայոց,
Հայացքդ մաղում է ամառ:
Հայկից են աչքերը քո բոց,
Հոնքերդ հպարտ ու կամար:*

1 Ձահուկյան Գ. Բ., «Շարահյուսական ուսումնասիրություններ», էջ 12 և այլն, Աստղիկ հրատրվ., Ե., 2003 թ., 165 էջ:

Ես երգ եմ հյուսում քեզ համար,
Դու չես հասկանում իմ լեզուն,
Ես խորթ եմ, օտար քո հոգուն,
Բայց քո տեսիլով դու խանդավառ՝
Ես երգ եմ հյուսում քեզ համար:

Իջնում ես հայոց լեռներեն,
Ինչպես թեթևոտ մեր պախրան,
Նազանքդ այնպես նաիրյան,
Հմայքդ այնպես հայերեն՝
Իջնում ես հայոց լեռներեն:

-Ինչո՞ւ չես խոսում հայերեն:
Նորքից ես թռել դու, իմ լո՛ր,
Չանգուն է երգել քեզ օրոր,
Մասիսն է հսկել վեհորեն,
Ինչո՞ւ չես խոսում հայերեն: (1, 19)

Վարդան Հակոբյանի «Հայոց լեզու» բանաստեղծության *հայերեն* է ասույթը տասներկու անգամ է *կրկնաբերվել* (1, 30): Սա ընթերցանության ժամանակ հստակ տեսանելի, զգոնացնող է դառնում, ընդգծվում է կարևորը:

Որն է ահա մեր սուրբ լեզուն՝
մեսրոպատառ սուրբ մայրենին՝
հայերենը...
Խորտակվողի մեկնած ձեռքին
ծե՞ռք ես մեկնել,-
հայերեն է,
Երամից ետ ընկած հավքի
թև՞ն ես մտել-
տարել մինչև հորիզոնը-
հայերեն է... (և այլն, 1, 30)

Խաչիկ Դաշտենցի «Հայերեն» բանաստեղծության *խոսենք հայերեն* ստորոգյալն ու ձևի պարագան կրկնաբերվել են չորս անգամ (1, 15): Հազվագյուտ երևույթ է *երկրորդական նախադասության կրկնաբերվելը*: Ահա Սահակյան Արամայիսի «Որտեղ լեզուն է քո մայրենի» բանաստեղծության բարոյահոգեբանական իմաստասի-

րությունում (փիլիսոփայություն) գործադրվել է դա՝ *Որտեղ լեզուն է քո մայրենի* (2 անգամ):

Որտեղ լեզուն է քո մայրենի
Կա մի հոգեմաշ հիվանդություն՝
Հայրենի երկրի կարոտը մեծ.
Շատերն են խնդրել՝ մահից հետո
Գեթ հայրենիքում թաղեն իրենց:
Հնարավոր չէ տանն օտարի:
Մարդ իրեն տանտեր գգա իրոք,
Որտեղ լեզուն է քո մայրենի,
Քո հայրենիքն այնտեղ է լոկ: (1, 45)

6. ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ-Հայոց լեզու// մայրենի լեզու//մայրենի կամ *հայերեն* կառույցները մայրենիին նվիրված գեղագիտական չափածոյում կիրառված են հիմնականում հայերենի սովորական շարադասությամբ: *Լեզու* կոչականը երբեմն շրջուն շարադասությամբ՝ *հետադաս որոշիչ* է ընդունել (երբեմն նաև դրա հետ այդպես հատկացուցիչն է): Օրինակ՝ Բաղդասարյան Խորեն, «Մեր լեզուն»՝ *Լեզուն մեր հայոց* (որոշիչը, հատկացուցիչը հետադաս են, 1, 12), Գույումճյան Հակոբ, «Տղա՛ս, լեզուն հայկական»՝ լեզուն *հայկական* ..., լեզվով *հայկական*, լեզուն *հայկական քաղցրալար* (որոշիչը՝ հետադաս, 1, 14), Դև (Ղարաբեկյան Մարգար), «Իմ անգին լեզո՛ւ»՝ լեզո՛ւ *մտերիմ* (նույնը, 1, 17), Թումանյան Հենրիկ՝ «Մեր լեզուն»՝ Հայոց հին լեզո՛ւ *քաղցր ու սրբատաշ*:// Զեզնով են երգել Ֆրիկ ու Նադաշ (1, 24, այստեղ լեզվին վերաբերող երեք որոշիչներից երկուսը հետադաս են՝ *շրջուն*), Մեզպուլյան Ներսես, «Մեր լեզուն»՝ Ո՛վ մեծասքանչ դու լեզու, // Ո՛վ հեշտ բարբառ *մայրական* (վերջին որոշիչը հետադաս է, 1, 32), Մելքոնյան Չարեհ, «Լեզու հայկական»՝ Լեզո՛ւ *հայկական* (1, 33, նույնը) և այլն: *Ենթակա, ստորոգյալ* գերադաս անդամների *շարադասության փոփոխությունը* տարածված երևույթ է հատկապես անձնավորված *ենթակայի* ու կոչականի համադրմամբ, որը բխում է մեծ մասամբ հանգավորումից, ինչպես՝ Նազարյան Ստեփանոս՝ «Մայրենի լեզու»՝ Մանկական լեզվիս թոթովանք տկար, // Հնչում ես իմ մեջ դու միշտ անդադար... // Գեղեցիկ լեզո՛ւ, հրաշալի լեզո՛ւ, // Այդ ինչպես քաղցր *հնչում ես* ինձ դո՛ւ (1, 38) և այլն: *Խնդիր՝ Միքայել Նալբանդյանի* «Սիրական լեզու» բանաստեղծությունում *լեզվին* փոխարինող

քեզ խնդիրը՝ առաջադաս է կոչականից, որից հետո հաջորդ տողի սկզբում ստորոգյալն է: Այդպես չափածո տողը կարգավորելով, նաև ուշադրություն բևեռվում հիմնական օբյեկտի վրա՝ Քեզ քո սիրական հայրենի բարբառ, // Ձգտում է անուշ այս խնկի բուրվա՛ն (1, 38):

Այսպիսով, լեզվաճանաչական արտահայտչականությունը հայոց լեզվին նվիրված չափածոյում իրացվել է բարեհնչունության, հնչերանգների, հակադրության, աստիճանավորման, կրկնաբերության, շարադասության բանադարձումային բազմազան օրինակներով, որտեղ հնչեղը և ծավալունը *կրկնաբերության* ենթատեսակներն ու *կոչի* արտահայտություններն են, որոնք հոգեկանի արբշիռ ապրումների նուրբ ու հուզիչ գեղագիտական լեզվաճանաչական արտահայտիչ ապրումների շարահյուսական կառուցվածքներ են:

ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКАЯ ВЫРАЗИТЕЛЬНОСТЬ В ПОЭЗИИ ПОСВЯЩЕННОЙ АРМЯНСКОМУ ЯЗЫКУ - СИЛВА МИНАСЯН -

Лингвостилистическая выразительность в поэзии, посвященной армянскому языку, осуществлялась употреблением разнообразных благозвучий, интонаций, антитез и градаций. Подвидами повтора являются анафоры, они различны: повторы в начале строки, в середине и в конце. Они выражены словосочетаниями и изречениями. Лингвостилистическая выразительность употребляемая в прозе, посвященной армянскому языку – нежное и трогательное отражение душевных переживаний, в открытых и закрытых синтаксических структурах.

Ключевые слова: образные средства, аллегория, выразительность, благозвучие, интонация, анафора, градация, повторение, восклицание, ударение, повторение в начале, повторение в середине, повторение в конце, порядок слов в прозе, закрытые и открытые синтаксические структуры, нежное трогательное, художественная речь.

LINGUISTILISTIC EXPRESSION IN POETRY DEDICATED TO THE ARMENIAN LANGUAGE - SILVA MINASYAN

Lingvo-stylistic expressiveness in poetry dedicated to the Armenian language was carried out using a variety of harmony, intonations, antitheses and gradations. Subtypes of repetition are anaphoras, they are different: repetitions at the beginning of the line, in the middle and at the end. They are expressed by phrases and sayings. Lingvo-stylistic expressiveness used in prose devoted to the Armenian language is a gentle and touching reflection of spiritual experiences in open and closed syntactic structures.

Key words: *figurative means, allegory, expressiveness, harmony, intonation, anaphora, gradation, repetition, exclamation, stress, repetition at the beginning, repetition in the middle, repetition at the end, replacement of the members of the prose, closed and open syntactic structures, gentle, touching, artistic speech.*

ՎԱՀՐԱՄ ԼԱԼԱՅԱՆ Պատմական գիտությունների թեկնածու

Խօսել մաքուր հայերենով, նշանակում է թոթափած
լինել օտարի լուծը...

Լեզուն մեր կեցության տունն է՝
Մարտին Հայդեգեր.

Եւ հնչում է որպէս աղօթք արքայական քո լեզուն
Վ. Տէրեան

Ես իմ անուշ Հայաստանի Արեւահամ **բառն** եմ սիրում

Մեր լեզուն ճկուն է եւ բարբարոս...
Ե. Զարենց

ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒՆ ԵՎ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ

Ի սկզբանէ հայոց լեզուն մեր **ազգային ինքնութեան** առաջին եւ առանցքային ցուցիչն է եղել, եւ Հայաստանը կամ Մեծ Հայքը համարուել է որպէս հայոց լեզուի տիրապետութեան երկիր. «**Աշխարհ ամենայն Հայոց Լեզուին**»: Այլ խօսքով՝ օտարիւն հայի կերպարը միայն Հայկի սերնդի ժառանգորդութեամբ չի սահմանափակուել, այլեւ միաձուլուած է եղել **Թորգոմեան լեզուի** կրողը լինելու հանգամանքին: Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ հայկազուններին բնորոշ է եղել խիստ արտայայտուած ազգային ինքնագիտակցութիւնը եւ արժանապատուութիւնը, որ վառ կերպով դրսևորուել է հայոց **ազգ-պետութիւնների** ունեցած արժեհամակարգով և **հայկական բանակի** հարեւանուէր առաքելութեամբ: Զրիստոնէութեան ընդունումից յետոյ էլ հայոց ազգային ինքնութիւնը չի թուլացել, այլեւ՝ ճշմարիտ աստուածաճանաչողութեան յոյսով և գրերի գիտով աւելի է ճոխացել ու իմաստաւորուել՝ Հայ Եկեղեցու դաւանութեան հիմքով կերտելով ճշմարիտ կրօնական ինքնութիւն եւ ստեղծելով ուրոյն մշակոյթ:

Բանալի բառեր: Լեզու, ազգ, պետութիւն, ինքնութիւն, ազգային մշակոյթ, արմենոիդ ռասա, կրօնական ինքնութիւն, Հայկական բանակ, Արարատ, Մեծ Հայք, ազգային գաղափարախօսութիւն:

Քաղաքական գիտությունների դոկտոր, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն Արմեն Այուզեանը իր «Հայկական ինքնության հիմնաքարերը՝ Բանակ, Լեզու, Պետություն» աշխատության մեջ բառականին խորքային վերլուծության է ենթարկել լեզուի եւ ինքնության հարցերը եւ **«Հայաստանի պատմության լուսաբանումը Ամերիկյան պատմագրության մեջ»** հոչակաւոր մենագրութեան յոյս ընծայումով հզօր հակահարուած հասցրել հայոց ազգային ինքնութեան դէմ մարտնչող կեղծ հայագիտական դպրոցի ներկայացուցիչներին, որոնց մէջ քիչ էն նաեւ հայկական ծգում ունեցող կեղծարարները: Լեզուի եւ ինքնաճանաչողութեան կապն անհերքելի է, քանի որ լեզուն կարող է նաեւ «ինքնութիւն պարտադրել»: Այլ խօսքով՝ **«մենք»**-ի գիտակցութիւնը մարդու մէջ առաջին հերթին ի յայտ է գալիս լեզուական միասնութիւնից. «ես հայերէն խօսող եւ հայոց տառերով գրող ժողովրդի մի մասնիկն եմ, որ հազարամեակներ շարունակ ապրել է Հայկական Լեռնաշխարհում», - այս գիտակցութիւնն է աստիճանաբար ամրագրւում հայկական դպրոց յաճախող հայ մանուկի մտքում: Իսկ **«նրանք»**-ը՝ հայ դպրոցի աշակերտի համար հայոց լեզուով չխօսող, Մաշտոցեան տառերով չգրող, Հայոց պատմական հայրենիքի վերականգնման նախանձախնդրութիւն չունեցող օտարներն են: Այսինքն, մեր լեզուն միայն պարզ հաղորդակցութեան միջոց չէ, այլեւ ազգային ինքնութեան ներարկիչ, հոգեմտաւոր տարածք, հոգեւոր հայրենիք, հոգեւոր Հայաստան: Արուեստի, մշակոյթի, գիտութեան բոլոր ժամանակների գործիչները, մարդկութեան հոգեւոր առաջնորդները չափազանց կարեւորում էին լեզուի առանցքային դերը հոգեբարոյական բարձրագոյն արժեքներ դաւանող հանրոյթների ձեւաւորման գործում: Մեծն Գրիգոր Նարեկացու «Մատեն»-ն այս դէպքում, կարծում ենք, դեռ իր առաքելութիւնը չի աւարտել, չնայած Աստծուն փնտրող սերունդների բացակայութեանը: Ամեն դէպքում, առանց ճշմարիտ աստուածաճանաչողութեան (301թ.) մեր կրօնական ինքնութեան խորքային ընկալումը մշուշոտ կը դառնար: Արդէն գրերի գիւտից յետոյ (405թ.) հայոց ինքնութեան երկու մասերը՝ **ազգայինն ու կրօնականը**, միաձուլուեցին եւ այլեւս անհնար է այն տարանջատել¹: Մոտ մէկ հազարամեակ (5-15դդ.) կրօ-

1 Տե՛ս նաեւ Լ.Խուրշուդյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999, էջ 214-215:

Նական գիտակցութիւնը գերակայ էր աշխարհում միւսներ հասարակութիւնների աշխարհիկացումը¹: Սակայն, Նոյնիսկ աստուածամերձ արեւիստական տերութիւններն ու մարտնչող գաղափարախօսութիւնները՝ անկարող էին իսպառ վերացնել մարդկային հոգուց ամ աստուած ձգտումը: Եւ **Արցախեան Ճարժման**-ը բախուելով, խորհրդային աստուածամարտ կայսրութիւնը երեք տարի անց պիտի փլուզուէր (1988-1991), քանզի ստի վրայ հիմնուած ցանկացած կոռապաշտական համակարգ դատապարտուած է կործանման: Այս իրավիճակում չափազանց կարեւոր էր պետական մակարդակով **հայոց ինքնութեան** արժեւորման եւ հզօրացման ռազմավարական Նպատակի իրագործումը, որը մեզ յայտնի պատճառներով տեղի չունեցաւ²: Ամեն մի ազգ, ժողովուրդ դարերի ընթացքում ձգտել է պահպանել իր ազգային դիմագիծը, վերակառուցել, ամրապնդել ազգային ինքնութեան հոգետաճարը: Միաստուածութեան աւանդոյթի կորստից յետոյ բազմաստուածական մտածողութեան պայմաններում «աստուածները» եւս ազգայնացուել էին: Մեր Նախահայրը՝ Հայկ Նահապետը, ըստ Միջագետքեան աղբիւրների՝ համարուել էր «Հայա աստծոյ» որդին³ (քրիստոնէական ընկալմամբ՝ զուցէ՞ Նա մեր ազգի հովանաւոր հրեշտակն է եղել, դժուար է պնդել): Հայկը, ըստ Մովսէս Խորենացու՝ Նոյի երեք որդիներից՝ Հաբեթի սերնդից էր՝ **Հաբեթ-Թորգոմ-Հայկ**: Պատմաբան Ա. Մովսիսեանը ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ եբրայական, հունական եւ վրացական աւանդոյթները հայերին իրենց ազգակից էին տեսնում, իսկ հայկական հին աւանդագրոյցը մեզ ոչ մէկին ազգակից չի համարում⁴: Ըստ ակադեմիկոս Գ.Ջահուկեանի՝ Հայոց Լեզուի կրողները հնդեւրոպական ընդհանրութիւնից առանձնացել են **4-րդ հազարամեակի վերջերին**, երրորդի սկզբում⁵: Այսինքն, հայերը ինքնուրոյն էթնիկ միաւոր են

1 Արդէն Ռ.Պատկանեանը «**հայ և հայութիւն**» բանաստեղծութեան մէջ ձգտում էր ազգային ինքնութեան գերակայութեան՝ կրօնականի Նկատմամբ, որպէս զի այլադավան հայերը չկտրուէին հայութիւնից ու ծուլուէին: Տե՛ս Ռ. Պատկանեան, «Երկեր», Եր.-1980, էջ 37-39:

2 Տե՛ս Լ.Խորշոյան, Նոյն տեղում, էջ 223-242:

3 Տե՛ս Հասմիկ Գուլպեան՝ «Հայագիտութեան և հայապահպանութեան հարցեր», Խո.Ա., Հայկական Լեռնաշխարհ, Հնդեւրոպական Նախահայրենիք, հարցազրոյց Արևելագիտութեան Ինստիտուտի ավագ գիտաշխատող Արտակ Մովսիսյանի հետ, էջ՝ 59:

4 Տե՛ս Նոյն տեղում, էջ՝ 262:

5 Տե՛ս Նոյն տեղում:

դարձել Զ.ա. 4-րդ հազարամեակի վերջերից¹: Հայկական ինքնուրույն խեղելու միտումնաբերական «խառնուրդային տեսությունը»՝ իբր հայերը հնդեւրոպական ժողովուրդ չեն և առաջացել են ասիական ցեղերի միախառնումից (այսպես կոչված **ասիանիկ տեսությունը**), գիտությունը ժխտում է, քանզի երբևէ երկու էթնոսների ծովումից երրորդը չի առաջանում, եւ միայն մէկ հիմք-ժողովուրդի է տրուած վճռական եւ կենտրոնական դերակատարումը²: Ըստ Մովսիսեանի՝ սա արտացոլում է նաեւ լեզուի մէջ: Եթէ մեր այսօրուայ բառապաշարի 20% կազմող բնիկ հայերէն, հնդեւրոպական ծագման բառերը հանուի, լեզուն կը փուլզուլի, իսկ եթէ միւս 80%-ը հեռացուի, այն կը շարունակի իր գոյութիւնը³: Ըստ կենսաբանական գիտութիւնների թեկնածու Նուարդ Զոչարի՝ **հայերի մարդաբանական տիպն առաջացել է ու կազմաւորուել Հայկական Լեռնաշխարհում** և այսօր էլ արտացոլում է հայ ժողովրդի մեծամասնութեան մէջ⁴: Հեղինակի կարծիքով՝ վրացիները շատ աւելի մետիսացուած ժողովուրդ են՝ մեր համեմատութեամբ⁵: Ըստ Զոչարի՝ Եւրոպայի բոլոր նոր երիտասարդ ազգերը խառնուրդ են՝ մետիսացուած, նրանց նախնական եւ այսօրուայ մարդաբանական տիպերն ահռելի տարբերութիւն ունեն⁶: Մեր ժամանակի համար խիստ կարևոր է նաև ժառանգաբան-մարդաբանի հետեւեալ դիտարկումը. «ինքնապահպանման, ազգապահպանման բնագոյով **հայ ժողովուրդն աշխատել է չմետիսացուել այլազգիների հետ**, չնայած մեր Լեռնաշխարհը համարուել է ազգերի, ժողովուրդների խառնարան⁷»: Նշենք նաև, որ **արմենոիդ** ռասայական տիպը հասնում է մինչև միջին հին քարէ դար (պալէոլիթ) եւ կազմաւորուել է որպէս Եւրոպոյի տիպի հարաւային ճիւղ՝ **անփոփոխ պահպանուելով այն սահմաններում, որտեղ ձևաւորուել է**⁸: Հայերի և Հայաստանի մասին ամենավաղ յիշատակութիւնը գրառել էին միջագետքի հնաբնակները՝ շումերները՝ Զ.ա.28-րդ դարում **Արատտա** պետու-

1 Տե՛ս Նոյն տեղում:

2 Տե՛ս Նոյն տեղում:

3 Տե՛ս Նոյն տեղում:

4 Տե՛ս Նոյն տեղում, էջ 269, 271:

5 Տե՛ս Նոյն տեղում:

6 Տե՛ս Նոյն տեղում: Ռ.Պատկանեանը իր «Վարդապետարանում» օտարի հետ չամուսնանալը համարում էր հայ մարդու պարտաւորութիւններից մէկը (տե՛ս «Վարդապետարան Հայաստանի Ազատութեան», Հայրենի օրագիր, էջ 2):

7 Տե՛ս Նոյն տեղում:

8 Տե՛ս Նոյն տեղում, էջ 273:

թեան մասին¹: Վերջինիս հաջորդում է «Սուբուր» կամ «Սուբարտու» երկիրը (հայկական հնագոյն **սուբր** արմատով),որը նշում է Արատտայի գաղափարագրով²: Սուբուր երկիրը նույնացում է **Արման** երկրի հետ, իսկ Վանի թագաւորութեան շրջանում այս տարածքը յիշատակում է Արմէ եւ Շուբրիա-Սուբրիա տարբերակներով (այստեղից էլ **Արմէ-Շուբրիա** անուանումը)³: **Արման** անունը՝ Արմենիայի հնագոյն **տարբերակը, առաջին անգամ հանդիպում է Ք.ա. 24-րդ դարում**⁴: Ք.ա. 26-րդ դարում, բացի Սուբուր երկրից, յիշատակում է **Հայա** երկիրը, որը միաժամանակ Հայկական Լեռնաշխարհի հովանաւոր «աստուածն էր», որի որդին էր **Հայկ Նահապէտը**⁵: Այսպիսով՝ Ք.ա.28-23-րդ դարերում յիշատակուած են եւ՝ օտարների՝ Հայաստանին տրուած **Արմենիա** անուանումը՝ Արման Արմանի-Արմանու-Արմէ-Արիմէ եւ այլն, եւ Արարատ անուան հնագոյն Արատտա ձևերը⁶: Սուբրիա-Սուբուր-Սուբարտու ձևը Ք.-ա. առաջին հազարամեակի կեսերից դուրս է մղում գործածութիւնից՝ իր տեղը զիջելով Արմենիային⁷: Ք.ա.3-2-րդ հազարամեակներում դրանք գործածւում էին զուգահեռ⁸: Ինչ վերաբերում է 1880-ականներից Վանի թագաւորութեան սեպագրերի ընթերցումով առաջացած «ՌԻրարտու»-ի մասին հակասական կարծիքներին, ապա հարկ է արձանագրել, որ այն նոյնպէս Հայաստանի անուանումներից մէկն է՝ յիշատակուած Ք.ա.9-6-րդ դարերում (եւ նոյնիսկ 4-րդ դարում, երբ Վանի թագաւորութիւնը վաղուց վերացել էր)⁹: Աքեմենեան եռալեզու արձանագրութիւններում պարսկերէն բաժիններում հանդիպող Արմինա-Հայաստան, արմինիա-հայ անուանումները բաբելոնեան թարգմանում են Ուրարտու-Հայաստան, ուրարտայա-հայ ձևերով¹⁰: Վանի թագաւորութեան ժամանակ օգտագործուած գրային երեք համակարգերից մէկի՝ տեղական մեհենագրութեան. վերլուծութեան արդիւնքները ցոյց են

1 Տե՛ս Ա. Մովսիսեանի հարցազրոյցը, նոյն տեղում, էջ 263

2 Տե՛ս նոյն տեղում, էջ 264:

3 Տե՛ս նոյն տեղում:

4 Տե՛ս նոյն տեղում:

5 Տե՛ս նոյն տեղում:

6 Տե՛ս նոյն տեղում, էջ 265:

7 Տե՛ս նոյն տեղում:

8 Տե՛ս նոյն տեղում:

9 Տե՛ս նոյն տեղում:

10 Տե՛ս նոյն տեղում:

տալիս, որ դրանց լեզուն հնագոյն հայերէնն է եղել¹: Ընդ որում դա միակ տեղական մեհենագրութիւնն էր՝ ըստ հայկական ժայռապատկերների²: օտար գիտնականները եւս խորութեամբ ուսումնասիրելով հնդեւրոպական նախահայրենիքի տեղադրման խնդիրը, նորանոր փաստերով հիմնաւորում են, որ այն գտնուել է Հայկական Լեռնաշխարհում, փոքր Ասիայի արեւելքում, Միջագետքի հիւսիսում, Իրանի հիւսիս-արեւմտեան շրջաններում (Վյ. Իւանով, Թ. Գամկրելիձէ, Զ. Ռեմֆրին, Ս. Տոկարև և այլք)³: Այլ խօսքով՝ մենք հայերս ենք Հայկական Լեռնաշխարհի իսկական բնիկները, քանի որ չենք հեռացել հնդեւրոպական նախահայրենիքից: Իսկ հայոց լեզուն եղել է Հայկական Լեռնաշխարհի տերերի բնիկ լեզուն, որ վերջնականապէս ապացուցուած է նոր եւ նորագոյն ուսումնասիրութիւններով (Ա. Այուազեանը հղում է կատարում Ջահուկեանի, **Ղափանցեանի** եւ այլ գիտնականների աշխատութիւններին⁴: Ըստ յոյն աշխարհագրագետ Ստրաբոնի՝ Զ.ա. 2-րդ դարում Հայաստանի ամբողջ բնակչութիւնը հայախօս էր⁵: Անկասկած, հնագոյն ժամանակներում հայախօսութեամբ է պայմանաւորուել անձի պատկանելութիւնը հայկական Եթնիկ տարրին⁶: Հայրենիքի ընկալումը լեզուի սահմանների մէջ, ըստ Ա. Այուազեանի, բնորոշ էր Ոսկեդարեայ մեր պատմիչներին. «Եւ յարեւելից կողմանէ զեզերք հայկական խօսիցս...»՝ այսպէս էր Մ. Խորենացին տեսնում Հայաստանի սահմանները⁷: Փաւստոս Բուզանդը ևս Հայաստանը միաձուլուած էր ներկայացնում հայոց լեզուի հետ. **«աշխարհ ամենայն հայոց լեզուին»** եւ **«երկիրն լեզուին Թորգոմական աշխարհին»**⁸: Ազգային ինքնութեան լեզուական ըմբռնումը Փաւստոսի մոտ վերդասակարգային բնոյթ էր կրում ու գերծ էր կաստայականութիւնից. «Եւ սգային ամենայն ազատք եւ շինականք ծագէ ի ծագ ամենայն սահմանաց Երկրին Հայոց, ազատք եւ շինականք ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առհասարակ»⁹: (այստեղ խօս-

1 Տե՛ս նոյն տեղում, էջ 266:

2 Տե՛ս նոյն տողում:

3 Տե՛ս նոյն տեղում, էջ 267-268:

4 Տե՛ս նաև Ա. Այվազյան, «Հայկական ինքնութեան հիմնաքարերը՝ Լեզու, բանակ, պետություն», Եր-2007, էջ 58:

5 Տե՛ս նոյն տեղում, էջ 59:

6 Տե՛ս նոյն տեղում, էջ 60:

7 Տե՛ս նոյն տեղում:

8 Տե՛ս նոյն տեղում, էջ 61:

9 Նոյն տեղում, էջ 62:

լում էր Ներսես Մեծ կաթողիկոսի մահուան առիթով Հայոց Աշխարհին պատած համագային սգի մասին): **Եղիշեն** իր «Արարածոց մեկնութեան» մէջ հայոց լեզուն համեմատում է ինը նշանաւոր այլ լեզուների հետ՝ ընդգծելով մեր լեզուի բացառիկութիւնը. «Յոյնի լեզուն փափուկ է, հռոմեացունը՝ սաստիկ, հոնիները՝ սպառնական, ասորունը՝ աղաչական, պարսիկները՝ պերճ, ալանիները՝ գեղեցկազարդ, գոթիները՝ ծաղրական, եգիպտացունը՝ խաւարածայն կամ խարխափական, հնդիկները՝ ճռվռացող, իսկ հայինը՝ քաղցր ու բոլոր լեզուների առաւելութիւններն իր մէջ ամփոփող¹: Աստուածաբան, մատենագիր, գիտնական **Վարդան Արեւելցի** (1200-1271) նոյնպէս, Եղիշէի նման, մեր լեզուն համեմատելով այլ լեզուների հետ, հայերէնը համարում էր լաւագոյնը²: Նա նաեւ իր «Տիեզերական պատմութեան» մէջ՝ 1267-1268թթ. փոքր-ինչ փոխելով, կրկնում է Եղիշէի խօսքը հայոց լեզուի վերաբերեալ³: **Մխիթար Այրիվանեցի** (ծն. թ.անհտ.մոտ 1305) և **Յովհաննէս Երզնկացի** (մոտ. 1250-1326) նոյնպէս իրենց աշխատութիւններում («Պատմութիւն ժամանակագրականի»-ավարտ՝ 1289, եւ «Հաւաքումն մեկնութեան քերականի»-ավարտ՝ 1291թ.) օգտագործել են Եղիշէի նոյն հատուածը⁴: **Գրիգոր Տաթեւացի** (1346-1409) վերաշարադրելով Եղիշէին, ավելացնում է, որ հայը լիապէս կարող է բոլոր լեզուները ճշգրիտ սովորել, իսկ ուրիշները հայոց լեզուն աղճատուած եւ սխալ են ուսանում, որովհետեւ նրանց լեզուն մասնաւոր է⁵: Մխիթարեան միաբան **Միքայէլ Չամչեանը** 1738-1823) զարգացնելով իր նախորդների մոտեցումները հայոց լեզուի վերաբերեալ, մեր լեզուն յայտարարում է առաջին լեզուն, որով մարդիկ խօսում էին՝ Ադամից սկսած մինչեւ լեզուների բաժանում⁶: Չամչեանի «Ի վերայ լեզուին Հայոց, թէ իցէ առաջին» վերնագրով այս գործը ներառուել է նրա «Հայոց պատմութեան» Ա. հատորում (լոյս է տեսել 1784թ.-ին)⁷: Ըստ Չամչեանի՝ Նոյն ու նրա որդիները մնալով Հայաստանում, պահպանել են աղամական լեզուն, որից անջատուելով, առաջացել էին միւս լեզուները⁸: Սկսած հնագոյն ժայռա-

1 Տե՛ս նոյն տեղում, էջ 64:

2 Տե՛ս նոյն տեղում, էջ 65-68:

3 Տե՛ս նոյն տեղում, էջ 68:

4 Տե՛ս նոյն տեղում, էջ 69:

5 Տե՛ս նոյն տեղում:

6 Տե՛ս նոյն տեղում, էջ 72:

7 Տե՛ս նոյն տեղում:

8 Տե՛ս նոյն տեղում, էջ 72-73:

պատկերներից հայոց հոգեւոր եւ աշխարհիկ վերնախաւերը տարբեր գրային համակարգեր են օգտագործել ու նոյնիսկ դպրութեան «Աստծուն» պաշտամունք մատուցել:

Եւ միայն 5-րդ դարի սկզբին՝ 405թ.-ին, **Մեսրոպ Մաշտոցի** սխրանքով, մեր լեզուն զուտ ազգային «տարագ հագաւ»՝ ստեղծուեց հայոց այբուբենը: Իսկ դարավերջին՝ հունաբան դպրոցի շրջանում, Դիոնիսիոս Թրակացու «Քերականութեան արուեստի» (Ք.ա. 2-րդ դար) թարգմանութեամբ, հայերէնը որպէս գիտական լեզու, դառնում է յստակ ու կարգաւորուած¹:

Ըստ Ա. Այուլագեանի՝ մշակութային զարգացածութեան որոշակի աստիճանում Եթիկ խումբը ձեռք բերելով ազգի կայուն յատկանիշներ, բացայայտում է իր ինքնութիւնը հզօրացնող հոգեւոր տարրերը (որոնց թւում և ազգային լեզուն)՝ այն դարձնելով ազգային գաղափարախօսութիւն, և հայոց ազգը դրան հասել էր հազարամեակներ առաջ՝ դեռեւս մինչև գրերի գիւտը²: Ազգային ինքնութեան «սրբազան տաճարի» միւս անկիւնաքարը եղել է **Հայոց բանակը**, որ հայ զինուորականութեան առաջնորդութեամբ դարեր շարունակ պայքարել է Հայաստանի անկախութեան համար³: Պատմիչների կողմից պահպանուել է նաև մաքուր ազգային դիմագիծ ունեցող հայոց միացեալ բանակի անունը՝ իբրև «**Հայաստան-Գունդ**» կամ «**Հայոց Գունդ**»⁴: 5-8-րդ դդ.-ում օտար տիրապետութեան դէմ հայոց բանակը մարտնչում էր Մամիկոնեան սպարապետների ղեկավարութեամբ՝ 450-451, 481-484, 571-575թթ.-ին՝ Պարսկաստանի, 548թ.-ին՝ Բիւզանդիայի, 747-753, 772-775թթ.-ին՝ Արաբական խալիֆայութեան դէմ⁵: Անձը հայրենիքի համար զոհաբերելու գաղափարը հորենացին տեսնում էր դեռ մեր ռազմիկ-արքայ Արամի վարքագծում. «Սա աշխարհասեր եւ հայրենաշէն մարդ լինելով... լաւ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թէ ինչպէս օտարածիւնների որդիք ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները եւ տիրում արիւնակից հարազատների վրայ»⁶: Փաւստոսը «Հա-

1 Տե՛ս «Հայագիտության հարցեր» (գրոյց երրորդ՝ թատերագետ Հ. Յովհան-նիսեանի հետ), էջ 417:

2 Տե՛ս նոյն տեղում, էջ 87:

3 Տե՛ս Ա. Այվազյան, «Հայկական ինքնութեան հիմնաքարերը», էջ 9:

4 Տե՛ս նոյն տեղում, էջ 115:

5 Տե՛ս նոյն տեղում:

6 Տե՛ս նոյն տեղում, էջ 10-11:

յոց պատմութեան» մէջ հայ զինուորականութեան արժեհամակարգը ներկայացնում է ըստ Մուշեղ Մամիկոնեանի վարքի եւ գործունեութեան. «Նա հաւատարմութեամբ, արդար վաստակով, ջանասիրութեամբ մշտապէս ծառայում էր Հայոց Աշխարհի եւ Թագաւորութեան համար, ճգնում պատերազմի ճակատներում և երբեք թոյլ չէր տալիս, որ Հայոց Աշխարհի սահմաններից մի կորուչափ հող օտարուի»¹: Սակայն այս ամենը միայն ազգային արժանապատուութիւնից մղուած հայ մարտիկի գործելակերպ չէր, այլեւ միտուած է հոգեբարոյական, ազգային և պետական արժեքների պահպանմանը. «կմեռնէր քաջի անուան համար, իր բնիկ տերերի համար, իր երկրի բնակիչների համար, քրիստոնեական հաւատի համար, Քրիստոսի անունով մկրտուած ժողովրդի համար, եկեղեցիների համար, Աստուծոյ ուխտի համար, քույրերի եւ եղբայրների համար, Աստուածապաշտ Հայոց Աշխարհի համար, Նահատակուած քաջերի համար, ընտանիքի համար, եւ սա մահ է հենց Աստուծոյ համար. («համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է»)²: Նոյն միտքը Ներսէս Շնորհալիս է արծարծում «Թուղթ ընդհանրականում»՝ զինուորականութեանն ուղղուած իր խօսքում³: Եզրակացութիւնը մէկն է՝ Հայոց Աշխարհը ենթադրաբար դաւանում էր ազգային եւ հոգեւոր անանցանելի արժեքներ՝ (ճշմարիտ Աստուածապաշտութիւն, հայրենանուիրութիւն, ազգասիրութիւն, արդարութիւն, սրբութիւն, աստուածամարդկային առաքինութիւններ եւ այլն), որի կրողը ողջ հայութիւնն էր: Եւ եթէ այսօր ապագային ոյժերը իշխանութիւն ունենալով, կեղծ արժեքներ են քարոզում, ապա վտանգի են ենթարկում պետութեան եւ ազգի գոյութիւնը, քանզի միայն կենսաբանական պատճառները բաւարար չեն մարդուն յանուն ազգի եւ պետութեան ինքնագոհողութեան առաջնորդելու: Եւ պատահական չէ, որ մեր ոսկեդարեան մտածողութիւնը հայրենիքի համար Նահատակուելը՝ յանուն Աստուծոյ զոհաբերուել էր ընկալում, որովհետև հայրենիքը, ազգը, պետութիւնը կրողն էր ու պահպանողը հոգևոր և աստուծային արժեքների: Այսպէս կարելի է հանգել **ազգային պետութեան** գաղափարին, որն, ըստ Ա. Այուազեանի՝ մեր ինքնութեան երրորդ հիմնաքարն է: Ըստ ընդունուած սահմանման՝

1 Տե՛ս Նոյն տեղում, էջ 11:

2 Տե՛ս Նոյն տեղում էջ 11-12, 36:

3 Տե՛ս Նոյն տեղում:

«ազգային պետությունը (nation state) այն ազգն է, որ կառավարում է այնպիսի պետութեան կողմից, որի իշխանությունը համընկնում է այդ ազգի սահմանների հետ, իսկ ազգն էլ հասկացում է իբրև մի հասարակություն, որ զբաղեցնում է որոշակի տարածք եւ ունի ընդհանուր ինքնութեան, պատմութեան ու ճակատագրի զգացում-ըմբռնում»¹: Եւ եթէ ազգային պետությունները եւրոպայում առաջացել են 16-18-րդ դարերում (սկզբում Անգլիայում, յետոյ՝ Հոլանդիայում եւ Ֆրանսիայում) կամ 19-20-րդ-ում, ու յետոյ միայն տարածուել աշխարհում, ապա հին Հայաստանում առկայ էին եւրոպական ազգայնականությունները բնորոշ գծերը՝ յստակ ազգային ինքնագիտակցություն, մայրենի լեզուի պաշտամունք, հայրենիքի եւ ազգի գաղափարները²: Սրա լաւագոյն ապացոյցը 4-5-րդ դարերում գրաւոր արձանագրուած հայ զինուորականութեան արժեհամակարգն է, երբ հայ զինուորականը սկզբում երդւում էր անձնուրաց ծառայել Հայաստան երկրին եւ Թագաւորութեանը, իսկ յետոյ Հայաստանի ամբողջ ժողովրդին՝ անկախ նրանց ընկերային դիրքից³: Այսուհանդերձ, **ազգային պետությունը** միայն պատմական անցեալ չէ, այլ՝ ռազմավարական նպատակ՝ կառուցուող ներկայ եւ կերտուող ապագայ, որին մերօրեայ սերունդը դեռ չի հասել: Այլ խօսքով՝ միայն ազգային պետությունը կարող է **անկախ** համարուել, քանի որ **իր ազգային մշակոյթի** կրողը, զարգացնողն ու պաշտպանողն է:

Սակայն, անկախ պետությունը ենթադրում է նաեւ այլ հանգամանքներ: Ըստ միջնադարեան տնտեսութեան օրինակի՝ տան մէջ առկայ են երեք տեսակի մարդկանց խմբեր՝ ծառաներ, վարձկաններ և որդիներ: Ծառան տանը աշխատում է ստիպուած՝ սոված մնալու **վախից** մղուած, նրա սիրտն իր ստամոքսում է: Վարձկանը տուն-պետութեանը, ազգին, հայրենիքին ծառայում է **շահից** դրդուած, նրա սիրտն իր գրպանում է: Որդուն առաջնորդում է **սէրը**, նա ազգի նուիրեալն է՝ տիրոջ գիտակցութիւն ունեցողն ու հայրենիքին անդաւաճան ծառայողը, եւ նրա «սիրտը լեռներումն

1 Տե՛ս Նոյն տեղում, էջ 100:

2 Տե՛ս Նոյն տեղում:

3 Տե՛ս Նոյն տեղում, էջ 101: Մանուէլ սպարապետի մահուան հետ կապուած համընդհանուր սգի, աշխարհաժողովների, բանակի կազմում և Նոյնիսկ հեծելազօրում շինականների ծառայութեան փաստերով, Այուազեանը համոզիչ կերպով ցոյց է տալիս, որ Զ.յ. առաջին դարում և աւելի վաղ, **գոյութիւն է ունեցել հայկական ինքնութիւն և ազգայնականութիւն**՝ գրեթէ մերօրեայ եւրոպական հասկացողութեամբ:

է», որտեղից տեսնում է անցեալից-ներկայ եւ ապագայ փոխանցունող ազգային-ռազմավարական նպատակները եւ աշխատում դրանց իրագործման համար: Որդիների գիտակցութիւնն ընդհանրական է եւ ոչ անհատական-առանձնական: Նրանք իրենց ստամոքսի մասին չեն մտահոգւում, սակայն, ձգտում են, որ բոլորը բաւարարուած զգան իրենց: Սեփական գրպանի մասին չմտածելով, նախանձախնդիր են հասարակական շահի պաշտպանութեամբ: Ամեն դէպքում, պետութիւնը չի կարող անկախ լինել, եթէ իշխանութիւնը որդիների ձեռքում չէ, քանզի ծառային կարելի է վախեցնել, վարձկանին՝ գնել, կաշառել, եւ միայն որդին է, որ չի վախենում ու չի վաճառւում: Եթէ Կոստան Չարեանի բառապաշարով արտայայտուենք, ապա ծառայական հոգի կրողների նպատակը «ստամոքսային Հայաստանն է», իսկ վարձկանական հոգի կրողներինը՝ «ծխնելուզային Հայաստանը»¹: Եւ միայն որդիներն են հոգևոր Հայաստանի գաղափարակիրները, որոնց նպատակը ազգային ինքնութեան հոգեւտաճարի կառուցումը, պահպանումն ու հզօրացումն է: Ըստ Չարեանի՝ «Մեր հոգեկան սնունդը **Արարատից** է գալիս՝ չոր ու ցամաք, տնտեսապէս անպետք մի լեռ, և ի գուր չէ, որ հայ ժողովուրդը պատմութեան մէջ չտեսնուած չարչարանք է կրել, միլիոնաւոր զոհեր է տուել, ծով արիւն է թափել՝ այդ Լեռը չկորցնելու համար»²: Պարզ է, որ խօսքն այստեղ նիւթական Արարատ լեռան մասին չէ, որն արդէն կորցրել ենք, այլ՝ յանուն ազգային եւ կրօնական ինքնութեան մեր մղած դարաւոր պայքարի: Այսուհանդերձ, մեր մաքուր ինքնութիւնը օտար տիրապետութեան եւ ապազգային ոյժերի իշխանութեան ներքոյ որոշակի փոխակերպումներ է կրել եւ աղճատումների ենթարկուել: Ըստ գերմանացի ուսումնասիրող Յուրգէն Գիսպերտի՝ հայերն իրենց ինքնութեան ներքին կոշտ կորիզը (ընտանիք, պատմական Հայաստան, ազգային եկեղեցի, Արարատ եւ այլն) համատեղելով արտաքինից պարտադրուած ինքնութեան հետ (Օսմանեան կայսրութիւն, ցարական Ռուսաստան, Խորհրդային Միութիւն և այլն), «ձեռք էին բերում» փոխակերպւող-ծածկեալ ինքնութեան մի տարատեսակ, որը ևս հայկական ինքնութեան մաս է կազմում³: Մեր կարծիքով՝ այս «ինքնութիւնը» անկախ Հայաստանի պայման-

1 Տե՛ս Կոստան Չարյան, «Նավատումար», «Հայության կոչումը», Եր.1999, էջ 225:

2 Տե՛ս Նոյն տեղում:

3 Տե՛ս **Ինքնություն**, «կամար» հրատ.Երևան-1995, էջ 249-250:

ներում աստիճանաբար պիտի մարի՝ մնալով միայն պատմության գրքերում: Ամեն դեպքում, կեղծ ինքնութիւնների ծնունդը լոկ օտար ոյժերի ազդեցութեան արդիւնք չէ, այլև ներքին այլասերման դառն հետևանք: Այս առումով, կարևոր է նաև անդրադառնալ ֆրանսիացի յայտնի գիտնական Օ. Կոշենի «փոքր ժողովրդի» կոնցեպցիային¹: Վերջիններս (խօսքը վերաբերում է «փոքր-ժողովրդի» ներկայացուցիչներին) հասարակութեան հոգեբարոյական և ազգային արժեհամակարգը մերժած ծառայավարձկանական ոգի կրող, քաղաքական աղանդաւորներ են, որոնք յեղաշրջումների, դաւադրութիւնների կամ յեղափոխութիւնների միջոցով վերցնելով իշխանութիւնը, «քանդում են հին աշխարհը» եւ մեծամասնութեանը պարտադրում օտար արժեքներ, կեղծ մշակոյթ, ապագային գաղափարախօսութիւն՝ կերտելով նոր ինքնութիւն: Ֆրանսիական յեղափոխութիւնը եւ բուլճարական յեղաշրջումը ծայրահեղական այդ խմբաւորումների յաղթանակների պատմութիւնն է, երբ ոչնչացուեց կաթոլիկ ֆրանսիան եւ քրիստոնէական մշակոյթի երկիր «սպիտակ Ռուսաստանը»: Հայութեան կրած կորուստները բուլճարիկներից անչափելի էր ու անդառնալի: Լ. Խուրշուդեանը «փոքր ժողովրդի» վերադարձ էր համարում նաև նեոբուլճարական ապագային ոյժերի իշխանութիւնը՝ ի դէմս Հեշ կուսակցութեան եւ նրա առաջնորդի²: Փաստ է, որ այսօրուայ Հայաստանը եւս ազգային պետութիւն չէ, քանի որ իր ժողովրդին ազգայնական կրթութիւն չի տալիս և մեր ինքնութեան պահպանումը չի արժեւորում: Ընդհակառակը՝ «ստամոքսային և ծխնելոյզային հայրենիքի» գաղափարախօսութեամբ, հոգեբանական գիւնատեսակների կիրառումով, նոր սերնդի մէջ փշրւում է հայկական ինքնութիւնը, ջնջւում ազգային արժանապատւութեան զգացողութիւնը³: Արդիւնքում մեր հոգևոր տարածքները բռնազավթւում են, խառնամուսնութիւնները բազմապատկւում, արտագաղթը մեծանում: Ի վերջոյ, այս ամենից շահում են մեծ տերութիւնները, ազգային դիմագիծ չունեցող պետութիւններն ու անասնական ոգի կրող ժողովուրդները, զանգուածային մշակոյթի և համահարթեցման պղտոր

1 Տե՛ս Լ. Խուրշուդեան, Նոյն տեղում, էջ 274-278:

2 Տե՛ս Նոյն տեղում:

3 Ապագային ոյժերը այլազգիներով և տարբեր ռասայի մարզիկներով համալրելով հայանուն մարզական թիմերը, խեղում են հասարակական գիտակցութիւնը՝ եղծելով «մենք»-ի ազգային ընկալումը:

ջրերում ձուկ որսացող աստուածամարտ ոյժերը¹: Դեռևս 120 տարի առաջ մեծն Արամ Մանուկեանը՝ խօսելով Արցախում ազգային ինքնութեանը սպառնացող վտանգների մասին, նշում է. «Ապացոյց կուզես, մեր Շուշին բերեմ, որ արդէն այլասերման ճամբու վրայ է... շնորհիւ այն բանին, որ տնտեսական եւ մշակութային կապերը երկրի կորիզի հետ պակսած են, իսկ Ռուսիոյ հետ ուժեղացած վարչական միտումնաւոր բաժանման միջոցով այս շրջանի հայութիւնը երեք բաժին է եղած, երկու բաժինը հայութեան շահերուն դէմ է, եւ մէկ բաժինը միայն Հայաստանի և հայութեան օգտին կաշխատի»²: Ամերիկեան կեղծ հայագիտական դպրոցի ներկայացուցիչներից մէկը՝ Գրիգոր Սիւնին «Հայացք դէպի Արարատ» գրքի առաջաբանում մատնանշում է իր դաւադիր ստեղծագործութեան բուն նպատակը՝ **կազմալուծել** հայ քաղաքական ազգայնականների գաղափարախօսութեան հիմքը, ըստ որի՝ հայերի շարունակական գոյութիւնը՝ որպէս պատմական ժողովուրդ, նրանց առաջացումը Հայկական Լեռնաշխարհում, նրանց գիւնում է ինքնորոշման եւ պետականութեան իրաւունքով ու նաև պատմականօրէն վաւերացուած **պահանջատիրութեամբ** այն տարածքների նկատմամբ, որ կազմում են Հայաստանը³: Սիւնին խորապէս հասկանում էր իր հակահայ գործունէութեան հետևանքները. «Քանի որ Հայաստանի պատմութեան այս ըմբռնումն այդքան մեծ քաղաքական դեր ունի հայերի համար, ապա այն կասկածի ենթարկելու, «հաւատալիքների այդպիսի հաւաքածու»-ն **կազմալուծելու** որևէ փորձ պետք է կատարուի գգուշով եւ անհրաժեշտ և նրբանկատօրէն՝ լիովին գիտակցելով, որ նմանօրինակ որևէ ուսումնասիրութիւն կարող է նկատուել իբրեւ **հարձակում հայ ազգի ոգու դէմ իսկ**»⁴: Իհարկէ՛, Ա. Այուազեանը հզօր հակահարուած էր հասցրել կեղծարար- գործակալներին (Ռ. Թոմսոն, Պ. Քաուի, Ջ. Ռասել, Ռ. Հիւսըն, Գ. Սիւնի, Ռիչարդ Յովհաննիսեան, Ն. Գարսոյեան, Լ. Աւդոյեան, Ջ. Բուռնաթեան եւ այլք), որոնցից ծագումով հայերի մէջ տուեալ կայսրութիւնը, պետութիւնը, գաղա-

1 «անասնական ոգու ժողովուրդները» ոչ միայն ինքնուրոյն մշակոյթ չեն ստեղծել, այլև անբերել են քաղաքակիրթ ազգերի «ոգու վաստակը», այսօր էլ ոչնչացնելով կամ իւրացնելով նրանց ժառանգութիւնը:

2 Աւելի մանրամասն տե՛ս Ռ. Տէր Մինասեան՝ «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հտ.Ա. էջ 183-193:

3 Տե՛ս Ա. Այվազյան, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մէջ», Եր. 1988, էջ 20-21:

4 Տե՛ս Նոյն տեղում:

փարափօսութիւնը նոր ծառայական կամ վարձկանական **ինքնութիւն** էր ներդրել: Այս **երկրորդ ինքնութեան** կրողն էին Բիւզանդիայի հայ կայսրերը, ցարական եւ խորհրդային միութեան հայ գեներալները, մարշալները, հերոսները, ծագումով հայ օտարալեզու արուեստի, գիտութեան եւ մշակոյթի գործիչները¹: Ապագային ոյժերը «հաճոյքով» երկրորդ ինքնութեան գործիչների քարոզչութիւն են տանում, քանզի նրանց մէջ ենթագիտակցօրէն նմանութիւն են տեսնում իրենց հետ: Այլակրօն, այլադաւան եւ աղանդաւոր հայ մարդկանց մէջ եւս օտար տիրապետութիւնը արտայայտում է որպէս երկրորդ կրօնական ինքնութիւն: Հայոց ամբողջական ինքնութեանը յատուկ է նաև **քրիստոսանմանութիւնը** եւ Աստուծոյ կողմից առաւել սիրուած լինելը՝ ի տարբերութիւն քրիստոնէայ այլ ազգերի ու ժողովուրդների: Ըստ աստուածային տեսիլքի՝ Քրիստոս-Արքան Վերջին Դատաստանի դրուագում միայն Հայոց «երթի» ժամանակ է կանգնում ու սիրով ողջունում դրանով յատուկ վերաբերմունք ցուցաբերելով հայութեան հանդէպ²: Ըստ աւետարանի պատմութեան՝ Աստուծոյ Որդին ուրբաթ՝ 6-րդ օրը խաչուեց, մեռաւ և 3 օր անց՝ 8-րդ օրը՝ կիրակի՝ յարութիւն առաւ: Իսկ 8-ը յաջորդ եօթնեակի **առաջին** օրն է՝ «միաշաբթի»՝ մահուան նկատմամբ Քրիստոսի յաղթանակի օրը: Հայ ժողովրդի խաչելութեան, յաղթանակի և վերածննդի օրերը ևս վերոյիշեալ թուերի հետ են կապւում՝ ըստ թուերի խորհրդաբանութեան մեր տեսութեան³: Հայոց խաչելութեան թուերն են՝ 15թ.ապրիլի 24 (այս թուերը պայմանականօրէն կարելի է յիշել որպէս երկու 6՝ (1+5=6, 2+4=6): Նաև ապրիլը որպէս 4-րդ ամիս, քառաթև խաչի խորհրդով, մեր խաչելութեան, մահուան ամիսն է, որից երեք տարի յետոյ՝ անցնելով տառապանքի և մահուան դժոխքի միջով, ազգը յարութիւն է առնում՝ 18թ.մայիսի 28՝ ծնւում է առաջին հանրապետութիւնը՝ որպէս Սարդարապատի՝ նոր Աւարայրի յաղթանակի արդիւնք: Մայիսեան յաղթանակները (5-րդ ամսի) հարկ է դիտարկել նաև Աստծոյ ողորմութեան տիրոյթում ըստ հինգերորդ երանութեան խորհրդի աստիճանակարգի: Մեր ոսկեդարի (5-րդ դար) հոգևոր

1 Տե՛ս նաեւ Արծուի Բախչինեանի՝ «Ազգային ինքնութեան դրսևորումն այլալեզու հայազգի գրողների երկերում» յօդուածը, «Ինքնութիւն», էջ 173-179:

2 Տե՛ս «Տեսիլքները եւ մարգարետոյլունները Հայոց մասին», «Գթություն» հրատ. եր. 2009, էջ, 143-144:

3 Հայոց պատմութեան խորհրդաբանական ընկալման ներկայացուող տեսութիւնը պայմանական է, եւ այն չի կարելի բացարձակացնել:

նուաճումները եւս կարելի է տեղադրել «այս տրամաբանութեան ծիրում»: 88-ի Արցախեան շարժումը, Շուշիի ազատագրման օրերը՝ 8-ը եւ 9-ը՝ յաղթութեան և երանութեան խորհրդով, 451-481թթ. Վարդանանց խաչելութիւնը եւ Գայլ-Վահանի յաղթութեամբ մեր քաղաքական յարութիւնը՝ 30 տարի անց, եւ այլ իրադարձութիւններ մեզ պատկերացում են տալիս ինչպէս մեր քրիստոսանմանութեան, այնպէս էլ հայոց կրօնական եւ ազգային ինքնութեան միաձոյլ բնոյթի մասին: Դարեր շարունակ մեր կրօնական ինքնութիւնը՝ որպէս Արեւելաքրիստոնեական ոչ քաղկեդոնական եկեղեցու զաւակների, պայմանաւորուած էր դաւանական անկախութեամբ¹: Աւելի շատ ոլորտներ է ներառում հայոց ինքնութեան ճառագումները՝ իբրեւ ազգային մշակոյթի տարաբնոյթ արտայայտութիւններ, որոնցից են հայկական ճարտարապետութիւնը, հայ գրականութիւնը, տոհմիկ հայ երաժշտութիւնը, գարդարուեստը, մանրանկարչութիւնը, խաչքարագործութիւնը եւ այլն: Ամեն դէպքում, այսօր օտար մշակոյթի կամ հակամշակոյթի քարոզչութիւնը եւս մեր ինքնութեանը հարուածելու միջոց է, որով ապագային ոյժերը հենարան են ստեղծում իրենց իշխանութիւնը պահպանելու համար: Հետևելով բոլշևիկներին, վերջիններս փորձում են նաեւ խեղաթիւրել «ազգային թշնամու կերպարը»²: Ի տարբերութիւն հուրշուղեանի, մենք հայերի արնախում թշնամի ենք համարում ոչ միայն թուրքին, այլեւ քրդերին, որոնք Արևմտեան Հայաստանը իրենց «հայրենիքն» են համարում եւ մտադրութիւն չունեն ցեղասպանութեան համար զոջալ եւ փոխհատուցել: Ռուսաստանը եւս մեզ դաշնակից լինել չի կարող, քանզի անվերջ զինում է եւ՝ Թուրքիային եւ՝ «աղբբեջանին»: Ունենալով հզօր ազգային ինքնութիւն, հայոց ազգը դարեր շարունակ թշնամանք, ատելութիւն եւ նախանձ է առաջացրել այլոց սրտերում: Ըստ հռոմեացի հռչակաւոր հեղինակ Գայոս Կոռնելիոս Տակիտոսի (56-125թթ.)՝ այս ժողովուրդը հնուց ի վեր վստահելի չէ թէ՛ իր բնաւորութեան, թէ՛ իր աշխարհագրական դիրքի պատճառով, որովհետեւ նրանք, ընկած լինելով մեծագոյն կայսրութիւնների միջեւ, հաճախ գծտուում են նրանց հետ, ատելով հռոմեացիներին եւ նախանձախնդրութիւն

1 Տե՛ս նաև Արտաշես Ղազարեան, «Հայ եկեղեցու դաւանաբանության ծեւափորման քաղաքական եւ գաղափարաբանական նախադրեալները» յօդուածը, «Ինքնութիւն», էջ 101-111:

2 Տե՛ս նաև Լ. Խուրշուղյան, Նոյն տեղում, էջ 216-221:

ցուցաբերելով պարթևների հանդեպ¹: Պատմագիտության հայր Տակիտոսի խօսքը, կարծես, «հաստատում է» պարսից Շապուհ թագաւորին, մոտ 200 տարի յետոյ, սպարապետ Վասակ Մամիկոնեանի (մահ. 368թ.) տրուած պատասխանով: Վերջինս նաև Հայաստանի խորհրդանիշն էր. «Քանի դեռ ես ազատութեան մէջ էի, ես հսկայ էի, մի ոտքս մի լեռան վրայ էր, միւս ոտքս՝ մի այլ, երբ աջ ոտքիս վրայ էի յենում, աջ լեռն էր գետնի տակ անցնում, երբ ձախիս վրայ էի յենում՝ ձախ լեռը, և այդ լեռներից մէկը դու էիր, միւսը՝ Յունաց թագաւորը»²: Ըստ Սեբեոսի՝ Բիւզանդիայի Մօրիկ կայսրը(582-602թթ.) Պարսից Խոսրով Բ թագաւորին է դիմում Հայաստանի մասին յատուկ ուղերձով. «Մի ինքնակամ եւ անհնազանդ ազգ կայ մեր մէջտեղում, որ անընդհատ ըմբոստանում է, ուստի ե՛կ,-ասում է,-ես (Հայաստանի) իմ մասում եղածների (հայ զինուորականութեանը) ժողովեմ և Թրակիայում հաւաքեմ, իսկ դու քո մասում եղածներին հրամայիր Արևելք տանեն, քանզի եթէ մեռնեն՝ մեր թշնամիները կը կործանուեն, իսկ եթէ սպանեն՝ մեր թշնամիներին պիտի սպանեն և մենք կապրենք խաղաղութեան մէջ, որովհետև եթէ դրանք իրենց երկրում լինեն, մենք հանգիստ չենք ունենալ»³: Հօրացած արաբները սպիտակ ստրուկների մէջ վատագոյնը համարում էին հայ գերիներին⁴:

Յիշարժան է նաեւ Անանուհի խօսքը Գագիկ թագաւորի մասին. «Նա բարեւաջի, մարաց, պարսից, բիւզանդացի ու բարբարոս բռնաւորների սրտերում կրակ դարձած հարաշարժ բեւեռ էր, և նրա հօգորութեան ահը շրջապատել էր ողջ Հայաստանը, եւ ինչպէս պղնձէ պարիսպ, անմերձենալի էր պահում թշնամիների երկիւղից եւ գաղտնածիզ նետերից»⁵:

Բիւզանդագետ Ա. Կաժդանի կարծիքով՝ հենց հայերի էթնիկական, ներառեալ կենցաղային եւ դաւանական, առանձնայատկութիւններն էին պատճառը, որ բիւզանդական բնակչութիւնը հակակրանքով էր վերաբերում նրանց⁶: Այսպէս, 12-րդ դարի ամենակիրթ

1 Տե՛ս Ա. Այվազյան, Հայկական ինքնութեան հիմնաքարերը՝ բանակ, լեզու, պետություն, էջ 108:

2 Տե՛ս Նոյն տեղում, էջ 112-113:

3 Տե՛ս Նոյն տեղում, էջ 111:

4 Տե՛ս Նոյն տեղում, էջ 112:

5 Տե՛ս Նոյն տեղում, էջ 113: Այստեղ արդէն գոյութիւն չունեցող հին ազգերի և պետութիւնների մասին վկայութիւնները պիտի հասկանալ աշխարհագրական իմաստով և մեր պատմիչների «աւանդապաշտութեամբ»:

6 Տե՛ս Նոյն տեղում, էջ 114:

բիւզանդացիներից մէկը՝ Սուրնի մետրոպոլիտ Եւստաղը, Հայոց մասին խօսում էր ատելութեամբ, իսկ նրա ժամանակակից, տաղանդաւոր գրող Նիկոլայ Մեսարիտը, ըստ Կաթդանի, հայերին բնորոշում էր «գաղտնապահ, շողոքորթ, նենգ» մակդիրներով¹: Իսկ սա այն դէպքում, երբ Բիւզանդիայում, ըստ բիւզանդագետ Հ. Բարթիկեանի՝ **հայ եւ քաջ** հասկացութիւնները հոմանիշ էին²: Որեմն, եթէ մեզ ատում էին առանց պատճառի, ըստ անտարանի՝պիտի ուրախանանք, եւ ունենանք ինքնագնահատականի առաւել բարձր նշանոդ:

АРМЯНСКИЙ ЯЗЫК И НАЦИОНАЛЬНАЯ ИДЕНТИЧНОСТЬ - ВАГРАМ ЛАЛЯН - Изначально Армянский Язык был первым и основным показателем армянской самобытности, Великая Армения считалась как страна, господствующая армянским языком. Другими словами, можно сказать, что образ чистокровного армянина не ограничивался только наследничеством Айковского поколения, а был слиянием обстоятельств носителя Торгомского языка. Исследования показывают, что для айказунов (племени Гайка) было характерно строго выраженное национальное самосознание и достоинство, которое ярко проявлялось в системе ценностей армянских нации-государствах и в патриотической миссии армянской армии.

После принятия христианства тоже армянская национальная идентичность не ослабла, а истинным светом Богопознания и изобретением письменности обогащалась и осмысливалась-принципом вероисповедания Армянской Церкви создавая правдивую религиозную сущность и творя самобытную культуру.

Ключевые слова: язык, нация, государство, идентичность, национальная культура, арменонид раса, религиозная сущность, армянская армия, Арарат, Великая Армения, национальная идеология.

¹ Տե՛ս նոյն տեղում:

² Տե՛ս նոյն տեղում, էջ 28:

**THE ARMENIAN LANGUAGE AND OUR NATIONAL IDENTITY -
VAHRAM LALAYAN**

From the very beginning the Armenian language was the first and pivotal indicator of our national identity and Armenia or Greater Armenia was considered as a country of the Armeinan language domination: "World of All Armenian Language ". In other words, the image of the pure Armenians was not only limited to the heritage of Hayk's descendants, but was also merged into being a Torgomyan language bearer. The studies show that the Armenian people were characterized by a highly expressed national self-consciousness and dignity, which was vividly manifested by the value system of the Armenian nation-states and the patriotic mission of the Armenian army.

Since the adoption of Christianity, the Armenian national identity has not weakened, but it has been further enriched by the light of true knowlegde of God and the alphabet, establishing a true religious identity and creating a unique culture based on the Armenian church.

Key words: language, nation, state, identity, national culture, Armenoid race, religious identity, Armenian army, Ararat, Greater Armenia, national ideology.

ԳԵՂԱՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՀԱՅՏՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր: *Տեխնիկական բառեր, բնագիտական առարկաներ, բառապաշար, հոմանիշներ, ուղևորատար ավտոմեքենա ու լեզվամտածողություն:*

Հազարամյոն ճանապարհները սկսվում են մեկ հատիկ քայլով:
Գ.ԼԺՂԵՏ

Արդի հայերենի մեջ գործածվող օտար և օտարածին շատ բառեր կան, ընդհանրապես, և քիչ չեն նաև բառեր՝ տեխնիկական մասնագիտություններում օգտագործվող բառապաշարի մեջ: Սակայն շատերին թվում է, թե միայն հայոց լեզվի կամ հայոց պատմության մասնագետների գործն է սինթեզել և մաքրել մեր լեզուն օտար բառերից, եզրույթներից և առօրյա կյանքում օգտագործվող ոչ հայեցի բառերից: Լեզուն անաղարտ պահելու համար, կարծում եմ, ամենևին էլ պարտադիր չէ հայոց լեզվի կամ պատմության մասնագետ լինել: Կարևոր է հայրենասեր և, հատկապես, իր լեզուն, ազգը, գիտությունը և մշակույթը հարգող և սիրող մարդ լինել առաջին հերթին: Սրանով ոչ միայն չեն թերագնահատվի օտար բառերի կամ եզրույթների իմացությունը, այլև հարգալից վերաբերմունք կլինենք ցուցաբերած ինչպես մայրենի լեզվի, այնպես էլ այլ լեզուների հանդեպ:

Գաղտնիք չէ, որ, հատկապես, տեխնիկական մասնագիտությունների գծով շատ բառեր չնայած ունեն հիանալի հայեցի թարգմանություններ, սակայն, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախում և հայկական շատ գաղթօջախներում, օգտագործվում են օտարածին բառեր ու եզրույթներ և, կարծում եմ, ամենացավալին էլ այն է, որ անգամ շատ դեպքերում օգտագործողները, իմանալով տվյալ բառի ու եզրույթի հայկական թարգմանությունը, իմաստը և ծագումնաբանությունը, գերադասում են օգտագործել օտար բառեր, որովհետև այդպես եղել է, այդպես կա

և կարծում են, թե այդպես էլ պետք է շարունակել: Կարծում են, թե սա թյուր կարծրատիպ է, որ կարելի է, ցանկության դեպքում, շտկել: Չարմանալի է, որ, ինչպես ժողովրդի մեջ, շատ դեպքերում նաև դպրոցներում և անգամ մասնագիտական շատ հաստատություններում ու ԲՈՒՀ-երում կարծես մի տեսակ անհասկանալի ու անբացատրելի զգացողություն է համակել շատերին ավելի զարգացած կամ կիրթ լինելու, տպավորություն ստեղծելու, օտար կամ օտարածին բառեր օգտագործել և դրանով ի ցույց դնելու իր անձը կամ իր կարողությունը մատնանշելու: Մինչդեռ, ինչպես հայկական բառերի իմացությունը, նրա ծագումնաբանությունն իմանալը և գեղեցիկ հայերենով արտաբերելը ոչ միայն չի վնասի օտար լեզուների իմացությանը, այլև ընդգծված կգնահատվի ինչպես շրջապատի, այնպես էլ գիտությամբ զբաղվողների կողմից:

Չնայած տեխնիկական շատ եզրույթներ ու բառեր առօրյա կյանքում ու մասնագետների գործածման ոլորտում օգտագործվում են օտար ծագումնաբանությամբ կամ բովանդակային առումով բազմաբնույթ և վիճահարույց ծևերով, սակայն, կարծում ենք, հատկապես տեխնիկական շատ տերմիններ դեռևս հայերեն լեզվի մեջ չունեն հստակ ու միանշանակ բացատրություններ, որոնք կարող են հայ ընթերցողի ու գործածողի համար շատ ավելի պատկերավոր ու ըմբռնելի լինել հատկապես ոլորտի սկսնակ սովորողների, մասնագետների և այլոց համար: Կան նաև շատ տեխնիկական բառեր, որոնց բացատրությունները որքան էլ հայեցի ու բովանդակային առումով համապատասխանում են իրենց նշանակությանը, սակայն առօրյա կյանքում, ինչպես նաև մասնագետների շրջանում, չեն գործածվում. կարծես այդ բառերը պետք է միայն «լողան» բառարաններում:

Ասվածի վառ օրինակներից մեկն է հանդիսանում, օրինակ, այն, որ մինչև հիմա չունենք «թեթև մարդատար ավտոմեքենա» տերմինի հայերեն հստակ բացատրությունը, որը ռուսերեն «легковий автомобиль» տերմինի մի տեսակ անորոշ թարգմանությունն է, որտեղ մարդատար խոսք չկա, ուղղակի թե անուղղակի ցանկացել են մատնանշելու, որ այդ տիպի ավտոմեքենաները հիմնականում ծառայում են մարդ տեղափոխելու համար, սակայն այն լավագույն բացատրությունը և թարգմանությունը չէ: Վերջին ժամանակներս շրջանառության մեջ է դրվել ուղևորատար ավտո-

մեքենա տերմինը, որը նույնպես բովանդակային առումով լավ չի հարմարեցված տերմինի բովանդակությանը, այդ իսկ պատճառով ժողովրդի մեջ գործնականում համարյա չի օգտագործվում:

Տեխնիկական գիտությունների բուռն աճը, դրա բովանդակության բազմաբնույթ լինելը նպաստել են նորանոր տերմինների ու բառերի ներմուծմանը, որոնք չէին կարող դուրս չմնալ հեղինակների տեսադաշտից: Այսօր համակարգչային տեխնիկական և տրանսպորտային միջոցները դարձել են մարդու կենցաղի ու առօրյայի մի մասը և առանց դրանց հնարավոր էլ չէ պատկերացնել 21-րդ դարի մարդու կյանքը: Սակայն որքան էլ զարգանան տեխնիկական միջոցները և տերմինների ու բառերի ի հայտ գալուց կարելի է ստեղծել հայեցի թարգմանությունը, որը կարող է հայ ընթերցողի համար շատ ավելի հասկանալի ու ընդունելի լինել, քան թե օտարածին ցանկացած այլ բառ: Եվ սա ոչ միայն լեզվաբանների, այլև ամենից առաջ ու ամենից շատ համապատասխան մասնագետների գործն ու սրբազան պարտքն է, քանի որ եթե ցանկացած բառ օգտագործվում և արմատավորվում է ժողովրդի մեջ, ապա այն շատ ավելի դժվար է հեռացվում մարդու գործածությունից: Օրինակ՝ առօրյա կյանքում շատ գործածվող բեռզին բառը կարծես չունի թարգմանություն: Մինչդեռ բառարանում կա հայերեն կնդրիտ թարգմանությունը, որը չգործածվելու հետևանքով այնքան է խորթ մեր քիմքին արտաբերելու և լսողությանը հասկանալու համար: Մինչդեռ, կարծում ենք, ամեն ինչ ժամանակի խնդիր է և հաճախակի օգտագործման դեպքում շատ ընկալելի ու հասկանալի կլինի ինչպես մասնագետների, այնպես էլ ցանկացած հայ գործածողի համար:

Հաճախ մասնագետների և անգամ ուսումնական հաստատությունների դասավանդողների կողմից օգտագործվում են ակունուկատոր և ակունուկացիա բառերը, որը ոչ միայն խորթ է հայ աշակերտի կամ ուսանողի համար՝ այլ նաև դժվար ընկալելի, սակայն կարելի է և պարտավոր ենք օգտագործել ինչեղ հայերենը՝ համապատասխանաբար մարտկոց ու կուտակում բառերը:

Գործնականում շատ են օգտագործվում անտենա (ալեհավաք), անտիֆրիզ (հակասառնեցուցիչ) և ապարատ (սարք, հարմարանք) բառերը, որոնք հայ մարդու համար անհասկանալի և ոչինչ չասող բառեր են, իսկ բովանդակային առումով իմաստալից ու գե-

ղեցիկ հայկական բառերը շատ հեշտ ու ընկալելի են և անմոռանալի, ալեհավաք բառը, որը միանգամից հասկացվում է ալիքներ հավաքող կամ հակասառնեցուցիչ, միանգամից հուշում է սառչելու նկատմամբ հակառակ ազդեցություն ունենալու հատկություն: Ավտոմեքենայի գյուտից չնայած անցել է մեկ դարից ավել ժամանակ, սակայն հայ հասարակության մեջ չի օգտագործվում կամ շատ քիչ է օգտագործվում հայեցի տարբերակը՝ ինքնաշարժ բառը, այլ փոխարենը օգտագործվում են ավտո, ավտոմոբիլ, ավտոմեքենա բառերը և դրա հետ կապված՝ ավտովթար (ինքնաշարժի վթար), ավտոկանգառ (ինքնաշարժի կանգառ) բառերը: Տեխնիկական շատ մասնագիտություններում հաճախ գործածվում են բարոմետր կամ բարոկրաֆ (ծանրաչափ), գրավիտացիա (ձգողականություն), դեֆորմացիա (ձևախեղում), դիզայն (զծագրություն), դինամիկ (շարժուն), դինամիտ (պայթուցիկ), դիսպետչեր-(կարգավար, առաքող), էլեկտրամոբիլ (էլեկտրաինքնաշարժ), էլեկտրոդ (ուժահաղորդիչ),-էսկալատոր (շարժասանդուղք), էտալոն (չափանմուշ), էքսցենտրիկ (արտակենտրոն), էֆեկտիվ (արդյունավետ), ժայլուզ (շերտավարագույր), իզոլյատոր (մեկուսիչ, մեկուսարան) բառերը: Սրանք այն բազմաթիվ բառերի մի փոքրիկ մասն են որոնք ունենալով հայերենում հստակ ու շատ ընկալելի իմաստ, սակայն հայ հասարակության և անգամ մասնագետների կողմից համարյա չի օգտագործվում հայեցի տարբերակը, այլ օգտագործվում են սերնդե-սերունդ ժամանակի՝ ընթացքում ժողովրդի խոսակցականով փոխանցված բառերը, որոնք, հատկապես տեխնիկական բառերի դեպքում, օտարածին են, որոնց արմատները, բնականաբար, գալիս են ժամանակների խորքից: Կարծում եմ ասվածի հիմքերը գալիս են ինչպես տևական ժամանակով խորհրդային մեծ կայսրության Հայաստանի մաս կազմելու պատճառով, որի ժամանակ հատկապես տեխնիկական բառերը պարզապես վերցվում կամ փոխ էին առնվում ռուսերենից: Եվ չնայած ամենայն հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ասում էր «Եվ միշտ ավելի լավ է չունեցած բառը փոխ առնել, քան ճգնել անպատճառ թարգմանել»: Սակայն այսօր ցավալի է որ ոչ թե չունեցած բառն ենք փոխ առնում այլ ունեցած այն էլ ոսկեղենիկ հայերենով իմաստալից ու ծագումնաբանորեն լավ համապատասխանող իր բովանդակությամբ բառերը:

Տեխնիկական շատ բառերի ոչ հայեցի գործածման արմատները տանում են դպրոցական բնագիտական առարկաների մեջ օգտագործվող տերմինների ու բառերի առկայության պատճառով, օրինակ՝ պարամետր (չափորոշիչ), սեզմենտ (հատված), սիմետրիա (համաչափություն), սիստեմատիկ (շարունակական, համակարգված), սխեմա (ուրվագիծ), սեյսմիկ (երկրաշարժական), գրաֆիկ (գծագիր), վեկտոր (ուղեգիծ, ուղենիշ), վալենտականություն (արժեքականություն), վերտիկալ (ուղղահայաց), տակտիկա (մարտավարություն), տանկ (հրասայլ), տանկեր (հեղուկանավ), տրանսպորտ (փոխադրամիջոց), տրանսֆորմատոր (փոխակերպիչ), օնլայն(առցանց), ֆաքս (հեռապատճեն), ֆեդերատիվ (դաշնային, դաշնակցային), ֆեյսբուք (դիմատետր), ֆերմա (ագարակ), ֆիզիկա (բնագիտություն), ֆիզիոլոգիա (բնախոսություն), ֆինանս (հասույթ), ֆունկցիա (գործառույթ) և այլ շատ բառեր, որոնք հաճախ օգտագործվում են ինչպես դպրոցական գրքերում, այնպես էլ շատ ուսուցիչների կողմից:

Կարծում ենք, ժամանակն է, որպեսզի հնարավոր նվազագույնի հասցվի օտար և օտարածին բառերի գործածությունն ընդհանրապես և տեխնիկական բառերի ու տերմինների օգտագործումը՝ մասնավորապես, քանզի մայրենի լեզվով օգտագործված ցակացած հատկապես տերմին առավել ընկալելի, հասկանալի և մտապահելի է: Մարդը դեռևս սաղմնային պրոցեսում ունենում է լեզվամտածողություն, առավել ևս՝ սկսած մականական ու դեռահասության տարիքից, և ընդհանրապես ցանկացած տարիքում լսած, արտաբերված, առավել ևս՝ իր ձեռքով գրված բառը շատ ավելի տպավորիչ, հասկանալի և երկարատև հիշողության համար է, հատկապես եթե այդ բառը մայրենի լեզվով է, առավել ևս եթե դա նոր տեխնիկական բառեր են:

Ինչպես սպարապետ Գարեգին Նժդեհն էր ասում՝ «խոսքը միաժամանակ մեր բարոյական պատկերն է, հասկանալիք այդ:

Երիցս ճիշտ է, հատկապես մայրենի լեզվով ասված բառերը մեր խոսքի մեջ դրսևորում են ոչ միայն մեր մասնագիտական ու լեզվական կարողությունները այլև մեր հոգու բովանդակությունը:

Ճիշտ է ցանկացած մարդ ակամայից անգամ կարող է արտաբերել կամ օգտագործել օտար կամ օտարածին բառեր, սակայն դա պետք է հասցվի ամենա-ամենա նվազագույնին: Եվ այս դեպքում

մեր ապագա սերունդները կունենան շատ ավելի լավ հայերեն՝ բոլոր առումներով:

1988թ.Արցախյան շարժման պայքարի և այնուհետև պատերազմի առաջին 2-3 տարիներին, ազգային զարթոնքի ժամանակ մեր լեզվապաշարում և հատկապես մարդկանց անուններում բավական դրական տեղաշարժ նկատվեց հոգուտ հայերենի, սակայն հետագա 20-30 տարիներին այդ հեղափոխական տրամադրությունները ոչ միայն նվազեցին, այլև կարծես մարվեցին, ինչպես, օրինակ, մարդկանց օտարածին և անգամ ամոթալի ազգանունները (Ղասաբօղլյան, Արաբյան, Գզողյան, Բոզոյան և այլն): Կարծում եմ, սա ոչ միայն պետության և նրա կառույցների (լեզվի տեսչություն, լեզվի ինստիտուտ, ԲՈՒՀ-եր, դպրոցներ և այլն), այլև ժողովրդի, հատկապես մտավորականների քաղաքացիական կեցվածքից ու հայրենասիրությունից է կախված: Ժամանակն է ստեղծելու տեխնիկական տերմինների հայկական բացատրական բառարան:

Կարելի է ավելացնել շատ ու շատ տեխնիկական բառերի օրինակներ, սակայն բերվածն էլ լիովին հիմնավորում են մեկ եզրակացություն՝ տեխնիկական հայկական բացատրական բառարան ստեղծելը կենսական անհրաժեշտություն է, իսկ առօրյայում նրանց հայեցի օգտագործումը՝ հայրենասիրություն:

Գրականություն՝ Ռուս – հայերեն պոլիտեխնիկական բառարան: Երևան, 1988 թ.:

Տոքթ. Յակոբ Այնթապլեան, փրոֆ. Արտեմ Սարգսյան, Անհարկի յաճախակի գործածուող օտար բառերու հայերեն համարժեքներու բառարան, Ստեփանակերտ, 2018թ.:

ИСПОЛЬЗОВАНИЕ ТЕХНИЧЕСКИХ СЛОВ НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

- ГЕГАМ МИКАЕЛЯН - В армянском языке есть немало слов, сформировавшихся и взятых с иностранных языков, в том числе немало таких слов, используемых в технических специальностях. Однако, чистоту языка должен поддерживать каждый, уважающий и любящий свой народ, свою историю, традиции, культуру, знания. Тем самым не будут ущемлены и непоняты иностранные слова, а наоборот, этим будет выражено уважение как к родному языку, так и к иностранным. Ни для кого не секрет, что в технических специальностях многие слова хоть и

переведены на армянский язык, но и в Армении, и в Арцахе употребляются в иностранном варианте, при том, что в переводе на родной язык их смысл более понятен. В народе сложилось ложное мнение, что использование иностранного слова говорит о начитанности и о владении данным языком, в то время как наоборот, умение использовать чужеродное слово на родном языке свидетельствует о степени грамотности.

Арцахское движение 1988 года и последующие боевые действия способствовали внедрению родного языка в массы.

Ключевые слова: технические слова, естественные предметы, словарный запас, синонимы, легковой автомобиль, язык мышления.

THE USE OF TECHNICAL WORDS IN ARMENIAN - GEXAM MIKAELYAN

- There are many words in the Armenian language that are formed and taken from foreign languages, including many words used in technical specialties. However, the purity of the language should be maintained by everyone who respect and love their people, their history, traditions, culture, knowledge. Thus, foreign words will not be infringed and misunderstood, but on the contrary, this will express respect for both the native language and foreign languages. It's not a secret for anyone that, although in technical specialties many words are translated into Armenian, the foreign version of them are used in Armenia and Artsakh, despite the fact that their meaning is more understandable in native language. A delusion was created in people that the use of a foreign word speaks of erudition and knowledge of the language, while on the contrary, the ability to use a foreign word in the native language indicates the degree of literacy.

The Artsakh movement of 1988 and subsequent hostilities contributed to the introduction of the native language into the masses.

Key words: *technical words, natural subjects, vocabulary, synonyms, passenger car and language thinking.*

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱԼ

**Բանասիրական գիտությունների թեկնածու
ԳԱՄ լեզվի ինստիտուտի գիտաշխատակից**

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Հոդվածը նվիրված է հատուկ անունների ուղղագրական բառարանի կազմման սկզբունքների և աշխատանքների նկարագրությանը: Բառարանը ներառում է ժամանակակից հայերենի գրավոր խոսքում ուղղագրական դժվարություն ունեցող 14569 բառային միավոր: Բառարանում տրված են որոշ բառերի բացատրություններ, թույլատելի զուգաձևություններ, տարբերակներ: Նախատեսված է հասարակության լայն զանգվածների, ուսուցիչների, աշակերտների, ուսանողների, լրագրողների և առհասարակ հայերեն ճիշտ գրել ցանկացողների համար:

Բանալի բառեր: Հատուկ անուն, ուղղագրական բառարան, սկզբունք, աշխատանք, ժամանակակից հայերեն, գրավոր խոսք, զուգաձև, տարբերակ, հասարակություն, բացատրություն, զանգված:

*Ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկկից
տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ...
(Գործք 4. 12)*

Հատուկ անունների ուղղագրական բառարանը լույս է տեսել 2017թ. և ներառում է ժամանակակից հայերենի գրավոր խոսքում ուղղագրական դժվարություն ունեցող 14569 բառային միավոր:

Հատուկ անունների՝ մասնավորապես անձնանունների վաղեմությունը նույնպիսին է, ինչպիսին մարդկության պատմությունը: Ինչպես նշում էր ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը. «Մարդկային հասարակության մեջ չկա թեկուզ ամենավայրենի մի ցեղ, որի անդամները անձնանուն չունենան: Անձնանունը համաշխարհային մի երևույթ է»¹:

Հատուկ անունների ուսումնասիրությունը նույնպես հնագույն արմատներ ունի, և դեռևս անտիկ հեղինակների երկերում կարե-

¹ Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ե., ԵԹ, 1962, էջ 340Է

լի է հանդիպել ուշագրավ անդրադարձների: Իր «Աշխարհագրություն» աշխատության մեջ Ստրաբոնը գրում է բազմաթիվ տեղանունների, ինչպես նաև անձնանունների մասին: Վերջինների մասին խոսում է նաև Քսենոփոնը: Այսպես, նա ասում է, թե. «Կյուրոսի հայրը եղել է պարսից Կամբյուսես թագավորը: Այս Կամբյուսեսը Պերսեյանների տոհմից էր. իսկ Պերսեյաններն իրենց անունն ստացել են Պերսևսից»¹:

Գալով հայկական միջավայրին՝ ինչպես նշում էին Տեղանունների բառարանի հեղինակները, թերևս պետք է Պատմահայր Մովսես Խորենացուն համարել տեղանվանաբանության հիմնադիրը: «Հայ իրականության մեջ նա առաջինն էր, որ իր «Հայոց պատմություն» երկում պատմական դեպքերի ու դեմքերի առնչությամբ փորձել է պարզել բազմաթիվ տեղանունների (Գեղամա երկիր, Սյունիք, Արագած, Արմավիր, Հայք՝ Հայաստան, Հարք, Բզունիք, Խոռխոռունիք, Շիրակ, Շամիրամակերտ՝ Վան, Շավարշական և այլն) ծագումը և ճշգրտել տասնյակ աշխարհագրական օբյեկտների (Արտաշատ, Երվանդաշատ, Երվանդակերտ և այլն) դիրքը... Տեղանունների մասին այս կարգի նկարագրությունների ու ավանադությունների հանդիպում ենք միջնադարյան ողջ հայ պատմագրության մեջ, նոր շրջանում նույն բանը տեսնում ենք պատմական, աշխարհագրական, պատմաաշխարհագրական բնույթի գրքերում: Այս տեսակետից չգերազանցված օրինակ է Ղ.Ալիշանի թողած ծովածավալ ժառանգությունը»²:

Ժամանակի ընթացքում հատուկ անունները դարձան բառարանագիրների հետազոտության առարկան, և XIX դարից սկսյալ մեկը մյուսի հետևից լույս տեսան հատուկ անունների՝ զանազան ընդգրկումներ ունեցող բառարաններ, որոնցից հայ իրականության մեջ կարելի է հիշատակել Հ.Հյուբշմանի «Հին Հայոց տեղոյ անունները» ուսումնասիրությունը (թարգմանությունը գերմաներենից՝ Հ.Բ. Պիլեգիկճյանի, Վիեննա, 1907), Ն.Ճիվանյանի «Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական հատուկ անվանց հավելյալ հայկական հատուկ անունք» աշխատությունը (Կ.Պոլիս, 1879), Հ. Առաքելյանի «Հանրագիտական բառարանի» առաջին հատորը (Թիֆլիս, 1915), Մ.Պոտոլյանի «Հայ հանրագի-

¹ Քսենոփոն, Կյուրոպեդիա, Ե., 2000, էջ 6Է

² Թ.Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ.Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր I, Ե., 1986, էջ VIIԷ

տակը» (Բուխարեստ, 1938-1940), Ս.Էփրիկյանի «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանը» (Վիեննա, 1903-1905) և այլն:

Ականավոր գիտնական Հրաչյա Աճառյանը գրեց «Հայոց անձնանունների բառարանը»՝ նպատակ ունենալով «հավաքել, դասավորել և ուսումնասիրել այն բոլոր անունները, որ պատմության ընթացքում որևէ հայ անհատ կրել է երբևիցե, անկախ ունեցած դիրքից ու աստիճանից, ընդունած կրոնից ու դավանանքից և ապրած շրջանից կամ երկրից»¹:

Աճառյանը խորապես գիտակցում էր կարևորությունը ստեղծելու հայկական տեղանունների ամբողջական բառարան, կատարել էր նաև որոշակի քայլեր այս ուղղությամբ: Այս դժվարին ու լայնածավալ գործին ձեռնամուխ եղան և իրականացրին «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակները: Բառարանի հինգ ստվարածավալ հատորները լույս տեսան 1986-2001 թթ.՝ ամփոփելով «տասնյակ հազարավոր աշխարհագրական օբյեկտներին և դրանց անուններին վերաբերող աշխարհագրական, պատմական, բանասիրական, հնագիտական, ազգագրական և այլ կարգի բազմաթիվ և բազմապիսի տեղեկություններ»²:

Հատուկ անունների հանդեպ հետաքրքրություն նկատելի է նաև վերջին ժամանակներում: 2010 թ. լույս տեսավ Տիգրան Ավետիսյանի «Հայոց ազգանունների բառարանը»՝ ներկայացնելով ավելի քան տասնութ հազար հայկական ազգանուն՝ դրանց հիմքերի մանրամասն քննությամբ: Ինչպես նշում էր հեղինակը. «Ժողովրդի մշակույթի անքակտելի մասը հատուկ անունների համակարգն է: Ազգանունը վերջինիս յուրօրինակ դրսևորումն է, որի հիմքում այս կամ այն կերպ արտացոլված են մյուս բաղադրիչները՝ անձնանուն, մականուն, տեղանուն»³:

Ուղղագրական բազմաթիվ բառարանների հեղինակներ նույնպես իրենց բառացանկներում ներառել են հատուկ անուններ կամ առանձին բաժիններ նվիրել դրանց: Այս բաժիններում ընդգրկվում էին զանազան հատկանուններ՝ անձնանուններ, տեղանուններ, ազգանուններ, տոների, համաստեղությունների, կազմակերպությունների անվանումներ, հապավումներ, բաղադրյալ հատուկ

1 Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Ե., 1942, էջ VIIԷ

2 Թ.Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ.Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր I, Ե., 1986, էջ VIIIԷ

3 Տ.Ավետիսյան, Հայոց ազգանունների բառարան, Ե., 2010, էջ VԷ

անուններ և այլն: Սրանց թիվը, սակայն, խիստ սահմանափակ էր՝ հիմնականում պայմանավորված տվյալ բառարանի ծավալային գործոնով: Ուստի անհրաժեշտություն առաջացավ կազմելու մի բառացանկ, որն ընդգրկեր վերը նշված բառախմբերի միավորներն ավելի լայն ծավալով՝ նախևառաջ նկատի ունենալով տվյալ հատկանունների ուղղագրական արժեքը, ապա նաև դրանց գործածության հաճախականությունը արդի հայերենում, հարազատությունը մեր լեզվին, պատմությանն ու հոգևոր ըմբռնումներին, դրանց արտահայտած հասկացությունների կամ անձերի դերակատարությունը համաշխարհային պատմության ընթացքում և այլն:

Բառարանը կազմվել է քարտարանի հիման վրա: Նախապես քարտագրվել են Հայկական սովետական հանրագիտարանի բոլոր՝ ուղղագրական արժեքով օժտված հատուկ անունները, ապա բառակազմը հարստացվել է շնորհիվ մի շարք բառարանների հետ համեմատության ու համալրման, ինչպես.

1. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա-Ե, Ե., 1942-1962,

2. Ավետիսյան Տ., Հայոց ազգանունների բառարան, Ե., 2010,

3. Գյուլքիլյան Դ., Հայերեն բառարան-տեղեկատու. Միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Ե., 2008,

4. Գյուլքիլյան Դ., Մեծատա՞ռ, թե փոքրատառ: Հայերեն բառարան-տեղեկատու, Ե., 2007,

5. Գյուլքիլյան Դ., Հեքեքյան Ն., Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատու, Ե., 2000,

6. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-5, Ե., 1986-2001,

7. Մեյթիխանյան Փ., Աստվածաշնչի և հայոց Սուրբ անվանց բառարան, Ե., 2001,

8. Մեյթիխանյան Փ., Հայերենի ուղղագրական նոր բառարան, Ե., 2013,

9. Նազարյան Ռ., Գյոդակյան Ա., Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Ե., 2004,

10. Սուքիասյան Ա., Սուքիասյան Զ., Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., 2002:

Լրացումներ կատարվել են նաև պարբերական մամուլից, Հա-

յաստանի ատլասից, քարտեզներից, ուղղագրական ուղեցույցներից, բառգրքույկներից, տեղեկատուներից և այլն:

Բառարանում գլխաբառերը տրված են ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությամբ: Սրանից շեղում կարող է լինել միայն մեկ դեպքում. եթե պատմությանը հայտնի որևէ անձնավորության, վայրի, ստեղծագործության անուն եղել է ընդունված հատկանվան տարբերակ: Այս դեպքում նշվում է անունը և տվյալ տարբերակն առանձին՝ համապատասխան բացատրությամբ, ինչպես՝ *Արիստակես* և *Ռստակես* - XIV դ. երկրորդ կեսի հայ մանրանկարիչ և գրիչ, *Բաբկեն* և *Բաբգեն Ա Ռթմեսցի* - Ամենայն Հայոց կաթողիկոս 490-516 թթ., *Աղթամար* կղզի և «*Ախթամար*» բալլադ, *Ապարան* և *Աբարան* - գետ Հայաստանում:

Բառերի բացատրություններ տրվում են սակավ դեպքերում, հիմնականում եթե բառը մենիմաստ է և կարող է առաջացնել թյուրըմբռնում, ինչպես՝ *Այդրիժ* - ավան Էջմիածնում, *Աննավանք* - գյուղ Արևմտյան Հայաստանում, *Առինջավանք* - գյուղ Արևմտյան Հայաստանում, *Առափնյա լեռնաշղթաներ* - լեռնաշղթաներ Հյուսիսային Ամերիկայում, *Գիրք* - Աստվածաշունչ, *Առակներ* - Աստվածաշնչի գրքերից մեկը, *Աղվես* համաստեղություն, *Ճանճ* համաստեղություն, *Ամառային այգի* - Սանկտ Պետերբուրգում, *Մազե կամուրջ* - կամուրջներ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, *Մագի կամուրջ* - կամուրջ Արցախում, *Բերմուդյան Կղզիներ* - պետության, *Կոնյակ* - քաղաք Ֆրանսիայում և այլն:

Բառարանում չեն տրվում անվանումների նեղ բարբառային տարբերակներ, որոնք կարող են հանդիպել Հայաստանի տարբեր մարզերում, նաև սփյուռքի գաղթօջախներում:

Մի շարք հատուկ անունների ընդունված կամ պաշտոնական ձևերից բացի փակագծերում նշվում են առավել տարածված ժողովրդախոսակցական տարբերակները՝ անկախ նրանից՝ վերջինը կրճատված, թե հնչյունափոխված ձև է, ինչպես՝ *Անժելա* - *Անժել* - *Անժիկ*, *Ազգանուշ* - *Ազգուշ*, *Վլադիմիր* - *Վոլոդյա* և այլն:

Ստուգաբանորեն հարազատ անվանումները, որոնք ժամանակակից գործածության մեջ սահմանազատվել են, չեն տրվում միասին, այլ յուրաքանչյուրն իր տեղում այբբենական կարգով, ինչպես՝ Հովհաննես-Հովհան-Հովիկ, Ստեփանոս-Ստեփան, Սերովբե-Սերոբ, Քերովբե-Քերոբ, Սանասար-Սարասար, Մոլդովա-Մոլդավիա

(Մոլդավական ԽՍՀ), Բելառուս-Բելոռուսիա (Բելոռուսական ԽՍՀ), Ազգավաքար - Ազգավի քար, Արաքս - Արագ (վերջինը նաև արական անուն է) և այլն:

Հատուկ անունների հնացած կամ հազվադեպ կիրառվող տարբերակները բառարանում հիմնականում չեն ներառվել, որոշ դեպքերում փակագծերում տրվում են գրաբարյան ձևերը, եթե դրանք այսօր էլ կարող են գործածվել ոճական ինչ-ինչ նպատակներով, ինչպես՝ Ուտիք (Ուտի, Աւտի, Ուտիացւոց աշխարհ, Ուտյաց աշխարհ, Ուտիացւոց գաւառ, Ուտիական աշխարհ, Ուտիական գաւառ), Փայտակարան (Կասաք, Կագք, Կասք) և այլն:

Բառարանում չեն ներառվել հատուկ անունների այնպիսի տարբերակներ, որոնք վկայված են գրական զանազան հուշարձաններում, սակայն այսօր բոլորովին կամ գրեթե բոլորովին դուրս են գործածությունից, ինչպես *Արիստակես* անվան բազմաթիվ տարբերակները, բացի *Ռստակես* ձևից, որի մասին նշեցինք վերը, որոնց մասին գրել է Աճառյանը. «Արիստակես, ար. գրված է զանազան ձևերով. -Առիստակես, Առիստագես, Առաստակես, Ռստակես, Ռըստակես, Ըոստակես, Ըռըստագես, Ուռուստակես, և բոլորովին այլափոխված ձևով՝ Յռիսթագ»¹:

Բառարանում որոշակի քանակով առկա են օտար հատուկ անուններ: Սրանք մեր իրականության մեջ բավական լայն տարածում ունեցող անձնանուններ են ու ամրագրված տեղանուններ, ինչպես՝ Ելենա, Իրինա, Յուրի, Լեոնիդ, Էդվարդ (Էդուարդ), Վլադիմիր, Վիկտոր, Պրիվոլնոյե, Սվերդլով, Սեմյոնովկա, Չկալովկա և այլն:

Եթե գլխաբառն ունի թույլատրելի գուգաձևություն, դրանք տրվում են կողք կողքի՝ //նշանով:

Զմոռանանք նաև, որ հատուկ անունների ուսումնասիրությունն ունի և՛ տեսական, և՛ գործնական մեծ նշանակություն: Հայաստանի անկախացումից ի վեր օտարածին, խորթ, ժողովրդի համար անհասկանալի, հաճախ պարտադրված անունները նորերով փոխարինելը, երբեմն էլ բուն հայկականին վերադարձը պետական առաջնահերթ խնդիրներից է: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ բառարանում չեն ներառվել գործածությունից դուրս մղված հատուկ անունները. անվանումներ, որոնք կապված էին խորհրդային իշխանության տարիների հետ, ինչպես՝ Լենինական,

¹ Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Ե., 1942Է

Կիրովական, Ստալինգրադ, Նիսեյ, Կիմ, Մելս, Լենդրուշ և այլն. անվանումներ, որոնք կապված էին այս կամ այն տիրապետության ժամանակաշրջանի հետ, ինչպես՝ Դարավագյազ, Դավալու, Դարա-չիչակ, Համամլու, Ղափախլու և այլն:

Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հրամանագրերը Հայաստանի Հանրապետության մի շարք շրջանների և բնակավայրերի վերանվանման մասին, և բառացանկում ներառվել են վերանվանված տարբերակներն, ինչպես՝ Ծաղկուտ, Բերդաշեն, Գառնառիճ, Լորասար, Պաղակն, Խորոնք, Արտիմետ, Վաղատին, Տորունիք, Նոր Խաչակապ, Ամրակից, Ուրասար, Գեղամասար, Դաշտադեմ, փոխանակ Գյուլլիջա, Թափաքյոյ, Կուզիքենդ, Էլլար, Շուրաբադ, Լենուդի, Աթարբեկյան, Վաղուդի, Կըզըլաֆակ, Սարալ, Կիրովո, Կույբիշև, Շիշկայա (Գուկառիճ), Իզլամզլու և այլն:

Բառարանում ներառված են բաղադրյալ հատուկ անուններ, որոնցում, ի թիվս այլոց, մեծատառերի գրությունը ևս ուղղագրական խնդիր է: Այստեղ մեզ համար հիմք է ծառայել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2003 թ. հունվարի 14-ի հրամանը «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» կանոններ հաստատելու վերաբերյալ¹:

Ժամանակակից հայերենի ուղղագրության կարևոր խնդիրներից է նաև բառերի՝ այդ թվում բաղադրյալ հատուկ անունների միասին, անջատ և գծիկով գրության հարցը: Գծիկի միասնական գործածությունն ապահովելու նպատակով տերմինաբանական կոմիտեն ընդունեց որոշում «Գծիկի գործածության մասին»², որին ևս հետևել ենք բառարանը կազմելիս:

Բառարանը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար, կարող է օգտակար լինել յուաքանչյուր՝ հայերեն ճիշտ գրել ցանկացողին: Գաղտնիք չէ, որ աշխարհաքաղաքական հանգամանքների բերումով Հայաստանում այսօր ձևավորվել է արևմտահայ միջավայր, և լիահույս ենք, որ բառարանն իր նպաստը կբերի նաև նրանց առջև ծառացած լեզվական խոչընդոտների հաղթահարման հարցում:

1 Տե՛ս Գիտելիք ուսումնակրթական և գիտամեթոդական հանդես աշակերտների և ուսուցիչների համար, 2003, N 5, էջ 23-32:

2 Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Գծիկի գործածության մասին, ԵԾ, 2006, էջ 209-212 և

Իսկ որ հատուկ անունների կարևորությունը շատ մեծ է մեր կյանքում, վեր է ամեն կասկածից, քանզի, ինչպես նշում էր մեծ գիտնականը. «Ո՛չ մի բան այնքան հավատարիմ կերպով չի ներկայացնում մեր պատմական կյանքի զանազան ելևէջները, մեր կրած ազդեցությունները օտար ժողովուրդներից, ինչպես և մեր ներքին ձգտումները, որչափ հատուկ անունները»¹:

О ПРИНЦИПАХ СОСТАВЛЕНИЯ ОРФОГРАФИЧЕСКОГО СЛОВАРЯ СОБСТВЕННЫХ ИМЕН - КАРИНЕ АРАКЕЛЯН - Статья

посвящена описанию принципов составления орфографического словаря собственных имен. Словарь включает 14569 словарных единиц, имеющих сложности в письменной речи современного армянского языка. В словаре даются объяснения некоторых слов, возможные параллельные формы, варианты. Словарь предназначается для широких слоев общества; учителей, школьников, студентов, журналистов, а также для всех желающих грамотно писать по-армянски.

Ключевые слова: собственное имя, орфографический словарь, принцип, работа, современный армянский язык, письменная речь, параллельная форма, вариант, общество. объяснение, масса.

ABOUT THE PRINCIPLES OF COMPILING THE SPELLING DICTIONARY OF PROPER NOUNS - KARINE ARAKELYAN - The

article is devoted to the description of principles of compiling the spelling dictionary of proper nouns. The dictionary includes 14569 proper nouns having difficulties in modern armenian written language. The dictionary gives the explanations of some words, possible parallel forms, versions. The dictionary intends for various strata of society: teachers, pupils, students, journalists and also those who wants to write literate Armenian.

Keywords: proper noun, spelling dictionary, principle, job, modern armenian language, written language, parallel form, version, society, explanation, strata.

¹ Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Ե., 1962, էջ 344Է

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՐՑԱԿԱՆ ՀՆՁԵՐԱՆԳԻ ԴԵՐԸ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՎ ԺԽՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՈՄԱՆՇՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հոմանշությունը ձևախմաստային իրողություն է, ուստի այն գործում է ոչ միայն բառային, այլև նաև քերականական ոլորտում:

Քերականական հոմանիշները քերականական տարբեր միջոցներով արտահայտում են առարկաների, երևույթների միջև եղած նույն հարաբերությունները (քերականական միջոց են նաև տրամաբանական շեշտն ու հնչերանգը):

Հաստատական և ժխտական նախադասությունների հոմանշային ձևավորման գործում կարևոր դեր ունի մասնավորապես հարցական հնչերանգը:

Երբեմն ժխտում արտահայտվում է հրամայական բայածևերի դրական ձևերի օգնությամբ:

Հաճախ, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, հարցական բնույթ (հնչերանգ) ունեցող նախադասությունը՝ հանդես գալով անշաղկապ բարդ նախադասությունների կազմում, արտահայտում է պայման:

Հոմանշային շարք է ձևավորվում նաև հարցական և հրամայական նախադասությունների միջոցով:

Բանալի բառեր: Քերականություն, հարցական հնչերանգ, հաստատական և ժխտական կառույցներ, հոմանշություն, շարահյուսական հոմանիշներ, պատմողական նախադասություն, հրամայական նախադասություն, հարցական նախադասություն, անշաղկապ բարդ նախադասություն, ոճական երանգավորում:

Հոմանշությունը ձևախմաստային իրողություն է, ուստի այն գործում է ոչ միայն բառային, այլև նաև քերականական ոլորտում:

Բառային հոմանիշներն արտահայտում են հոմանշային միևնույն շարքի մեջ մտնող տարբեր բառերի իմաստային և կիրառական նրբերանգները, նրանց ոճական, արտահայտչական առանձնահատկությունները, իսկ քերականական հոմանիշների միջոցով ներկայացվում են քերականական տարբեր ձևերի և կառույցների

միջև դրսևորվող իմաստային նույնությունը կամ մերձավորությունը, նրանց բազմաբնույթ հարաբերությունները, արտացոլում և պատկերացում են տալիս լեզվի ձևաբանական ու շարահյուսական իրողությունների ամբողջական կառուցվածքի ու հնարավորությունների, նրանց իմաստային նրբերանգների և ոճական երանգավորումների մասին¹:

«Քերականական հոմանիշները,- գրում է Ն. Պառնասյանը,- միևնույն քերականական իմաստների, քերականական հարաբերությունների դրսևորումն են տարբեր քերականական միջոցներով, որոնք ունեն իմաստային և ոճական նրբերանգներ, և որոնց հիմքում ընկած են միևնույն առարկայական հարաբերությունները»²:

Ն. Պառնասյանը, անդրադառնալով շարահյուսական հոմանիշների առանձնահատկություններին, իբրև առաջին և ամենակարևոր հատկանիշ նշում է այն, որ «նրանք քերականական տարբեր միջոցներով արտահայտում են առարկաների, երևույթների միջև եղած նույն հարաբերությունները ...քերականական միջոց են նաև տրամաբանական շեշտն ու հնչերանգը, որոնց փոփոխությամբ առաջանում են բազմաթիվ համանիշ բառակապակցություններ...»³:

Շարահյուսական հոմանիշների գործածության դեպքում հաղորդողն արտահայտում է իր վերաբերմունքը, ընդգծում տվյալ հարաբերության տարբեր կողմերը, դրսևորում ընկալման իր ձևը և հուզարտահայտչական, ոճական տարբեր երանգավորում տալիս խոսքին:

Հաստատական և ժխտական նախադասությունների հոմանշության ձևավորման գործում կարևոր դեր ունի մասնավորապես հարցական հնչերանգը: «Ի՞նչ կա ավելի ծանր ու խղճալի, քան թե կսկիծը որդեկորույս մոր» <=> «Ոչինչ չկա ավելի ծանր ու խղճալի, քան թե կսկիծը որդեկորույս մոր» նախադասությունները համանիշ են, քանի որ արտահայտում են ժխտման նույն հարաբերությունները: Վերջիններս, սակայն, դրսևորվել են քերականական տարբեր միջոցներով: Մի դեպքում գործածված է հարցական բնույթի նախադասություն՝ հարցական հնչերանգով, *ի՞նչ*

¹ Տե՛ս Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2006, էջ 226:

² Տե՛ս Պառնասյան Ն., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1970, էջ 26:

³ Տե՛ս Նույն տեղում, էջ 35:

հարցական դերանվամբ և *կա* բայի դրական ձևով, մյուս դեպքում ժխտական կառուցվածք ունեցող պատմողական նախադասություն՝ *ոչինչ* ժխտական դերանվամբ և *կա* բայի ժխտական ձևով՝ *չկա*: Այս նախադասությունների նրբերանգային տարբերությունը կապված է հաղորդման նպատակի, տվյալ հարաբերությունների նկատմամբ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման հետ: Առաջին դեպքում ...երբ գործածվում է հարցական բնույթի նախադասություն... նախադասությունն ունի հուզական-արտահայտչական երանգավորում, արտահայտում է ճարտասանական հարցում, երկրորդ դեպքում խոսողը պարզապես հաղորդում է այդ նույն երևույթի մասին՝ առանց որևէ երանգավորման, ներկայացնում է այն որպես օբյեկտիվ իրականություն¹:

Այս եղանակով համանշային շարքեր ձևավորվում են հետևյալ դեպքերում.

ա... Երբ ժխտումը վերաբերում է ենթակային, այսինքն՝ ցույց է տրվում, որ տվյալ գործողությունը չի կատարվել կամ չի կատարվում ոչ ոքի կողմից, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության ենթական դրսևորվում է անձ ցույց տվող ժխտական դերանվամբ՝ *ոչ ոք*, բայ-ստորոգյալը դրվում է ժխտական ձևով:

Օրինակ՝ Ոչ ոք չէր հանդգնի անցնել սրանց միջով: <=> Ո՞վ կհանդգներ անցնել սրանց միջով: Ոչինչ չի կասեցնի սրանց առաջընթացը: <=> Ի՞նչը կկասեցնի սրանց առաջընթացը:

բ... Երբ ժխտումը վերաբերում է նախադասության ուղիղ խնդրին, վերջինիս պաշտոնով ժխտական կառուցվածք ունեցող նախադասություններում հանդես են գալիս *ոչինչ*, *ոչ ոք*, *ոչ մի բան* ժխտական դերանուններն ու կապակցությունները, բայը դրվում է ժխտական ձևով: Դրան համանիշ հարցական նախադասության մեջ ուղիղ խնդրի պաշտոն կատարում են *ի՞նչ* կամ *ո՞ւմ* հարցական դերանունները, իսկ բայը դրվում է դրական ձևով:

Օրինակ՝ Ոչինչ չի կարող անել: <=> Ի՞նչ կարող է անել...: Նա այնտեղ *ոչ ոքի չի հանդիպել*: <=> Նա այնտեղ *ո՞ւմ է հանդիպել* որ...

գ... Երբ ժխտումը վերաբերում է գործողության, իրողության որևէ վայրում կամ որևէ ժամանակամիջոցում կատարվելուն, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության մեջ որպես տեղի, ժամանակի պարագաներ հանդես են գալիս *երբեք* մակբա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 36:

յը, ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ կապակցությունները: Բայ-ստորոգյալը դրվում է ժխտական ձևով: Նրան համապատասխան հարցական նախադասության մեջ տեղի կամ ժամանակի պարագայի պաշտոն են կատարում որտե՞ղ և ե՞րբ հարցական դերանունները:

Օրինակ՝ Նա ոչ մի տեղ չի հանդիպել այսպիսի համարձակ մարդկանց: <=> Իսկ որտե՞ղ է նա հանդիպել այսպիսի համարձակ մարդկանց:

դ... Երբ ժխտվում է որևէ գործողության կատարման հնարավորությունը, գործածվում են հնարավոր չէ, չի կարող ժխտական կառույցները բայի անորոշ դերբայի հետ, և կամ տվյալ բայի դրական ձևի հետ գործածվում է ինչպե՞ս հարցական դերանունը:

Օրինակ՝ Չեմ կարող գնալ, քանի որ հիվանդ եմ: <=> Ինչպե՞ս գնամ, երբ հիվանդ եմ:

ե... Երբ ժխտվում է որևէ գործողության կատարման անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը, ժխտական կառուցվածք ունեցող նախադասության մեջ գործածվում են պետք չէ, հարկավոր չէ, կարիք չկա ժխտական միադիմի եղանակավորող կապակցությունները բայի անորոշ դերբայի դրական ձևի հետ, իսկ նրան համանիշ հարցական նախադասության մեջ նույն բայը դրվում է ինչո՞ւ հարցական դերանվան հետ:

Օրինակ՝ Ինչո՞ւ հեռու գնանք: <=> Պետք չէ ...կարիք չկա... հեռու գնալ:

զ... Երբեմն խոսողի նպատակն է լինում պարզապես ընդգծելով ժխտել որևէ երևույթ, գործողություն: Այս դեպքում սովորական ժխտական կառուցվածք ունեցող նախադասությանը համանիշ հաճախ գործածվում է հարցական բնույթի դրական կառուցվածք ունեցող նախադասություն, որի ստորոգյալից կամ ժխտվող անդամից առաջ կարող է դրվել հ՞նչ հարցական դերանունը:

Օրինակ՝ ...Օրը տարի էր կերակրում, ի՞նչ ձուկ որսալու ժամանակ էր: <=> ...Օրը տարի էր կերակրում, ձուկ որսալու ժամանակ՞ էր: <=> ...Ձուկ որսալու ժամանակ չէր:

Հարցական և պատմողական բնույթի նախադասությունների միջև հակառակ հարաբերություն է լինում, երբ ժխտական կառուցվածք է ունենում հարցական նախադասությունը: Այս դեպքում հարցական նախադասությունն ունենում է հաստատական նշանակություն: Այսպիսի նախադասությունները գործածվում են

պատճառահետևանքային հարաբերություններով կապված բարդ նախադասություններում:

ա... Պատմողական և հարցական համանիշ նախադասությունների միջոցով հաստատվում է որևէ գործողության կատարումը բոլորի կողմից կամ ամեն ինչի նկատմամբ:

Օրինակ՝ Ի՞նչ կար գարմանալու: Ո՞վ չի լսել և ո՞վ չի խոսում այդ մասին: <=> Ոչինչ չկար գարմանալու: Բոլորը լսել և բոլորը խոսում են այդ մասին:

բ... Ցույց է տրվում որևէ խնդրի նկատմամբ տեղի ունեցող գործողություն, դարձյալ ամբողջական ընդգրկումով: Այդ դեպքում ի՞նչ կամ ո՞ւմ հարցական դերանվան մոտ հաճախ ավելանում է ասես եղանակավորող բառը որ շաղկապի հետ:

Օրինակ՝ Ո՞ւմ ասես, որ չգիտի նա: <=> Նա բոլորին գիտի: Ի՞նչ մարդու ասես, որ չես հանդիպի այնտեղ: <=> Ամեն մարդու կհանդիպես այնտեղ:

գ... Հաճախ ժխտական կառուցվածք ունեցող հարցական նախադասությամբ հաստատվում, արձանագրվում է գործողության՝ որոշակի ժամանակամիջոցում կամ տեղում կատարվելը:

Օրինակ՝ Իսկ ե՞րբ չի հարցրել այդ մասին, որ այսօր չհարցնի: <=> Միշտ հարցրել է այդ մասին, այսօր էլ է հարցնում: Որտե՞ղ ասես չի եղել նա: <=> Ամեն տեղ եղել է նա:

դ... Երբ հարցական նախադասության մեջ ժխտական բայի մոտ գործածվում է ինչպե՞ս հարցական դերանունը, նախադասությունը ցույց է տալիս այնպիսի իրողություն, գործողություն, որը, ըստ խոսողի, անհրաժեշտաբար պիտի կատարվի, անհնար է չկատարել:

Օրինակ՝ Ինչպե՞ս չգնալ. չէ՞ որ այդ հարցը խիստ կարևոր է: <=> Հնարավոր չէ չգնալ, չէ՞ որ այդ հարցը խիստ կարևոր է: Պետք է գնալ:

ե... Երբ այդ նախադասություններում ինչպե՞ս հարցական դերանվան հետ գործածվում է բայի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևը, նախադասությունն արտահայտում է ափսոսանք տվյալ գործողության չկատարման վերաբերյալ: Այս դեպքում ինչպե՞ս դերանվան փոխարեն կարող է գործածվել նաև ինչո՞ւ դերանունը: Սրան համանիշ պատմողական նախադասությունը կարող է ունենալ երկու տեսակի կառուցվածք. 1... ժխտական կառուց-

վածք, երբ բայի անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևի կողքին գործածվում է ափսոս եղանակավորող բառը և 2... դրական կառուցվածք, երբ գործածվում են նույն բայի ըղձական կամ հարկադրական եղանակների անցյալ ժամանակները, իսկ նախադասությունն արտասանվում է ափսոսանք արտահայտող հատուկ հնչերանգով:

Օրինակ՝ Ինչպե՞ս չգնացի: <=> Ափսոս, չգնացի: <=> Պիտի գնայի:

գ... Երբ ժխտական կառուցվածք ունեցող հարցական նախադասության մեջ գործածվում է ինչո՞ւ դերանունը՝ բայի անորոշ դերբայի կամ ըղձական եղանակի ժխտական ձևերի հետ, ցույց է տալիս խոսողի կարծիքը տվյալ գործողության կատարման հնարավորության վերաբերյալ:

Օրինակ՝ Իսկ ինչո՞ւ չգնամ: <=> Պիտի գնամ:

Որևէ երևույթ հաստատելու կամ ժխտելու համար հարցական նախադասություն շատ է գործածվում նաև հրապարակախոսական լեզվում՝ խոսքը պատկերավոր ու կենդանի դարձնելու համար:

Բացի հիշյալ դեպքերից՝ հարցական ու պատմողական նախադասությունները կարող են հանդես գալ որպես համանիշներ նաև հետևյալ դեպքերում:

ա... Երբ որևէ գործողություն կատարվել է, խոսողն իր բացասական վերաբերմունքն է հայտնում այդ գործողության՝ տվյալ անձի կողմից կատարված լինելու մասին:

Օրինակ՝ Վատ եղավ: Հենց դո՞ւ պիտի գնայիր: <=> Վատ եղավ: Դո՞ւ չպիտի գնայիր: Պետք չէր, որ դու գնայիր:

բ... Երբ խոսողը դրսևորում է իր բացասական վերաբերմունքը որևէ ձևով կատարված գործողության նկատմամբ՝ ժխտելով տվյալ գործողության այդ ձևով կատարումն ընդհանրապես, հարցական նախադասության մեջ գործածվում է այդպես ցուցական դերանունը հարցական հնչերանգով, բայը դրվում է սահմանական եղանակի ներկա կամ ենթադրական եղանակի ապառնի ժամանակներով:

Օրինակ՝ Բա լավությանն այդպե՞ս կպատասխանեն: <=> Լավությանն այդպես չեն պատասխանի:

Երբեմն ժխտում, բացասում է արտահայտվում նաև հրամայական բայաձևերի դրական ձևերի օգնությամբ: Այսպես՝ երբ խո-

սողը նպատակ է ունենում ժխտելու որևէ գործողության կատարման հնարավորությունը, օգտագործում է հնարավոր չէ, անհնար է ժխտական ձևերը գործողություն ցույց տվող բայի անորոշ դերբայի դրական ձևի հետ ...հնարավոր չէ գտնել, անհնար է լքել...:

Օրինակ՝ Արի ու սրանից բան հասկացիր: <=> Սրանից հնարավոր չէ ...անհնար է... բան հասկանալ:

Այս կառուցվածքի հրամայական նախադասության մեջ բայի հրամայական եղանակի ժխտական ձևի գործածման դեպքում նախադասությունը ձեռք է բերում հաստատական նշանակություն:

Օրինակ՝ Սրանից հետո դե գնա ու հավատա նրան: <=> Մի՞թե սրանից հետո կարելի է հավատալ նրան: <=> Սրանից հետո հավատալ չի կարելի ...հնարավոր չէ, պետք չէ...:

Հաճախ, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, հարցական բնույթ ...հնչերանգ... ունեցող նախադասությունը, հանդես գալով անշաղկապ բարդ նախադասությունների կազմում, արտահայտում է պայման՝ ստորադասվելով որևէ պատմողական կամ հրամայական բնույթի գլխավոր նախադասության:

Օրինակ՝ Կկատարվի խնդիրս՝ լավ, չի՞ կատարվի՝ խոմ ինձանից մի բան չի պակասիլ: <=> Եթե չկատարվի, խոմ ինձանից մի բան չի պակասիլ:

Համանշային շարք է ձևավորվում նաև հարցական և հրամայական նախադասությունների միջոցով: Երբեմն խոսողը խոսակցին ուղղված խնդրանքը, հորդորը մեղմելու համար հրամայական նախադասության փոխարեն գործածում է հարցական հնչերանգով նախադասություն:

Օրինակ՝ Վաղը չէի՞ք կարող գալ, այսօր խիստ զբաղված եմ: <=> Եկե՛ք վաղը, այսօր խիստ զբաղված եմ:

Հատկանշական է այն երևույթը, որ երբ հարցական նախադասություններում անցյալ ժամանակի փոխարեն գործածվում են ապառնի կամ ներկա ձևեր, նախադասությունը ստանում է բուն հարցումի նշանակություն, այսպես՝ եթե «Վաղը չէի՞ք կարող գալ» ձևը նշանակում է «Եկեք վաղը», ապա «Վաղը չէ՞ք կարող գալ» ձևն արտահայտում է բուն հարցում «Վաղը կարո՞ղ եք գալ» նշանակությամբ:

Հրամանը, խնդրանքը մեղմելու համար հաճախ հարցական նախադասության փոխարեն գործածվում է հրամայական նախա-

դասություն, որտեղ հրամայական եղանակով դրված բայից առաջ, կամ հենց նախադասության սկզբում դրվում է մի եղանակավորող բառը:

Օրինակ՝ Այդ գիրքը չէի՞ր տա ինձ: <=> Մի այդ գիրքը տուր ինձ:

Այս դեպքում հրամայական հնչերանգը որոշ չափով թուլանում է՝ մոտենալով պատմողականին:

Այսպիսով՝ հնչերանգը, լինելով լեզվի ոչ հնչութային միջոց, կարևոր դեր է խաղում իմաստային զանազան նրբերանգների դրսևորման գործում՝ խոսքին հաղորդելով աշխուժություն, բազմազանություն ու արտահայտչականություն:

РОЛЬ ВОПРОСИТЕЛЬНОГО ТЕМБРА В ФОРМИРОВАНИИ СИНОНИМИЧНОСТИ УТВЕРДИТЕЛЬНЫХ И ОТРИЦАТЕЛЬНЫХ СТРУКТУР - ЛИАНА САНТЯН

Синонимичность – это морфосемантическая реальность, поэтому она действует не только в лексической, но и в грамматической сфере.

Грамматические синонимы выражают идентичные отношения между предметами и явлениями посредством разных грамматических средств (грамматическими средствами являются также логическое ударение и тембр).

В формировании синонимичности утвердительных и отрицательных предложений важную роль играет в частности вопросительный тембр.

Иногда отрицание выражается также с помощью положительной формы повелительных глагольных форм.

Часто, особенно в народно-разговорной речи, предложение с вопросительным тембром, выступая в составе бессоюзных сложных предложений, выражает условие.

Синонимичный ряд формируется также между вопросительными и повелительными предложениями.

Ключевые слова: грамматика, вопросительный тембр, утвердительные и отрицательные структуры, синонимия, синтаксические синонимы, повествовательное предложение, повелительное предложение, вопросительное предложение, бессоюзное сложное предложение, стилистическая окраска.

**THE ROLE OF INTERROGATIVE TIMBRE IN THE FORMATION OF
SYNONYMY OF AFFIRMATIVE AND NEGATIVE STRUCTURES - LIANA**

SANTRYAN - Synonymy is a morphosemantic reality, therefore it acts not only in lexical, but also in grammatical sphere.

Grammatical synonyms express identical relationships between objects and phenomena through different grammatical means (grammatical means are also logical stress and timbre).

Interrogative timbre plays particularly an important role in the formation of synonymy of affirmative and negative sentences.

Sometimes negation is expressed by positive form of imperative verbal forms.

Often, especially in folk-colloquial speech, a sentence with interrogative timbre within compound sentences without conjunctions expresses a condition.

A synonymous series is also formed between interrogative and imperative sentences.

Key words: *Grammar, interrogative timbre, affirmative and negative structures, synonymy, syntax synonyms, narrative sentence, imperative sentence, interrogative sentence, compound sentence without conjunction, stylistic coloring.*

ԱՆԳԵԼԻՆԱ ԱՌՍՏԱՄՅԱՆ

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի»
պետհավատարմագրված համալսարանի ուսանողուհի

ՀԱՅՈՑ ԼԵՃՈՒՆ` ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածում ուսումնասիրվել են համացանցային հաղորդակցության լեզվական առանձնահատկությունները: Հայոց լեզուն համացանցում ենթարկվում է փոփոխությունների, և համացանցում ստեղծվել է նոր լեզու, որը տարբերվում է խոսակցական և գրական հայերենից: Պետք է նշել, որ համացանցից օգտվողները փոփոխության են ենթարկում լեզուն և այն հեռակա հաղորդակցությունից տեղափոխում են իրական կյանք:

Բանալի բառեր: Համացանց, լեզու, հաղորդակցություն, գիտություն, բարբառ, կրթություն, մարդ, նյութ, գրական, խոսակցական լեզու, թվային սարքեր, փոփոխություն, բառապաշար:

21-րդ դարը լի է նոր երևույթներով, որոնք կարճ են ապրում, բայց հետք են թողնում հասարակության տարբեր շերտերում: Այդ երևույթներից մեկն առօրյա խոսակցական լեզվի փոփոխությունն է, որը նախկինում տեղի էր ունենում այլ ազգերի շփման շրջանակներում՝ բառապաշարային փոփոխություններով: Այժմ բառապաշարային փոփոխություններին ավելի շատ նպաստում է համացանցը: Այն դարձել է մարդու կյանքի անբաժան մասը և շարունակում է նորանոր տիրույթներ «գրավել» նրա մտահորիզոնում: Համացանցը մարդկանց հաղորդակցման ամենատարածված միջոցներից մեկն է և լեզվական հետազոտությունների հետաքրքիր աղբյուր: Լեզուն մարդկային մտքերը ձևավորելու, մտածածն ու զգացածը հաղորդելու և հաղորդակցվելու միակ միջոցն է: Համացանցում, մասնավորապես սոցցանցերում, լեզուն խոսակցականն է, ոչ թե գրականը: Սոցցանցերը ոչ պաշտոնական շփման վայրեր են, որտեղ չեն գործում գրական լեզվի պահաջած կանոնները: Համացանցից օգտվում են ամենատարբեր տարիքի, հետաքրքրության ու զբաղվածության տեր մարդիկ. երեխաներ, մեծահասակա-

ներ: Հետևաբար, հաղորդակցման լեզվի ընտրությունը կախված է մարդու սեռից, տարիքից, կրթությունից, մասնագիտությունից, հեռակա շփվողների հարաբերությունից, ինչպես նաև թեմայից, քննարկվող նյութից: Սոցցանցերում մարդկանց անձնական էջերում օգտատերերն իրենց մասին ներկայացնում են որոշակի տվյալներ: Երբեմն մարդն ինքն իրեն այնպես չի ներկայացնում, ինչպես կա իրականում, այլ այնպես, ինչպես իր իդեալն է: Գրվածքներ է ընտրում և ներկայացնում, որով կարելի է բնութագրել նրա ներքին աշխարհը: Այդ դեպքում ևս մարդն իր ներքին աշխարհը ներկայացնում է ոչ այնպես, ինչպես կա: Այդպես անձն ապակողմնորոշում է իր հետ շփվողին¹:

Սույն հոդվածում հիմնականում ուսումնասիրվել են Facebook և Instagram սոցիալական կայքերը: Գիտության և թվային միջոցների զարգացմանը զուգահեռ հնարավոր չէ պատկերացնել կյանքն առանց համացանցի, որովհետև անվերջ են նրա տված տեղեկություններն ու գիտելիքները: Սակայն այն չի վերահսկվում և ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Ժամանակակից թվային միջոցներն իրենցից ներկայացնում են նոր կառուցվածքային ձևեր հասարակական և անձնական գրավոր շփումների համար²: Ստեղծվել են նոր հնարավորություններ ծանոթությունների, նոր հարաբերությունների համար: Համացանցում շփումը հիմնականում գրավոր է: Հեռակա հաղորդակցվողներն իրար չեն տեսնում, չեն լսում, չեն կարող գործածել դիմախաղ և ձայնի տոն, այդ պատճառով բանավոր խոսքին բնորոշ ոչ բերանացի այդ միջոցներն արտահայտում են այլ եղանակներով: Տվյալ խնդրի լուծման համար համացանցի լեզվում ներառվել են հատուկ նշաններ՝ հուզապատկերներ կամ գրաֆիկական նշաններ³: Համացանցում օգտատերերի գերակշիռ մասը հաղորդակցվում է լատինատառ, որոշները՝ ռուսական այբուբենի տառերով: Translit -ը հայկական իրականություն ներխուժեց համացանցի հետ, երբ թվային սարքերը հայատառ գրելու հնարավորություն չէին տալիս: Հետագայում ներմուծվեցին նոր թվային սարքեր ու ծրագրեր, որոնք հնարավորություն տվեցին համացանցում գրելու հայատառ, սակայն լատինատառ գրառումները ոչ միայն չեն վերանում, այլև բազմանում են:

1 Зандворова А.В., Саморегуляция в нерегламентируемых сферах интернет - общения: речевой этикет в Живом журнале.

2 Նույն տեղում:

3 Бергельсон М. Б., Языковые аспекты виртуальной коммуникации.



Arpine Poghosyan

Lav ban cheq karoх asel miayn qnnadatel .

2 ԴՆ. Нравится Ответить



1



Нарина Агаджанян

Vochinch der amen inch arjevum e Srbuk jan

2 ԴՆ. Нравится Ответить



2



Ghazaryan Osanna

Anshuq err shat

2 ԴՆ. Нравится Ответить



1

Հայերենի և անգլերենի հնչյունական տարբերությունների մասին խոսելն ավելելո՞ւ է: Translit – ով գրված բառերը երբեմն մտում են անհասկանալի (der - դեռ – ձեր, dran – դրան – դռան, tvac - տված – թված – թվաց, tvec – թվեց – տվեց, hox - հոգս – հող , gam -գամ – ժամ, jur – ջուր- յուր, dez – դեզ –ձեզ, tanks – թանկս – տանկս, tatik – թաթիկ – տատիկ, bari –բառի – բարի, char – ճար – չար, ganq – ջանք – գանք, ax -աղ – ախ, vax – վաղ – վախ և այլն): Համացանցով հաղորդակցության գործընթացում ձևավորվող նախադասությունները բնութագրվում են նաև շարահյուսական կանոնների անտեսմամբ: Կետադրական կանոններն ընդհանրապես անտեսված են, իսկ կետադրական նշանները կարող են օգտագործվել ոչ իրենց ուղղակի նշանակությամբ, այլ որպես խոսքի տեմպ և այլ հատկություններ բնորոշող նշաններ¹: Տրոհության նշաններից վերջակետը կամ չի դրվում, կամ էլ փոխարինվում է կետով: Առոգանության նշաններից բացականչականի փոխարեն գործածվում է « ! » նշանը, հարցականի (պարկույկի) փոխարեն՝ « ? » նշանը: Զիչ չեն նաև ստորակետի ու կախման կետերի շեղումները: Հայերենի շեշտը կայուն, շարժական է և դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա: Համացանցում նկատվում են շեշտի սխալ կիրառություն-

1 Միդոյան ժ., Խաչատրյան Ա., Համացանցային հաղորդակցման լեզվական առանձնահատկությունները:

ներ, օգտատերերի որոշ մասը շեշտը դնում են բաղաձայնի վրա: Մնացած կետադրական նշանները պարզապես մոռացության են մատնված:



Դավիթ Խաչատուրյան
 Լավ նախաձեռնություն է ուղակի հարց է առաջանում ինչի չէիք արել ժամանակին? Մերկելից էիք վախենում?)))

1 Կ. Нравится Ответить



Կան բառեր, որոնք մենք օգտագործում ենք առօրյա խոսքում, օրինակ՝ էսպես, էդպես, էնպես: Այդ խոսակցական բառերին գրական հայերենում համապատասխանում են այսպես, այդպես, այնպես դերանունները, վերջին շրջանում գրավոր խոսք են ներխուժել սենց, տենց, նենց տարբերակները: Նույն ձևով էս, էդ, էն / այս, այդ, այն/ էսի, էտի, էնի, էստեղ, էդտեղ, էնտեղ /այստեղ, այդտեղ, այնտեղ / ստե, ըտե, ընդէ և այլն: Ե օժանդակ բայի փոխարեն գործածվում է խոսակցական ա-ն, այն էլ մեծամասամբ գրվում է նախորդ բառին կից: Օրինակ՝ գնում է / գնում ա / գնումա, լսում է/ լսումա/ լսում ա, պետք է / պետք ա/ պետքա, լինում է / լինում ա /լինումա, պարտադիր է /պարտադիր ա /պարտադիրա, ինքն է /ինքն ա/ ինքնա և այլն:



Rita Martirosyan
 Ժողովուրդ դժվարա լինելու բայց պիտի լինենք նկուլի կողքին չդավաճանենք թե չէ կորած ենք

2 Կ. Нравится Ответить



Դ հոդի փոխարեն գրեթե համատարած գործածվում է տ տառը՝ գիրքդ / գիրքտ, ծնունդդ / ծնունդտ, միտքդ / միտքտ, երկուսդ / երկուստ, քայլդ / քայլտ և այլն:

**Ovsanna Sahakyan****Շնորհավոր տարեդարձ****3 нед. Нравится Ответить**

Համացանցում ահռելի թիվ են կազմում փոխառություններն ու օտարաբանությունները: Օրինակ՝ ֆլեշ-կրիչ, օկլայն-առցանց, օֆֆլայն-անցանց, մեյլ-էլեկտրոնային փոստ, քոմենթ-մեկնաբանություն, ստատուս-կարգավիճակ, փասվորդ-գաղտանաբառ, ռեգլամենտ-աշխատակարգ, ֆոլդեր-պանակ, կոլոսոր-նշիչ, գեյմ-խաղափուլ, ֆեյսբուք-դիմատետրում ֆաքս - հեռատիպ և այլն: Վերջին շրջանում նկատվում են նաև բարբառներով գրություններ: Բարբառով հիմանականում հաղորդակցվում են դարաբաղցիները, լոռեցիները, գյումրեցիները: Ղարաբաղի բարբառը հայ կենդանի բարբառներից ամենամեծն ու ամենատարածվածն է: Այդ բարբառով ու նրա խոսվածքներով հաղորդակցվողների թիվը կազմում է ավելի քան կես միլիոն¹⁵: Եթե գրվածքը բարբառով է, շեղումներն արգելվում են: Ղարաբաղի բարբառը չունի ֆ տառ, բայց օգտատերերի գրություններում նկատվում են ֆ-ի գործածություններ: Օրինակ՝ փիզիկա-ֆիզիկա, փիզկուլտուրա-ֆիզկուլտուրա, փերմա-ֆերմա:

Տե տի



Յեկ մին քինանք ֆերման



Կավ է հետո կքինանք

Մեկ հոդվածի շրջանակում հնարավոր չէ անդրադառնալ համացանցային լեզվի բոլոր շերտերին: Թվային միջոցների արագ զարգացումը մարտահրավերներ է նետում կյանքի բոլոր բնագավառներին: Պետք է նշել, որ նոր երևույթներն անխուսափելիորեն ստեղծում են նոր խնդիրներ: Ժամանակակից հայոց լեզուն շատ արագ փոխվում է մեր աչքի առաջ: Համացանցում ստեղծվել է նոր լեզու, որը տարբերվում է գրական և խոսակցական հայերենից:

¹ Պողոսյան Ա.Մ., Հայ բարբառագիտություն, Երևան, 1996 թվական

АРМЯНСКИЙ ЯЗЫК В СЕТЕВОЙ КОММУНИКАЦИИ - АНГЕЛИНА АРСТАМЯН - В данной статье были изучены языковые особенности сетевой коммуникации. Армянский язык в соцсетях подвергается изменениям, и в связи с этим создается новый язык, который отличается от разговорного и литературного. Нужно отметить, что потребители соцсетей подвергают изменениям язык, и он из реальной коммуникации переходит в реальную жизнь.

Ключевые слова: *соцсеть, язык, коммуникация, наука, диалекты, образование, человек, материал, литературный, разговорный язык, вычислительные оборудования, изменения, словарный запас.*

THE ARMENIAN LANGUAGE ON INTERNET COMMUNICATIONS - ANGELINA ARSTAMYAN - This article examines the linguistic peculiarities of Internet communication. The Armenian language undergoes changes on the Internet and a new language has been created on the Internet that differs from spoken and literary Armenian. It should be noted that Internet users change the language and bring it to real-life from telecommunication.

Key words: *Internet, language, communication, science, dialect, education, human, material, literary, spoken language, digital devices, change, vocabulary.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ	3
ՅԱԿՈԲ Այնթապլեան - Հայաստան-Սփիւռքի միասնա	
կանութիւնն ու հայերեն լեզուի հարցերը	10
ԴԱՎԻԹ Գյուրջիսյան - Հայաստանի Հանրապետության	
լեզվական քաղաքականության հիմնական ուղղությունները	15
ՎԱՐԴԱՆ Հակոբյան - Երկաթյա վարագույրները ետ	
քաշելու ժամանակը	26
ԷՐՈՒԱՐԴ Մկրտչյան - Թարգմանչական արվեստ և լեզվի	
անադարտություն	49
ԳԷՈՐԳ ՏԵՐ-Վարդանեան - Մեր ուղղագրութեան խնդիրը	62
ՄԱՐԱՏ Յավրուսյան - Հայերենի քերականության ձևայնացումը	
տիպաբանական մոտեցմամբ. ՍԾ ծառադարանների փորձը	79
ՌԵՆԱ Մովսեսյան - Գեղարվեստական գրականությունն	
իբրև բարբառային բառերի պահարկման և գործածական	
ակտիվության միջավայր	90
ՉՈՒԽՐԱ Երվանդյան - Մայրենին՝ ազգային	
մտածելակերպի գործոն	102
ՄՀԵՐ Զումուկ - Ակսել Բակունցը և նոր գրական հայերենը	115
ՍԻԼՎԱ Մինասյան - Լեզվաոճական արտահայտչականությունը	
հայոց լեզվին նվիրված չափածոյում (XIX-XXI դդ.)	133
ՎԱՀՐԱՄ Լալայան - Հայոց լեզուն և	
մեր ազգային ինքնութիւնը	147
ԳԵՂԱՄ Միքայելյան Տեխնիկական բառերի	
հայեցի օգտագործումը հայերենում	165
ԿԱՐԻՆԵ Առաքելյան - Հատուկ անունների ուղղագրական	
բառարանի կազմման սկզբունքների շուրջ	172
ԼԻԱՆԱ Սանթրյան - Հարցական հնչերանգի դերը	
հաստատական և ժխտական կառույցների հոմանշության	
ձևավորման գործում	180
ԱՆԳԵԼԻՆԱ Առստամյան - Հայոց լեզուն՝	
համացանցային հաղորդակցություններում	189

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՊԵՏՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**«ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒՆ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵՆՔ»
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ**

Խմբագիրներ՝

Վ. Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մ. Գ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Ա. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Համակարգչային Էջադրումը՝ Գ. Մնացականյանի

*Թուղթը՝ օֆսետ, տպագրությունը՝ օֆսետ: Չափսը՝ 60x84¹/₁₆
Ծավալը՝ 12.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:*



ARMAY PUBLISHING HOUSE

Ք. Երևան, Բաղրամյան 3, 4-րդ հարկ Yerevan, Baghramyan st. 3, 4th floor
հեռ.՝ +374-10347335, +374-99373130 tel: +374-10347335, +374-99373130
Էլ փոստ՝ armav1815@gmail.com Email: armav1815@gmail.com